ՀԱՄԱՌՕՏ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԱՑ

ԵՒ ՑՈՒՆԱՑ

ԼԻՈՒ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՍ

1879

Լեո
1234

1999

ՀԱՄԱՌՕՏ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԱՑ ԵՒ ՑՈՒՆԱՑ



ՀԱՄԱՌՕՏ
ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՈՐԵԻԵԼԵԱՆ ԱԶԳԱՅ

ԵՒ ՅՈՒՆԱՑ

ԼՒՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

366.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՅԻՐԱՊԵՏԱՆ
1879

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ
Гос. Библиотека
им. А. Мясникяна
Ք. ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅԱՆ

41234-ա
ՀՖ 1238

Ա. Ջ. Գ.

Այս նոր հրատարակեալ գաւառական պատմութեանս առաւելութիւնն առ հնոյք՝ իր քննադատական ոգի ոգին և էական համառօտելն է, զոր իմանալու համար մի անգամ միայն կարդալն բաւական է։ — Այս գոյն աշխատութեան առաջնորդ և ուղղիչն է Արևելեան պատմութեան մասին մէջ Փ. Շմիթ երևելի անգղիացի պատմագէտն և Գուլիէլմոս Բիւց գերմանացի. իսկ Յունաց պատմութիւնը Թ. Անէպի իտալացւոյն Յունաց պատմութեան համառօտն է։ Ի դիւրութիւն վարժապետաց և աշակերտաց միանգամայն իւրաքանչիւր ոգոյն պատմութեան վերջը՝ ժամանակագրութիւնն աւելցուցինք, որ թէ և շատ տեղ պիտ արդի քննադատական պատմութեան չի համապատասխանէր, բայց ինչպէս երբեմն՝ հիմայ ալ նոյնպէս օտարազգին չէ։

Երջանիկ և երանիկ կը համարինք ղմեզ՝ եթէ մեր մտաց տեսութեամբ և այս դպղն տարրական աշխատութեամբ մենք ալ կարենանք ձեռնտու սեպուիլ աղգային վարժապետաց. և յորդորել զոմանս մանուանդ թէ զբաղումս իսկ համադգի ուսումնասէր մանկանց և պատանեաց թափանցել աւելի այն աշխարհաց հին պատմութեան խորը, որոնք եղան երբեմն մարդկութեան և քաղաքականութեան օրորոց և խանձարուր: Մեր կողմանէ ջանացինք գոնէ ըստ կարելւոյն այնպիսի դասական հին պատմութիւն մը հրատարակել որ զպատմական ատոյգ դէպս արդի նորանոր ծանօթութեամբ և քննադատութեամբ ներկայացնէ:

Պատմագէտ վարժապետաց ուղիղ տեսութիւնը, անաչառ վարկն և ներողամիտ դատաստանն և սիրով ընդունելութիւնը կը յուսանք թէ սիտի սրտապնդէ զմեզ աւելի մեծագունին ձեռք զարնելու:

Հ. ՆԵՐՍԷՍ ՃՆՏՑԵԱՆ:

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱԶԳԱՑ

ԵՐԱՑԵՑԻՔ

ԳԼՈՒԽ Ա.

Ի ստեղծմանէ մարդոյ մինչև զՄովսէս.

1. Մարդոյն սկիզբը: — 2. Բազմանալը: — 3. Առաջին մարդկութեան վիճակը: — 4. Ջրհեղեղ: — 5. Նոյեանք և իրենց ցրուիլը: — 6. Աբրահամ, Իսահակ, Յակովբ: — 7. Յովսէփ, Եբրայեցիք Եգիպտոս:

1. Այնքան մարդոյ: — Աստուածաշունչ գրոց մէջ կը պատմէ մարդարէն Մովսէս թէ Աստուած երկինք, երկիրս իրենց ամբողջութեամբ վեց օրուան մէջ (այսինքն վեց երկայն ու անսահման ժամանակի մէջ) ստեղծելէն վերջը, ի պատկեր իւր ստեղծեց նաև զԱդամ ու զԵւա, և զանոնք դրախտի մէջ դրաւ: Սրբազան պատմութիւնը կ'աւանդէ միայն մարդոյն ստեղծումը, առանց ճշդիւ ժամանակը սահմանելու: Աստուածաշնչի մեկնիչք Քրիստոսէ առաջ եղած հաշիւը ինչուան 4000 տարիի կը հանեն. բայց երկրաբանութեան և հնախօսութեան նախապատմական գիւտերը քիչ շատ կը ջանան հաս-

առաւել թէ՝ մարդուն առեղծուածը չատ աւելի հին է։

2. Մարդոյն բաղմանալը։ — Մարդկային ազգին նախածնողք Աստուծոյ անհնազանդ գտնուելով, քիչ առենէն դրախտէն դուրս վռընտուեցան, և երկու որդիք ունեցան. Կայէն՝ երկրագործ, և Աբէլ՝ հովիւ, և ուրիշ զաւկըներ, որոնցմէ էր և Սէթ։ Այսպէս մարդիկ երթալով բազմացան. մէկ ընտանիքէ՝ չատ ընտանիք՝ և անոնցմէ ընկերութիւններ ձեւացան, զորս Ծննդոց գիրքը Ցաղաք կ՚անուանէ. և որոց առաջինն է Ենովք, զոր հինգերորդ կայէն երբ առնախանձոտ իր Աբէլ եղբայրը սպաննելով անէծքուեցաւ յԱստուծոյ, և հարկադրեցաւ իր բնակութեան տեղը փոխել։

Սէթի ցեղը արդար ձնալով Ադդէ Աստուծոյ կոչուեցան և են Ենովս, Կայնան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղա, Ղամէք և Նոյ։ Իսկ Կայենի սերունդը չարանալով Ադդէ մարդիկն ըսուեցան, որոնք են Ենովք, Գայերիդատ, Մաւիկէլ, Մաթուսաղա, Ղամէք, Յովբէլ, Յովբաղ և Թովբէլ։

3. Մարդոյն նախկին վիճակը։ — Քսան սերունդ գրող, Յովբէլ հնարեց զերկաթագործութիւնը։ Իրմէ առաջ եղած ժամանակին գործ կը կոչուի, իրենց բոլոր գործիքներն ու զէնքերը քարէ ըլլալուն համար. անոնցմով երկիր կը մշակեին, և իրենք զիրենք վայրագ անասնոց ձերձանէրէն կը պաշտպանէին։ Զգեստին ծառոց տերեւներ էին, եաքն ալ անասնոց մորթը. բնակութեան տեղուանքն՝ ընութեան ձեւացուցած քարայրը, և կերակուրնին՝ պտուղք։ Աւէն անցնելէն եաքը սկսան հիւղեր և տապ տուներ շինել. անասուններուը վարժեցուցին ի գործ, և պէտք եզած աւէն կը սպաննէին։

Ընկերական առաջին միութիւնը՝ ընտանեաց սկսաւ, որ իր գլխաւորին կը հնազանդէր։ Եաքը այլ և այլ ընտանիք իրարու հետ միաբանելով ցեղ մը ձեւացուցին, որ ունէր իր գլխաւորը, ըստ պարագայից լմնասուն, փորձկամ ղեկաւոր մարդ մը։ Եւ այս է այն կառավարութեան նախնի ձեւը զոր Նահապետական կը կոչենք։

4. Քրհեղէդ։ — Կայենի ցեղին բարուց տապալտնուելիւնը կամաց կամաց Սէթի ցեղին ալ անցաւ։ Իրենց չարութիւնը այնչափ աւելի եղաւ Աստուծոյ, որ ըստ Մովսեսի՝ զղջաց զմարդ ստեղծելուն վրայ և ուզեց բոլոր մարդկային ազգը ջրհեղեղով ջնջել աշխարհիս վրայէն բայ՚ի Նոյէն և իրեն ընտանիքէն, որ անոնց չարութեան և օրինակին չէին հետեւած։ Ուստի պատուիրեց Աստուած Նոյի որ մեծ տապան մը կամ՚նաւ մը շինէ, ուր պիտի ապաւինէր իրեն՝ներոյը և անասնոց բաղմութեամբ։ Տապանին շինութենէն եաքը՝ քառասուն օր և քառասուն գիշեր չարունակ անձրեւ եկաւ, և 150 օր երկիրս ողողեց, ամէնաբարձր լեռներու գագաթներն ալ ծածկեց և բոլորը ընչաւորները խեղդեց։

Խնդիր կայ ջրհեղեղին թուականին վրայ, Քրիստոսէ առաջ 35 – 23 դարերու մէջ դնելով։ Նոյնպէս տեղողութեան վրայ ալ ուզած են ոմանք խնդիր հանել. և որովհետեւ երկրաբանները չեն ընդունիր թէ մարդուս ստեղծմանէն վերջը երկիրս ամբողջական յեղափոխութիւն մը կրած ըլլայ, կը ջանան գիտութիւնը Մովսեսի խօսքերուն հետ յարմարցընել։ Մովսեսի ջրհեղեղը միայն նոյն աւերնուան մարդկութեան և մերձակայ երկիրներուն նկատմամբ տեղեբական տեսկլով։ Բայց ջրհեղեղը երբ պատիժ մարդկութեան՝ անտարակուսելի է ոչ միայն ի սուրբ գրոց, այլ նաև յառաւել կամ նուազ

մանրամասնութեամբ աւանդուածէն որ գրեթէ բոլորը հին աշխարհի մէջ կը գտնուին. Ասորեստանացոց, Բաղդէացւոց, Եգիպտացւոց, Հայոց, Ջինաց, Ճաբոնաց, Ամերիկացոց և ինչուան Ովկիանիոյ բնակչաց քով:

5. Նոյեան ԱՆՈՒՆ ՕՐՈՒԱՆ: — Ջուրը քաշուելով՝ Նոյ տապանէն դուրս եկաւ, որ Հայաստանի Ա. լերան վրայ կեցած էր, և իր ընտանեօք Սենաար կամ Միջագետք գնաց Եփրատ ու Տիգրիս գետերուն մէջ եղած երկիրը՝ բնակելու համար: Սկսաւ երկիրը մշակել և օրէնք անկեց: Եաբը խաղողէն գինի հանելով, որուն արգիւնքը դեռ չէր ճանչնար, չափէն դուրս խմեց ու գինովնալով մերկ պառկեցաւ: Քամ որդին հայրն այն վիճակի մէջ տեսնելով՝ գինը ծաղր ըրաւ: Նոյ արթննալէն եաբը եղածն լսանալով անիծեց զՔամ և անոր զաւակները, որ գերի ըլլան իր երկու որդւոցը, Սեմայ և Յաբեթի:

Նոյի որդւոց սերունդքը բազմանալով, և երկիրը չբաւելով իրենց բնակութեան, որոշեցին որ բաժնուին իրարմէ. և ի յիշատակ այս բաժանման՝ քաղաք մը և բարձր աշտարակ մը կանգնեն՝ որուն ծայրը ինչուան երկինք հասնի: Իրենց այս ամբարտաւանութիւնը պատժուեցաւ. վասն զի Աստուած լեզուները խառնակեց, և չկարենալով հասկընալ մէկմէկու խօսքը, չէնքը անկատար մնաց: Աշտարակը Բաբիլոն կոչուեցաւ, այսինքն Խառնակութիւն:

Աստուածային այս պատուհասէն ետքը՝ զատուեցան ու կամաց կամաց տարածուեցան բոլոր երկրիս վրայ: Մարդկային ազգը երեք ցեղի բաժնուեցաւ, ու Նոյի որդւոց անուններով կոչուեցան Սեմականք, Քամականք և Յաբեթականք, որոնք կը կոչուին նաև Արիականք կամ Հնդիկ–Եւրոպականք, և ժամանակաւ շատ հեռացան

իրարմէ, Թէպէտ պահելով միշտ իրենց սկզբնական միութիւնը:

6. Աբրահամ, Իսահակ, Յակոբ: — Ջրհեղեղէն վերջը մարդիկ Աստուծոյ պաշտօնը մոռնալով, հեռապաշտութեան մէջ ինկան. միայն Աբրահամ որ ի Սեմայ տանէրորդ էր՝ հաւատարիմ մնաց Աստուծոյ: Աստուած ալ զինքը հայր ընտրեց՝ իրմէ ընտրեալ ազգին, որ էին Եբրայեցիք, և պատուիրեց Թողուլ իր հայրենիքն, ու փոխանակ երկիրն երթալ: Ըստ Աստուածաշունչ գրոց՝ Քրիստոսէ իբր 2000 տարի առաջ կ'ինայ Աբրահամու կոչումը: Վասնզբնակ՝ բայց երկայն և աստուածահաճոյ կենաց ապրելով մնաւ, Թողուլ իր Իսահակ որդին, որ հօրը պատուիրանքներէն ու աւանդութիւններէն չհեռացաւ: Իսահակ ծնաւ զՅակովբ, որ Իսրայէլ ալ ըսուեցաւ, որով իր սերունդքն ալ Իսրայելացիք: Յակովբ հետևող եղաւ իր հօրը և հաւուն, և տասներկու որդի ունեցաւ, որոնցմով Եբրայական ժողովրդեան տասներկու ցեղերը ձևացան:

7. Յովսէփ, Եբրայեցիք, Եգիպտոս: — Այն տասներկու որդւոց վերջընթերը, որ կը կոչուեր Յովսէփ, իրեն մեծ եղբարց ատելի եղաւ, հօրը շատ սիրելի ըլլալուն համար: Որոշեցին զինքն սպաննել, բայց եաբը իբրև գերի մը Եգիպտոս ելնող վաճառականաց ծախեցին զինքը: Հոն զանազան դէպքեր անցան Յովսեփայ գլխէն. բայց ինքն իմաստութեամբը պատիներու և ինչուան փոխարքայութեան աստիճանին հասաւ: Տարիներ անցնելէն եաբը՝ իր եղբարքը սովէ սպիտակ Եգիպտոս գնացին ցորեն գնելու. Յովսէփ ճանչցաւ զանոնք ու ներեց, և ուզեց որ երթան բերեն նաև իր Յակովբ հայրն ալ, և ամէնքը Եգիպտոս բնակին, ուր իրենց Գեսեմի արգա-

ւանդ երկիրը տրուեցաւ : Հօն իսրայէլացիք զարմանալի կերպով բազմանալով՝ մեծ ազգ մը ձեւացան. այնպիսի հզօր ազգ, որ 430 տարի ետքը, 600,000 պատերազմող կրնար հանել :

ԳԼՈՒԽ Բ.

Մովսեսի ինչուան թագաւորութեան հաստատումը :

1. Մովսէս : — 2. Եբրայեցիք անապատին մէջ : — 3. Պաշտօնէութիւն. — Յեսու : — 4. Աստուծոյ Պաղեստինու : — 5. Դատաւորք :

1. Մովսէս : — Փարաւոնն Ռամեսէս Բ, տեսնելով Եբրայեցւոց զարմանալի աճումն՝ որոնք կրօնքով և սովորութեամբ Եգիպտացւոցմէ շատ հեռու էին, սկսաւ հալածել զանոնք և ծառը ծանր աշխատանաց տակ ձնշել : Այս խիստ հալածանաց առեն, մինչդեռ հրաման կ'ելլէր որ Եբրայեցւոց ամէն նորածին արու մանուկը նետուի գետը ձգուի, ծնաւ Մովսէս : Գետը ձգուելով ինքն ալ պրուեաց կողովով մը, գիպուածով Փարաւոնի աղջկան հրամանովը հանուեցաւ. որ գուշակ ունեցաւ վրան, և քոյրն առնելով խնամք տարաւ, որ կրթուի և դաստիարակուի արքունեաց մէջ : Սակայն ատով չմոռցաւ Մովսէս իր ծագումը և իր ազգը. և օր մը տեսնելով եգիպտացի մը որ կը չարչարէր եբրայեցի մը, սպաննեց զեգիպտացին :

Բայց երբ իմացաւ թէ յայտնուեր է այդ գործը, փախաւ յԱրաբիա, և հօն անցուց երկայն ժամանակ. և անկէ Աստուծոյ հրամանաւ

գարձաւ յԵգիպտոս՝ իր ազգն ազատելու, և Փարաւոնու երկիրն առաջնորդելու համար : Ահարոն եղբօրը հետ Փարաւոնի դիմաց ելան, որ էր Մենէպթա, և խնդրեցին որ ազատ թողու Եբրայեցիքն որ ելլեն երթան, Թագաւորը հրաման չտուաւ, ինչուան որ չտեսաւ իր ազգը տասն ահաւոր պատուհասներով սարսափած :

Հազիւ թէ Եբրայեցիք ճամբայ ելած էին, զղջալով Փարաւոն իր օգտակար գերիները ձեռքէն հանելուն համար, անոնց եաւէն վազեց բանակով մը. բայց Կարմիր ծովը հասնելով, ուստի արդէն անցեր էին Իսրայէլացիք՝ հրաշիւք անթաց ոտքով, հալածող բանակը ջրասոյզ եղաւ : Յայնժամ մեծանուն ազատարարն և իրեն ժողովուրդը այսվեմ երգեցին Աստուծոյ :

« Աչ քո Տէր փառաւորեալ է զօրութեամբ, աչ քո Տէր խորտակեաց զթշնամին :

« Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս, առաքեցեր զբարկութիւն քո և եկեր զնոսա իբրև զեղէգն :

« Եւ հողմով սրամտութեամբ քով պատռեցան ջուրք, պաղեցան իբրև զպարիսպ ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովուն :

« Ասաց թշնամին. հալածեցից և հասից, բաժանեցից զաւարն, և լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով, տիրեսցէ նոցա ձեռն իմ :

« Առաքեցեր զհողմն քո. և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրև զկապար ի ջուրս սաստիկս :

« Ո՞վ լոյծ նման քեզ յաստուածս Տէր, և կամ ո՞վ նմանիցէ քեզ՝ փառաւորեալդ ի սուրբս, սքանչելի փառօք՝ որ առնես զնշանս. ձգեցեր զաջ քո՝ և եկուլ զնոսա երկիր :

« Առաջնորդեցեր արդարութեամբ ժո-

ղովրդեան քում այսմ զոր փրկեցեր. մխիթա-
րեցեր զօրութեամբ քով 'ի բանակեաղ սրբու-
թեան քոյ։

« Լուան աղաչք և բարկացան. և երկունք
կալան զբնակիչս Քանանացւոց։

« Յայնժամ տագնապեցան դատաւորք և-
գովմայ, և խլհանք Մովաբացւոց. կալաւ զնո-
սա դողումն, հալեցան ամենայն բնակիչք Քա-
նանացւոց։

« Անկեալ 'ի վերայ նոցա ահ և երկիւղ, մե-
ծութեամբ բազկի քոյ քարացան ։ Մինչև
անցցէ ժողովուրդ քո, Տէր, մինչև անցցէ ժո-
ղովուրդ քո այս զոր ստացար։

« Տարեալ տնկեացես զնոսա 'ի լեառն ժա-
ռանգութեան քոյ, 'ի պատրաստութիւն բնա-
կութեան քոյ, զոր արարեր Տէր սրբութիւն,
Տէր՝ զոր պատրաստեցին ձեռք քո »։

2. Եբրայեցիք անապատին մէջ ։ — Եբրայեցիք
մնալով Արաբիոյ անապատը, Մովսէս ըստ
հրամանին Աստուծոյ ձարտարութեամբ հօն
պղտցուց զերկինք քառասուն տարի, որպէս
զի Եգիպտոսէն ելած դժուարընտել և ապա-
կանեալ բարուք հին սերունդը լմննայ այն ա-
նապատին մէջ։ Յամենչղով Սինա լերան ստորո-
տը, Աստուծոյ կողմանէ տուաւ անոնց այն
օրէնքները որ լոյրը աստուածային և մարդկա-
յին բարեպահանն կը պարունակէն. նոյնպէս
ծէսերն և երաւունք սահմանեց։ Սակայն չը-
տուաւ Իսրայէլացւոց քաղաքական օրէնք մը,
և ոչ կեդրոնական կառավարութիւն մը հաս-
տատեց, և մնացին նոյնպէս ցեղ ցեղ տեսակ մը
դաշնակից հասարակապետութեան նման, որուն
միակ կապն էր երկնց ծագումը և միևն Աստու-
ծոյ պաշտօնը։

Բայց անապատին կեանքը ախորժելի չէր.

ատեպ ատեպ Եբրայեցիք կը ցաւէին Եգիպտոս
թողուցած առատութեանը վրայ, և շատ ան-
գամ Մովսէս կը զպղէր անոնց ապստամբու-
թիւնը, երբեմն խորհրդակից և օգնական ունենա-
լով ժողովրդեան ծերերէն եօթանասուն հոգի։
Սակայն պատերազմով այն ազգաց հետ
որոնք ճամբայ չէին տար անցնելու. և քառա-
սուն տարիէն ետքը՝ մինչ խոստացեալ երկրին
դիմացն էին, մեռաւ Մովսէս Նաբաւ լերան վրայ
120 տարուան։ Աղտտարարի և օրէնսդրի փա-
ռաց վրայ մատենագրի փառքն ալ աւելցուց.
հինգ գիրք գրեց, և են. Ծնունդք, Ելք, Ղևտա-
կան, Թիւք և Երկրորդութիւն օրինաց.

3. Պաղեստին։ — Պաղեստին՝ որ յետոյ երկիր
Քանանու կոչուեցաւ, և 'ի բնակութիւն Իս-
րայելացւոց սահմանեալ էր, արևմտեան չըր-
ջապատած էր Միջերկրականէն, հիւսիսէն Ա-
սորւոց երկրէն, հարաւէն և արևելքէն Արա-
բիոյ անապատէն։ Մի միայն նշանաւոր գետ մը
ունի որ է Յորդանան, որ հիւսիսէն դէպ 'ի հա-
րաւ կը վազէ և Մեռեալ Ըշխն և Գալիլեացւոց
ծովէն անցնելով, որ լիճ Գեննեսարեթայ կամ
Տիբերեայ ծով ալ կը կոչուի՝ Մեռեալ կամ Ա-
փազիզէ ծովը կը թափի։ Յորդանանու երկու
կողմը լերանց երկու չղթայք կան, Լիբանանու
և Անթ-Լիբանանու ձիւղերն։ Լերանց մէջ յի-
շատակի արժանի են, Կարմէլոս՝ որուն հիւսի-
սային ծայրը կը հասնի մինչև Միջերկրական, և
Գեղբուէ, Երաս, Դարիզին, Զիթենեաց, Գող-
գոթա և Թաբոր լեռները։

Եբրայեցիք երբ հոն մտան, Քանանու երկրին
մէջ շատ ազգեր կային, որոնք պզտի տէրու-
թիւններ էին, և գլխաւորները թագաւոր կը
կոչուէին։ Ասոնք էին բուն Քանանացիք, Գե-
թացիք, Փերեզացիք, Յեբուսացիք, Ամոռացիք

և Փղշտացիք, որոնցմէ վերջիններուը Միջերկրական-
նին ծովեղերքները կը բնակէին: Այս կռապաշտ
ազգերը միշտ երարու հետ կռիւ ունէին, բայց
Եբրայեցւոց մտնելնալուն առեն՝ փոխադարձ
միաբանեցան անոնց արշաւանաց դէմ դնելու:

4. Յեսու, Պաղեստինա փրեը: — Յեսու որ
Մովսէսի յաջորդեց Իսրայէլացւոց վարչու-
թեան մէջ, ամենէն չքաւոր: Յորդանանը
կորեց անցաւ, երկրով՝ որ գեռն աշակող-
մեան առջի մայրաքաղաքն էր՝ առաւ: Տիրեց
Գայիոյ, Մակեթա և Լիբնա քաղաքաց, ուր
առրի անդադար յաղթանակելով դէմը ելլող
ամէն թշնամեացը:

Անոնց երեսէն հանգարտութիւն գտնելէն
ետքը, տերած երկիրները բաժնեց: Պաղեստին
տասուերկու կտոր բաժնուեցաւ ըստ ցե-
ղից, բայց՝ ի Ղեւեայ ցեղէն՝ որ քահանայական
պաշտամանց համար որոշուած էր: Այս ցեղին
բնակութիւն տրուեցան քառասուն և ութ քա-
ղաք, ամէն ցեղերէն՝ ի մնուդ ալ՝ երկրին պըտ-
ղոց տասանորդը: Յակոբայ տասը որդւոց անուն-
ամբ տասը ցեղք կոչուեցան՝ Յուդա, Շմաւոն,
Բենիամին, Դան, Իսաքար, Ասեր, Զաբուղոն,
Նեփթաղիմ, Գադ և Ռուբէն, և Յովսեփայ եր-
կու որդւոց անուամբ Եփրեմ և Մանասէ: Գա-
դայ, Ռուբենի և Մանասէի կէս ցեղերը Յոր-
դանանու արեւելեան կողմը բնակեցան, միւսնե-
րը արեւմուտք: Յեսու Իսրայէլացիները կառա-
վարելէն ետքը մեռաւ, յանձնելով որ օրէնք-
ները պահեն, չխառնուին բնիկ ժողովրդոց հետ
և սկսած աշխարհակալութիւններ ըլլընջնեն:

5. Դատաւորք: — Յեսուայ մահուընէն ետքը
Եբրայեցիք առանց դլխաւորի մնալով, սկսան
մոռնալ երկնց պարտքերը և կռապաշտութիւն
ընել, սպառեցնելով երկնց զօրութիւնը ընտա-

նի պատերազմներով, անոր համար երբեմն մէկ
երբեմն միւս իշխանութեան տակ ընկճուեցան:
Դարերով երբենց պատմութիւնը յաջող և մեծա-
մասամբ տխուր դիպուածոց հիւսուածք մ'է:
Ծանր գեպքի մը մէջ կը զղջային, առ Աստուած կը
դառնային, կ'աղաչէին և երբենց գլուխ մը կ'ըն-
տրէին՝ որ առաջնորդէ երբենց Թշնամեաց դէմ:
Իսրայէլացւոց ընտրած այս նշանաւոր առաջ-
նորդք՝ տասնուչորս են. և ընդհանրապէս Դա-
տաւոր կը կոչուէին, թէպէտև երբենց պաշտօնը
զինուորական էր. անոնցմէ շատերը պատերազ-
մը լմընցածնին պէս՝ կը դառնային սովորական
քաղաքացի կ'ըլլային. ոմանք խաղաղութեան
առեներն ալ արդարութեամբ երբենց յանձնուած
պաշտօնը վարեցին: Դատաւորաց մէջ հռչակա-
ւորներն են Գոդոնիէլ՝ որ ազատեց զԻսրայէլա-
ցիս Քուսարսաթեմ Այսրուց Թագաւորէն. Ա-
ւովդ՝ որ Մովաբացւոց Եգղոմ Թագաւորը
սպանեց. Դեբովրա՝ կին մարգարէ, որ զԲա-
րակ յորդորելով բանակին գլխաւոր դրաւ, և
յաղթեց Սիսարա Քանանացւոց զօրավարին.
Գեդէոն՝ որ երեք հարիւր հոգւով խորտակեց
զՄադիանացիս. Յեփթայէ՝ որ յաղթեց Ամո-
նացւոց և քան քաղաք կործանեց. Սամփսոն՝
որուն հրաշալի ուժը առակ դարձաւ, և ինչուան
իր մահը Փղշտացւոց ահ և երկիւղ եղաւ. Հեղի
և Սամուէլ:

Հեղի տակաւ դատաւորեցաւ՝ իր որդւոց նկատ-
մամբ: Ապրէն քահանայ էր երբեմն դատաւոր
ընտրուեցաւ. քաղաքական իշխանութիւնը կրօ-
նականին հետ միացընելը լաւագոյն միջոց մը
կարծեցին ազգին չարեաց դարմանն տանելու,
բայց Հեղի երեն որդւոց չեռքը Թողուց ամե-
նայն ինչ, իմանալով ալ անոնց չար վարքը:
Սպանուեցան որդիքը 30,000 Իսրայէլացւոց

հետ փղշտացւոցմէ, որոնք Աստուծոյ տապանին ալ դէմ ելեր էին, որ ազգային միութեան նշանն էր: Հին երբոր լսեց այս դոյժը, դեռեւ ինկաւ և մեռաւ:

Սամուէլն ալ քահանայապետ էր: Իր առջի մնացմունքն եղաւ նորէն աստուածային պաշտամունքը ծաղկեցնել իր ամենայն մաքրութեամբը, և շատ քաղաքաց մէջ մարգարէից դպրոցներ հաստատեց: Եաբը չատ անգամ Եբրայեցիքն յաղթող ըրաւ, և փղշտացիք բռնադատուեցան ետ դարձնել զտապանակը. բայց այնպիսի որոշիչ յաղթանակ մը չըրաւ որ զժողովուրդն օտար թշնամւոյ սպառնալեաց դէմ ապահովցնէր: Սկսաւ ժողովուրդը թագաւոր խնդրել, և կ'ուզէր որ Սամուէլ զանիկայ ընտրէ: Սամուէլ չանաց որ զանոնք իրենց մտքէն եւ կեցցնէ՝ յիշեցընելով թէ Իսրայէլացւոց թագաւորը՝ Աստուած էր: Սակայն երբ ժողովուրդը պնդեց, Սամուէլ Աստուծոյ հարցընելով՝ անոր հրամանաւ զԱաւուղ թագաւոր օծեց:

ԳԼՈՒԽ Գ.

Միապետութիւն:

1. Աաւուղ: — 2. Դաւիթ: — 3. Սողոմոն: — 4. Բաժանումն թագաւորութեան. — 5. Թագաւորութիւն Իսրայէլի: — 6. Թագաւորութիւն Յուդայի: — 7. Գերութիւն և վերադարձ:

1. Աաւուղ (1096): — Սամուէլ նոր վարչութեանը սահմանադրութիւնն ալ դրած էր, որով թագաւորը բանակին զօրապետութիւն կը սեպուէր,

և գործադիր կամոյն Աստուծոյ՝ որուն միակ թարգմանը քահանայապետն էր: Աաւուղ առջի բերան միաձայն գնաց Սամուէլի հետ, բայց եաբը գոռոզանալով ըրած քանի մը յաղթութեանցը վրայ ընդդէմ Փղշտացւոց, Մովաբացւոց, Եթովպացւոց և Ամաղեկացւոց՝ համարձակեցաւ առանց Սամուէլի սպասելոյ՝ ինք իր դիտուն Աստուծոյ զոհ մատուցանել: Վրայ հասաւ Սամուէլ, ու յանդիմանելով զինքն, ըսաւ թէ Աստուծոյ երեսէն իյնալը՝ ըրած անհնազանդութեանն համար. ու ինքզինքէմ քաշուելով Յուդայի ցեղին մէջ, ծածուկ թագաւոր օծեց զԴաւիթ: Անկէ եաբը մեղմացած ոգի մը տիրեց Աաւուղին վրայ. Դաւիթ կանչուելով՝ քնարի ձայնով կը սփոփէր անոր տրտմութիւնը ու չար ոգին կը հալածէր: Այս պատճառաւ, ու նաև իրեն քաջութեանն համար զոր ցըցուց սոսկալի թիկնամարտ Գողիաթին սպանութեամբը, Աաւուղ սկսաւ զինքն և իր աղջիկը կին տուաւ Դաւիթ: Բայց ամէն կողմէն պատանւոյն տրուած գովութիւնքը՝ Աաւուղայ նախանձը գրգռեցին, ու կ'ուզէր սպաննել զԴաւիթ, որ բռնադատեցաւ փախստեամբ ազատիլ անոր ձեռքէն: Քիչ առենէն Փղշտացիք դարձեալ պատերազմի ելլելով, մեծ կոտորած մը տուին Իսրայէլացւոց Գեղբուէ լերանց վրայ: Աաւուղ վիրաւորուած՝ ընտրեց անձնամահ ըլլալ քան թէ թշնամւոյ ձեռքը կրնալ:

2. Դաւիթ: — Այն առեն Դաւիթ թագաւոր ընտրուեցաւ. բայց Աաւուղայ որդւոյն Յեբուսթէի, կուսակցաց ձեռքով, քաղաքական պատերազմ մը ծագեցաւ որ Յեբուսթէի մահուամբը լմընցաւ: Դաւիթ միակ թագաւոր ճանչցուելով, յաղթական պատերազմներով ամրացուց և ընդարձակեց զտէրութիւնը:

Յուդայի ցեղին մայրաքաղաքը Երուսաղէմ ըլլաս, որ Թէ քաղաքական վարչութեան կեդրոն է և Թէ կրօնից սրբավայրը պիտի ըլլար: Հօն Թագաւորական շքեղ պալատ մը կանգնեց, ուր դրաս գտասանակ ուխտին ալ, որ ինչուան այն աստեն հաստատուն տեղ մը չունէր: Դաւիթ կը մտածէր փառաւոր տաճար մ'ալ կանգնել. գարձեալ վարչութեան վերանորոգութիւն մ'ընել՝ որ բոլորովին օտար էր Եբրայեցւոց հասմար: Կրքով կուբացած Աստուծոյ տունէն մեղայ պարագիկան եղաս, որոնք իր Թշնաւորութեանց պատճառ եղան: Աբիսաղոմ որդին իշխանասիրութենէն մղուած, միւս տասը ցեղին օգնութեամբ ապստամբեցաս հօրմէն: Հարկ եղաս որ Դաւիթ գիշեր աստեն Երուսաղէմէն փախչի. բայց եաքը զօրանալով իրեն հաւատարիմ մնացող զօրաց օգնականութեամբ՝ որգոյն դէմ գնաց. Աբիսաղոմ յաղթուեցաս, և փախչելու աստեն սպանուեցաս:

Քիչ եաքը Դաւիթ միւս որգին Ադոնիա ալ ապստամբեցաս. բայց կուսակիցները զինքը Թողուցին. Թողութիւն խնդրեց և ընդունեցաս: Թագաւոր մարգարէն այս տարաբաղդ արկածներէն վերջը երկայն չապրեցաս, Թողով Սողոմոն որգոյն արքունի գահոյքից հետ այն իմաստուն խորհուրդները ալ՝ զոր խիստ փորձովը ստացած էր: Իրեն կ'ընծայուին շատ բանաստեղծութիւնները, մանաւորաբար Սաղմոսը, զոր Եկեղեցին ալ կը գործածէ:

3. Սողոմոն: — Սողոմոն իր Թագաւորութիւնն անաչառ գործով մը սկսաս՝ սպանելով զԱդոնիա եղբայրը, որ կրկին անգամ ապստամբութեան միտք ցոյց եր էր: Որչափ իր հայրը պատերազմասէր էր, Սողոմոն անոր հակառակ խաղաղասէր երևնալով, բարեկամացաս մերձա-

ւոր ազգաց. գաշնակցեցաս Տիւրոսի և Եգիպտոսի Թագաւորաց հետ, և միրայելացիս երկրագաս խաղաղութեան մէջ պահեց. վաճառականութիւնը զարգացընելով՝ երկրին հարստութիւնն ալ շատցուց: Եաքը ուզելով հօրը փափաքն ի գործ գնել, Երուսաղէմայ մէջ մեծագործ տաճար մը կանգնեց, որուն չինութիւնը եօթն ուկէս տարի տևեց. Թագաւորական պալատ մ'ալ չինեց. և փառաւոր գաւիթով մը պատեց, շատ չէնքերով գեղեցկացուց քաղաքը և պարսպեց, և զանազան քաղաքներ ալ չինեց կամ մեծցուց, և Պալմիրա քաղաքն Ասորւոց անապատին մէջ կառոյց: Իմաստուն էր և հզօր, հմուտ նաև բնական գիտութեանց, բանաստեղծութիւնը ծաղկեցուց, ու այլևայլ գրուածոց հեղինակ եղաս. ինչպէս Առակաց, Եկեղեսիաստէս կամ Ժողովող և Երգ Երգոց ու ըստ ոմանց նաև Իմաստութիւն կոչուած գրոց: Իրեն փառքը այնչափ հռչակեալ էր՝ որ Թագաւորներ կուգային զինքը տեսնելու և իր իմաստութեան վրայ զարմանալու: Բայց Սողոմոն ալ ինչուան վերջը Աստուծոյ հաւատարիմ չմնաց. ու օրինազանցութեամբ օտար կանանց հետևէ եչնալով, ոչ միայն անոնց կռապաշտ կրօնից ազատութիւն տուաս, այլ նաև անոնց սիրովը կուրնալով՝ ինքն ալ սուտ աստուածոց զոհեց: Իր այս գործով Թէ Աստուծոյ բարկութիւնը շարժեց իրեն գէմ, և Թէ Ժողովրդեան գայթակղութեանը պատճառ եղաս. սահմանակից ազգաց մէջ խռովութիւնք ու նեղութիւն յարուցանելու յայտնի նշաններ երևցան, որ Յերոբովամայ ձեռօք կը պատրաստուէր: Սողոմոնին վերջին տարիները գառնութեամբ անցան, և Ճշմարտեցին իր մեկ վճիռը Թէ « Ամենայն ինչ ընդունայնութիւն է, և յօժարութիւն ոգւոյ»:

4. Թագաւորութիւն։ — Սողոմոն (976) Ռեհաբեամ՝ Երոբովամ որդին գնաց ՚ի Սիւքեմ Թագաւորելու համար։ Այն ատեն Յերոբովամ Նաբատայ որդին Եփրեմի ցեղէն, դիմացն ելաւ Ժողովրդեան կոչմանէ, և խնդրեց որ հարկերը թեթեւցընէ, զոր հայրը ծանրացուցած էր Ժողովրդեան վրայ։ Խնդիրը մերժուեցաւ՝ ատոր պեղերը չուզեցին ճանչնալ զինքն իբրեւ Թագաւոր, և զՅերոբովամ Թագաւոր հրատարակեցին։ Յերոբովամ իր Թագաւորութեան աթոռը ՚ի Սիւքեմ դրաւ՝ որ 50 տարիէն վերջը Սամարիա փոխադրուեցաւ։ Իսկ Սողոմոնի որդւոյն հաւատարիմ մնացին միայն Յուդայի և Բենիամինի ցեղերը։ Այսպէս երկփեղկեցաւ Թագաւորութեան միութիւնը, զոր ոչ Երոբովամ և ոչ ալ իրեն յաջորդները կրցան միացընել։

5. Իսրայէլեան Թագաւորութիւն։ — Տասը ցեղին Թագաւորութիւնն, որ Իսրայէլեան Թագաւորութիւն ըսուեցաւ, 255 տարի տեւեց, և 19 Թագաւոր ունեցաւ։ Այսոնք Յահուացին արգիլուլ որ իրենց հպատակները Երուսաղէմ չերթան. և այս վախճանաւ Յերոբովամ տաճարներ կանգնեց և հոն հուռթեր և քուրմեր դրաւ։ Իսրայէլի բոլոր Թագաւորները կռապաշտ, անդուէ և ամբարիշտ եղան, և կարծես Թէ իրենց Թագաւորութիւնը կործանել կը ջանային. բայց ամենէն աւելի ամբարիշտ երևցաւ Աքաաբ։ Անգադար ապստամբութեամբք ու միշտ փոխելով զթագաւորները, արեամբ կը լուային գաբեր-Թիւնք, առանց մեկ ընելու Եղիայի, Եղիսէի, Յովհաննու, Ովսէի, Ամովսի մարգարէից խմաւոնէ ատուած ազդեցիկ ազդարարութեանց։

Երբոր Մանայէմ կը Թագաւորէր 760ին՝ Փուղայ Ասորեստանի Թագաւորը Ջանաց, Իսրայէլ չփոթութենէն օգուտ քաղելով, տիրել երկրին։ Մանայէմ հազար տաղանդ հարկ տալով դնեց զնաղաղութիւնը. սակայն իբր 730 ին՝ Թագղաթփաղասար Ասորեստանի ուրիշ Թագաւոր մը Իսրայէլի Թագաւորութենէն մաս մը գրաւեց և չատ Իսրայէլացիներ գերի տարաւ։ Յամին 721, Յովսէէ՝ Իսրայէլի Թագաւորը, արհամարհելով զԱզմանասար Ե. Ասորեստանեայց Թագաւորը, չուզեց վճարել հարկը, և ջանաց նորէն անկախութիւնը ձեռք բերել. Սաղմանասար անոր դէմ ելաւ և պաշարեց զԱմարիա, առաւ քաղաքը, զՅովսէէ բոլորը Իսրայէլացւոց հետ գերի տարաւ. և տիրած աշխարհքը քաղդէացի բերաւ բնակեցուց։

6. Յուդայի Թագաւորութիւն։ — Երկու ցեղին Թագաւորութիւնը, որ Յուդայի Թագաւորութիւն կը կոչուի, 389 տարի տեւեց և 20 Թագաւոր ունեցաւ։ Յուդայի Թագաւորութիւնն որ գարէ մը աւելի քշեց քան զԻսրայէլի Թագաւորութիւնը և գրեթէ նոյնչափ Թուով Թագաւոր ունեցաւ՝ յայտնի նշան է Թէ Յուդայի Թագաւորութիւնն աւելի խաղաղութիւն վայելած է։ Իրեքու կէս գար Դաւիթի տանը մէջ մնաց Թագաւորաց յաջորդութիւնը, և այս Թագաւորք աւելի յարգեցին մովսիսական օրէնքները, և մէջերնին չատերը բարեպաշտ գտնուեցան ու փոյթ ունեցան Ժողովրդեան բարօրութեան։ Յովսափաթայ իշխանութիւնն այնպէս լուսաւոր, հզօր և բարերար եղաւ որ Դաւիթի և Սողոմոնի գեղեցիկ ժամանակներն յիշեցուց։ Բայց Յուդայի Թագաւորաց մէջ ալ օրինազանց չպակսեցան, որոնք տէրութիւնը մեծ վտանգի մէջ ձգեցին, զարգացընելով կռապաշտութիւնը, և կամ Իսրայէլացւոց Թագաւորաց

որդեկը մը չուզելով դնել անոր յառաջագիմութեանը:

Իսրայելի Թագաւորութեան ըմբռնալու ժամանակ, Յուդայի կը Թագաւորէր Եզեկիա, ընութեր Թագաւորաց մեկը. որ չուզելով Թագաւորել, բաղաբայ էր հօրը վրայ գրած հարկը վճարել, Ասորեստանեայց Սենեքերիմ Թագաւորը պատերազմ հրատարակեց իրեն դէմ յամին 793, և պաշարեց զԵրուսաղէմ, և միայն քաղաքն առնելէն ետքը Եգիպտացւոց վրայ ալ երթալ՝ զորութիւն Եզեկիա օգնութեան կանչելը էր: Բայց աստուածային տակալի հարուած մը բանակին մէջ իյնալով և անոր մեծ մասը քիչ ժամանակուան մէջ կոտրելով, բռնադատուեցաւ փախչիլ տագնապաւ:

Մանասէ Եզեկիայի որդին և Ամոն եղբօրորդին նշանաւորութիւն եղան իրենց անօրէն գնացքով. ասոնց յաջորդեց Յովսիա բարի Թագաւորը, որ գաշնակցեցաւ Եգիպտոսի Նեքաւով Թագաւորին, և անոր հետ Ասորեստանեայց գէմ պատերազմի ելլելով, ընկաւ մեռաւ: Իսկ Նեքաւով առջի բարեկամութիւնը Թշնամութեան փոխելով՝ մտաւ՝ի Հրէաստան, Երուսաղէմը առաւ, Յովսիայի որդին գերի տարաւ և անոր տեղ Թագաւորեցուց զՅովակիմ:

Քիչ ետքը Նաբուգոդոնոսոր Բաբելոնի Թագաւորը Նեքաւովի դէմ ելաւ, յաղթեց, ու Յովակիմ՝ անոր նիզակակից վրայ երթալով Երուսաղէմ առաւ, և գերի տարաւ (605) զՅովակիմ տասը հազար գերեաց հետ: Երբոր Եզեկիա Յովակիմին երկրորդ յաջորդը փորձ փորձեց Եգիպտացւոց օգնութեամբն ապստամբելու, Նաբուգոդոնոսոր նորէն Երուսաղէմի վրայ ելաւ, սովի բռնեց, առաւ և կործանեց զքաղաքը (587), և գերեթէ բոլոր Հրէաստանի բնակիչները գերի տարաւ՝ի Բաբելոն:

7. Գերութիւն և գերեզման: — Երբոյեցիք Բաբելոնի զանազան գաւառաց մէջ ցրուելով մարդասիրութիւն գտան. աղատութիւն տրուեցաւ իրենց բնիկ գաւառները ընտրել, որ ըստ իրենց օրինաց խնդիրները լուծեն և կարենան երկրաւոր ըլլալ և ամենք ինչպէս նաև Դանիէլ, մեծամեծ պատուներու ալ հասան: Բայց ոչ հայրենիք և ոչ տաճար ունէին, և չէին կրնար մոռնալ զԵրուսաղէմ, և իրենց տխրութեանց միակ սփոփանք այն մարգարէութիւնն էին՝ որոնք իրենց գերեզմանը կը նախաձայնէին: Եւ այս կատարեցաւ. Կիւրոս պարսից Թագաւորը Բաբելոնի վրայ երթալով տիրեց անոր, որով Երբայեցիք ալ Քաղդէացւոց իշխանութենէն՝ Պարսից իշխանութեան տակ ինկան. և որով հետև նոր աշխարհակալը չէր կրնար Թշնամի ըլլալ Բաբելոնի Թշնամեաց, ուստի 536ին հրովարտակ հանեց, որով հրաման կուտար Երբայեցւոց գտնալ իրենց երկիրը: Մէկէն ելան անկէ Չօրաբաբելի առաջնորդութեամբ քառասուն ու երկու հազար հոգիէն աւելի, գրեթէ բոլորն ալ Յուդայի և Բենիամինի ցեղէն: Հազիւ հայրենիքնին գարձան, սկսան տաճարը վերականգնել, զոր յետ բազում արգելքի՝ 516ին լմնցուցին և նաւակատիք կատարեցին:

ՀՐԷԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչուան հիմայ պահուած սուրբ գրոց երեք օրինակագրոց տարբերութիւնք (Եօթանասնից Թարգմանութիւն, Սամարացւոց և Հրէից) անծայր, բայց շատ խելացի գրութեանց առիթ եղած են: Մեր գործածածն Պոսիւէի խօսք՝ի վեպս ազգաց գրոց մէջ եղած Թուականն է, և Աբրահամ Ճգնեալ վերոյիշեալ հեղինակին բանեցուցածը, զոր Պուտարսն և Փիլ գործածեցին երեքից Հին պատմութեան ճշտութիւնը համար:

Ստեղծուածն աշխարհի ըստ Պոսիւէի 4004 — ըստ Աբրահամին Ճգնեալ ղԹուականս 4963.

ԳԼԽԱՒՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽՔ

	Պ. (1)	Ա.
	ծնունդ մահ	ծնունդ մահ
Ադամ	4004 5074	4963 4033
Նոյ	2978 2029	2908 2958
Սեմ	2446 1846	3408 2308
Նաքովր	2155 2007	2515 2567
Թարայ	2126 1921	2456 2291
Աբրահամ	1996 1221	2366 2191
Իսահակ	1896 1716	2266 2086
Յակոբ	1836 1689	2206 2059
Մովսէս	1571 1451	1725 1605

1 Յուցակիս մէջ Պ. կը նշանակէ Պոսուէի գործածած Թուականն, իսկ Ա. Աբրահամ Ճգնեալ Թուական:

Ըստ Պոսիւէի ելքն Յեգիպտոսէ 1491 — ըստ Աբրահամին Ճգնեալ 1645: Յեսու դատաւոր. Պոսիւէ 1451–1434 — ըստ Աբրահամին Ճգնեալ 1605–1580: Քաղէբ և Ծերակիսան. անհիշանութիւն. Պոսիւէ 1434–1413. ըստ Աբրահամին Ճգնեալ. 1580–1562. Ա. Ծառայութիւն, Պոսիւէ 1413–1405. ըստ Աբրահամին Ճգնեալ ղԹուականս 1562–1554:

ԴԱՏԱՒՈՐՔ

		ծնունդ մահ		ծնունդ մահ
Գոդոնիէլ		1405 1365		1554 1514
Բ. Ծառայութիւն, Պ.		1365 1347	Ա.	1514 1496
Աեհուդ և Սամեգար .		1347 1325		1496 1416
Գ. Ծառայութիւն, Պ.		1325 1305	Ա.	1416 1396
Դեբովրա և Բարակ .		1305 1252		1396 1356
Դ. Ծառայութիւն .		1252 1245		1356 1349
Գեդէոն		1245 1236		1349 1309
Աբիմելէք		1236 1232		1309 1306
Թովղա		1232 1209		1306 1285
Յայիր		1209 1187		1285 1261
Ե. Ծառայութիւն, Պ.		1205 1187	Ա.	1261 1245
Յեփթայէ		1187 1181		1245 1237
Եսեբոն		1181 1174		1237 1230
Եղոն		1174 1164		1230 1220
Աբդոն		1164 1156		1220 1212
Զ. Ծառայութիւն, Պ.		1156 1116	Ա.	1212 1172
Սամսոն		1156 1119		1172 1132
Հեղի		1156 1116		1132 1112
Մէջ պարապ .		1116 1039		1112 1092
Սամուէլ		1099 1095		1092 1080

ԹԱԳԱՒՈՐՔ

	Ծնունդ	մահ	Ծնունդ	մահ
Սաւուղ	1095	1055	1080	1040
Դաւիթ	1055	1015	1040	1001
Սողոմոն	1015	975	1001	962

Տոմն ցեղից բաժանուածը. Արուեստ ճշդելոյ 975. Պասիւէ 962։

Ա. ԹԱԳԱՒՈՐՔ ԻՍՐԱՅԵԼԻ

	Ծնունդ	մահ	Ծնունդ	մահ
Յերոբովամ Ա. . .	975	954	962	945
Նաբատ	954	953	945	942
Բաասա	953	930	942	919
Իլա	930	929	919	918
Զամբրի և Ամրի . .	929	913	918	907
Աքաաբ	918	898	907	888
Ոքոզիա	898	896	888	887
Յովրամ	896	885	887	876
Յէհու	885	856	876	848
Յովաքազ	856	839	848	832
Յովաս	839	826	832	817
Յերոբովամ Բ. . .	826	785	817	776
Մէնէ պարապ .	785	772	776	767
Զաքարիա	772	771	767	766
Սեղղում	—	771	766	—
Մանայեմ	772	761	766	754
Փակիա	761	759	754	753
Փակէէ որդի Ռոմելիայ	759	739	753	726
Ովսէէ.	739	721	726	718

Սամարիայի առումն Սաղմանասար Ասորեաց թանի Թագաւորէն, և Իսրայէլի Թագաւորութեան վերջանալն 721 718

Բ. ԹԱԳԱՒՈՐՔ ՅՈՒԴԱՅ

	Ծնունդ	մահ	Ծնունդ	մահ
Ռոբովամ	975	958	962	946
Աբիա	958	955	946	944
Ասա	955	914	944	904
Յովսափատ . . .	914	889	904	880
Յովրամ հօրը հետ, Պ.	892	—	Ա. 889	885
Ոքոզիա	885	884	877	876
Գոթողիա	884	878	876	870
Յովաս	878	826	870	831
Ամասիա	826	810	831	803
Ողիա կամ Ազարիա .	810	759	803	752
Յովաթամ	759	742	752	747
Ահազ	742	726	737	725
Եզեկիա	726	698	725	694
Մանասէ	698	643	694	640
Ամոն	643	641	640	639
Յովսիա	641	— 610	639	— 608
Յովաքազ	—	610	— 610	— 608
Եղիակիմ կամ Յովակիմ	610	— 599	608	— 597
Յովակիմ կամ Յեքոնիա	—	599	—	— 597 —
Սեդեկիա	599	— 588	597	— 587

Բարձումն Յուդայի Թագաւորութեան, ըստ Պասիւէի 588. — Արուեստն ճշդելոյ դնէ 587. Նաբուզոդոնոսոր Բ. Ասորեստանեայց Թագաւորին ձեռքով, որ տէր եղաւ Երուսաղէմի ըստ Պասիւէի 606. — Արուեստն ճշդելոյ դնէ 606։

Բաբելոնական գերութիւն 70 տարի 606-536.

Յեսու.	536	502	մօտ 536
Նեեմի կառավար . . .	441	429	445 433
Աշտիքոս տիրէ Երուսաղէմի	170		
Մատաթիաս	168	166	

ՄԱԿԱԲԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՔ ԵՒ ԹԱԳԱՒՈՐՔ

Յուդայ Մակաբէ . . .	166	161
Ալկիմոս	163	160
Յոնաթան	161	144
Սիմոն Գ.	144	136
Յովհաննէս Հիւրկանոս Ա.	136	107
Արիստաբուղոս Ա. . . .	107	106
Աղէքսանդր Յովհաննա . .	106	79

ՕՏԱՐ ԹԱԳԱՒՈՐՔ

	Ն. Ք.	Ց. Ք.
Հերովդէս	40	1
Արքելայոս Էթրոգապէտ	1	13
Փիլիպպոս	1	34
Հերովդէս Անթիպաս . .	1	31
Պիղատոս պոնտացի դատաւոր	27	36
Արիստաբուղոս Գ. . . .	24	»
Ագրիպպաս Ա.	39	44
Ագրիպպաս կրտսեր . . .	44	90

ԵԳԻՊՏԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Հին ժամանակներուն Եգիպտոսի վրայ ունեցած գիտութիւնը:

1. Աշխարհագրական համառօտ տեղեկութիւն: — 2. Առջի չորս հարստութիւնք: — 3. Երկրորդ հարիւրամեակին ներքուստ երկպառակութիւնը: — 4. Երկրորդ հարստութիւն: 5. Հիւկսոսք: — 6. Ազատութիւն:

1. Աշխարհագրական համառօտ տեղեկութիւն: — Եգիպտոս՝ հիւսիսին Միջերկրականին, արեւելքէն՝ Սուէզի ջրանցքին և Արաբիոյ ծոցին, հարաւէն՝ Եթովպիոյ և արեւմուտքէն՝ Լիբիոյ անապատին սահմանակից՝ երկայն և նեղ հովիտ մ'է. որուն երկու կողմէն կը ղուդրենթանան արաբական և լիբեական լեռները Նեղոսի ամբողջ երկայնութեամբ: Ա՛ս գետն այնչափ կարեւոր է Եգիպտոսի արգասաւորութեան՝ որ Երոդոտոս հին յոյն պատմիչն ղեգիպտոս պարգեւ Նեղոսի կը կոչէ: Գետին ջուրն Եթովպիոյ (Հապէշ) լերանց վրայ եկած սպրբերական անձրեւներով

կ'աճի՝ սկսեալ ամառնային արեւադարձէն [illegible] ջուան աշնանային գիշերահաւասարը. այս ա- տեն Եգիպտոս լայնածաւալ ձոր մը կերեւա- նակ կ'ունենայ: Ձմեռնային արեւադարձին ջու- րը կը ցածնայ, և քաշուելով՝ դաշտերու վրայ արգասաւորիչ դիւրա մը կը ձգէ: Աւանդ ասոր գրեթէ ամենուն անանձին Եգիպտոս՝ չոր ցա- մաք անապատ մը կը դառնար: Իսկ հեռուս տե- ղեր ջրելու համար՝ ուր որ գետոյն ջուրը չէր կրնար հասնիլ, անթիւ ջրանցքներ բացուե- ցան. և աս ջրանցքներէն մէկը կ'երթար Մերի- սեան լիճը կը թափէր, որ արուեստիւ բա- ցուած էր ոռոգմանց համար:

Ուրիշ ձոր ալ կան Եգիպտոսի հիւսիսային կողմը, յորոց մի է և Մարէոտիդա ծովակն:

Ծովէն 160 հաղարամեդր հեռու՝ Նեղոս եր- կու կը բաժնուի, որ հին ատեն եօթը ձիւղ ե- ղած էր, յորոց արեւելեանը Պելուսեան և ա- րեւմտեանը Քանոպեան ձիւղ կը կոչուէին: Մի- ջերկրականի և սա երկու ձիւղերու մէջ եղած երկիրն՝ իր ձևոյն համար Տելտա կոչուեցաւ:

Սովորաբար երեք մասն կը բաժնուի Եգիպ- տոս. Սաորին Եգիպտոս կամ Տելտա, Միջին Ե- գիպտոս կամ Եօթնաձաւաւ, Վերին Եգիպտոս կամ Թեբայիդ: Երկու են հին մայրաքաղաքները, հարեւրադուան Թեբէ՝ որուն լայնածաւալ աւե- րանները ինչուան հիմա սեռոցոց զարմանքը կը շարժեն. Մեմֆիս՝ որուն մնաերը կը բար- ձրանային անուանի բրգունք: Ուրիշ քաղաքնե- րէն յիշատակուելեան արժանի են Սիւենէ, Լա- թոպոլիս, Թէնթիւրա, Ապիտոս, Թինիս, Քէմ- նոս, Հերմոպոլիս, Հերակլեոպոլիս մեծ. Սայիս, Հելիոպոլիս, Նաւկրատ, Մենաֆիս, Դանիս, Բու- բաստէ և Պելուսիոն:

2. Աւաջին ըրս հարսպոռիանները: — Մեկզի

թողլով այն առասպելական պատմութիւնները, որ կ'աւանդեն թէ մարդկան ցրուելէն հաղա- րաւոր տարի առաջ Եգիպտոս բնակիչ ուներ և աստուածներէն և կիսաստուածներէն կը կա- ռավարուեր, Եգիպտոս պատմական անկախ քաղաքութիւն հարստութիւն ունեցաւ. ոմանք ժամանակակից և մտանական, ոմանք ալ յաջոր- դական և չարունակ:

Աւաջին հարստութեան սկսողն Մենէս ե- ղաւ, որ ըստ աւանդութեան՝ իրեն մայրաքա- ղաք ըրաւ Մեմֆիսը. Նեղոսի ընթացքը կանո- նաւորեց, ցամքեցընելով որչափ որ կրնար՝ քաղ- քին շրջակայքը գտնուած երկիրները, արշա- ւանքներ ըրաւ և որսի մը մէջ ձիագետիէ մը սպաննուեցաւ:

Աթոովթիս Մենեսի որդի և յաջորդ. Մեմֆիսը մեծցուց, բժշկական դրքեր գրեց, գիտութեանց պաշտպան կեցաւ և խաղաղ թագաւորութիւն մը ունեցաւ:

Վեց ուրիշ յաջորդներէն ետքը Մենեսի ու- ղիղ գիծը լմընցաւ, և սկսաւ երկրորդ հարս- տութիւնն՝ որ ինն թագաւոր ունեցաւ և կամ փարաւոններ, որոնցմէ երկրորդը Կեքովս՝ կենդանեաց պաշտօնն հաստատեց:

Երրորդ հարստութեան ինն կամ տասնըմեկ թագաւորաց մէջ անուանի եղաւ Թոսորթրոս որ նոյն ատենին գործածական գիրերն կատա- րելագործեց, և այնչափ զարգացուց բժշկու- թեան արուեստն՝ որ զինքն Ասկղեպիոս կոչեցին:

Չորրորդ հարստութիւնը տասնուեօթն փա- րաւոններ ունեցաւ: Իրեք առջիններըը Քեոպս կամ Սուփիս, Կեփրէն կամ Սոփրիս, Միկերին կամ Մենքերէս, կանդնեցին եօթանասուն բըր- գանց երեք առաջին ծանօթ և մեծամեծ բրգերն, և իրենց գերեզմանի համար պատրաստեցին:

Մինչեւ իսաղաղասէր էր, քաղցր, արդարա-
կորով, որով և ապրեցաւ մահկիր արուեստա-
իրեն: Ընդ հակառակն միա երկուքը մանաւա-
րապէս Փիոպս՝ գոռոզ և բուռն Թագաւորներ
եղան, ծանր աշխատանաց մէջ և երկայն տարի-
ներ հաղարաւոր մարդիկ ծառայեցուցին: Ժո-
ղովուրդը քինախնդիր եղաւ՝ չկրնալով որ իրենց
դիակները Թաղուին այն գերեզմանաց մէջ զոր
կառուցին:

3. Հինգերորդ հարսպոնենին դնել երկոսաներ-
հարսպոնիոնը: — Երբ ըսինք Թէ Մերիս համա-
նուն Հին բացողն՝ և Նիտոկրիս, որ ըստ Մանե-
Թոնի՝ ժամանակին ամենագիւտցուն և գեղեցիկ
Թագուհին էր՝ վերերորդ հարստուԹենէն են,
երկոտասաներորդ հարստուԹենէն առաջ եղած
հարստուԹեանցը վրայ ըսելիք չատ բան չի մնար,
կամ փարաւոնաց պարզ անուններն միայն գի-
տենք, և կամ գոյն ալ չենք գիտեր. խնատ չկոԹի,
անստոյգ, և մեզ ի եգիպտոսի պատմուԹեան
այս մկրճէն:

4. Երկոսանեերորդ հարսպոնիոն: — Երկոտա-
սաներորդ հարստուԹիւնը իր գահը Թեբէ
գրաւ, ուր արդէն մեռտասաներորդ հարստուԹ-
իւնը վոխադրած էր, և հոն մնացին մինչ և
բենց յաջորդ հարստուԹիւններն ալ: Առաջինն
եղաւ Ամմենեմաս որ եօԹը յաջորդ ուներ ետ:
Ամենէն ալ երևելի և բազմարդիւն եղան. վասն զի
ընդարձակեցին տերուԹեան սահմանները, և
Նեղոսի ընԹացքը կարգաւորեցին, երկիրներ
ցամքեցուցին, ժողովուրդը բազմացաւ, և հետ
զհետէ զարգացան արուեստքն:

Բայց ամենէն անուանի Սեսորգանէս Գ. ե-
ղաւ, զոր Յունք Սեսոսար կ'անուանեն. ինչպէս
կոչեցին Սեսոսարիս և զՊամֆէս ի. տասնու-
ինեերորդ հարստուԹենէն, և մեկուն գոր-

ծերը միասին հետ չհոԹեցին, որով չենք կրնար
որոշել Թէ ինչ գործեց ամեն մեկը: Սակայն
Սեսորգանէսին կ'ընծայուին եգիպտոսի հարա-
ւակողմն կատարուած մեծամեծ զինուորական
քաջութիւններն և աշխարհակալուԹիւնները.
իրեն կը պրուի չատ փառաւոր շինուածոց
փառքը, և երկայն տաեն եգիպտացիք զինքը
Թագաւորի մը կատարեալ օրինակ համարեցան:
Ուրիշ հարստուԹենէն փարաւոն մը Ամմենե-
մաս Գ. չինեց անուանի բաւիղն կամ լաբիւրին-
Թոսը որ աշխարհիս հրաշալեաց կարգն անցաւ:

5. Հիւկոսոս կամ Հովխոս: — Երկոտասաներ-
որդ հարստուԹենէն մինչև տասնըեօԹներորդը, այնպիսի մուԹ և խառնակ ժամանակ մ'ե-
ղաւ, որ միչին դար եգիպտոսի կոչուեցաւ:

Երեքտասաներորդ հարստուԹեան վերջերը, Սուէզի կողմէն Նեղոսի հովիտը Թափեցաւ Ասորեքէն և Արաբիայէն վրանաբնակաց հը-
րոսակ մը: Ասոնք հիւկոսոսք կը կոչուէին, այսինքն է Հովիւ Թագաւորք: Որոնք առաջ քալեցին, քաղաքներն այրեցին, յիշատակարան-
ները կործանեցին, երկիրը տակն ու վրայ ըրին, և բնակչաց հետ անգԹաբար վարուելով տէր եղան Սասրին և Միջին եգիպտոսի: Իրենց Թա-
գաւորներէն՝ որոնց առաջինն եղաւ Սաիտէս՝ Տէլտայի Դանիս կամ Աւարիս քաղքին մէջ դրին Թագաւորական աԹոռը:

Փիչ ժամանակուան մէջ փոխուելով իրենց վայրագ մոլեգնուԹենէն զարմանալի քաղաքա-
կանուԹեան մը կերպարանք առին: Սկսան կըր-
Թուիլ, նորոգել յիշատակարաններն և նորեր
ալ կանգնել. աղատուԹիւն տուին եգիպտա-
ցւոց իրենց կրօնքը պաշտելու, և իրենք ալ մա-
սամբ ընդունեցան իրենց նոր հայրենեաց սովո-
րուԹիւններն: Ասոնց ատենը եգիպտոս եկաւ

Յովսէփ նահապետն. որ եթէ փոխանակ Ափով-
փիսի, որ Սաւեսի յաջորդներէն մէկն էր,
քնիկ Թագաւորի մը հանդիպէր՝ գժուարաւ ըն-
դունելութիւն կը գտնար, և աւելի ևս գժուա-
րաւ պիտի կարենար զԵգիպտոս անոր քաղա-
քականութեամբը կառավարել:

6. Ապոստրոֆն: — Հիւկոսոնեերուն տիրապե-
տութեան ժամանակին տեղուվերութիւնն անսպոպ
է. ոմանք երկու՝ և այլք տասը դար կը հաշուեն:
Հաւանական կարծիքն է թէ 2,200ին սկսած ըլ-
լայ և 1,700ին վերջացած: Հիւկոսոսաց տիրապե-
տութիւնն, ինչպէս որ ըսինք, Մինչեւ և Սաորին
Եգիպտոսի վրայ էր: Թէբայիդը եգիպտական
Փարաւոններուն մնաց, որոնք բնականապէս
օտարները դուրս վռնտելու վայրկենին կըսպա-
սէին փափագանօք: Սաորին Եգիպտոսէն դէպ
'ի Թէբէ կը վազէին բոլոր ազատասէրները. և
Հօթնեւտասնեերորդ հարստութեան առեն թա-
գաւորը Թէբէէն առաջ ազատութեան
առաջին նշանը. և այնպիսի սաստիկ ու երկայն
պատերազմ մը սկսաւ, զոր ոչ ինքը և ոչ իր յա-
ջորդն Ֆարաւ կրցաւ լմնցընել: Փառքն Ամոսե-
սի պահուած էր որ հիմնագիր եղաւ ութե-
տասներորդ հարստութեան:

ԳԼՈՒԽ Բ.

Հիւկոսոսաց տիրապետութիւնն մինչեւ պատերազմ տիրապետութիւնը:

1. Ութեւտասներորդ հարստութիւն. Ամոսե: — 2. Ամոսեսի յաջորդները: — 3. Իննեւտասներորդ հարստութիւն: — 4. Րամեսէս Բ: — 5. Րամեսէսի յաջորդք: — 6. Անկումն: — 7. Օտարաց արշաւանք: — 8. Երկոտասանից պետութիւն. Փաամմետիքոս: — 9. Փաամմետիքոսի յաջորդք:

1. Ութեւտասներորդ հարստութիւն. Ամոսէս: — Ազգային կռուոյն վերջին տեսարանը յԱեարիս բացուեցաւ որն որ Հիւկոսոսաց ամբոխ ապաստանեալ դարձեր էր: Սախտուելով անձնատուր ըլլալ՝ Եգիպտոսէն էլան 240,000 հոգի: Հաւանական է թէ շատերն ալ թէ և յաղթուած և գերի՝ սակայն լաւ տեղեկին մնալ այն երկրին մէջ ուր ծնած և մեծցած էին: Ամոսէս բոլորովին տիրելով Եգիպտոսի՝ որուն մայրաքաղաք եղաւ Թէբէ՝ կանգ քիչ ժամանակի մէջ օտար տերութեան և ոչ հետք մը թողուլ. մշակութեամբ, վաճառականութեամբ, յիշատակարաններ, արուեստներով՝ թագաւորութիւնը փառաւորեց: Ջինքն ալ ձեռքէ չձգեց, որովհետև արշաւեց 'ի Նուբիա և Լիբիա և ընդդէմ տերևլի Հիւկոսոսաց՝ անոնց բուն հայրենի հողին մէջ՝ յարևմտեան Ասիա:

2. Ամոսեսի յաջորդք: — Ութեւտասներորդ հարստութիւնը լեռն ուրիշ փառաւորներ ալ ու-

նէ, որոնցմէ չորսը Ամենովփիս կը կոչուին, չորսն ալ Տուքմովսիս և վերջինը Ովբոս։ Եթէ Ովբոս և իր անմիջական նախորդը Ամենովփիս Դ. կրօնամոլութեամբ վառուած քիչ մը աղօտացուցին իրենց հարստութեան փառքը՝ միւս մարդիկը մեծ և արժանի ժառանգք եղան Ամենսեսին, բարեյաջող արշաւանօք Լիբիկէ և Ասիա, և ձարտարապետական զարմանալի մեծագործութեամբք։

Տուքմովսիս Գ.ին համար կրնանք ըսել թէ այն աստիճանի հասուց Եգիպտոսի այժը՝ որ կրնար պարծիլ թէ ոչնչ պէտք կրնար ունենալ հասոպոլէ. և թէ Քառնաքի մեհենին մեծագործ խորաքանդակը որ իր գլխաւոր մեծագործութիւնն է, և նոյն պոռ կը կոչուի՝ վրան փորագրուած՝ պերեսց և իր փառաւոր յաղթանակաց և ասարտուութեանց անթիւ վիճակագրական հաշուոցը համար։

Ամենովփիս Գ.ի զոր Ցոյնք Մեմնոն կ'անուանեն գործերն են մեծաս մասամբ Լուքսորի տաճարը և պալատը կամ պալատանց միութիւն մը ի Թեբէ որ Մեմնոնեան կոչուեցաւ։ Իրենն է գարձեալ այն հսկայաձև անուանի արձանը, որ արևուն ծագման առեն զարմանալի կը հնչէր. որուն թէպէտ չէն կրցած հասնիլ մեհնութիւն մը տալ, սակայն շատ ակնատեսից վկայութեամբք անտարակուսելի կ'երևնայ։

3. Ինեֆաներդրդ հարսրոնիեն։ — Քրիստոսէ առաջ հնգետասաներորդ դարու գրեթէ կէսին՝ սկսաւ իննետասներորդ հարստութիւնն, որ երկու գարէն քիչ նուազ տևեց, և փառաւոր նախընթաց հարստութեանը հետևարեցաւ, մանաւանդ թէ գերազանցեց ալ. և սա առենն է որ Եգիպտոս զօրութեան և քաղաքականութեան

ծայրն հասաւ։ Ռամեսէս Ա. որ հիմնադիրն է, քիչ թագաւորեց. և չիրմային արձանագրութեանց մէջ քիչ տեղեկութիւն կայ վրան։ Իր որդին կամ փեսան Սեթովս Ա. որ իրեն յաջորդեց՝ առաջին բազդախնդիր պատերազմող և մեծագործ թագաւորաց մէկն է։

4. Ռամեսէս Բ։ — Ամենէն աւելի անուանի, մանաւանդ թէ բուն վիպասանական դիւցազն իր որդին Ռամեսէս Բ. եղաւ՝ զոր Ցոյնք Սեսոստրին հետ կը շփոթեն։ Ըստ Ցոնաց՝ տիրեց Եթովպիոյ, ապա Երիտրեան (Կարմիր) ծովը 400 նաւով նաւատորմիղ մը ղրկեց, անցաւ բանակաւ Ասիա և Գանգեսէն անգին գնաց՝ մինչև Հնդկաստան Ովկիանոսը և պատերազմաւ Սկիւթացւոց դէմ եղաւ՝ մինչև ի Դանայիս (Տան գետ) գաղթականութիւններ հաստատեց Սև և Կասպից ծովերուն միջոցը, Թրակիա մտաւ, ուսկից սովէն և օդոյն դառնութենէն ստիպուած՝ Եգիպտոս դարձաւ։ Ինն տարի չարունակ յաղթութիւնները ընկերն եղաք։ Բայց այս է էրաւը՝ որ եգիպտացիք յիշեալ աշխարհաց ոմանց և ոչ անունը գիտէին. և Ռամեսէս արևմտեան Ասիոյ մէջ Հայաստանէն անգին անցած չէ. և իր պատերազմները ոչ թէ աշխարհակալութիւնք էին, այլ ապստամբութիւնները նուաճելու համար պաշտպանողական կռիւներ. և աւելի քանք մ'էր հօրմէն աւանդած տերութիւնը ոտքի վրայ պահել։ Սորդ է գարձեալ որ ինքը արքունեաց փառաւորութեան և շինուածոց կողմանէ գերազանցեց քան զամենայն Փարաւոնները։ Անգութ եղաւ, և իրեն անգթանալուն աւելի եղան մեծամեծ շինուածները որոնց համար աշխատութեան մէջ կը մեղմցնէր բոլոր պատերազմի մէջ առնուած գերիները, Եգիպտոս բնակող օտարականները, և նոյն իսկ Եգիպտա-

ցեքը՝ զորս կը ստիպէր երեսի վրայ Թողուելիրենց ընտանիքը և երկրին մշակութիւնը: Բռնացաւ նաև ընդդէմ օտարական Եբրայեցւոց, որոնք բայց յայլոց աշխատութեանց՝ չինեցին նաև փիդոն և Թամեսէս քաղաքները, ուր հեքը Մովսէսի ձեռօք ազատեցան:

5. Ռամեսէսի յաջորդը: — Ռամեսէսէն հեքը իր բազմաթիւ որդւոց մէկը Մենեփթա Թագաւորեց: Հաւանական կ'երեւնայ որ առ ժամանակ մի աճուռը Մեմֆիս փոխադրած ըլլայ, լաւագոյն կերպով հսկել Սաորին Եգիպտոսի տժգոհ ազգերը կառավարելու և չափի մէջ բռնելու համար, և ի Լիբիոյ և Ասորիքէն յարձակող Թշնամեաց դէմ դնելու համար:

Իր առեն ն է Եբրայեցւոց Եգիպտոսէն Ելքը՝ Գանանու երկիրը երթալու համար. և իր ամբողջ բանակն Իսրայէլացիները հալածելու առեն կարմիր ծովուն մէջ ընկղմեցաւ: Իրմէ հեքը նոյն հարստութեան Թագաւորաց պատմութիւնը չատ մութ է:

6. Ախոռի: — Հետագայ միջոցը չիսթուԹեան և անկման առեն է, և որ հետ զգետ ալ աւելի զգալի կ'ըլլար: Հազիւ Թէ քանի մը փարաւոններ երբեմն երբեմն փառաց կայծեր արձակեցին: Առնցմէ են՝ Ռամեսէս Գ. քսանեերորդ հարստութենէն, որ քանի մը պաշտպանողական յաջող պատերազմներ ըրաւ, և բայց ի ուրիշ շինուածոց կանդնեց Ամմոնի տաճարը ի Մէհինէդ Ապու: Նոյնպէս Սեսոնքիս կամ Սիսակ, քսաներորդ երկրորդ հարստութենէն, որ Իսրայէլացւոց Յերոբովամ Թագաւորին խնդրանօք, Յուդայի Թագաւորին Ռոբովամու դէմ գնաց, և Երուսաղէմ մտնելով կողոպտեց զգանձերը, և ստիպեց զՌոբովամ որ իրեն հարկատու ըլլայ (970 Ն. Ք.): Այն հարստու-

Թեանց հետ՝ մայրաքաղաքն ալ փոխուեցաւ. 22րդ հարստութեան առեն՝ Թեբէէ՝ տեղ Թագաւորք սկսան նստիլ ի Տանայիս, ապա ի Բուբաստէ, հեքը նորէն ի Տանայիս, և ի Սայիս:

7. Օթաբայ պրիաոնէ: — Մինչդեռ Իսկբովէիս 24րդ հարստութեան իմաստուն և ճարտար քաղաքագէտ՝ բայց բուռն և խիստ Թագաւորը կ'իշխէր, եթովպացիք արշաւեցին Եգիպտոս Սաբաքոնի առաջնորդութեամբ, և տիրեցին անոր: Այսվ սկսաւ եթովպական հարստութիւնը, որ 25րդն եղաւ և գրեթէ կէս դար տեւեց. երեք Թագաւոր ունեցաւ, Սաբաքոն Ա, Սեվէքոս կամ Սաբաքոն Բ. կամ Սեթոս և Թարաք:

Այնոյ գործոց մէջ խառնուելով կործանեցին բուն իրենց տէրութիւնը և Եգիպտոս ձգեցին գԱսորեստանեայս: Սաբաքոն Ա. Իսրայէլի Ովսէէ Թագաւորին օգնութեան երթալով Ասորեստանեայց հետ պատերազմեցաւ ի Ռափա Փղշտացւոց երկրին մէջ, և յաղթուելով փախաւ (714 Ն. Ք.): Ասորեստանեայց Թագաւորն անկէ վերջ բոլոր արձանագրութեանց մէջ, ինքզինքն Եգիպտոսի Ե Եթովպէի նուաճեցաւ: Քանի մը տարի հեքը Ասորեստանեայց Թագաւորը Սենեքերիմ՝ որպէս զի վերջի խնդրէ այն ըրած օգնութեանցը զոր Սաբակոն ջանայէր եր ընել Եզեկիա Յուդայի Թագաւորին, յարձակեցաւ Եգիպտոսի վրայ և կոտորած մը տուաւ Սաբաքոն Բին Ալդաքուքաղաքին մօտ: Թարաք ուզեց զանազան կերպով վտանգ վտանգել վերջի խնդրելու, և փոխադարձ բաղդիւ երկայն պատերազմ մը ըրաւ Ասորեստանեայց հետ, մինչև բանագատուեցաւ Եթովպիա քաշուիլ, և հոն մեռաւ: Եգիպտոս չատ մը տղմի իշխանութիւններու բաժնուեցաւ,

որոնց իշխանները մասամբ Ասորեստանեայք և մասամբ ալ Եգիպտացիք էին, և հարկ կուտային Նինուէի:

8. Երիթոսանէից իշխանութիւն: Փաստիփիոս: — Բայց այն փոքր իշխանները Ասորեստանի ներ-քին կռիւներէն և խռովութիւններէն օգուտ քաղելով՝ անկախ եղան և դաշնակցութիւն մը կազմեցին որ երկնց Թուխլը Երիթոսանէից իշխանութիւն կոչուեցաւ. 17 տարիէն ետքը երկնցմէ աւելի խորագէտը Փաստիփիքոս իր ընկերները մէջտեղէն վերցուց և ինքնագլուխ տէր ճանալով Եգիպտոսի՝ ԵԹովպիոյ Թագաւորին միակ աղջկանը հետ ամուսնացաւ, որպես զի օրինաւոր ժառանգ սեպուի քանիերորդ հինգերորդ հարցս տութեան: Ն. Ք. 666 գահակալեց և աԹոռը՝ի Սայիս գրաւ, Նեղոսի ամենէն աւելի արեւմտեան ճիւղին ալ եղերքին վրայ: Եւ քաղաքը Ծովուն մօտ ըլլալով երկն կը ձգէր զօտարները վաճառականութեան համար, և մանաւանդ պէս զՅոյները՝ որոնք Փաստիփիքոսէն մարգասիրութեամբ ընդունելութիւն գտած էին: Այն-չափ կը սիրէր զՅոնեացսան, որ իր որդւոյը և ուրիշ շատ եգիպտացի տղոց յունարէն սորվեցընել տուաւ, և Թոշակաւ յոյն զինուորներ վարձեց, ինչպես նաև փիւնիկեցի նաւաստիներ: Փորձ փորձեց արեւմտեան Ասիոյ վրայ յարձակելու, բայց չյաջողեցաւ. և զԱզովտոս Փղշտացւոց քաղաքը քսանևինը տարի պաշարմանէ ետքը հազիւ կրցաւ առնուլ: Օտար զինուորներ նախամեծար համարելով՝ աւելի եղաւ Եգիպտական զինուորաց, որոնք 200,000 ի չափ էլան ԵԹովպիա քաշուելու:

9. Փաստիփիոսի յաջորդք: — Փաստիմեհիքոսէ ետքը հինգ Թագաւորք յաջորդեցին 26րդ հարցս տութենէն. Նեքաւով Փաստիմեհիքոս Բ. Վա-

փառ կամ Հոֆրա, Ամասիս, և ՓսամմուԹիս:

Նեքաւովի գործերն ուրիշ տեղ պատմեցինք[1], որ՝ի Մակեդով Յուդայի Յովսիաս Թագաւորին յաղԹեց և Թագաւորութեան տիրեց. բայց երեք տարի ետքը յաղԹուեցաւ՝ի Կարքամիս Եփրատայ քով Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորէն: Իրեն ներքին կառավարութեամբը զարգացուց նաւորդութիւնն ու վաճառականութիւնը, և ձեռք զարկաւ՝ բայց ատանց լմնցընելու, նորէն բանալ Սուէզի անցքը Կարմիր և Միջերկրական ծովերը միացընելով, որ արդէն Սեթոս Ա. և Ռամեսէս Բ. սկսած էին և Թերևս լմընցուցած ալ. և փիւնիկեցի նաւաստիներուն Աֆրիկէն չորս կողմը շրջան մ'ընել տուաւ որոնք կարմիր ծովուն նաւահանգստէն ելլելով Հերակլեսի արձաններուն քովէն Միջերկրական մտան, և երեք տարիէն ետքը Եգիպտոս հասան:

Փաստիմեհիքոս Բ. վեց տարի Թագաւորեց, և ԵԹովպիոյ դէմ միայն պատերազմեցաւ, և ապա մեռաւ:

Վափրէս զոր սուրբ գիրք Վափռա կը կոչէն, Թագաւորելով Ն. Ք. 590ին Փիւնիկէի մաս մը առաւ և Յուդայի Թագաւորը զՅեհոկիա դըրգռեց որ ապստամբի Բաբելոնի դէմ. բայց իր գլուխն եկաւ ջնաջը. վասն զի Նաբուգոդոնոսոր Եգիպտոսի վրայ վազեց, աւերեց ապականեց և հարկատու ըրաւ զինքը: Վափրէս արշաւանք մ'ընելով Կիւրենէին վրայ, որ Լիբիոյ հիւսիսային ծովեղերքը ծաղկած Յոյն գաղԹականութիւն մ'էր, սաստիկ յաղԹուեցաւ: Այն տեղ զօրքը ապստամբեցան: Ամասիս զօրավարը խրկեց որ ապստամբութիւնը նուաճէ՝ բայց զնա

[1] Տես էջ 18—19:

Թագաւոր հրատարակեցին: Ամասիս չէրսաժա-
ռեցաւ Թագէն. ուստի Վափրեսի դէմ ելաւ,
յաղթեց և գերեց զինքը: Իր միտքը՝ անոր հետ
մարդասիրութեամբ վարուիլ էր, բայց Եգիպ-
տացիք սպրպեցին զինքը և սաւն խղդեցին:

Ամասիսի Թագաւորութիւնը, որ Բաբելոնի
հպատակ էր, 570 — 526 տևեց: Եւ որովհետև
աշխուժական տոհմ էր՝ Փաամմետիքոս երկրորդի
աջնիկը կին առաւ, որպէս զի բոլն յաջորդ սե-
պուհ Սայիտացւոց հարստութեան: Հաճոյից
սիրող էր, Թէպէտ առանց երեսի վրայ Թողլու
տէրութեան գործերը: Աչառութիւն տուաւ
օտարաց՝ և՝ ի մասնաւորի Յունաց, որ Եգիպ-
տոսի մէջ բնակին, իրենց կրօնքը պաշտեն, և
աստուածոց տաճարներ կանգնեն:

Մեծ ջանք և փոյթ ունեցաւ երկրին նիւթա-
կան յառաջադիմութեանը որ շատ ծաղկեցաւ:
Կիպրոսի տիրեց և հարկատու ըրաւ: Իմանա-
լով Կիւրոսի Պարսից Թագաւորին զօրանալը՝
դաշնակից եղաւ անոր դէմ Լիւդիոյ Կրե-
սոս և Բաբելոնի Լաբունետ կամ Բաղտասար
Թագաւորաց հետ. Թէպէտ յաղթուեցաւ Կիւ-
րոսէն՝ բայց գիտցաւ պատուաւոր կերպով ա-
նոր հետ հաշտուիլ:

Բայց Կամբիւս Կիւրոսի յաջորդը՝ ուզեց
տիրել Եգիպտոսի և յարձակեցաւ անոր վրայ:
Պշաճանաց սկիզբը մեռաւ Ամասիս խարխուլ
Թագաւորութիւնը փաամենդես որդւոյն Թող-
լով, որ վեց ամսէն աւելի չի Թագաւորեց. վասն
զի՝ ի Պելուսիոն Կամբիւսի դէմ արիւնահեղ
պատերազմի մը մէջ՝ նախ գահը և ապա կեանքը
կորնչուց: Որով լմընցաւ Եգիպտոսի անկա-
խութիւնը և պարսկական ընդարձակ տէրու-
թեան գաւառ մ՚եղաւ:

ԳԼՈՒԽ Գ.

Եգիպտոսի բարոյական և քաղաքական վիճակը:

1. Կրօնք: — 2. Ընկերական և քաղաքական օրէնսդրութիւնք: — 3. Սովորութիւնք: — 4. Շարաւարութիւն, վաճառականութիւն: — 5. Արուեստք. Ձիշտասակարանք: — 6. Գիտութիւնք: — 7. Գրականութիւնք: — 8. Գիր:

1. Կրօնք. — Սկզբան Եգիպտացիք անմաքուին, յաւիտենական և ամենայնի ստեղծող Աստուծոյ մը կը հաւատային, զոր Ամոն կը կոչէին. և այս միոյ Աստուծոյ գաղափարը իրենց խորհրդաւոր աւանդութեանցը մէջ պահուեցաւ՝ կրօնից գաղտնի խորհրդոցը պաշտօնէից ձեռօք: Բայց ամբիկ ժողովուրդը շուտով հեռացաւ և բազմաստուածութեան, հրապաշտութեան և նիւթապաշտութեան մէջ ինկաւ: Գերագոյն էութիւնը անձնաւորելով և նիւթականացնելով՝ անձնաւորեց և նիւթականացուց աստուածային ամեն յատկութիւնները ալ՝ որով շատ մը փոքր աստուածներ եղան դասակարգութեամբ: Զինք գիտեր թէ որն է իրենց ճշդկարգը, բայց դասակարգին հիմը երբորդութիւն էր ըստ այլ և այլ աստուածոց և ըստ տեղեաց: Եգիպտական եռաստուածութեան ամենասովորականը և ամէն տեղ պաշտելին էր Ոսիրիս և իր կինը Իսիս, և իր որդին Հորոս: Աստուածոց Թիւը երթալով այնչափ բազմացաւ՝ որ չկար գաւառ և քաղաք որ իրեն յատուկ

աստուածը չունենար. ինչպէս արեւը, լուսինը, համաստեղութիւնք. կենդանիք ալ պաշտուեցան երբեմն աստուած. ինչպէս՝ եզը, կովը, ոչխարը, շունը, կատուն, հիւսս կենդանին (փարաւոնի մուկը) քաջահաւը, բազէն և կոկոդիլոսը: Անոնց թէպէտ ամբողջ տեսակը նուիրական էր, բայց իւրաքանչիւր տեսակէն մէկ կամ քանի մը հատ կընտրէին և մեծ խնամքով կը պահէին մեծագործ մեհեանից մէջ՝ որոնց ջերմեռանդները ընծայաբեր կ'ըլլային և պաշտպանութիւնին կը խնդրէին: Ամենէն աւելի Մեմֆիս քաղաքին մէջ Ապիս ըսուած կովը կը պատուուէր զոր Փռահ աստուածոյն մարմնաւորութիւնը կը համարէին, որ գլխաւոր աստուածներէն մէկն էր: Ապիսը բոլորովին սեւ պիտի ըլլար, և ճակտին վրայ ճերմակ աստղիկ մը և ուրիշ մանաւոր նշաններ պիտի ունենար: Փռաւոր մեհենի մը մէջ կը պահէին, զոր Սերապիս կ'անուանէին ցոյնք, և մեծ պատիւ էր անոր քուրմ ըլլալը: Մեռած ատեն բոլոր ենգիպտոս սուգ կը բռնէր, և շմռեսլով մեծահանդէս յուղարկաւորութեամբ կը թաղէին: Երբ ուրիշ Ապիս մը գտնուէր՝ եօթն օր մեծ հանդէս կ'ըլլար:

Իրենց այսպիսի մտերմութեամբը ալ՝ Եգիպտացիք կը հաւատային հոգւոյ անմահութեան, հանգերձեալ կեանց՝ ուր հոգիները պիտի վարձատրուին կամ պատժուին ըստ իրենց բարի կամ չար գործոցը, զոր գործեր են երկրիս վրայ և մարմնոյ յարութեանը: Այս հաւատքին համար է դիակները շմռսելու սովորութիւնը որպէս զի անոնք անապական և անեղծ մնան. և անմահութիւն պահելու համար ապահով տեղեր կը թաղէին: Չմռսած և պատռտած դիակը Մուժիա կ'ըսուէր: Իսկ հանգերձեալ կեանքը մեռելոց

վրայ դատաստան ընելով կը սկսէր. ասիկայ մեծ հանդէս մ'էր, որուն մասնակից էին քառասուն ու երկու դատաւորներ Ոսիրիսի նախագահութեամբ, որոնք վճիռ կուտային թէ հոգին վարձուց եթէ պատժոց է արժանի:

2. Ընդերական և փաղաքական օրէնսդրութիւն: — Եգիպտացիք հին աստենէ ի վեր երեք կարգ կը բաժնուէին. Քուրմք, Պատերազմիկք կամ Զինուորք և Ռամիկ:

Քուրմերուն պաշտօնը ժառանգական էր՝ և ընդհանրապէս ուրիշ զբաղմունք չունէին բայ'ի ուսմունքէ և կրօնական գործերէն. այլ բացառութեամբ իրենցմէ մէկը հասարակաց գործոց և դատաստց վարիչ կ'ըլլար: Միանգամայն ալ կը զանազանէին ուրիշներէն, վասն զի այլոց թոյլ տուեալ էր բազմակնութիւնը: Իրենց սրճելը մի և նոյն մեհենին և մի և նոյն աստուածոց պիտք էին ծառայել: Քուրմերը խիստ մաքրութեան պարտաւորեալ ըլլալնուն, օրը հինգ անգամ կը լուացուէին, և ամէն երեք օր մէյմը կը գերծուին. իրենց զգեստները կտաւեղէն միայն պիտի ըլլային և կօշիկները պապիրէ: Եգիպտոսի երրորդ մասին տէր էին, զոր կը հասմարեին թէ Իսիս իրենց պարգեւած ըլլայ: Ակէ զատ ամէն օր առատ նուէրներ կ'ընդունէին. և թէպէտ իրենց եկամուտին մէկ մասը կրօնական ծախուց կը գործածուէր, որ շատ հանդիսաւոր էր, սակայն այնքան հարստութեանց և ղեղևսութեանց մէջ՝ զէղև էր անցուցած կեանքերնին:

Ձօրքը 400,000 էր, և քրմաց պէս եգիպտոսի երրորդ մասին տէր էին և երկիրնին սահմանակ էր. արգելուած էր իրենց վաճառականութիւն կամ ուրիշ արուեստ ընելը, այլ միայն զինուորական կրթութեանց և պատերազմական գոր-

ծոց պետն զբաղէին: Իրենց սովորական զինքն էր աղեղը. բայց նիզակ և սուր ալ կը գործածէին. վահան և սաղաւարտ կը կրէին. ձի չէին հեծնար, այլ պատերազմական կառքերով կ'երթային և ամէն կառք կառավար մը և պատերազմիկ մ'ունէր:

Այս երկու վերոյիշեալ առանձնաշնորհութիւն ունեցող կարգերէն եաքը՝ երրորդը կոչուար, որ ամբողջ ազգա ժողովուրդն կը կազմէր, որունք մշակութեան և արուեստից կը պատկանէին: Զանազան դասերը բաժնուած էին՝ իրենց տեսակ տեսակ գործոց և զբաղմանց համեմատ, որունք ժառանգական էին սովորաբար՝ քրմաց և զինուորաց պէս: Այս կերպ կարգաւորեալ եգիպտական ժողովուրդեան գլուխն էր Թագաւորը. որ բաց 'ի ան երկիրներէն որ բունք քուրմերուն կամ զինուորաց կ'իյնային՝ միւսներն իրենն էին, այսինքն Եգիպտոսի երրորդ մասը. ունէր դարձեալ ուրիշ շատ եկամուտից աղբիւրներ. ինչպէս պարտեալ ազգաց տուրքը, պատերազմի աւարներէն, և այլն: Իրեն և աւագացը մէջ շատ մեծ տարբերութիւն կար. նաև Ժողովրդեան վրայ որ զինքը Ոսյի և Աբեպական որդի կը կոչէին և երբև զԱստուած կը կարծէին, անսահման իշխանութիւն մը կը բաներէր: Եօթանասուն օր սուգ կ'ընէին Թագաւորին մահուան վրայ: Սովորաբար որդին հօրը կը յաջորդէր. իսկ Թէ որ անորդի վախճանէր՝ նոր Թագաւոր մը կ'ընտրէին ան երկու առանձնաշնորհութիւն ունեցող կարգերուն մէկէն և աւելի զինուորաց կարգէն: Եգիպտոսի մէջ ամենանուազ են ներքին խռովութիւնք:

Եգիպտոս երեսուն և վեց գաւառ բաժնուած էր, և իւրաքանչիւր գաւառ իրեն իշխանն ունէր, որ կոչակալ կ'անուանէր, և իր ձեռքին տակ օգնականներ ունէր:

Իրենց օրէնքներն աղէկ չենք գիտեր, բայց պէտք են որ շատ խիստ եղած ըլլան. վասն զի անոնց գիմեցին բաց 'ի Մովսէսէն որ զանոնք սորվեցաւ՝ ուրիշ շատ անուանի օրէնսգիրք և յայն խիստասկիրք, Լիկուրգոս, Սոլոն, Պիւթագորաս և Պղատոն:

3. Բուժ: — Եգիպտացիք ընդհանրապէս ծանրաբարոյ, խոհական, աւելորդապաշտ, համբոյր և գործունեայ են. բայց հարուստներըը զբօսանաց, ինճոյից և խաղուց եաւէթ կ'ըլլային: Կատուներն կը հագնէին. հանդիսաւոր օրերը միայն գինի կը խմէին, նուիրական կենդանեաց միսը չէին կրնար ուտել. իսկ ուրիշ կենդանիներ, ինչպէս ըղրամարգին, բադը, թռչուն և ձուկ՝ աւելի աղած կ'ուտէին քան թէ եփած: Կանայք բոլորովին զատուած չէին իրենց կողակիցներէն, ինչպէս բոլոր Արեւելքի մէջ: Տղայքը քուրմերէն կրթուելին կ'առնէին, և կը սորվէին յարգել զծերերը որ սովորական էր արեւելեան ուրիշ ազգաց մէջ և Սպարտացւոց մէջ խիստ գովուած է: Եգիպտացիք երբ իրարու հանդիպէին՝ ձայնով չէին ողջուներ մէկզմէկ՝ այլ խօսքին խոնարհութեամբ և ձեռքերնին մինչև ծունկերը խոնարհեցնելով:

4. Ճարտարութիւն. վաճառականութիւն: — Եգիպտացւոց ճարտարութիւնը խիստ մեծ էր. բայց իրենց գլխաւոր բերքն էր բեհեզեայ կտաւը, զոր շատ կը գործածէին զգեստուց, և մումիաներըը պատատելու համար, և ուրիշ ազգաց ալ շատ յարգի էր: Մնկէ եաքը կուգային պապիրք, փառաւոր կահ կարասիք, ոսկեղէն զարդեր, անօթներ և տեսակ տեսակ բանուած ապակեղէնք:

Վաճառականութիւնը առաջ խիստ չափաւոր էր, բայց եաքը շատ զարգացաւ երկրին աշխար-

հադրական ամենայարմար գրիչը պատճառաւ։

5. Աբհեոպ. Յիշատակարան։ — Եգիպտացիք երբեմն արձանները, սիւները և շինուածոց խոզաքանդակները կը ներկէին. իսկ մումիաներուս շիրմաց, պատանաց և արկեղաց կողերուն վրայ՝ մեռելոյն կենաց դէպքերը կը նկարէին։ Այն նկարներն ինչուան հիմայ կենդանի պահած են գայներնին, բայց դունոց և լուսոյ ներդաշնակութիւն չունին։ Կաւաւ կամ փայտի վրայ քաշուած նկարներ չկան։ Եգիպտացւոց մէջ քանդակագործութիւնը թէպէտ Յունաստանի պէս ի ծայր կատարելութեան չհասաւ, բայց շատ ծաղկեցաւ։ Եգիպտացի քանդակագործներն իրենց քանդակացը մեծաւոր գաղափարներ չտուին ինչպէս Յոյները, բայց իրենց գործածած նիւթոց համեմատ՝ ամենայն ճշդութիւն և վայելչութիւն կու տային։ Նկարուած արձաններու նիւթերը ըստ մեծի մասին կրանիտ, պազալտ, ալապաստր և փայտ են։

Եգիպտացւոց համար թէ նկարչութիւնը և թէ քանդակագործութիւնը միայն ճարտարապետութեան կը ծառայէր, որուն անչափ զարմանալի յիշատակարանները կան մինչև ցայսօր մնացանդ բուրգերը, կոթողները, դամբանները, մեհեանները, պալատները։ Քէոփսայ բուրգին խարիսխը 928 մէտրով կըսկսի և գրեթէ 150 մէտրով կը լրիանայ։ Ըստ Երոդոտոսի 100,000 գործաւոր աշխատեցան, քսան տարի, ամէն երեք ամիս փոխուելով. և գործաւորաց կերած միայն խոտեղինաց գինը գրեթէ 9 միլիոն ֆռանգի կ'ելլէ։ Եւ աս ամէնը փարաւոնի մը մումիային մէջը գնելու համար է։ Թէպէտ այս բուրգն ամենէն մեծն է, բայց մեծդիւցութիւնը գլխաւոր յատկութիւն մ'է ոչ միայն բրգանց այլ ամէն եգիպտական շինուածոց։

Բաւական է յիշել Քառնաքի սրահը, որ հանդիսաւոր ժողովներու պիտի ծառայէր, 103 մէտր երկայնք և 50 մէտր լայնք ունէր, և 134 միաքարաւոր սիւներու վրայ կեցած էր, որոնցմէ բարձրադոյնները 23 մէտր բարձրութիւն ունէին և երեք ու կէս տրամագիծ. նաև Լպստամպոլի լեռան մը մէջ փորուած՝ մեծ եանը, որ քանուէորս սրահ ունէր, և ճակատը զարդարուած էր չորս հսկայաձև արձաններէ որոնք քսան մէտրէն աւելի բարձրութիւն ունէին. և լաբիւրինթոսը կամ բաւիղ ըսուած հոյակապ շինքը՝ որ 3,000 խուց ունէր, որոնց կէսը ստորերկրեայ էին։

6. Գիպոնիկ. — Եգիպտացւոց քիչ շատ ծանօթ գիտութիւններն էին բժշկականութիւն՝ որուն գրաւոր վարդապետութիւնները մինչև առ մեզ հասած են. երկրաչափութիւն՝ առանց որոյ Նեղոս գետին ողողմունքներէն աւերուած դաշտերէից սահմանները չէին կրնար նորէն շինել, որոյ նկատմամբ պատկիր մը կայ որ 12 հայեցողութիւն կը բանդակէ. աստղաբաշխութիւն՝ որով կրցան շինութեամբ դէպ յարևելս ուղղել իրենց բուրգերը։

7. Գրականութիւն։ — Բայց ի յիշատակարանաց վրայի անթիւ գրուածներէն, որոնք կերպով մը Եգիպտոսի գրականութեան պատմութիւնը կը ձևացընեն՝ գերեզմանաց և գետնադամբանաց մէջ գտնուած շատ մը պապիրոսներ ալ կան, որք մեծաւ մասամբ կրօնական խրատոց վրայ կը խօսին։ Սակայն գիտենք թէ քահանայապետներու գիրք ալ կային որոնք նոյն առենուան բոլոր գիտութիւնը կը բովանդակէին և Հերմէսէսի կ'ըսուէին, որովհետև Թոտ կամ Հերմեսի կ'ընծայէին, որ Յունաց Տրիսմեգիստոսն էր։ Եգիպտոսի մէջ կը գտնուէին դարձեալ զանազան գրատուներ, և Թեբէի

գրատան մուտքին վրայ ըստ Դիոդորոյ Բիբլոսեան հոգեոյ վերնագիրը գրուած էր:

8. Դիր: — Եգիպտոսի մէջ գրելու արուեստը շատ հին է: Սրբագիր գրերը որոնք սովորաբար աչքին դէպ՝ ի ձախ կը գրուէին և գաղափարագրական կամ յայնաձիգ ըստուած գրութիւնները: Գաղափարագրութիւնները, և մանաւանդ հինները՝ քիչ շատ ճշդութեամբ ուզած առարկային և կամ գաղափարոյ ու առարկայից յարաբերուԹիւնները կը ներկայացընէին. զոր օրինակ, մարդու կերպարանքը մարդ կը նշանակէր, արեգականը՝ արեգակ, երկու ականջ՝ աչք կը նշանակէին, շատ ալեւոր գծերը՝ ծերութիւն: Այնհետև գրութիւնները առարկաներու ձեւով կը գործածուէին, որոնք ներկայացուցած իրին անուան՝ սկզբնական տառը սկսեալ յիշեցնէին. զոր օրինակ Ա գիրը յիշեցնելու համար առիւծ մը կը քաշէին: Եգիպտական գրութիւն մինչև 1799 անյայտ էր մեզի՝ ի Ռոզեթթա գտնուեցաւ քար մը, որուն վրայ երեք լեզուով գրուած էր, որոնցմէ մեկը յունարէն էր: Այս վերջինս օգնութեամբ կրցաւ Շամփոլիոն սկիզբ մը գտնել ծածկանըշանները իմանալու համար:

ԵԳԻՊՏԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենէս առաջին Թագաւոր մօտ 3450 Ն. Ք. իր յաջորդներն ինչուան Մերիս մօտ 1990՝ 330 Թուով են, որք եօԹևտասներորդ հարստուԹիւնը կը կազմեն և ուԹևտասներորդին սկզբնաւորուԹիւն կուտան, որոնք զուգամանակ Թագաւորեցին՝ ի Թեբէ՝ ի Տիս, յԵլեփանտինա, ՝ի Մեմֆիս, ՝ի Հերակլէա, ՝ի Դեոսպօլիս, ՝ի Պասյա և ՝ի Դանիս:

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՔ ԵԳԻՊՏԱՑԻՈՑ

Ա	ՀարստուԹիւն	Թիւնացի – Թեբական
Բ	»	Թիւնացի – Թեբական
Գ	»	Մեմֆացի
Դ	»	Մեմֆացի
Ե	»	Ելեփանտինացի
Զ	»	Մեմֆացի
Է	»	Մեմֆացի
Ը	»	Մեմֆացի
Թ	»	Հերակլէոպոլտացի
Ժ	»	Հերակլէոպոլտացի
ԺԱ	»	Թեբացի
ԺԲ	»	Թեբացի
ԺԳ	»	Թեբացի
ԺԴ	»	Պսոյիտացի

ԺԵ	Հարստութիւն	Թեթացի
ԺԶ	»	Թեթացի
ԺԷ	»	Թեթացի Փարաւոնք Հովիւք
ԺԸ	»	Թեթացի
ԺԹ	»	Թեթացի
Ի	»	Թեթացի
ԻԱ	»	Դանիտացի
ԻԲ	»	Բուբաստացի
ԻԳ	»	Դանիտացի
ԻԴ	»	Սայիտացի
ԻԵ	»	Եթովպական

Սեթոն Հեփեստոսի մեհենին քրմապետը 713ին։

Անիշխանութիւն 673 — 671

Երկոտասանից իշխանութիւն 671 — 656

ԻԶ Սայիտացի հարստութիւն։

Փսամմետիքոս Ա. . . .	656	617
Նեքաւով կամ Նեքոս . .	617	601
Փսամուեթիս	601	595
Վափրէս կամ Ափռա .	595	570
Ամոսիս (Ամասիս) . .	570	526
Փսամմենիս կամ Փսամմենդոս	526	525

Պարսից Կամբիւս Թագաւորն Եգիպտոսի կը տիրէ։

ՓԻՆԻԿԻ

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Բնակիչք։ — 3. Պատմական տեղեկութիւն։ — 4. Գաղթականութիւն և վաճառականութիւն։ — 5. Կրօնք։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — Փիւնիկէի հարաւը՝ Մէյէրկրականն է, որ շատ մը ծոցեր և նաւահանգիստներ ունի. իսկ արեւելքէն Լիբանանու լերանց շղթան, 200 հազարամէտր երկայն գօտի մը և գրեթէ քսան հազարամէտր ալ լայն։ Երկիրը բերրի է տեսակ տեսակ բերքերով. բայց բուսական չէին ըլլար քնահէյց, ոչ խիտունքը՝ ուսում անուանի տիւրացի ծերանին կը հանէին, ոչ Լիբանանու մեծամեծ և օգտակար ծառերն՝ որոնք ոչ միայն որ և իցէ շինուածոց, այլ և նաւակաշինութեան խիստ յարմար էին. երկիրն դիրքը զՓիւնիկեցիս նաւարկութեան և վաճառականութեան կը վարժեցնէր, յորում շատ անուանի էին հին ազգաց մէջ։

Փիւնիկէի գետերը, որոնցմէ Ելեւթեր և Լէոնդէս յիշենք, թէպէտ կարճ ընթացք ունին, բայց առատաջուր էին։ Երեւելի քաղաքները Ծովեզերեայ կամ Ծովու մեծ էին. ինչպէս Արատոս՝ Ծովեզերքին քիչ մը հեռու կղզիի մը վրայ շինուած, Անդարատոս՝ առաջնոյն դիմացը գտնուած վրայ, Տրիպօլիս, Պիպլոս, Պեղիտոս, Սիդոն, Տիւրոս և Պաղտմայիս քաղաքները։

2. Բնակիչք։ — Հին Փիւնիկեցիք Քամայ ցե-

ղէն էին, բայց եաթը Սեմեան ցեղը գաղթած է հոն, ու զանոնք ալ ընտելով համանոյն հետ խառնուելով՝ ինքը միշտ տիրօղ մնաց. այս յայտնի է որ պատմական Փիւնիկեցիք անտարակոյս Սեմայ ցեղէն են, ինչպէս անոնց լեզուին եբրայական հետ ունեցած նմանութենէն ալ ստացուցած է:

3. Պաշխան պեղեկութիւն: — Ե՛րբ և ինչպէս եղաւ այս բանս, և ո՞րն էր փիւնիկեցի քաղաքաց վարչութիւնը, նախնական ՀՀմարիտ պատմութեան և յիշատակարանաց պակասութեամբը անծանօթ է մեզի: Միայն քանի մը մատենադրաց առ մեզ հասուցած քիչ արձանագրութիւններ և աւանդութիւններն իրարմէ ալբիւր մնացած են, ուստի քիչ բան մը կրնանք քաղել: Ասոնց վկայութեան համեմատ Փիւնիկէի քաղաքները մեկ տէրութիւն չէին ձևացըներ, այլ շատ մը անկախ թագաւորութիւններ էին, որոնք միայն քանի մը առթից մէջ և քիչ ժամանակի համար կը միանային: Այս թագաւորութիւնց մէջ ամենէն հզօրն Սիդոն եղաւ, եաթը Տիւրոս՝ Քրիստոսէ առաջ 13երորդ դարուն վերջերը ուրիշ ամէն քաղաքաց վրայ էշխեց: Տիւրոսի թագաւորաց ցանկ մը կայ որ 12 թագաւոր կը հաշուէ 200 տարուան միջոց. բաւական կը համարինք ասոնց մէջէն Փիւրամը յիշել՝ որ շատ մեծագործութիւններ ըրաւ, որոնցմէ են Մեղքոնայ և Աստարտայ ընծայուած շքեղ տաճարները. բարեկամ և դաշնակից եղաւ Դաւթի, և անոր պալատին շինութեանն համար շատ մը գործաւորներ և նիւթեր իրեն կեց. Սողոմոնի հետ ալ բարեկամ մնաց և իր աղջիկը անոր կին տուաւ: Էթբաղ կամ Իթոբաղ՝ որուն Յեզաբել աղջիկն Աքաաբու կին եղաւ: Եւ Պիգմալէոն՝ Եղիսայ կամ Դիդէի եղբայր, որ իրմէ հալածուելով Աֆրիկէ փախաւ և հոն 870ին Կարքեդոնը շինեց: Ինչ մը եաթը Աստեամներոյ Թագաւորներու գահակալութիւնը դէպ՝ի Փիւնիկէ գարձուց իրենց աչքն. Սաղմանասար մտաւ՝ի Սիդոն, և ուրիշ քաղաքները նուաճեց, բայց Տիւրոս գիմացաւ: Իր յաջորդները շատ անգամ Փիւնիկէ մտան: Նաբուգոդոնոսորի ատեն Տիւրոս ալ ինկաւ 13 տարի գիմանալէն վերջը:

4. Գաղթականութիւն և վաճառականութիւն: — Փիւնիկէ ոչ թէ պատերազմական դիպուածոց համար, այլ վաճառականութեանը և իր գաղթականաց պատճառաւ իր մեծ յարգը ունի պատմութեան մէջ: Փիւնիկեցիք ամենէն առաջ մեծաւոր կղզիներու մէջ գաղթեցին, ինչպէս՝ի Կիպրոս, ՝ի Հռոդոս, Կիւկլադայք և Սբորադեան կղզեաց մէջ և՝ի Կրետէ: Կամաց կամաց աւելի հեռանալով Ասիկեան Աֆրիկէի ծովեզերքներու վրայ հիմնեցին զԿարքեդոն, զԱդրումէտ, զԼպտա և ուրիշ մանր քաղաքներ: Յառաջեցին ինչուան Հերակլեան արձանները, անցան և՝ի Սպանիա ու Ատլանտականին եզերացը վրայ շինեցին զԿադէս (Գատիէ): Սպանիոյ մէջ կանգնեցին զԿալպէ (Ճիպրալթար), զԿարդէա (Լշէդոնիա), զՄալակա, զԻսպալիս (Սեւիլիա) և ուրիշ զանազան քաղաքներ, գրեթէ երկու հարիւրի չափ: Ինդ մէջ ծուն հայրենեաց և գաղթականաց ուրիշ գաղթական քաղաքներ ալ հիմնեցին, ինչպէս Գարտագէն՝ի Սարտենիա, Մոտիա, Սօլի և Պանորմոն՝ի Սիկիլիա և Կաղիս՝ի Մարդա:

Բոլոր այս գաղթականութիւնները մեկ մեկ շահաստաններ էին ու գործօնեայ վաճառականութեան կեանքն էին ու կեդրոն, և գործերնին էր արևելքի ըերքն արևմուտք տանել և փոխա-

դարձաբար: Ծովային վաճառականութենէն ան-
բաժան էր ցամաքայինն ալ՝ նէրքեն Ասիոյ հետ
ունեցած վաճառականութիւնն, որ նոյնպէս
կարեւոր էր: Սպանիայէն Փիւնիկեցիք դուրս կը
հանէին արծաթ, երկաթ, կապար և անագ. Ե-
գիպտոսէն կտաւ և նէրկեր. Եթովպիայէն, Ար-
աբիայէն և Հնդկաստանէն փղոսկր, եղեւնափայտ,
ոսկի, ակռանք, խունկ ստակ և կենդանիներ և
այլն. Պաղեստինէն ցորեն, իւղ, մեղր և բալսա-
մոն. Բաբելոնէն դեղեցիկ գորգեր և ասէղործ
զարդուց նիւթեր: Եւ այս օտար վաճառաց տեղ
Փիւնիկեցիք իրենց ճարտարութեան արգիւնքն
ամէն տեղ կը հասցընէին, որ գլխաւորապէս
ապակեղէն գործուածոց և դիպակաց գործով
վաստկէին:

5. Կրօն: — Փիւնիկեցիք իբրև գերագոյն աստուած մը կը պաշտէին Հնահաղ, զոր կենսա-
տու և աղբիւր բարեաց կը համարէին: Անոր
նուիրած էին լերանց գագաթները, և իրեն
պաշտօնութեան կը յանձնէին քաղաքները:
Հնահաղին հակառակորդն էր Մողոք չարեաց
սկիզբն, որ մարդոյ արեամբ կը պարարէր, և
իրեն մանաւորապէս մեղաշատ մանկունք կը
զոհէին: Աստարտէ ալ կը պաշտէին, որուն
տօնը կը կատարէին անկարգ և անգութ զոհեր
ընելով: Այս գլխաւոր աստուածներէն զատ
Փիւնիկեցիք ուրիշ դիւցազունք ալ ունէին.
որոնց գլխաւորն էր Մելքոմ՝ զոր Յոյնք Տիւ-
բացի Հերակլէս կը կոչեն, հարստութեանց,
ճարտարութեանց և նաւարկութեանց աս-
տուածը: Տօնը հանդիսով կը կատարէին այն
կրճին մեռ ուր էին իրեն արձանները: Կային
ուրիշ տեղական աստուածներ ալ, որոնց պաշ-
տօնն էր տեսակ տեսակ չարաչմանց պաշտպան
կենալ:

ՀԻՆ ՏԻՒՐՈՍԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Աբիթալ	1080	1040
Փիրամ	104	976
Բէղիազար	976	969
Ապոստատարտ	969	960
Անէչխանտոնիւն	960	948
Աստարտ	948	936
Աբերին	936	927
Փելէս	927	926
Իթոբաղ Ա.	926	894
Պատեսոր	894	888
Մադկէն	888	879
Պիգմալիոն	879	852
Պափոս	852	[Թէ]
Ելիւլէ	826	812
Իթոբաղ Բ.	591	572

Նաբուգոդոնոսոր կը տիրէ Տիւրոսի 572[1]. բնակիչք մեսաւոր կղզին կը փախչին և թագա-
ւորութիւնը կը վերջանի:

1 Սիդոն հնազանդեցաւ Նաբուգոդոնոսորայ, և ապա հարկատու եղաւ Պարսից. զլուխ քաշեց Կրաւէս Ովքոսի դեմ և թագաւորեցուց զԻնէս 351ին: Այս ապըս-տամբութիւնը չյաջողեցաւ: Սիդոն Աղէքսանդրի կը բանայ դռները 332ին. Ազդոլնիմ 332:

ՆՈՐ ՏԻՐՈՍ

Բահաղ, առէջ կամ դատաւոր	572	562
Եզնիբալ Փելպես Աբար Կերաստարտ Միւդհոն	առէջ . .	562	554
Պալատոր	Բագաւոր .	554	553
Մհրբալ	553	549
Փերոմ	545	539
Մաբէն	529	475
Ստրատոն	դրեթէ	475 [Թէ
Ասէլմիկ	533 կամ դրեթ	

Աղէքսանդր կը սիրէ Տիւրոսի 332 կամ, 332 կամ Ասէլմիկ կը հաստատուի։

Տիւրոսի կնչուան Հերովդէս մեծն՝ Թագաւորաց յիշատակութիւն չկայ. մեծն Հերովդէսի աւերն Մարիոն կուսակալ էր Տիւրոսի մօտ 40 Ն. Ք.։

ԿԱՐԹԵԴՈՆ

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Կարթեդոնի հիմնարկութենէն կնչուան ի Սիկիլիա Յունաց հետ ըրած պատերազմները (480 Ն. Ք.)։ — 3. Յունաց պատերազմները սկիզբէն կնչուան Հռովմայ հետ ունեցած պատերազմները (480-264)։ — 4. Հռովմայ պատերազմներէն կնչուան Կարթեդոնի կործանումը։ — 5. Կառավարութիւն. Զինուորական զօրութիւն։ — 6. Կրօնք։ — 7. Վաճառականութիւն։

1. Խնամ ծաղկած ժամանակին Կարթեդոնի սահմանն հիւսիսէն՝ Մէլէգրկրականն էր, արեւելքէն՝ Կիւրենէ, հարաւէն՝ Դիւխոն լիճն (Փիէնէռնոյ բագինք յունական կողմի սահմանն էր), արեւմուտքէն Նումիդիա. գլխաւոր քաղաքներն էին Կարթեդոն ծովի մը խորը՝ լեզուածև ցամաքի մը վրայ չինուած. երկու նաւահանգիստ ունէր, արտաքին մը՝ վաճառական նաւաց համար, ներքին մը՝ պատերազմիկ նաւաց համար. Ո-ւիկէ Կարթեդոնէն աւելի հին. Դոպոս (Յաղթութիւն կեսարու ընդդէմ Յուբայ 45 Ն. Ք.)։ Կարթեդոնացւոց աշխարհակալութեան և գաղթականութեանց վաճառաշահ նպատակ մը կար՝ եւրոպայի և Ափրիկէի վաճառականութեան տէր ըլլալ։ Որովհետև Մէլէգրկրականին արեւելեան մասին արգէն փիւնիկեցիք և Յոյնք կը տիրէին, Կարթեդոնացիք դրեթէ արեւմտեան մասովն միայն գոհ եղան, յորում կղզիք իրենց գեղեցիկ նաւա-

հանգիստներով Սպանիոյ, Գաղղիոյ և Իտալիոյ վաճառակցութեան համար մշտնջենաւոր գիստ եղան: Բաղէարեան, Պիսիուսեան կղզիներէն Սպանիոյ հետ. Սարտենիայէն, Բորսիքայէն Գաղղիոյ և Հիւսիսային Իտալիոյ հետ առեւտուր կ'ընէին. իսկ Սիկիլիայէն և Մալթայէն հարաւային Իտալիոյ հետ: Անդադար այս կղզեաց մէջ գաղթականութիւններ հաստատելով՝ կամաց կամաց տէր եղան անոնց, ոչ առ սէր տիրապետութեան, այլ առ սէր շահու:

Արտաքին գաւառաց մտաւակարարութիւնն կուսակալաց ձեռքն էր. Սոքրենիա՝ իր բերքերուն (արմաւիք, մեղաւք), և Միջերկրականին վրայ իրենց տէրութիւնը հաստատուն բռնելու համար և երբև դուռն արևմտեան Եւրոպիոյ՝ կարքեդոնացի վաճառականութեան կարևոր էր. Սիկիլիա՝ ոչ երբեք ամբողջ կերպով Կարքեդոնացւոց ձեռքն ինկաւ, այլ արդէն հօն գտնուած փիւնիկեցի գաղթականաց տիրեցին. Աքրաֆեան Մէջերլոպանին մօր կղզի, Բաղէարեան, Եպուսոս (Իվիսա), Մէլիփինէ (Մալթա): Սպանիոյ մէջ սկիզբը քանի մը կալուած ունէին հարաւային և արևմտեան ափանց վրայ, Սիկիլիա և Սարտենիա ձեռքէ հանելէն եաքը միւս ունեցան բոլոր Սպանիոյ տիրել:

Ափրիկէի հիւսիսային և արևմտեան ափանց և Սպանիոյ արևմտեան ափանց գաղթականները՝ գաւառաց պէս մայր քաղաքին կախումնէ ունէին, որ կրցաւ դիւրաւ և ծովային ուժ ցամաքային մեծ զօրութեամբ իր կալուածները պահել:

2. Կարքեդոնի հիմնարկութենէն ի սկիզբ Յունաց հետ ըրած պատերազմները (480 Ն. Ք.): — Երբ կատասանեորդ դարու մէջ Սիդոնացիք զԲիբլա (բերդ) Կարքեդոնին չնեղէն վերջը՝ քաղ-

քը չատ բազմամարդացաւ մօտ 814 Տիւրոսէն փախչող պատրիկ ընտանիքներով. և մեկէն մեր ճաւար ազգերը նուաճեց և հեռաւոր գաղթականութիւններ հաստատեց:

3. Յունաց պատերազմները ակիգէն իւլոսան Հասդրայ պատերազմները (480–264 Ն. Ք.): Առաջին պատերազմ ի սիկիլիա: — Ագիւսի չուտով ծաղկած Կարքեդոնի անկման առաջին քայլն Սիկիլիա կղզւոյն տիրելու փորձն եղաւ, ուր արդէն չատ փիւնիկեցի գաղթականք կային: Թէպէտ Ամիլկար Յունաց վրայ յարձակելու յարմար ժամանակ գտաւ անոնց երկպառակութիւնը և պարսկական պատերազմը, սակայն ահեղ բանակաւ Սիրակուսայի Գելոն բռնաւորէն յաղթուեցաւ Հիմերա քաղքին քովը, նաւատորմին այրեցաւ և ինք զինքն ալ կրակի մէջ ձգեց մեռաւ: Բայց Գելոն նորէն Կարքեդոնացւոց թողուց կալուածներն, որովհետև կ'ուզէր աղաս ձեռք ունենալ պարսկական պատերազմց մէջ:

Եւերդէ պատերազմ ի սիկիլիա (410–340): — Եօթնամեայ զինադադարէն եաքը նորէն սկսաւ պատերազմն: Ամենքը տկարանալեն եաքը՝ Եգեստացիք որոնք զԱթենացիս օգնութեան կանչէր էին՝ Կարքեդոնացւոց դիմեցին: 409ին Անիբաղ Ամիլկարայ Թոռն Սիկիլիա ելաւ նաւատորմիւք իր հաւուն պարտութեան վրէժխնդիր ըլլալու համար, Սելինոն քաղաքն պաշարեց առաւ և Հիմերա կործանեց և երկրորդ պատերազմով մը տիրեց Ակրագանդի, Գելա և Կամերինն քաղաքաց: Դաշնադրութեան մէջ առած քաղաքները եա չգարձուց, բայց եաքը (340) Կրիմեսոս գետին վրայ Սիրակուսացիներէն յաղթուելով՝ որոնց կը զօրավարէր Տիմոլէոն կորնթացի՝ կորսընցուց զանոնք:

Երբորդ պաթերազմ՝ ի Սիկիլիա։ — Ագաթոկղ Սիրակուսայի բռնաւորն ուղեկով Սիկիլիոյ մեծ մասին ալ տիրել՝ պատերազմի ելաւ Կարթեդոնացւոց դէմ, որոնք տիրած տեղերը ձեռքէն առին և զինքը Սիրակուսայի մէջ պաշարեցին։ Ագաթոկղ յանդուգն խորհրդովը յԱփրիկէ անցաւ, Կարթեդոնացւոց շատ քաղաքներու տիրեց, մինչդեռ Սիրակուսացիք ալ պաշարող բանակը կը սարսափեցընէին. բայց երբ Սիկիլիա դարձաւ որ աւելի երագ լմընցնէ գործը՝ բաղդը փոխուած գտաւ։ Բանակը Կարթեդոնի դիմաց ամէն կորով և կրթութիւն կորնցուցեր էր, և միայն մէկ յարձակմամբ քայքայեցաւ։ Խաղաղութեամբ Սիկիլիոյ կալուածները Կարթեդոնի մնաց։ Ագաթոկղ մեռնելով (239) և Սիրակուսացիք անիշխանութեան մէջ ինկնալով՝ Կարթեդոնացիք նորէն փորձ փորձեցին. Սիրակուսացիք զՊիւռոս յԻտալիոյ օգնութեան կանչեցին (277), որ եկաւ և Լիլիբէոնէն վռնտեց զՔիշնամին, և պատրաստուեցաւ յԱփրիկէ փոխադրել պատերազմը. բայց իր յամառութեան պատճառաւ շատ քաղաքներ նորէն Կարթեդոնացւոց կողմն անցան. որով չկրնալով այնչափ թշնամեաց դէմ կենալ՝ դարձաւ յԻտալիա։ Կարթեդոնացիք նաեւ տիրեցին մեծ մասին Սիրեցիոց և Քաղքեդոնեցւոց։

4. Հռովմէական պատերազմներու սկիզբն ինկաւ Կարթեդոնի կործանումն (264-146 Ն. Ք.)։ Հռովմէական առջի պատերազմին պատուէն եղաւ ոչ միայն Սիկիլիոյ կորուստն, այլ և Կարթեդոնի դրամական արտաքոյ կարգի խեղճութիւն. զօրաց թոշակն պակսեցաւ, ու գլուխ քաշեցին.

բայց Ամիլկար Բարկաս յաջողութեամբ զսպեց զանոնք։ Այս պատերազմով Հռովմայեցիք Սարտենիա առին Կարթեդոնացւոց ձեռքէն։ Ամիլկար իբրև այն չարեաց պատճառ գտաւ ստանալ կանչուելով՝ առ Ժողովուրդն բողոքեց, զոր իրեն նպաստաւոր գտնելով՝ գտաւ ստանն կիսակատար մնաց։ Սիկիլիոյ և Սարտենիոյ կորուստն լեցընելու, որք Կարթեդոնի ամենընտիր գաւառներն էին, և դրամական խեղճութիւնը դարմանելու համար՝ Սպանիոյ տիրելու ձեռք զարկաւ։

Հռովմէական երկրորդ պատերազմ (218-201), որ Հռովմայ պատմութեան մեծ է։

Աննիբաղ Ամորւոց մեծն Անտիոքոս Թագաւորին հետ դաշնակցելով՝ կը մտածէր նորէն պատերազմ բանալ Հռովմայ դէմ. հակառակ կողմնակցութիւնն դաղտնիքը դուրս հանեց. Աննիբաղ Անտիոքոսի քով փախաւ, անկէ Արտաշեսիա մեր իշխանին, ուստի Պրուսիաս Բիւթանիոյ Թագաւորին քովը, ուր ազատեցաւ Հռովմայեցւոց հալածանքէն՝ Թոյն առնելով։

Մասնիսսա Նումիդիոյ Թագաւորն և Հռովմայ դաշնակից՝ Կարթեդոնացւոց ձեռքէն երկու գաւառ առաւ, որոնք վերջին դաշնագրութեան համեմատ չէին կրնար որ և իցէ պատերազմ ընել առանց Հռովմայ հրամանին. Կարթեդոնի մէջն ալ երկպառակութիւն ձգեց. Կարթեդոնացիք երկպառակ կողմն դուրս վռնտելով զինք առին։ Մասնիսսա յաղթեց Կարթեդոնի զօրաց, պաշարեց և անձնատուր ըրաւ։ Այս անհրաման պատերազմն պատճառ եղաւ որ Հռովմ նորէն պատերազմ սկսի։

Երրորդ հռովմէական պատերազմն (149-146) և Կարթեդոնի կործանումն հռովմէական պատմութեան մեծ է։

5. Կառավարութիւն. Զինուորական գործութիւն։ —

Կառավարութիւնը երկու սէֆեպց կամ Թագաւորաց, զոր Ժողովուրդն ցկեանս կ'ընտրէր եւ հաստատ ընտանիքներէ, և Ծերակուտն ձեռքն էր: Երբ սովետը և Ծերակոյտն անմիաբան էին, որոշմունքն Ժողովրդեան ատեանը կ'ընէր: Կարքեդոնի Ծովային զօրութիւնն Հռովմայ պատերազմներէն առաջ 150էն ինչուան 201 եռաթեի նաւերէ կը բաղկանար. Հռեգուղոսի պատերազմի առեն 350 հնգաթեի նաւ ունէին: Բանակին մեծ մասն արևմտեան վարձուոր զինուորներ էին. Կարքեդոնացիք Նումիդիան գունդը կը կազմեին, Բալէարեան կղզեաց վարպետ պարսաւորներն ալ առաջապահ գունդն. բանակին բազմաթիւ զօրքն հպատակ ափրիկեցիքն էին, իսկ բանակին գլխաւոր զօրութիւնն նուիմիդացի այրուձին: Պատերազմիկ փիղեր ալ ունէին:

6. Կրօնք: — Կարքեդոնացւոց կրօնքն նոյն էր Տիւրոսի կրօնից հետ, որ իրենց բուն հայրենիքն էր. և էր աստեղապաշտութիւն գիշերայ և վայրագ աւելորդապաշտութեամբք խառն: Դիմբաղդ արիածից առեն զՄողոք, ջարեաց աստուածն՝ մարդաղոհիւ սէտք էին հաշտեցընել: Կարքեդոնացիք եռաբը ուրիշ ազգաց կրօնքն ալ ընդունեցան, ինչպէս գԴեմետրէ և գՊրոսերպինա կը պաշտէին, որ Սիկիլիոյ աստուածներ էին:

7. Վաճառականութիւն: — Կարքեդոնացիք առևմտեան մենավաճառութիւնն իրենց պահելու համար՝ օտար ազգաց նաւերուն կը բանային մայրաքաղքին նաւահանգիստները միայն, բայց որչափ որ կրնային հեռու կը բռնէին զանոնք գաղթականաց նաւահանգիստներէն, որպէս զի որևիցէ վտանգաւոր հաւասարութիւն խափանուի:

Գրեթէ Միջերկրականին բոլոր եզերք և կղզիները կը նաւարկէին, մանաւանդ առևմտեան մասին մէջ: Հերակլեան արձանները դուրս՝ սկսեալ Կադիսէն՝ Փիւնիկեացոց վաճառականութեան մանակից էին, և Ափրիկէի առևմտեան ափունքն և ոչ իրենց գաղթականք կ'երթային, այլ իրենք գաղտուկ կը նաւարկէին ինչուան Կուինէայի ոսկեբեր գաւառներն ալ:

Յամաքի վաճառականութիւնն կ'ըլլար կարաւաններով (վրանաբնակաց) արևելեան կողմն դէպ 'ի Ամմոնացիս և Եգիպտոս, հարաւային կողմն Կարամանտից երկիրներու մէջ (արդի Ֆեզզան), և աւելի հեռու Ափրիկէի ներսը, ուստի սև գերի և աղ կը հանէին:



ԿԱՐԹԵԴՈՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մօտ 1259ին փիւռնիկեցիք զԿարքեդոն կը հիմնեն. 1231ին Ծորմ և Կարքեդոն աւերլի կը մեծցընեն և կ'ընդարձակեն զայն։

Դիդհ . . . մօտ 860

Սոփեստք

Մալհ առաջին ծանօթ սոփեստ	546	509
Մագոն Ա.	509	489
Ադրուբալ Ա. և Ամիլկար Ա. .	489	480
Կոխ ընդ Կիւբէնացիս. Փիլէնի մօտ	480	—

Կարքեդոնի վերջին սոփեստներէն յիշենք.

Աննիբալ Ա.	410
Իմիլկոն Ա.	480
Ադրուբալ Բ.	393
Մագոն Բ.	382
Ամիլկար Բ. Աննիբալ Բ. . . .	340
Կիսգոն	339
Ամիլկար Գ.	311
Պոմիլկար և Աննոն Ա. . . .	309
Աննոն Բ.	264
Աննոն Գ.	262

Ամիլկար Դ.	260
Ամիլկար Ե. Աննոն Դ. . . .	257
Կարթալոն. Ադրուբալ Գ. . . .	255
Աննիբալ	249
Ադրբալ	248
Ամիլկար Զ. Բարկաս . . .	247
Ադրուբալ Դ.	228
Աննիբալ Դ. Մեծն (247–183) . .	221
Ադրուբալ Ե.	221
Մահերբալ	217
Իմիլկոն Բ.	215
Մագոն Գ. և Ադրուբալ Զ. . .	206
Աննոն Ե.	204
Ադրուբալ Է. և Իմիլկոն Գ. մօտ .	146

146ին Հռովմայեցիք կը կործանեն զԿարքեդոն։

ԱՍՈՐԵՍՏԱՆ ԵՒ ԲԱԲԻԼՈՆ

ԳԼՈՒԽ Ա.

Բաբիլոնի և Ասորեստանի առաջին թագաւորութիւնները.

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Առաջին բնակիչք։ — 3. Նեբրովթ։ — 4. Ասորեստանի առաջին ինքնակալութիւն, Նինոս, Շամիրամ, Նինուաս։ — 5. Յաջորդք Նինուասայ։ — 6. Սարդանապաղ։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — Այն ընդարձակ հովիտն որուն վրայէն Տիգրիս և Եփրատ գետերը կ'ընթանան, երեք աշխարհ կը բովանդակէր. Մէնգեփ կամ Երիէր Սենաարայ, Քաղդեացոց կամ Բաբիլոն որ կը սկսի այն կէտէն ուր որ սա գետերը աւելի մեկմեկու կը մօտենան, գրեթէ 34° լայնութեան տակը մինչև Պարսկական ծոցը. և Ասորեացոց որ վերէն Տիգրիսի ձախակողմեան վրայ կ'երկրէննայ։

Մէնգափ ոչ երբեք թագաւորութեան անուն եղաւ, այլ Ասորեստանի և Բաբելոնի գաւառ մը։ Մէնգափ և Քաղդեաստան՝ որ Մէնջագետաց չարունակութիւնն է՝ քանի մը կլիմայի տակ ընդարձակ պարարտութեան գաշտագետին մ'են, բայց ուրիշ կլիմաներու տակ ալ

անապատ և անբեր։ Իսկ Ասորեստանի հիւսիսային և արեւելեան մասը լեռնոտ է, բայց լեռներուն ստորոտները տարածուած են բարեբեր դաշտեր։

Տիգրիս և Եփրատ՝ որոնք Հայաստանի լեռներէն կը բղխին, երբեմն մեկմեկէ հեռանալով և հակառակ ուղղութիւն բռնելով, և երբեմն իրարու այնպէս մօտենալով երբև թէ ուզէին իրարու խառնուիլ. և երբեմն ալ զուգահեռական երկայն ընթացքով, չատ մը ջրեր իրենց մէջ առած ու միացած՝ Տիգրիս անուամբ Պարսից ծոցը կը թափին։ Նեղոսականի կ'աճին և Թուխ բերը կը պատուեն լեռներէն ինկած ձիւներու ջրոց ստեղծութենէն, բայց Նեղոսի պարարտ դերտին տեղ՝ ցամաք աւազ մը կը Թողուն երկրին վրայ. ասոր համար է ջրագործից բազմութիւնը՝ որպէս զի կանոնաւորեն այն ձեռնարկը ողողմունք։

Այս ընդարձակ աշխարհքին վրայ սփռուած բազմաթիւ քաղաքներէն՝ որոնք գրեթէ իրարու քով կառուցուած էին, իրը թէ չորրորդ դասէ տուներ ըլլային, յիշենք միայն Նինուէ Տիգրիսի վրայ՝ Ասորեստանի մէջ, և Բաբելոնը Եփրատայ վրայ՝ Քաղդեացոց մէջ։

2. Առաջին բնակիչք։ — Թէպէտ Սեմայ ցեղը Թուով և զօրութեամբ յաղթող ելած է վերջապէս, բայց Եփրատայ հովտին նախնի բնակիչները Քամայ ցեղէն առաջ եղած կ'երեւնան։ Սա կայն այնչափ լեզուաց աղբիւր փոփոխ բնակեցան և իրարու հետ խառնուեցան այն աշխարհքին մէջ՝ որ չենք կրնար ստոյգ բան մը աւանդել այս երկրին վրայ, թէպէտ լեզուագիտութիւնն և հնախօսութիւն չատ յառաջացմած ըլլան։

3. Նեբրովթ։ — Երբոր Նոյեանք Բաբելոն քաղքին և աշտարակին շինութիւնը Թողուլ

ցրուեցան, Նեբրովէ՝ որդի Փուչայ և Թոռն Քամայ, զոր աստուածաշունչն «Որսորդ առաջի Աստուծոյ» կը կոչէ, չհեռացաւ աշտարակէն, և իշխեց ոչ միայն Բաբելոնի այլ և Որէդ և Աքադ և Քաղանէ քաղաքներուն: Այսպէս Բաբելոնի ինքնակալութեան առաջին հիմնադիրն եղաւ, զոր եռքը ասէվի ընդարձակեց՝ պատերազմաւ Ասորեստանի Յալթեղով, որ Միջագետքէն եկած՝ Ասորեստանի տիրելու գացած էր: Այս ինքնակալութեան մայրաքաղաքը Բաբելոնէն առաջ երկայն առեն Ուր քաղաքն եղաւ, գրե. Թէ 2400-1300 տևեց, բայց այս տերութեան պատմական չարունակութեան առջդ Թոռա. կանները կը պակսին:

4. Ասորեստանեայց առաջին ինքնակալութիւնը: Նինոս, Շամիրամ, Նինուաս: — Ասորեստանի ինքնակալութեան առաջին ժամանակաց վրայ ունեցած ծանօթութիւններս պարզ առասպել են, և առաջին թագաւորներն ալ առասպելական դիցացաղունք: Այս ծանօթութեանց համեմատ առաջին հիմնադիրն եղաւ Նինոս որ իր վախճանին հասաւ երիտասարդաց անթիւ բանակաւ մը զորս ինքն կրթեր, և վարժեցուցեր էր ամեն նեղութեանց տանելու և ամեն վտանգ աչք առնելու: Յաղթեց և ասպանեց Բաբելոնի Թագաւորը, տիրեց Հայաստանի, Մարաց, Բակտրիոյ և տանուտէրութիւն տարուան մէջ տէր եղաւ Ինդոսի և Միջերկրական ծովուն մէջ տեղ եղած բոլոր աշխարհներուն: Ընդարձակ մայրաքաղաք մը շինեց և Հռոմուլոսի պէս իր անունը վրան դրաւ (Նինուէ), և շատ մը օտարներ հրաւիրեց որ գան և բնակին:

Մինչդեռ Բակտրիոյ մայրաքաղաքը կը պաշարէր և չէր յուսար որ կարենայ տիրել անոր, Շամիրամ անուանով կին մը տեսաւ՝ Ասկաղոնի

Դերկետեայ աստուածուհւոյն աղջիկն, որ ապրեալին վրայ կ'ելլէր: Զարմանալով անոր քաջութեան վրայ, զանիկայ երեն կին ըրաւ: Իր մահուընէ վերջը Թագաւորեց Շամիրամ, որ հեռաւոր տեղեր ալ պատերազմելշարուն. նակեց: Բայց 'ի պատերազմայ՝ առասպելական պատմութիւնը կ'ատանդէ եթէ այս կանդուն Թագուհին շատ մը երեւելի ճամբաներ՝ կամուրջներ գետեր բերդեր պալատներ տաճարներ կառուցած ըլլայ. Բաբելոնը չենեց ու իր մայրաքաղաքն ըրաւ, որուն գեղեցկութիւնը չլսուած բան էր: Սակայն ինքզինքը անկարգութեանց տալու ժամանակն ալ կը գանէր: Երբոր իմացաւ որ իր որդին Նինուաս իր կենաց կը դաւանի, փոխանակ զանիկայ պատժելու, ինքն հրաժարեցաւ, և ըստ առասպելաց՝ աղաւնոյ կերպարանօք աներեւութացաւ:

Իր կենաց վերջին տարւոյն թիւն ալ կ'ատանդէն պատմագիրք որ է 1779. բայց իր ծնունդը, գործերը և մահը և ամենայն ինչ կարծել կուտան թէ Շամիրամ առասպելական անձ մ'է:

Նինուաս իր հօրմէն և մօրմէն բոլորովին տարբեր եղաւ, պատերազմ չըրաւ: Աթոռը 'ի Նինուէ փոխադրեց և անգործութեամբ անցուց կեանքը:

5. Նինուասի յաջորդն: — Նինուասէն վերջը կը մտնանք պատմութեան ասպարիզին մէջ, բայց իր յաջորդներուն գործոց վրայ ուրիշ բան չգիտնալով անուններն զանց կ'ընենք. որոնց միայն որսորդութիւններն, պատերազմունք, և անգութ գործերն կը յիշուին: Աստնցմէ մէկը պատմենք՝ արձանագրութենէ մը հանած, եթէ Ասուր-Նասիր-Հապալ որ իննեերորդ դարուն առաջին կիսուն կը Թագաւորէր, վեց տարուան մէջ սասն պատերազմ ըրաւ և բոլոր իր ապըս-

տամբաց կաշին հանել կուտար, ցից կը հանէր և կամ ողջ ողջ պատերուն վրայ կը բեւեռէր. զա-նոնք ծաղկիներով զարդարելէն վերջը, անձամբ նետաձգութեամբ գերիները կը սպաննէր, ա-րիւնհեղութիւն շատ կը սիրէր, տիրած քա-ղաքներուն պարսպաց դիմացը մարդկան գլուխ-ներ դիղել կուտար և քաղաքներ և գեղեր կ'ա-րէր: Նմանօրինակ բռնութիւն չէ եղած, և ոչ այնչափ ղղուելի բռնակալ իշխանութիւն:

6. Սարդանապաղ: — Ասիական ընդարձակ տե-րութիւն մը միաւորած և միայն զէնքով և ահից ոտքի վրայ բռնած, որչափ ալ վատ և ցած հը-պատակներ ունենար, շատ չէր կրնար տևել: Պէտք էր զինուորական ազդեցութիւնն կորսըն-ցընելուն պէս մէկէն կործանէր. և իրաւցընէ Ասուր-Լուսի ժամանակը՝ որ ըստ ոմանց յոյն մատենագրաց Սարդանապաղն է՝ կործանեցաւ: Ասիս թագաւորը փոխանակ պատերազմաց և կամ իր թագաւորութեան վրայ հոգ տանելու, որսորդութեանց հեշտութեանց մէջ ընկըղ-մած՝ անցուց իր կեանքը միշտ կանանց հետ կե-նալով և անոնց զգեստները հագնելով: Ասյսպի-սի կեանք մը զինքն իր հպատակաց առջև ար-համարհելի ըրաւ, որոնք յարմար առիթ ա-ռին ապստամբելու. ուստի Վարբակէս Մարաց նախարար և Բելեսիս Բաղդեցացոց քրմապետը և մեր Պարոյր նահապետն վրան ելան: Ասյսպի-սի յանկարծական վտանգ մը արթընցուց զՍար-դանապաղ, և չկարծուած քաջութեամբ գլուխ կենալով իրեն հաւատարիմ մնացած զօրաց՝ եր-կու տարի դէմ դրաւ անոնց: Ինքը կը յուսար թէ յաղթէ, վասն զի պատգամ մը եղեր էր, թէ Նինուէ ոչ երբեք պիտի առնուի քանի որ իր քովի գետը զինքը չէ ոլորած: Ինչ առ-նէն եաքը ոլորեց Տիգրիս գետը, և Սարդանա-

պազ յուսահատած՝ մեծ խարոյկ մը վառել տուաւ իր պալատին մէջ և վրան դիղեց իր հա-րըստութիւնները. ապա ինքը՝ իր կանանցը հետ մէկտեղ խարոյկին վրայ եկաւ, և ձեռաքը կրակ տուաւ պալատին և մեռաւ:

Ասյս դէպքը՝ որուն ստուգութիւնը անտա-րակուսելի է, գրեթէ ճրկնատսկ առաջ ուղե-որդ գարու մէջ հանդիպած է հաւանականա-բար: Անժխտելի է որ Ասորեստանեայց թագա-ւորութիւնը այս ապստամբութեանց պատճա-ռաւ իր բնական սահմանին մէջ մնաւ, և Մա-րաստան, Բաբելոն ու Հայաստան անկախ տէ-րութիւններ եղան:

ԳԼՈՒԽ Բ.

Ասորեստանի և Բաբելոնի երկրորդ ինքնակալութիւնները:

1. Ասորեստանի նոր ինքնակալութիւնը: — 2. Թագլաթ-փաղասար: — 3. Սալմանասար Ե. Սարգոն: — 4. Սենեքերիմ: — 5. Ասորդան: — 6. Սարդանապաղ Բ: — 7. Սարակոս, Նինուէի կործանումն: — 8. Փաղ-դեացոց կամ Բաբելացոց նոր ինքնակալութիւն: — 9. Նաբապաղասար: — 10. Նաբուգոդոնոսոր: — 11. Իրեն յաջորդները: — 12. Բաղտասար. Անկումն Բա-բելոնի:

1. Ասորեստանի նոր ինքնակալութիւնը: — Շատ չանցաւ գարձեալ զօրացաւ Նինուէ, և իր վատ-նած ուժը նորէն գտաւ, որով 120 տարի մ'ալ գեռ տևեց և եօթն թագաւոր ունեցաւ:

2. Թագլաթփաղասար։ — Առաջին Թագաւորն Ասորեստանի որ ինք զինքը Թագաւորական ցեղէն կը համարէր, բայց հաւանական է որ հասարակ մարդու զաւակ եղած ըլլայ, ու Թագաւորական իշխանութեան հասնելով մինչև ի 727 տարեցաւ։ Պատերազմ բացաւ այն ազգայ դէմ որոնք Նինուէի լուծը վրանէրնէն թօթվեր էին, երբեն նախագահութիւնը Բաբելոնի ընդունել տուաւ, և ինչպէս ուրիշ տեղ ալ զուրցեր ինք, Հրեից դէմ յաջող պատերազմներ ունեցաւ և տիրեց Գալիլեայ և ամբողջ Նեփթաղիմայ երկրին, ժողովրդեան մեծ մասն ալ գերի տարաւ։

3. Սալմանասար Ե. Սարգոն։ — Յաջորդեց Սալմանասար. Ոգնա Իսրայելի Թագաւորը յոյսը Եգիպտոսի Սապաքոն Թագաւորին վրայ դնելով՝ չուզեց տուողական հարկը վճարել։ Սալմանասար վրան եկաւ, և անոր օգնական եղած Եգիպտացիները չհասած, նահատորմիզ մը խաբեց Տիւրոսի վրայ վաթսուն կաոր նաւով, զանիկայ պաշարելու համար, բայց Տիւրացիք տասուերկու նաւով յաղթեցին իրենց թշնամեաց և շատ ալ գերի բռնեցին։ Իսկ Սամարիա երեք տարի վերջը անձնատուր եղաւ և քանդուեցաւ, և վերջացաւ Իսրայելի Թագաւորութիւնը և Ժողովուրդը գերի գնաց։ Բայց Սալմանասար Սամարիա չառած մեռաւ կը, և որդի մը Թողուցեր էր որ դեռ պզտիկ էր. այն առեն իր զօրայ գլխաւորը Սարգոն անուանով ինք զինքը Թագաւոր անուանեց ի 721։ Ա յս բըռնաւորը իր կարգ գուրս քաջութեամբը բոլորովին մոռցընել տուաւ իրեն ցած ազգէ ըլլալը, ու այն եղեռնագործութիւնները որով միայն կրցեր էր Թագաւորական գահուն տիրել։ Բայ ի Սամարիոյ պատերազմէն՝ Սալմանասար

Թագաւորէն աւելի յաջող եղաւ Փիւնիկէի դէմ ունեցած պատերազմներուն մէջ, տիրեց Ասորեստանի կործանցուցած երկիրներուն, բայ ի Մարաստանէն և Պարսից արևելեան մասերէն, ու ստիպեց Եգիպտոսն ալ որ իրեն նախագահութիւնը ճանչնայ և հարկ տայ։

Իր Թագաւորութեան սկիզբներն ի Բաբելոն կը բնակէր, Թէպետև կը կանոն որ Նինուէի պարիսպներն նորէն շինուին, բայց եռքը միտքը դրաւ նոր մայրաքաղաք մը շինել զոր Խորսապատ անուանեց՝ Նինուէէն 16 մղոն հեռու։

4. Սենեքերիմ։ — Սարգոնի որ ի 704 սպանուեցաւ, յաջորդեց որդին Սենեքերիմ, որ մինչև ի 680 Թագաւորեց. ասկից պատերազմաց ըլլալով կեանքը պատերազմով անցուց. որոնց երկուքին մէջ յաջողեցաւ, մեկը Եզեկիա Յուդայի Թագաւորին դէմ, և միւսը Սապաքոն Եգիպտոսի Թագաւորին դէմ։ Բայց շատերն ալ յաջող եղան՝ և անկէց վերջը վայ էր յաղթուողաց, վասն զի իր վայրագութիւնը սպանուելեամբ կ'ուզէր յագեցընել։ Մանաւոր կերպով անդթացաւ Բաբելոնի դէմ, որ իրմէ ապստամբեր էր, և որուն վրայ փճացընող մրրկի պէս վազեց։ Բայց ինքն ալ քիչ ժամանակէ վերջը սպանուեցաւ ի Նինուէ։

5. Ասորդան։ — Թագաւորին մահուան լուրը առնելուն պէս իր որդին Ասորդան որ փոխարքայ էր ի Բաբելոն, Նինուէի վրայ եկաւ թագաւորասպանները պատժելու և իր Թագաւորութիւնը ապահովցընելու համար։ Իր նախորդաց օրինակին ինքն ալ հետևելով, քանի մը արշաւանք ըրաւ, և այնպիսի տեղեր արշաւեց ուր անոնք դեռ չէին հասած։ Մասաւ Եգիպտոս, յաղթեց Թարակ Թագաւորին և մինչև ի Թեբէ գնաց հարկատու ընելու, իր անուան վրայ

այս ալ աւելցուց « Թագաւոր Թագաւորաց Եգիպտոսի և Եթովպիոյ »: Խաղաղութեան ա-տեն կ'ախորժէր ընակիլ ի Բաբելոն, զոր կա-մաց կամաց իր հօր ըրած աւերմունքներէն կը նորոգէր. 667ին հրաժարեցաւ ի նպաստ Սար-գանաբաղ որդւոյն:

6. Սարդանապաղ: — Սարդանապաղ (Ասոր-պանի-փալ) իր նախորդաց հետևեցաւ: Մէկ պատերազմ մեկալ կ'անցնէր, Փիւնիկէի, Կիլի-կիոյ, Եգիպտոսի, Ճօշի, Բաբելոնի, Հայաստանի և Մարաստանի դէմ: Պաշտպան եղաւ գիտու-թեանց և արուեստից, այնպէս որ Ասորեստանի երևելի թագաւորներէն մեկը կրնանք սեպել:

7. Սարակոս, կրճանոճ Նինուէի: — Նոյնը չենք կրնար զուրգել իր Սարակոս որգւոյն համար. վասն զի քանի մը խաղաղ տարիներէ վերջը, ամեն կողմ ապստամբութիւններ երևե-ցան: Մեկ կողմէն Եգիպտացիք չուզեցին Ա-սորեստանեայց իշխանութիւնն ճանչնալ. միւս կողմէն Կիաքսար Մարաց թագաւորը սպառնա-ցաւ Ասորեստանեայց. Պարսիկները յարձակե-ցան վրան, Փադդէտտանը և Շօշ ալ ապստամ-բեցան: Սարակոս չկրնալով անոնց դէմ դնել, զանոնք զսպելու համար բոլոր իր զօրութիւնը Նաբուպապոսար զօրավարին յանձնեց. բայց այս զօրավարը ինչպէս կ'երևայ՝ ծննդեամբ և մտօք Քաղդէացի ըլլալով, իր թագաւորին դէմ ապստամբեցաւ, և ինքզինքը Բաբելոնի թագա-ւոր անուանեց: Դաշնագրութիւն ըրաւ Կիաք-սարին հետ, որ Եաքը զՍարակոս Նինուէի մէջ պաշարեց: Երեք տարի դէմ դնելէն վերջը առնուեցաւ Նինուէ. Սարակոս ինչպէս առջի Սարդանապալը կրակ տուաւ իր պալատին և մեռաւ իր հնիկներով և բոլոր իր գանձերով մկտեղ: Ջնջուեցաւ բոլորովին Ասորեստա-

նեայց թագաւորութիւնն և յաղթողաց մէջ բաժ-նուեցաւ: Այս դէպքը ըստ ոմանց ի 606 հան-գիպած է, և ըստ այլոց՝ որ հաւանականագոյն է, Քրիստոսէ 625 տարի առաջ:

Այսպէս կործանեցաւ Նինուէ այն ընգար-ձակ քաղաքը, և կամ թէ ըսել՝ այն չորս քաղա-քաց միութիւնը, որ 50 կամ 60 մղոն չրջա-պատ ունէր և 30 մեդր բարձր պարիսպ, որուն վրայ 1500 աշտարակներ կային 60 մեդր բար-ձրութեամբ. և այնպէս լայն էր պարիսպը՝ որ վրան իրեք կառք քովէ քով կրնային անցնիլ, Ժողովրդեան թիւն ալ 600,000. կործանեցաւ և ուրիշ բան չի մնաց, բայց եթէ յետ 25 դա-րու ընդունայն յիշատակ մը:

8. Փաղդէասոյ կամ Բաբելոնի նոր ինքնակալութիւն: — Նինուէի աւերակաց վրայ Բաբելացւոց տէ-րութիւնը գարձեալ կանգնուեցաւ, որ երկայն գարեր անոր հպատակ եղած էր. բայց այս ըսել չէ որ Բաբելացւոց նոր տէրութիւնը բո-լոր Ասորեստանի երկրին ալ կը տիրէր, վասն զի վերի մասը Մարաց ձեռքն էր:

9. Նաբոպապոսար: — Փաղդէացւոց թագաւո-րեան երկրորդ հիմնադիրը՝ ինչպէս ըսինք, Նա-բուպապոսար եղաւ (625-604): Մինչ դաշնակից միաց կիաքսարայ հետ, և կ'ուզէր նաև ամենուն հետ նոյն խաղաղութիւնը պահել, իր նոր տէ-րութիւնը բարեկարգելու և զօրացընելու հա-մար. բայց յետոյ սակրուեցաւ պատերազմ ընել Նեքաոով Եգիպտոսի թագաւորին հետ, որ սպառնալից հասեր էր ինչուան Եփրատ: Նաբուպապոսար աթոռակից ընտրեց իր որդին Նաբուգոդոնոսոր, և իրեն յանձնեց այս պա-տերազմն, յորում Եգիպտացիք չարաչար յաղ-թուեցան ի Կարկամիս:

10. Նաբոգոդոնոսոր: — Նաբուգոդոնոսորի թա-

գաւօրութիւնը 43 տարի քշեց (604-561), իբրեն գլխաւոր ըրած պատերազմներն Ջրէհաստանի և Փիւնիկիոյ դէմ եղան։ Երեք անգամ զանազան ժամանակներ Երուսաղեմի վրայ գնաց, և ամեն անգամ տիրեց անոր։ Վերջին անգամ առնելով Երուսաղէմ կործանեց և Յուդայի ցեղին մեծ մասը գերի տարաւ, որըստեւեցաւ Փերուիէն Բաբելոնի։ Աւաւ նաև Տիւրոսը տասներեք տարի պաշարելէն վերջը, և այնպէս իր բացարձակ իշխանութեան տակ ձգեց արեւմտեան Ասիոյ համրողջ երկիրները, Եփրատ գետէն մինչև Եգիպտոսի սահմանները։ Եռքը յաղթութեամբ յեգիպտոս մտնելով՝ բոլոր երկրին մէջ արշաւեց, և աւերշարկելով և կողոպտելով գարձաւ ի Բաբելոն, ուր որ անցուց իր վերջի ինը տարին, և չնայելով տուաւ այն մեծամեծ չէնքերն զոր սկսեր էր իր Թագաւորութեան սկիզբէն, և որոնց համար պատերազմի մէջ բռնած գերիները կ'աշխատացընէր։ Երեթալով այնչափ մեծցաւ իր իշխանութիւնն և յաջողութիւնները՝ որ հպարտացաւ և տարօրինակ կերպով պատժուեցաւ։ Շատ տեսիլքներէն վերջը որոնք իր արդէն յուզեալ մտաց վրայ չարաչար ազդեցին, տեսակ մը խենթութիւն եկաւ վրան զոր բժիշկները գայլախոստութիւն (licantrophie) կը կոչեն։ Կենդանի մը դարձեր էր, զգեստ հագնել չէր ուզեր, ըղունգներն և մազերը կ'երկընցընէր, խոտէն զատ ուրիշ բան չէր ուտեր, ջրոս տոքի վրայ կը քալէր։ Այս իր խենթութիւնը եօթը եղանակ տևեց, զոր ամենք եօթը ամիս կը հասկընան, իսկ ուրիշները եօթը տարի. հաւանական է որ այս խենթութիւնը ծածուկ պահեցին՝ ուրիշ մը վարչութեան գլուխ դնելով։ Յիմարած Թագաւորն իր պարտէզներէն դուրս չէր ելլեր, իսկ երբ ելլելը դլուխն եկաւ, ինքն իսկ այս

դէպքը յայտնեց, ըսելով Թէ կ'օրհնեմ այն երկնից Թագաւորը որն որ կրնայ խոնարհեցընել Նպարտոնները։ Ինչ ժամանակէն մեռաւ, չի ամբք և վիաւոք։

11. Նաբոգոդոնոսորի յաջորդներն։ — Նաբուգոդոնոսորէն եռքը Բաբելոնի մէջ միայն չորս Թագաւորք նստան։ Առնցմէ երեքը՝ որ են Իլմարովդաք, Նեգլասարոս և Լաբոսոարքոս, ընդամենն եօթն տարի միայն Թագաւորեցին։ վասն զի առջինը Մարաց հետ պատերազմելու առեն մեռաւ, և միւս երկուքը պալատին մէջ դաւաճանութեամբ սպանուեցան։ Եւ այս նշան էր Թէ Նաբուգոդոնոսորի Թագաւորութիւնը կործանելու մօտ էր։

Նաբոնիտ՝ և կամ ըստ Հերոդոտոսի Լաբինիտ, վերջին Թագաւորը այսպիսի կործանման մը ջանաց դէմ առնուլ, և փութով սկսաւ ղհաբերն զօրացընել, քաղաքին հիւսիսային կողմը լիճ մը և ջրագրաններ շինել տուաւ, որոնք կարենան արգելուլ կամ դէթ դժուարացընել Թշնամեաց յարձակմունքը։ Այս ամեն աշխատութեանց մէջ իր մայրը Նիկոտրիս շատ կ'օգնէր իրեն։

12. Բաղտասար, անհոն Բաբելոն։ — Բայց ամենայն ջանք ընդունայն եղան. 539ին իր Թագաւորութեան վրայ յարձակեցաւ Կիւրոս Մարապարսիկ Թագաւորն՝ Տիգրան Հայկազն Թագաւորին նիզակակցութեամբ, և Բաբելոնի քով խորտակեցին Փաղդեացւոց բանակը, որուն զնձամբ կը զօրավարէր Լաբինիտ։ Փախաւ Լաբինիտ և ապաւինեցաւ Պորսիպպա բերդին մէջ, քաղաքին պաշտպանութիւնը իր Բաղտասար որդւոյն յանձնելով, որ արդէն սկսեր էր գահակից հօրը։ Քաղաքին գիմադրութիւնը այնչափ սաստիկ եղաւ որ պաշտպանողաց վրայ

անխոհեմ անհոգութիւն մը ըներաւ, և սկսան զուարճանալ և կերուխումի եռեւ ըլլալ: Կիւրոս յարմար առիթ սեպեց զայն, և 538ին գիշեր մը գիտնալով որ Բաբելացիք հանգիստ ունէին, փոխեց Եփրատ գետին ընթացքը վերին կողմէն, և անոր ցամաք անկողնէն՝ յանակնկալս Բաբելոն մտաւ և տիրեց անոր: Բաղտասար Թագաւորը սպաննուեցաւ, և Նաբոնիտ կորսնցնելով մայրաքաղաքը՝ անձնատուր եղաւ յաղթականին, որ կեանքը շնորհեց և պատուաւոր բնակելու տեղ մը տուաւ իրեն 'ի Կարմանիա:

Սակայն Կիւրոս Բաբելոնը չկործանեց Նինուէի պէս, այլ Պարսից տէրութեան երկրորդ մայրաքաղաքն ըրաւ. և միայն արտաքին պատնէշներն քանդեցին: Այն քաղաքը՝ որ միլիոն և կէս բնակիչ ունէր, և իննսուն հազարամեայ շրջապատ, քառակուսի էր ձևով, և ամէն կողմը 25 սրճնէկ մեծ դուռներ ունէր, որոնք կը բացուէին նոյնաթիւ ճամբաներուն վրայ, և մեկզմէկ ուղղանկիւնաձև կը կտրէին: Մեծագործ և հոյակապ էին շէնքերը՝ մանաւանդ Նաբուգոդոնոսորի վառաւոր պալատը, որուն հետ կից էին այն կախաղանաւոր պարտէզները, այսինքն վրայէ վրայ շինուած բուրաստաններն, զանազան բարձրութեամբ հողոյ վերայ, որոնք վեր կը կենային կամարներով և մեծամեծ սիւներով՝ առանց կամուրջներու, ջրանցքներ, շէնքերն յիշելու, որոնք ամէն տեղ ցիրուցան էեցուած են, յիշենք միայն Բէլ-Մարովդաքի մեհեանը, որ էր եօթը աշտարակ վրայէ վրայ, որուն Թանձրութիւնը որչափ որ աշտարակը կը բարձրանար հետզհետէ կը նուազէր: Այս ուղիղ բարձրութենէ ուրիշ բան չէ մնացած, բայց եթէ աւերակներ՝ որոնց միջէն տխուր կը վազէ Եփրատ գետը:

ԳԼՈՒԽ Գ.

Ասորեստանեայց և Բաբելացւոց քարոյական և քաղաքական կեանքը:

1. Կրօնք: — 2. Բուրմք: — 3. Գիտութիւնք: — 4. Մատենագրութիւն. Գրութիւնք: — 5. Արուեստք: — 6. Վաճառականութիւն. Շարտարութիւն: — 7. Բարք: — 8. Կառավարութիւն:

1. Կրօնք: — Գրեթէ նոյն էր Ասորեստանեայց և Բաբելացւոց կրօնքը: Ասորեստանեայք իրենց գերագոյն աստուածը Ասուր՝ կը կոչէին հայր և Թագաւոր աստուածոց, նոյնը Բաբելացիք Իլու կ'անուանէին: Գերագոյն աստուածմէն ետք կար ուրիշ երկու երրորդականութիւն ալ, որոնք ոչ թէ Եգիպտացւոց պէս հայր, մայր և որդի էին, այլ ամէն արուն ունէր իր միւս սեռն ալ: Աստուածոց մէջ ամենէն ծանօթն Բէլ-Մարովդաք էր, և աստուածհաց երևելին ալ Մերլիդա: Ապա մոլորակային աստուածներն կուգային, որոնցմէ Արամազդը չվոխեցին Բելայ հետ, և ուրիշ մանր անթիւ աստուածներ:

2. Բուրմք: — Բուրմերը՝ որոնք մոգ կ'ըսուէին, Եգիպտացւոց քրմաց պէս զօրաւոր դաս մը կը կազմէին, և բայ 'ի կրօնական պաշտամունքներէ՝ աերուեթեան մեծամեծ պաշտօններն կը վարէին, և կը պահպանէին ու իրենց ընտանեաց կ'աւանդէին ազգային գիտութիւնը: Ասոնց գլխաւորին՝ մոգպետին՝ երբ Թագաւորը հետու էր, կը յանձնէին վարչութիւնը: Քաղդեայք ալ կը կոչուէին, վասն զի ամէնքն ալ Քաղդեայք պէտք

էին ըլլալ, Թէպէտ ամէն Քաղդէայ քուրմ չէր։ Թէպէտ աէրուԹեան մէջ ամէն տեղ ցրուած էին, սակայն առանձին գպրոցներ ալ ունէին, որոնց մէջ գլխաւորն էր Պորսիպպայի գպրոցն Բաբելոնի մօտ։ Առնց զգեստը երկայն պճնուած էր պատմուճան մ'էր, որուն վրայ վերէն 'ի վար ուղղաձիգ գծեր կային, անոր վրայ ուրիշ պզտիկ վերարկու մ'ալ և 'ի գլուխն արտախուռ քակ մը։ Կը համարէին Թէ աստղերը դիտելով կրնան գուշակել՝ ինչպէս կրնայ մէկուն մէկալին հանդիպիլ, ասանկ ալ օդոց փոփոխուԹիւններէն։ Յանկ մ'ալ կը հրատարակէին յաջող և ձախող օրերուն, և որոնք նախապէս օրինակ կրնան սեպուիլ մեր գործածած օրացոյցներուս։

Ահա կերպով ստոյգ գիտուԹեան հետ, որուն մենաւաճառն իրենց պահած էին, խաբեուԹիւն ներ ալ խառնելով՝ մեծ ազդեցուԹիւն ունէին Թէ առնուին և Թէ հասարակաց գործոց վրայ։

3. Գիպսուխոս։ — Ան անանուն երկնից տակ առաջին զարգացող գիտուԹիւնը՝ աստեղագիտուԹիւնն եղաւ։ Քաղդէացիք հասատատուն աստղերը մոլորակներէն զատեցին, մոլորակաց՝ երկրէս ունեցած հեռաւորուԹիւնը գտան, խաւարմանց պատճառը հասկըցան և հաշուեցին։ Շատ համատեղուԹեանց և ղոդիակոսին ձևը և դիրքը նշանակեցին, ինչպէս Ուբանոսին արբանեակներն ալ ճանչցան։ և 'ի Նինուէ գըտնուած կորնթարդ ապակիէ մը կը գուշակուի Թէ հեռադիտակ ալ ունեցած ըլլան։ Մեզի պէս տարին կը բաժնէին ամիս և շաբաԹ, և ճշմարիտ տարիէն քանի մը մանրերկրորդով տարբեր. և ժամանակը չափելու համար՝ ցորեկ ատեն արևու և գիշերը ջրէ ժամացոյց կը գործածէին։

Ահա աստեղաբաշխական հաշիւներն մեզի կը

ցուցընեն Թէ Բաբելացիք երկրաչափուԹիւնն և ԹուաբանուԹիւնը բաւական դիտէին։ Եւ այս վերջնոյս վրայ ինչուան տա մեզ հասած հատուկտոր գրուածներէն կը գուշակուի Թէ իրենց հետևողուԹեամբ գտած ըլլայ ՊիւԹագորաս իր աղիւսակը։

Նմանապէս ջրաբաշխուԹիւնն ալ անոնց աղէկ ծանօԹ էր, ինչպէս կ'երևնայ այն բազմաԹիւ ջրագարձներէն որ իրենց արհարհայ մէջ կան։ ԲժշկուԹիւնը գիտուԹիւն չեպուուեցաւ. հիւանդուԹիւնները չար ոգւոց արգասիք կարծելին, և կը համարէին Թէ կրնան աւելորդապաշտուԹիւններով բժշկուիլ։

4. Մոպենագրուխոս, Գիր։ — Ի Նինուէ Սարդանապաղ Բի երկու սենեակները գտնուեցան աղիւսակներով լի, որոնք մասամբ նոյն Թագաւորին գրուածքներն են, և բոլորն ալ ինքը հօն դրած է 'ի էրեռուխոս խոշոր հպարտացոյ։ Միով բանիւ՝ գրադարան մ'է։ Երբ կարենան ամբողջ կարդալ՝ Ասորեստանեայց մտաւորական ճոխուԹիւնն այն ատեն պիտի լմնցուի։ Ան աղիւսակները՝ զոր կարդացեր են, կը բովանդակեն աստրա — բաբելոնական էբռախառուխեան գիպսուխոս, և Ասբէսպանէայ Բաբելոնի թամանախիէ պախռուխեան մը հարուածք, և բառագրոց, իրաւագիտուԹեան, տեսչուԹեան և կրօնից վրայ Ճառող հատուածներ։ Ասորեստանեայց և Բաբելացւոց գործածած գրանշանքն բևեռի և սեպի ձև ունենալնուն՝ գրուԹեան ձևն ալ բևեռաձև կամ սեպաձև կոչուած է։

5. ԱգաԹոպս։ — Ահագին մեծագործուԹիւնները նշան են Թէ ճարտարապետուԹիւնն շատ յառաջ գացած էր։ Սակայն քար չունենալով փառն մէջ եփած աղիւս կը չինէին, կամ պարզապէս արևուն չերմուԹեամբ կը սնդացընէին։

Եւ այս առաջներով բարձրաբերձ չէնքեր կը կանգնէին, յորոց են Ղէվնոյ ապարանները, որոնց ծայրէն աստղերը կը դիտէին: Պատերը կ'ամրացնէին աղեւսաց մէջ կպրով չաղուած եղեգի խուրձեր դնելով: Արձանագործութիւնը ժամանակակ էր ճարտարապետութեան, որովհետեւ ամէն տեղ սովորութիւն ըրած էին խորաքանդակներ ընել պատերուն եւ ալապատառ քարերով. բայց որչափ որ այս քանդակներուս վրայ խնամք մը եւ նրբութիւն մը կը տեսնուին, նոյնչափ ալ առանձին արձաններն անարուեստ են:

6. Ճարտարութիւն. Վաճառականութիւն: — Ատրեստանցիք եւ Բաբելացիք ականց եւ մետաղաց վրայ բանիլ խիստ կատարեալ կերպով գիտէին. նոյնպէս մետաղներ հալել եւ ձուլել զարդուց համար, փղոսկրի եւ ապակւոյ վրայ բանիլ, գորգերուս տեսակներ՝ որոնք խիստ յարգի էին: Իրենց վաճառականութիւնն շատ ծաղկած էր ոչ միայն բոլոր արեւմտեան, այլ եւ կեդրոնական Ասիոյ մէջ:

7. Բոլոր: — Թէպէտ ամէնքը բազմակին չէին՝ բայց ներելի էր բազմակնութիւն: Ամուսնութիւնն տեսակ մը տուրեւառ էր: Ամուսնացնողը մանկամարդը՝ մանաւորապէս ի Քաղդեացան, աճուրդի կը հանէին, բարձր գին տուողին տալու համար: Բնականապէս գեղեցկուհիները գին կ'ընէին. բայց ասոնցմէ հանուած սակով հայրերը օժիտ կը պատրաստէին տգեղաց համար, եւ կը ջանային զանոնք ալ ամուսնացնել: Երիկ մարդը կնոջ վրայ բացարձակ իշխանութիւն ունէր, ինչպէս նաեւ իրաւունք վինչը Թողլու:

Խնճոյք շատ կը սիրէին, սխալցնելով ծածկուած տեղաններուս վրայ կը նստէին. առատ կը խմէին, մանաւորապէս արմաւի գինի, եւ մատուցներով կ'ուտէին:

Ունեցած հարստութիւններով՝ եւ անոնց հետեւանք զեղխութեամբ, Ասղիդայի պաշտօնեին անբարոյական խոհերներով, մեղկ եւ թոյլ էին, եւ բարուց ապականութեան կողմանէ Բաբելոն առակ մնաց:

8. Կառավարութիւն: — Այրայեղ բացարձակ միապետութիւն էր կառավարութիւնն. գահոյից մէջ նախարարներն նոյն իշխանութիւնը կը գործածէին. բոլոր տէրութեան մէջ թագաւորը տէր էր ամենուն կենաց եւ մահուն:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ

Թագաւոր Բաբելոնի կամ Պաղեստացւոց

Ադովրոս
Ադապարոս
Ադմէղոն
Ամմենոմէ
Ամեզադարոս
Դաւանոս
Եգովանքոս
Ամենխենոս
Ոսխարտէս
Փսխասաբթրոս

} Ըստ Բերոսոսի այս թագաւորք ջրհեղեղէն առաջ են։

Ջրհեղեղ 3308

Նեբրովթ	2640	2573
Եւեգուս	2575	2508
Փոմա Բելոս	2508	2431
Փորոս	2431	2396
Նեքուպէս	2396	2351
Աբեոս	2351	2303
Ոնիբալուս	2303	2265
Փինսեր	2265	2218

Ասբահացւոց փերապէտութիւն.

Մարտոկէնէս	2218	2163
Անանուն	2163	2123
Սխսմմրտաքոս	2123	2093
Նաբեոս	2093	2058
Փարանոս	2058	2018
Ղապռնատոս	2018	1993

Նինուէի կամ Ասորեստանի թագաւորք.

Ասուր, մօտ 2540

Իր յաջորդքն ինչուան Բել անծանօթ են, որ իր թագաւորութեան երեսունեւորդ տարին վերնատեղ բաբելոնէն գԱբրահամ 1993։

Ասորեստանի առջի պէպուռիան.

Բել	1993	1968
Նինոս	1968	1916
Շամիրամ	1916	1874
Նինուսաս	1874	1856
Արիոս	1856	1806
Արալիոս	1806	1766
Փաքրքսէս	1766	1736
Ամրամիթէս	1736	1698
Բեղոքոս Ա.	1698	1663
Բաղէսաս	1665	1611
Սեթոս	1611	1579
Մամիթոս Ա.	1579	1549
Ակաղիոս	1549	1521
Սփերոս	1521	1499

Մամիթոս Բ.	1499	1469
Սպարխեթոս	1469	1427
Աբակատադէս	1427	1379
Ամինտաս	1379	1354
Բեղոքոս Բ.	1354	1309
Ատոլա	1309	1297
Բաղատորէս	1297	1279
Ղամպրիդէս	1279	1249
Սոսարէս	1249	1229
Ղամպարէս	1229	1199
Պաննիաս	1199	1154
Սոսարմոս	1154	1152
Միթրէոս	1152	1105
Տէտանոս Ա.	1105	1075
Տէտէոս	1075	1029
Արտաբէղոս	1029	987
Ֆալաէոս	987	942
Ինտապոս	942	904
Բարբոս	904	867
Տէտանոս Բ.	967	857
Տէրքէղոս	957	797
Եապաղիէս կամ Սարդանապաղ- ղէս, (Թաննոս – Կանկողերոս)	797	759

Ասորեստանեայց առջի Թագաւորութեան տեղ չորս մանուսոր Թագաւորութիւններ կանգնեցան, Նինուէի, Բաբելոնի, Մարաց և Հայոց։

Նինուէի Թագաւորք.

Փուա	759	742
Թագղաթփաղասար	742	724
Սաղմանասար	724	712

Սեննեքերիմ	712	707
Աղար - ադոն (Ասորդան)	707	667

կը տիրէ Բաբելոնի 680

Սասդոքին կամ Նաբուզոդոնո- սոր Ա.	667	647
Սարակոս կամ Ֆինալադան	647	625
Նաբուսալազար Նինուէի Թագա- ւորութիւնը Բաբելոնի հետ կը միացընէ	625	—

Թագաւորք Բաբելոնի.

Բէղեսիս	759	747
Նաբոնասար	747	733
Նաստոս	733	731
Ֆուղերոս	731	728
Ռորոս	728	726
Իլուլայոս	726	721
Մարտոգէմպատոս	721	709
Արքեանոս	709	704
Պարտպ միջոց	704	702
Պէլիպոս	702	699
Ափրոնատոս	699	693
Ռիմկեբէղոս	695	692
Մոսէսի Մորատակոս	692	689
Պարտպ միջոց	689	680

Նինուէի Թագաւորք կը տիրեն Բաբելոնի. Նաբուսալազար Բաբելոնի կուսակալը կը Թագաւորէ 644ին և կը տիրէ Նինուէի 625ին։

Աստղեսպանի երկրորդ բոփաստրոնիան.

Նաբուսպաղսար Ա. . . .	625	605
Նաբուսպաղսար Բ. կամ Նաբուգոդոնոսոր Բ.	605	562
Իլմարովդաք	562	560
Նեգլասարոս	560	555
Լաբեսորաքոս	555	554
Լաբինիտ կամ Բաղտասար . .	554	538
Աստղեսանեայց տէրութիւնն կը միանայ Պարսից տէրութեան հետ Կիւրոսի ձեռքով . .	538	—

ՀՆԴԿԱՍՏԱՆ

—

1. Աշխարհագրական տեղեկութիւն: — 2. Հնդկաց պատմութեան երեք շրջանն: — 3. Կառավարութիւն: — 4. Բրահմանաց կրօնական դրութիւնն: — 5. Մասենագրութիւնն: — 6. Գեղարուեստք: — Վաճառականութիւն:

1. Հնդկաստան հարաւային Ասիոյ երեք թերակղզեաց միջակէտը գրաւելով, կերպով մը Աւրևելից Իտալիա կը համարուի: Իր տեղագրական այլ և այլ դրութիւը պատճառաւ թէ հիւսիսային և թէ հարաւային բևեռաց կլիմայն ունի. Ափրիկէի լայնութեան աստիճանին տակ կ'ինայ, բայց անոր նման անպտուղ չէ. մանաւանդ թէ երեք մեծ գետերուին, և հարաւակողման բարձրանդակէն զովանալովը, շատ և տեսակ տեսակ բերք կը հասցնէ. ծովեզերաց ընդարձակութեամբն և հողմոց և ծովուն ջերմուն ընթացից նպաստաւոր ուղղութեամբն ալ գիւրամատոյց է: Այս պատճառաւ յայնկոյս Գանգեսի ըսուած Հնդկաստանն հին աւեներ 'ի վեր աշխարհակալաց և գաղթականաց արշաւանացն ասպարէզ էր և նպատակ. Ասիոյ և Ափրիկէի կարաւանաց և նաւաց չհասաստան, և ընդարձակ վաճառականութեան կէնդրոն մը. իսկ

հնդիկը երկրին բնական արգաւանդութենէն գոհ՝ ոչ երբեք անկէ հեռացաւ։

Հնդկաստանի ցամաքն երեք մասն կը բաժնուի, Լեռնոտ գաւառն, Սաորին երկիրն և Բարձրաւանդակն, և ըստնց գօտի մը զինք Ա. սիայէն կը բաժնէ։

ա. Լեռնոտ գաւառն Հիմալայայ ամենաբարձր լերան զառիվայրն է։ Այս զառիվայրն դէպ 'ի հարաւ հակելով շատ բլուրներ կը ձևացընէ, և որոնք ամէն կլիմայի բոյս կը հասցընեն։

բ. Սաորին երկիրն որ լեռնոտ երկիրն և բարձրաւանդակն իրարմէ կը զատէ, երկու մասն է։ Գանգեսի և Պրահմաբուգրայի արգաւանդ դաշտը. Ինդոսի դաշտն մեծաւ մասամբ անբեր է և անապատ. միայն Փէնճապ (հինդ գետոց երկիր) համեմատաբար աւելի մշակուած է։

գ. Տէքանի բարձրաւանդակն միաձև եռանկիւն թերակղզի մ'է, որուն արևելեան և արևմտեան կողմունքը Կոբ լեռներով կը ձևանան, և հիւսիսային (Վինտիա լեռն) դէպ 'ի սաորին երկիրն կը վայրաբերի. իսկ միջակէտն՝ միակ և ընդարձակ առատաջուր դաշտն է, և իրեն ջուրն այն գետերէն է որոնք իր միջէն կ'անցնին այլ և այլ ուղղութեամբ՝ գրեթէ երկրին բոլոր լայնութեամբը։

Կղզիք. Սէյլան և հնդկային արշիպելագոսին հեռաւոր կղզեաց՝ Սումադրայի, Ճիաւայի, Պոռնեոյ (հին աշխարհին ամենամեծ կղզին) և Զէլէպէսի բնակիչք՝ ցամաքի հնդիկներէն են. այս բանս յայտնի կ'երևնայ լեզուց, քաղաքաց և գետոց անուններուն, բնակչաց գոյնին, բարքին և օրէնքներուն, և հնդկային ճարտարապետութեան մեծագործ շինուածոց աւերակներուն։

Հնդկաստանի տիրող ազգերն Աբէ (կամ իշխողք) բուն կովկասեան ցեղէն առաջ կու գային։

2. Պոռպոյէ Ժամանակ Ինդոսի Դ. դար Ն. Ք. — Հնդկաց պատմութեան ամենէն նշանաւոր ժամանակն Պուտտայի երևնալով կը սկսի։

ա. Հնդկաց ուրիշ ազգաց հետ ունեցած յարաբերութեանցն նկատմամբ՝ արևմտեան պատմագրաց մէջ առասպելախառն աւանդութիւններէ զատ բան չենք գտներ։ Դիոդոր սիկիլիացին աւանդութեամբ կը յիշատակէ թէ Սեսոստր Հնդկաստան հասած ըլլայ աշխարհակալութեամբ, բայց այս դէպքս հաստատուղ չէ, շատ կարան մը չկայ։ Կտեսիասի պատմած Սոսբոպանէսայ 'ի Հնդիսպան ըրած արշաւանքն կարծես թէ կը ստուգէն Բնչայ տաճարին քով գըտնուած խորաքանդակները, թէպէտ և իրրև պատմական անձինք չընդունինք զնոսա և զնաւիրամ։

բ. Պոռպոյէն Ինդոսի Վիթրամաթիայի դարը (50 Ն. Ք.)։ — Պուտտա (որդի Թագաւորի) տանուինը տարի պորտեցաւ հարաւային և արևելեան Հնդկաստանի մէջ և շատ մարդիկ աշակերտեց. մեռնելէն (Մալի երկրին մէջ 543 Ն. Ք.) վերջը իր աշակերտները հաւաքեցին և կարգի վայ առին անոր վարդապետութիւնը։

Սաորեանները Հնդկաստանն նուաճելու համար ըրած փորձէն ետքը՝ երկիրը ինքնագլուխ մնաց. և երբ արևմտեան եզերաց վայ բնակող քանի մը ցեղ առժամանակ մի հպատակեցան Մարաց և Պարսից՝ գէտն անդին եղող բնակչացը յաջողութեան ու յառաջադիմութեան արգելք մը չ'եղաւ։ Աղէքսանդր միայն միտք ունեցաւ փէնճապն ալ տիրել, և ինչուան Ցնիփասիս գետ յառաջեց։

Ֆէ Ի՛ԸԱՅ (313–226)։ — Ալէքսանդրի մեռ-
նելէն վեց տարի ետքն ալ պահեցին Մակեդո-
նացիք իրենց իշխանութիւնը՝ գոնէ անուամբ,
Հնդկաստանի մէջ, Թէպէտ և Պովրոս զօրաւոր
հպատակ իշխանն գրեթէ ինքնագլուխ էր։ Պով-
րոսի սպանութեամբն՝ որ անշուշտ ապստամ-
բութեան պատճառաւ եղաւ, մեծ խռովութիւն
մը ելաւ ընդդէմ օտարաց, որուն գլուխ և շար-
ժիչն եղաւ Ճանդրակուպտա (313–291)։ Ա-
ռիկայ նախ Պովրոսի գահին տիրեց, ապա Թա-
սիլեանց և Պադալիպուդրայի Թագաւորու-
թեան տէր եղաւ, և Սելեւկոսէն ալ առաւ Կե-
դրոսիա, Արաքոսիա և Պարսպամիս ար-
ևելեան գաւառները։ Իրեն Թոռը Անտիքոս (260–
226) Պուտտայի վարդապետութիւնն ընդու-
նելով՝ տարածեց զայն իր Թագաւորութեան
(որուն վրայ ատեղագրեր կը նաև գ՛Քաշմիր) և
սահմանակից աշխարհաց մէջ. և իր այս կրօնա-
սէր եռանդը կը հաստատուի յորինեն շատ յիշա-
տակարանները, որ ցեղ և ցան կը գտնուին իր
Թագաւորութեան նաև հեռաւոր գաւառաց
մէջ։

Ալէքսոսի մահուամբը տէրութիւնը քայքա-
յեցաւ և Ն. Ք. երկրորդ դարու մէջ սկսան Ա-
սիոյ հիւս. արևելեան կողմէն ազգայ (Հնդիկ-
սկիւթական) մեծ գաղթականութիւնք, որ հա-
սան մինչ՝ ի Հնդկաստան։ Վէրջապէս Թա-
գաւորն ազատեց աշխարհքն օտարներէն. և այս
գեղքը այնչափ նշանաւոր սեպուեցաւ, որ ին-
չուան նոր Թուականի մը գործածուիլ եղաւ
(57 Ն. Ք.)։

3. Կառավարութիւն։ — Հնդկաստան զանազան
անկախ Թագաւորութիւններով կը կառավա-
րուէր, բայց սոնք ամէնքը միևնոյն քաղաքա-
կան և կրօնական սահմանադրութիւնն ունէին։

Կառավարութիւնը բացարձակ միապետութիւն
էր, և յաջորդութիւնը ժառանգական՝ ըստ ի-
րաւանց անդրանկութեան։ Թագաւորն կրնար
մկնուն երկիրներ տալ և ետ առնուլ. միայն
Բրահմանաց տրուած երկիրներուն դպչիլ չէր
ըլլար, և հարկէ ալ ազատ էին անոնք։ Ա-
տատական վարչութեան համեմատ Թագաւորն
փոխարքաներ կը դնէր գաւառաց վրայ, որոնք
իրենց տեղապահներուն կը յանձնէին գաւառաց
այս ինչ կամ այն կողմերը՝ հարկ մը առնելով և
պատերազմի ժամանակն ալ զինուորաց բանակ
մը՝ պատերազմողաց կարգէն։ Բանակն չորս բա-
ժանուէր. հետևակ, ձիաւոր, փիղք և
սայլք։

Թագաւորն պատերազմիկ գասէն կ՛ընտրու-
էր, և մինչ իր քովը քուրմեր կը պահէր. եօթն
կամ ութ խորհրդական ունէր Բրահմաններէն,
ու միայն պատերազմի պաշտօնեայն՝ պատերազմիկ
գասէն առնուած էր. անոնց խորհուրդը կը լը-
սէր՝ բայց ետքը ըստ հաճոյս կ՛որոշէր։ Իր գըլ-
խաւոր գործն էր գատաստան կատել. ամէն գա-
ւառ տասը Բրահմաններէ կազմեալ ատեան մը
ունէր, բայց գերագոյն ատեանն՝ Թագաւորին
պալատն էր. գատաստանաց մէջ ձշմարտու-
թիւնն ստուգելու համար տարօրինակ փորձեր
կը գործածէին. ինչպէս կշիռ, Թոյն, կրակ և
ուրիշ ատոնց նմանները։

Արեաց Հնդկաստանի մէջ հաստատուելէն ու
բազմանալէն վերջը ժողովուրդն չորս գաս բաժ-
նուեցաւ. առաջին երեք գասը Արիք էին, իսկ
չորրորդը՝ նուաճուած բնիկք։ Բարձր գասերէ
եղողք կրնային իրենց մէջ ետքը եղող գասակար-
գէն եղոլին տուեան ընել պէտք եղած ատեն,
բայց սասրնագունից Թոյլ տրուած չէր։

ա. Բրահմանք նուիրական և անբռնաբա-

բել են. անունը միայն կրնան մեկնել ղվէրա (իրենց կրօնից դէպքն), ղոհել և ողորմութիւն ընդունել: Այս դասուն չորրորդ մասը միայն քահանայք են. միւսները ուրիշ որ և իցէ պատուաւոր արուեստ կրնան ընել, պաշտօնեայ կ'ըլլան, թագաւորին խորհրդական, դատախրակ, դատաւոր, բժիշկ և այլն:

է. Ձինուորական ազնուականութիւնն աշխարհակալութեամբ շատ կալուածներու տէր եղեր էր, և միայն որսի և զինուորական կրթութեանց կը պարապէր:

ը. Վայրենացց կը վերաբերէին հովիւք, երկրագործք, վաճառականք:

թ. Սոդբայթ բուն տեղացիք՝ որ գաղթականաց լեզուն, օրէնքը և սովորութիւնները առին և անձնական ազատութիւննին պահեցին՝ ծառաներն են. Ճարտարութենց, արուեստից և վաճառականութեան եւևէ ալ կ'ըլլային: Զէին կրնար կարդալ կամ լսել վէտան, բայց փարիսեներու պէս ալ պինդ չէին համարուած, որոնք Ենգկաստանի ամենէն տէրն անարդ ու արհամարհ ցեղը սեպուած էին:

4. Բրահմանաց կրօնական դրութիւնն: — Աստուածոյ միութեան նախնական գաղափարը կորսնցընելով՝ արևելեան և արևմտեան Արիք ասպետերը և տարերք, ու մանաւանդ կեղտով զբօսը և զհոգը կը պաշտէին. բայց այս բնական կրօնից բարգաւաճանքն ու ծաղկելը՝ ցեղից երբմէ բաժնուելէն վերջը սկսաւ: Իրենց ամենահին կրօնական գրքերն են Վէդա-ք: Գերագոյն էակն Պրահմ՝ ոչ իբրև տիեզերաց (ինչպէս սուրբ Գրոց Եհովան) տէր, այլ կը համարուէր ստեղծող և կենդանացուցիչ բնութեան: Եղբը (500–300) աւելցուցին երկու ուրիշ աստուածներ ալ, Վիշնու պահպանիչ ստեղծագործութեան, և Սիւա խանգարիչ և ստեղծագործութեան: Ամենէն ազնիւ և սուրբ Վէդան է Ռիկ-վէդա, որ կը պարունակէ հին հրաշալեաց պատմութիւնները, որոնք ժառանգաբար անցեր էին ազգէ ազգ, և որոնց ամենէն հին մասերը կը համարուին 1500 տարի առաջ Ենգկաստան եկած ատեննին գրուած: Ասոնց մէջ կը գտնուին նաև ամենէն հին երգերը, որոնք կը գովեն Ինտրա, Ագնի, Սուրիա, Ուշաս, Մարութ և ուրիշ աստուածներ: Ասոնց մէջ կը գտնուի նաև Ենգկաստանի ամենէն հին պատմութիւնը, որ կը պատմէ Ենգկաստանի ներս մտնելու ատեննին Արեաց պատերազմները Տասիւներու հետ, որոնք Ենգկաստանի սեւամորթ հնակիրներն էին:

Վէդաներէն ետքը կու գան Պրահմանաներ, որոնք կը պարունակեն զոհերու կանոնները, և Ուփանիշատներ, որոնք կը պարունակեն փիլիսոփայական ուսմունքներ: Ասոնց ետքը կու գան Սուտրաներ, որոնք կը պարունակեն կրօնական կանոնները, և Սմրիթիներ, որոնք կը պարունակեն քաղաքական և քաղաքացական օրէնքները:

Իրենց կրօնական հրահանգքն էին աղօթք, լուացմունք, զոհ, ուխտագնացութիւն, ծոմապահք, ողորմութիւն, ապաշխարութիւն և ծերութեան առեն մենակեաց կեանք՝ շատ անգամ խիստ ճնշմամբ մարմնոյ: Այրեաց ինքնակամ ողջակէզն թոյլ արուած էր, բայց խիստ օրէնքներով:

Ն. Ք. վեցերորդ դարու մէջ Պուդդայի աղանդն տարածուեցաւ թագաւորական օգնութեամբ, ընդ բովանդակ միջին և արևելեան Ասիա, և՝ ի ձենասան՝ ի 61 ամի յետ Քրիստոսի. և պատմական մեծ կարևորութիւն ունեցաւ բոլոր ազգերը մեկ կրօնքի վերածելով: Պուտտայի բանաւորական գրութիւնն՝ ոչ միայն աստուածեան մեջ կրօնական յեղափոխութիւն մը բերաւ, այլ դասուց տարբերութիւնն ալ մեղմեց և ընկերական կեանքն բոլորովին փոփոխեց:

5. Մաքնագրութիւն: — Ենգկաց հին մտաւորականութիւնն կը բովանդակէ ամեն տեսակ բանաստեղծութիւն: Բանաստեղծական լեզուն այնպէս հակամետ են, որ ոչ միայն նուիրական մատեանք, դատաստանագիրք և աւանդութիւնք, այլ և ուսումնական գրուածք՝ քերականութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, էական գիտութիւն, բժշկականութիւն, ոտանաւոր գրուած են: Ենգկաստանի հին գրուածոց լեզուն սանսքրիտն է, նուիրական և կատարեալ լեզուն, որ Մահաբհարատայ հին երկայնաշունչ էպոսին վերջը մեռեալ լեզու դարձաւ, և հիմայ Բրահմանք միայն կը սորվին իրենց նուիրական գրքերը հասկնալու համար: Ենգկագիտնականաց մեծ գերդաստանին մեկ ճիւղն է. որով և մերձաւոր պարսկականին, հայկականին, յոյն,

ջաման, գոթացի լեզուաց. անուանի Ճոխութեամբ, ընդարձակութեամբ և շարադրութեան կանոնաւորութեամբը: Բանաստեղծական չափուն հարստութեամբն և զանազանութեամբ՝ սահակրիտ լեզուին հաւասարն չկայ:

6. Գեղեցիկ արուեստ: — ա. Ճարտարապետութիւն. Ընդիկ Ճարտարապետութեան յիշատակարանները (մեհեանք՝ ապառաժ լերանց մէջ փորեալք, նման եգիպտական բրգանց) մեծութեամբ գերազանց են ուրիշ ազգաց չինուածներէն, բայց ձևոց գեղեցկութիւն կը պակսի:

բ. Նկարչութեան (որ կապ ունի Ճարտարապետութեան հետ) յառաջադիմութեանն հակառակ էր իրենց կրօնական օրէնքը, որ չէր նեբեր աստուածոց ատնդական պատկերներն փորելիը, պահելով իրենց նախնական ուղանկերպարան ձևին մէջ:

7. Վաճառականութիւն: — ա. Ներքին վաճառականութիւն կ'ընէին կարաւանները և անհատներն՝ կամ ցամաքէն փղերով, կամ նաւով գետոց և ծովեզերայ վրայ. ուխտագնացութեան տեղերը (Պենարէս, Ելլորա և այլն) ուր մեծամեծ ժողովուրդն հազարաւոր մարդիկ կը դիմէին՝ ներքին վաճառականութեան շահաստան եղան միանգամայն:

բ. Արտաքին վաճառականութիւնն ծովէն և ցամաքէն՝ աւելի գնող էր քան թէ վաճառող. գլխաւոր կողմը արևմուտքն էր, և վաճառականութիւնն ալ՝ ի մասնաւորի Արաբացւոց և Փիւնիկեցւոց ձեռքն էր:

ՄԱՐԱՊԱՐԻԿ

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Մարդաստան.

1. Աչխարհագրական տեղեկութիւն: — 2. Արիք: — 3. Վարքակերպ. Դիմագիծ: — 4. Փրաւորա: — 5. Կիսաքար: — 6. Աժգահակ:

1. Աչխարհագրական տեղեկութիւն: — Մարդաստան կոչուած երկրին արևմտեան սահմանն էր Ասորեստան և Հայաստան, հիւսիսէն կասպից ծովն, արևելքէն Վրկանք և Պարթևք, իսկ հարաւէն Պարսկաստան և Շօշ (Սուսիան): Երկու մասն կը բաժնուէր. փոքր Մարք կամ Ատրոպատական, և մեծ Մարք: Առաջինն՝ որ աւելի հիւսիսակողմն կ'ինայր, բարձրաբերձ ու անտառախիտ և դալարազուարճ լերանց կոյտ մ'էր. իսկ միւս մասն արգաւանդ հովիտներով և գեղեցիկ մարգագետիններով զարդարուած, որոնք Ճարակ և անունդ կուտային բոլոր Ասիոյ մէջ անուանի սերուած երիվարաց:

Դեռացը մեծ յիշատակութեան արժանի կը սեպուի միայն Ատրատա որ կասպից ծովը կը

Թափի. Նոյնպէս Սպաւտա աղէջուր ընդարձակ լիճն:

Մարասատնի քաղաքաց չատը մեղի անճաշնօթի մեսացած են, որոց մեյրաքաղաքն էր Եկբատան: Ըստ Հերոդոտեայ՝ այս քաղաքն եօթն համակեդրոն շրջապատ ունէր, ամեն մէկը արտաքինէն բարձր, եղերաց բարձրութեան չափով, և ամենէն ներսի եղերքն ալիտակ էր. իսկ երկրորդին սև, երրորդին ծիրանեգոյն և ապա կապուտակ, կարմիր, արծաթագոյն և ոսկեգոյն:

2. Աբէ: — Ա՛ն երկրին ուր կը բնակէին Թուբանեանք՝ Յաբեթեան ցեղէն, Աբիք եկան սերեցին, նոյնպէս Յաբեթեան ցեղէն. բայց առջինները Թիրամ: Բայց ասոնք՝ որ Եւրոպան շատ ազգաց նախահայրը կը սեպուին, Թէ նախնական կենաց և Թէ քաղաքեանց վրայ՝ քիչ տեղեկութիւն ունինք: Հակառակն, որ երենց գլխաւոր հանձարովք կ՛երևնայ, Աբիք եկան Մարաց սերելոյ, և այս պատճառաւ տասը գար կառուցան Թուբանեանց հետ: Վերջապէս յաղթող ելլելով բնակեցան ի Մարասատան, և Պարսկաստանի Շօշ, Կեդրոսիա և Սոգդիանիա գաւառաց մէջ ալ ցրուեցան, ու արևմտեան Ասիոյ բարձրաւանդակներուն վրայ բնակեցան, որ ապա Արիական կամ Իրանական աշխարհ ըսուեցաւ: Բայց պատմութեան մէջ Մարասատան և Մարք անուամբ կոչուեցան:

3. Վաբիկե. Դիովկ: — Ըլին առեն Մարք վեց ցեղ բաժնուած էին, որոց նախապատիւ էր Մագաց ցեղը: Ասսկան դրութեամբ գաժուածրին կ՛ըլլար Թշնամեաց դէմ գնել. և շատ անգամ երենց վրայ եղած յարձակմանց մէջ յաղթութեամբ՝ Ասորեստանեայց Թագաւորին հարկատու եղան: Իսկ երբ քաղաքական մարմին

ձևանալով՝ իրենց Թագաւոր քնտրեցին, այն առեն ինքնիշխանութիւն ալ ունեցաւ: Ըստ Կաէսիփոնի՝ Մարաց Թագաւորութեան հիմնադիրն է Վարբակէս, որ Քաղդեացւոց հետ միաբանելով Նինուէի տիրեց, և Սարդանապալղի Թագաւորութիւնը վերջացուց: Իսկ ըստ Հերոդոտեայ՝ Դիովկ եղաւ որ Թագաւորեց 609–556ին, և որուն յաջորդեցին ուրիշ երեք Թագաւորք ալ, ինչուան որ Մարասատան Պարսից Թագաւորութեան գաւառ ձևացաւ: Դիովկայ վրայ ալ մանաւոր յիշատակութիւն մը չենք գտներ Ասորեստանի տարեգրութեանց մէջ, որ կ՛ուանդուն Թէ 670ին առեն երբ Դիովկ կը Թագաւորէր, Ասորդան Ասորեստանի Թագաւորն նոաձեց զՄարս: Սակայն Դիովկ յաջողմիտ և արդարասէր բնաւորութեամբն հպատակաց շատ սիրելի ըլլալով, Թագաւորական իշխանութիւնը ձեռք ձգեց. Եկբատան քաղաքը, և հոն Թագաւորական պալատ մը չինեց ոսկիէ երեք էջր ելլէր, և ուր ոչ ոք կրնար երեն ներկայանալ. ասով ուզէր հպատակայ իր վրայ ունեցած մեծարանքն աւելցընել, և գերագոյն բնութեան մը տէր սեպուիլ: Սակայն ժողովրդեան բարւոյն հոգ տանելէն ալ երբէք ետ չկեցաւ:

4. Փրաորթ: — Իր որդին և յաջորդը Փրաորտ՝ Մարաց տերութիւնն ընդարձակելու եռանդ եղաւ, ըստ Հերոդոտեայ աւանդական պատմութեանը: Պարսից դէմ գնաց և խոնարհեցուց, ապա ուրիշ շատ տերութիւններ ալ. վերջը երբ Ասորեստանի վրայ գնաց, յաղթուելով սպանուեցաւ Թագաւորութեան 22 տարին:

5. Կիաքսարես: — Կիաքսարով (634) կը սկսի Մարաց ճշմարիտ պատմութիւնը: Բանակին

գլուխ կենալով՝ Աւորեպատանեայց դէմ հլաւ Փրաւորային վրէժն առնելու. և արդէն յաղթական կը պաշարէր զՆինուէ, երբ սահմուելացաւ Թողուլ պաշարումը և փութալ ի տերութիւնը պաշտպանել Սկիւթացւոց դէմ:

Այս խուժադուժները որ ահաւոր կին իրենց ձիոց արագութեամբը և նետոց անվրիպակ ուղղաձգութեամբ, պատերազմով կ'անցընէին կեանքերնին, և ով որ բազմութիւն Թշնամեաց սպաննած ըլլար, մեծ մրցանակը անոր կուտային. մեռելոյ գանկերը գաւաթի տեղ կը գործածէին, և կիմմերեանցմէ Կոլկասին վրնտուէլով եկան Մարասան մուտ: Կիաքսար փորձեց դէմ դնել իրենց յարձակմանն, բայց յաղթուելով հարկաւոր եղաւ: Վազեցին զօրութեամբ Ասիոյ ուրիշ աշխարհաց վրայ, և քսանևութ տարւոյ մէջ տիրելով տանկուվրայ ըրին ամենայն ինչ. բայց վերջապէս Կիաքսար և Մարք յաջողեցան ազատիլ գոնա վրնտուելոյ: Ինքնիշխան ձեալով, պատրաստուեցաւ Կիաքսար Նինուէի վրայ վազել Նաբուպալասարի հետ միաբանելով, և այս անգամ՝ ինչպէս ըսած ենք ուրիշ տեղ, Նինուէի տիրեց ու կործանեց:

Երևելի պատերազմ մ'ալ եղաւ Կիաքսարայ և Լիւդացւոց Ալիատ Թագաւորին մէջ, ուր Թեւրևս Հայաստանի սահմանագլուխները երարուս հետ զրնուեցան՝ Սկիւթացւոց դէմ պատերազմելու առեն: Պատերազմն վեց տարի քաշեց փոփոխակի բաղդով: Արեւուն յանկարծ խաւարմամբն պատերազմը դադրեցաւ. և զի՛ջան հաշտութիւն ընելու Ալիատայ Աբիտենէ աղջիկն՝ Կիաքսարայ Աժգահակ տղուն տունը նացընելով: Ալիս գետն ասկէ երկու ինքնակալութեանց սահմանագլուխ որոշուեցաւ:

6. Աժգահակ:— Կիաքսարի յաջորդեց Աժգա-

հակ 594ին, որ հօրմէն շատ տարբեր էր բնաւորութեամբը: Դրեթէ անփոյթ եղաւ ոտքի վրայ բռնելու այն տերութիւնը զոր Կիաքսար մեծ քաջութեամբ ընդարձակած, զօրացուցած և պահպանելի ըրած էր. միայն զեղխութեանց, պերճանաց և արբշնական չքեղութեանց ետևէ կ'ըլլար: Բազմաթիւ ծառայք և պալատականք, հանդերձից ճոխութիւն, կահկարասեաց մեծութիւն. ոսկի՝ պարանոցի վրայ, ոսկի պարանջանք բազկաց վրայ, ամեն տեղ ոսկի, մինչև երիվարաց սանձերն ալ՝ ոսկեզէն էին: Պալատականաց մեծ գլխաւորն օրսորդութիւնն էր, և օրսոյ տեղն ալ շատ անգամ մայրաքաղաքին քոնը էր՝ զոր Ղէֆթ կը կոչէին:

Այսպիսի բարքով և վարքով Թագաւոր մը, Մարաց տերութիւնն չէր կրնար ոտքի վրայ բռնել, ինչպէս կործանեցաւ ալ Կիւրոսի ձեռքով:



ԹԱԳԱՒՈՐՈՒ ՄԱՐԱՑ

Վարքակէս . . . 739

Անիշխանութիւն, յորում կը բռնանան Մանդաւկէս Սալոմոնս, Ափրիկաս, Արտիա և Արբիանէս.

Դիովկ	735	690	կամ 710	657
Փրաւորտ	690	655	կամ 657	654
Կիաքսար Ա. . . .	655	595	կամ 654	595
Աժդահակ	595	560		
Կիաքսար Բ. . .	560	556		

Մարատան Պարսկաստանի գահառ մը կ'ըլլայ Կիւրոսի ձեռքով 556ին։

ԳԼՈՒԽ Բ.

Պարսկաստան։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Նախնի Պարսիկք. Աքեմենեանք։ — 3. Մեծն Կիւրոս. Մարաստանի աշխարհակալութիւն։ — 4. Լիւդիոյ աշխարհակալութիւն։ — 5. Ցունական գազթականներուն դէմ պատերազմ։ — 6. Կիւրոսի ուրիշ աշխարհակալութիւնները։ — 7. Կիւրոսի կատարածն։ — 8. Կամբիւս։ — 9. Շէրդ մոգ։ — 10. Դարեհ և իր յաջորդները։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — Պարսկաստան անունը ամբողջ ամբոխակերպութենէն և աշխարհակալութիւններէն առաջ արուեցաւ ընդարձակ երկրի մը։ Պարսկաստանի սահմանակից են հիւսիսէն Մարք և Պարթևք, արևելքէն Գարամանիոյ անապատը, հարաւէն Պարսկայն ծոց, և արևմուտքէն Սուսիան։

Լեռնոտ և դեղեցիկ աշխարհք մ'է, լի արգաւանդ հովիտներով, բայց ծովակողմը գրեթէ անբնակ աստիկ տաքութեան և վատառողջ օդին պատճառաւ։ Երկու են յիշատակութեան արժանի գետերն. Երասխ՝ որ կը թափի ազի ընձի մը մէջ Գարամանիոյ սահմաններուն քովը, և Արտաէս որ՝ի ծովը կը բերանանայ։

Մայրաքաղաքն էր Պերսեպոլիս, բայց Կիւրոս Պասարկաթ կը նստէր, ուր թաղուեցաւ ալ։

2. Նախնի Պարսիկները. Ախեմենես։ — Պարսիկք ալ Արեաց ցեղէն էին, և հաւանականաբար այս պատճառաւ, և նոյն լեզուն և կրօնքն ու-

ենեաձնուն՝ Թէպէտ Ճանչցան Մարաց նախագահուԹիւնն, բայց բուն անունց հպատակը չէղան: Սակայն այս ազգակցուԹիւնն արդելք չէղաւ Պարսից նուաձել զՄարս, երբ իրենք զօրացան ու Մարք ակարացան: Պարսիկք զանազան ցեղ բաժնուելնէն եաքը, միապետուԹիւն եղան, և առաջին Թագաւորն եղաւ Աքեմենէս. որուն յաջորդքը՝ քանի որ նոյն հարստուԹիւնը դիմացաւ, Աքեմենեանք կոչուեցան:

3. Մեծն Կիւրոս. Մարաց պէտքը:— Կիւրոս Աքեմենէսի չորրորդ յաջորդն եղաւ, որ պարսկական մեծ ինքնակալուԹիւնն հիմնեց՝ Լիւդիոյ և Բաբելոնի աւերակացը վրայ: Զանազան ու իրարու անհամաձայն են Կիւրոսի վրայ եղած պատմական աւանդուԹիւնք: Շատերը չեն ընդունիր Թէ ազգականն ըլլայ Աժդահակայ: Ոմանք ալ կ'ըսեն Թէ Աժդահակայ Թոռն էր, Մանանէ աղջիկը կողմանէ. և Թէ Աժդահակ սարսափած երազէ մը Թէ առեւոք անիկայ իրեն Թշնամի պիտի ըլլայ, Արբակին յանձներ է տղան սպաննել, և Թէ Արբակ ազատեր է տղան: Աժդահակ տարիներ անցնելէն եաքը կ'իմանայ եղածը, և անգութ կերպով վրէժը Արբակին մէկ որդիէն կը հանէ. և Արբակ ալ 'ի վրէժխնդրուԹիւն՝ կը գրգռէ զԿիւրոս որ զէնք առնու Մարաց Թագաւորին դէմ: Իսկ ըստ Քսենոփոնի, Կիւրոս իր հասուն յաջորդէց օրինաւոր կերպով և ոչ տիրապետուԹեամբ. ըստ Հերոդոտեայ՝ որ աւելի հաւանական է, երկու ահեղ պատերազմով տէր եղաւ Մարաց աէրուԹեան: Վերջապէս պատմական յայտնի դէպք մըն է Թէ Կիւրոս 558ին նախ քան զՔրիստոս, Պարսից գահին վրայ Կամբիւս հօրը յաջորդէէն քիչ մը եաքը, Մարաց ԹագաւորուԹիւնն ալ Պարսկաստանի հետ միացուց:

Կիւրոս զՄարաստան առաւ, բայց վեհանձնուԹեամբ վարուելով յաղԹուող Մարաց հետ՝ ամէն պատիւ ցըցուց Աժդահակայ:

4. Լիւդիոյ Թէքէսը:— Կիւրոսի համբաւն և իշխանուԹիւնը մեծնալով, որովհետև իր երկիրը սահմանակից էր Լիւդիոյ՝ Կրեսոս Լիւդիոյ Թագաւորը մեծ մտմտուքի մէջ ինկաւ. և լաւագոյն սեպելով կանխել անոր վրայ յարձակիլը, քան Թէ անոր յարձակմանն ասպարէզ ընել իր ԹագաւորուԹիւնը, պատերազմի պատրաստուեցաւ: Պատերազմիչէն առաջ պատգամ հարցուց, և Դելպիսի պատգամն այս էր, Թէ «Անցեալ ընդ Ալիս գետ քակտեսցես զիշխանուԹիւն»: Ալն պատգամը սովորական պատգամներու պէս տարտամ նշանակուԹիւն մ'ունէր. բայց Կրեսոս իր վրայ առաւ, և բանակաւ Ալիս գետը անցաւ որ աէրուԹեան սահմանադրուԹիւն էր:

Արդէն Կիւրոս ալ պատրաստ կեցեր էր. ու ահաւասիկ արիւնահեղ պատերազմը, բայց երկու կողմանէ ալ անորոշ ելքով: Կրեսոս Սարդիկէ իր մայրաքաղաքը գարձաւ ձմերելու. ու բանակը զօրացուց գարնան նորէն պատերազմը սկսելու համար: Հաղիւ Թէ հոն հասեր ու Եգիպտոսի և Բաբելոնի իր դաշնակից Թագաւորներուն դեսպան խաւրեր էր օգնուԹիւն ուղելու, և ահա Կիւրոս երևնալով, բանակեցաւ քաղքին դիմաց: Կրեսոս ուղեց՝ յուսահատ յարձակմամբ իր զինուց բաղդը փորձել. ու յաղԹուելով՝ քաղքին պարսպաց մէջ ապաւինեցաւ: Բայց քաղաքը տասն ու հինգ օրուան համառօտ պաշարմամբ մը առնուելով, Կրեսոսի բոլոր հարստուԹիւնը յաղԹականին ձեռքը ինկաւ: Կիւրոս առջի բերան գժբաղդ Թագաւորին հետ խստուԹեամբ վարուեցաւ. բայց եաքը ոչ մի-

այն կենացը խնայեց, այլ նաև իրեն բեհիր մը տուաւ ապրելու համար, և Պարսից արքունեաց մէջ մեծ պատուոյ ալ հասուց: Սարգիկէի առումը 554ին եղաւ:

5. Յոռնոց գաղթականաց դէմ ըրած պաքերազմը: — Կրեսոսի պատերազմ հրատարակելէն եաքը, մեկէն՝ ի մեկ Կիւրոս փոքր Ասիոյ յոյն գաղթականները որ Լիւգիոյ հարկատու էին՝ Լիւգիոյ դէմ գրգռեց. բայց անոնք կարծելով որ իրենց տէրը միայն սիրտ փոխուի, մեկ չբրին: Լիւդիոյ նուաճուելովը՝ թէ Եւողացիք և թէ Յոնիացիք վախցան որ Կիւրոս պատժէ զիրենք խօսքը մեկ չընելնուն համար. չուտ մը զինքը Թագաւոր Ճանչցան, և Կրեսոսի հետ եղած ամէն պայմանները՝ ուզեցին իրեն հետ ալ նորոգել: Յաղթականը իրենց այս առաջարկութիւնը մերժեց, և իրեն զօրավարներէն մեկը խրկելով, նուաճեց զինուց զօրութեամբ:

6. Կիւրոսի տրիւ արշաւանդները: — Կիւրոս ըրած աշխարհակալութեամբը գոհ չըլլալով տասնուհինգ տարուան մէջ տիրեց Վրաստանի, Պարթևաստանի, Բակարիոյ, Շօշուոնեաց, Տըբանիկեան, Արաքոսիա և Փանտարիա գաւառաց. և բոլոր արշաւանաց մէջ Հայոց Տիգրան հայկազն Թագաւորն և հայ զօրքը նիզակակից էր իրեն:

Բաբելոնի վրայ ալ դիմելով՝ տիրեց անոր, ինչպես ուրիշ տեղ յիշատակեցինք. և հզօր սերութիւն մը կանգնեց՝ որուն արևելեան սահմանին էին Եաքսարտ և Ինդոս գետերը, և արևմուտքին ինչուան Արևելապնտոս և Ասորւոց ծովեզերքը կը տարածուէր:

Բաբելոնի առնուելէն երկու տարի եաքը, Կիւրոս բնակութիւնը հոն հաստատեց, և վիճակացիս գերութենէն ազատեց:

7. Կիւրոսի կոպարածը: — Այս Թագաւորը, որ ստուգիւ ազնուական և մեծ եղաւ բնութեամբ, քաջասիրտ և գործունեայ, սիրելի իր հպատակաց և մարգասէր առ պարտեալս, չենք գիտեր թէ ինչպէս մեռաւ: Յաւանական կ'երևնայ թէ 530ին մեռած ըլլայ՝ Հնդկաստանի սահմանագլուխը բնակող Տերպիկ ըսուած ազգին հետ պատերազմելու ժամանակ առած վէրքէն: Այս միայն ստոյգ է որ չիրիմը Պասարկաձի մէջ գտնուեցաւ հետևեալ արձանագրութեամբ. Ես եմ Կիւրոս Թագաւոր Աքեմենեան:

8. Կամբիւս: — Երկու որդիք ունէր Կիւրոս. Կամբիւսի յանձնեց Թագաւորութիւնը և Շմերդի ալ քանի մը գաւառաց վարչութիւնը, բայց Թագաւորը մեկէն իր եղբայրը ծածուկ կերպով սպաննել տուաւ: Չօրը պէս աշխարհակալութեան սիրոյ ըլլալով, աչքը Եգիպտոսի վրայ դարձուց: Պատճառանք չէին պակաս, որովհետև Ամասիս Թագաւորը օգներ էր Կրեսոսի և Նաբոնասայ Կիւրոսի դէմ, և չէր ուզած իր աղջիկն Կամբիւսի տալ:

Կամբիւս յարձակեցաւ Եգիպտոսի վրայ 528ին, և Նեղոսի բերանոյն մօտ եղող Պեղուսիոն քաղքին քով Փսամմենիտոսին հետ զարնուեցաւ, որուն Ամասիս հայրը քիչ առեն էր որ մեռեր էր: Կամբիւս յաղթական առաջ երթալով պաշարեց զՄեմփիս, որ մեկէն անձնատուր եղաւ: Անկից Սայիս անցաւ, որ նոյն առեն մայրաքաղաք էր, և զայն ալ առաւ:

Կամբիւս գոռոզացած քիչ առենուան մէջ զԵգիպտոս պարսկական գաւառ ընելուն վրայ, երեք մեծամեծ աշխարհակալութիւններ ալ մտածեց, այսինքն Կարթեգոնացւոց, Ամմոնացւոց և Եթովպացւոց վրայ վազել: Բայց առջինին և ոչ կրցաւ ձեռք զարնել, որովհետև Փիւնիկեցիք

Նաև չտուին. Նոյնպէս մես երկուքն ալ ձախող եղք ունեցան՝ անապատի քամիներուն և կեբակրոյ պակսութեան պատճառաւ, ինչուան գինուորք սկսան գլխար ուտել: Հարկ եղաւ Մեմֆիս դառնալ, և ձեն ժողովուրդը ծծնական հանգիստ մէջ գտաւ, որովհետև նոյն օրերը նոր Ապիս եզն մը գտած էին: Այն կրօնական ցնծութիւնը Կամբիւս իր վշտացը մեծ նախատինք սեպեց. ուստի բարկացած՝ մահացու վիրաւորեց նոսիրական համարուած կենդանին, և նոյն հանդիսին մէջ դանուող բոլոր քուրմերն ու ենթագրիները սպանել տուաւ: Եղբը վրան կատաղի յիմարութիւն մը գալով՝ անթիւ անգթութիւններ գործեց: Իմանալով թէ ապստամբ մեկը Պարսից Թագաւոր հրատարակուեր էր, փութաց 522ին Պարսկաստան դառնալ, բայց ճամբան մեռաւ յԱսորիս, և կ'երևայ թէ անձնասպանութեամբ:

9. Սոփանեան Շերդ: — Այն ապստամբը կաւմատա անունով քուրմն էր, որ Կամբիւսի եղբօրը հետ ունեցած նմանութեամբը օգտուելով, որովհետև ժողովուրդը անոր մահը չէր գիտեր, ձայն հանեց թէ ինքն է Կամբիւսի Շէրդ եղբայրը, և մոգերուն օգնութեամբը Թագաւորեց: Մինչև եօթն ամիս Թագաւորեց՝ որովհետև խաբեութիւնը իմացուեցաւ. եօթը Պարսիկք իշխաններ նոր խռովութեամբ մը ըսպանեցին զինքը, և իրեն համամիտ քուրմերը:

10. Դարեհ Ե իր յաջորդներ: — Այն առեն իրենցմէ մեկը Թագաւորեցուցին, որ էր Դարեհ Վշտասպեան, Աքիմենեան ցեղէն: Ասիկայ իր Թագաւորութիւնը Եգեան ծովէն ինչուան Ինդոս գետը, և Սկիւթիոյ բարբարանգակներէն մինչև Նեղոսի ջրադարձները տարածեց, քանի նախարարութիւն կամ գաւառներ բաժնեց՝ ա-

մենէն զինուոր և տուրք առնելով զինուորութեան և տէրութեան գանձուն համար:

Երկիրը բարեկարգելու նկատմամբ՝ Դարեհ Պարսից Թագաւորաց մէջ առաջին կրնայ սեպուիլ: Բայց աշխարհակալութեամբ երկիրը ընդարձակելու ալ չնաք ունեցաւ. անցաւ Յեբրոպա ասկաքնակ Յունաց նաւատորմիղով Սկիւթիոյ տիրելու գիտաւորութեամբ: Հասաւ Դանուբին բերանը, և ցամաք էլլելով, նաւակամուրջ մը ձգել տուաւ գետին վրայ, և անդին անցաւ. ու կամուրջը Յունաց պահպանութեանն յանձնելով, պատուիրեց որ եթէ երկու ամիսէն ետ չդառնայ, կամուրջը կործանելով իրենց տունը տեղը դառնան:

Յոյնք քիչ առնէն իմացան որ Դարեհի պատերազմը անյաջող կ'երթար, և թէ սուիթուած էր ետ դառնալ: Մինչտիագէս որ այն առեն Թրակեան Քերսոնեսոսի յունական գաղթականութեան գլխաւորն էր, ասկրնակ Յոյները արգէն առնելի բռնակալութենէ մը և Եբրոպայի կողմերն ալ բնակողները՝ նման վտանգէ ազատելու դիտմամբ, առաջարկեց որ կամուրջը կործանեն, որպէս զի Դարեհ իրենցով Դանուբէն անցնելով՝ իր երկիրը դարձաւ:

Ասով ետ չկեցաւ Դարեհ իր աշխարհակալ գիտաւորութենէն, ու զօրավարաց ձեռքով նուաճեց Թրակիան, Հարկատու ըրաւ Մակեդոնիան, տիրեց Լեմնոսի, Իմպրոսի, Լեսբոսի և Եգեան ծովուն մէջ եղած ուրիշ կղզիներուն: Անկէ ետքը Դարեհ Շուշ իր մայրաքաղաքը քաշուեցաւ, և հոնկէ կ'ուղղէր այնչափ ընդարձակ տէրութեան անհամար ազգերը որ էրթս տարի խոր խաղաղութիւն վայելեցին: Այս խաղաղու-

Թիւնը 501ին տակնուվրայ եղաւ Նաքսոս կըղզւոյն մէջ եւած ապստամբութեամբ, որ Յունաց եւ Պարսից իրարու դէմ տուած պատերազմաց առաջին կայծն եղաւ:

Ակէ վերջը պարսկային պատմութիւնը Յունաց հետ ունեցած վերաբերութեամբը միայն հետաքննական է, ինչպէս պիտի տեսնենք:

ԹԱԴԱԻՈՐՔ ՊԱՐՍԻՑ

Ազքմենէս. մօտ 2500ին

Պարսկաստան հարկատու Սատրեստանեայց:

Կամբիւս	—	595
Կիւրոս Պարսից նոր տէրութեան հիմնադիր . .	560	550
Կամբիւս	550	522
Շմերդ	522	—
Դարեհ Ա.	522	485
Քսերքսէս Ա. . . .	485	472
Արտաշէս Երկայնաձեռն .	472	424
Քսերքսէս Բ. . . .	424	—
Սոկդիանոս . . .	424	—
Դարեհ Բ. Նոթոս . .	423	404
Արտաշէս Բ. Մնեմոն (Ուշիզ)	404	362
Ովքոս	362	338
Արշէզ	338	336
Դարեհ Գ. Կոդոմանոս. .	336	330

Մեծն Ալէքսանդր 330ին կը վերցընէ Պարսից տէրութիւնը:

ԳԼՈՒԽ Գ.

Պարսպարաւիկ ժողովրդոց բարոյական և քաղաքական կեանքն:

1. Կրօնք. Զրուան: — 2. Աստուածք. Ճարտարութիւնք: — 3. Սովորութիւնք: — 4. Կառավարութիւն:

1. Կրօնք. Զրուան: — Պարսից նախնական կրօնքը միաստուածութիւն էր. դերագոյն էակը Տէրն (Աստուած) կ'անուանէին, և կը համարէին զնա երկնի և երկրի արարիչ և աշխարհիս միակ տէր, ու ամէն բանի կեանք և զօրութիւն առուղ: Ժամանակ անցնելով՝ ինչպէս ուրիշ կռապաշտ ազգաց մէջ, միակ աստուածոյն սկսան այլեւ այլ անուններ տալ իր առորոգելեացը համեմատ, ու անձնաւորելով՝ աստուածացուցին նոյն յատկութիւնները, և աստիճով երևցաւ բազմաստուածութիւն. և ոչ միայն լուսինը, արևը և երկիրս, այլ և ջուրն, օդը, հովերը, ծառերը, ամպերը, փայլակին, մէյմէկ աստուած սեպուեցան:

Այսպիսի աւելորդապաշտութեանց դէմ եղաւ Զրադաշտ Բակտրեայն: Պարսից կրօնից այս բարեկարգչին ժամանակը անծանօթ է. հաւանական է թէ Քրիստոսէ վեց դար առաջ՝ վշտապատ առենն էր, որ Դարեհի հայրն է: Իր վարդապետութիւնը Ջենդ կամ Ջենդաւեստա գըլըքին մէջ կը բովանդակուի, որուն քառասունն և մէկ գրոց միայն հատուածներն ձեռքերնիս հասած են. և անոնցմով Զրադաշտական կրօնից վրայ գաղափար մը կ'առնունք:

Ըստ Զրադաշտի, դերագոյն աստուածն Որմիզդ է կամ Որմըզդ, աստուած հոգեղէն, անստեղծ, յաւիտենական, արարիչ և կառավարիչ ամենայն կատարելութեանց ունող, որ վեց դարու մէջ աստեղծեց զաշխարհ քանիւ, սուրբ և կատարեալ ըստ ամենայնի: Որմզդին հակառակն է Արհմն կամ Խարաման, ոգին չար և ապականիչ, որ կը ջանայ միշտ աւերել նորաշէն աստեղծուածները եղծանել. բայց իր իշխանութիւնն անվախճան չէ, և ժամանակ պիտի հասնի՝ յորում չարը պիտի եղծանի, և Մաղդեզական կրօնքն ընդհանուր պիտի ծաւալի, և ամէնքն Որմըզդի պաշտօնատարք պիտի ըլլան: Երկուքն ալ իրենց առորակարգ օգնական և իրենցմէ աստեղծուած ոգիներն ունին, հրեշտակք և դեւք: Այս վերջիններէն մէկը նախաստեղծները մեղաց մէջ ձգեց, բայց մարդարէն կ'ապահովցընէ թէ այս անկման գարմանն պիտի ըլլայ Մեհր աստուածոյն ձեռքով՝ որ որմզդածին է, և անոր համագոյակից: Չաւատացելոյն պարտքն է սատանային խորշիլ, և ամէն տեսակ չարի դէմ կենալ, սիրել շնորհասիրութիւն և շահաստութիւն: Ով որ այս պարտքերը կատարէ և արդար ըլլայ՝ իր մեռնելէն ետքը պիտի վարձատրուի, և Որմիզդ իր բնակարանը պիտի ընդունի զնա. իսկ ընդհակառակն չարագործը՝ պիտի էնայ խաւարի թագաւորութեան մէջ:

Իր պարզութեանը մէջ երկար առեն մնաց այս կրօնքը աւելի Պարսից քան թէ Մարաց քով: Վասն զի ոչ միայն կրակապաշտութիւն և երկնային մարմնոց պաշտօնը շուտով մտաւ՝ի Մարաստան (ինչպէս նաև ետքը՝ի Պարսկաստան), այլ նաև զանազան աւելորդապաշտական արարողութիւնները, որոնց վախճանն էր մոգերու՝ հասարակ ժողովրդեան վրայ ունեցած աղդեցութիւնն աւելցընել:

2. Արուեստ. Ճարտարութիւն: — Պարսից տէրութեան մէջ այլեւայլ տեղեր, մանաւանդ Պերսեպօլոյ շրջակայքը, գեղ. գերեզմանաց աւերակներ, սիւներ, կամարներ, սանգուխներ ու կռնակ պատեր կան, որոնք կը վկայեն թէ ինչպէս ճարտարապետական արուեստը զարգացած էր երկնց մէջ:

Խորաքանդակներէն կ'իմացուի թէ քանդակագործութիւնն ալ առանց ուշեհնալու յուշական արուեստն ու ախորժակը, աւելի քնած կան էր քան թէ Այսօրեսան: Իրենց արքունեաց ճոխութիւնը՝ ճարտարութեանց յառաջադիմելուն կը նպաստեր. որոնց մէջ գլխաւոր սեպուածն էր երկրագործութիւնը, և ջրբաշխայ օրէնք մտնելուը կերպով կը պատուիրէին ինամք ունենալ անոր բարգաւաճանացը:

3. Առեւտուր: — Պարսից մէջ՝ վարձուց արժանի կը սեպուէր բազմազբաղ հայրը. և տարուէ տարի Թագաւորին կողմանէ անոր դրամական հատուցմունք և նպաստ կը արուէր: Տղաքը՝ հնգամեայ հասակէն մինչև քան տարիկան՝ կը վարժեցընէին ձի հեծնալ, նետ նետել ու ճշմարտութիւն խօսիլ: Գրաւոր և ուսումնական կրթութենէ վեր կը սեպէին անոնց բնութիւնը կրթել, ամէն ջանք ընելով որ սակաւ պէտ, ուժեղ, գործունեայ և չարքաշ ըլլան: Քան տարեան եղած առեններն ամէնքն ալ պարտիկան էին՝ ի զինուորական ծառայութիւն:

4. Կառավարութիւն: — Պարսկաստանի Թագաւորն ալ տէր կը սեպուէր իր հպատակաց կենացն ու ընչից: Ոչ ոք կրնար առանց հրամանի՝ Թագաւորին մտենալ. և արքունիքը՝ որ Դուռն ալ կը կոչուէր, թէպէտ լի էր զրանկաց բաղմութեամբ, սակայն անդադար պահպան

զօրօք պաշտպանուած էր: Ժողով մ'ունէր Թագաւորն որ Մարաց և Պարսից էօթը մեծամեծ նէրէն կը կազմուէր. բայց ասոնք փոխանակ իրեն խմաստուն խորհրդականքն ըլլալու, հաճոյական կամակատարքն էին: Պատերազմի առենէն դուրս եղանակաց փոփոխմութեանցը համեմատ՝ արքունիքն ալ կը փոխադրուէր Բաբելոնէն՝ ի Պերսեպօլիս, Պերսեպօլսէն՝ ի Շօշ, Շօշէն ալ Հեկբատան:

Ամէն մէկ գաւառ՝ նախարարի կամ կուսակալի մը յանձնուած էր, որոնք շատ անգամ ազգական կամ խնամի էին Թագաւորին: Նախարարը Թագաւորէն կ'ընտրուէր, շատ ընդարձակ էր իշխանութիւնը, ինչուան կենաց և մահու ալ տէր էր: Սակայն քովը առենագիր մ'ալ ունէր, որուն պաշտօնն էր հսկել անոր առենային գործոց վրայ, և՝ի ծածուկ Թագաւորին հաղորդել: Նախարարէն ու առենագրէն զատ՝ իւրաքանչիւր գաւառ զօրավար մ'ալ ունէր, որուն ձեռքին տակն էր նոյն գաւառին մէջ եղած զինուորութիւնը: Սակայն երբեմն նախարարը կը զօրապետէր ալ:

Դրամական տուրքերն զատ, բնական բերքերու հարկեր ալ կային: Օրինակի համար՝ Հայք 30,000 Նժոյգ պիտի խաբրէին. Մարք կովեր և ոչխարներ. Կիլիկեցիք տարուան ամէն օրը մէկմէկ ձերմակ ձի. իսկ Եգիպտոս 120,000 հոգի պիտի պահէր, որոնց ձեռքն էր երկրին կառավարութիւնը: Իսկ պարսիկ ժողովուրդը այս տուրքերէն ազատ էր, միայն Թագաւորին պարգև մը տալու պարտքն ունենալով:

ՀԱՅԱՍՏԱՆ

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Նախնի բնակիչք։ — 3. Հայկ։ — 4. Հայկազանց պատմութեան կրկին շրջանն։ — 5. Նահապետաց գաղթականութիւնք։ — 6. Արամ։ — 7. Հայաստան գաւառ Ասորեստանի։ — 8. Հայկազանց թագաւորութիւն կամ Պարոյր։ — 9. Մարական դաշնակցութիւն և Տիգրան Ա։ — 10. Կրօնք։ — 11. Կառավարութիւն։ — 12. Զինուորութիւն։ — 13. Վաճառականութիւն և Արհեստք։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — Այն մեծ բարձրաւանդակն՝ որ վեհագոյն բարձրանալով կը գագաթանայ Մինջագեաց գագաթներէն և մեզմով՝ի հիւսիս–արեւմուտս կողմն կը հակի դէպ՝ի Կովկաս, Փարաւոնները 18երորդ հարստութեան առենէն ինչուան հիմայ Արմինիա ըսուեցաւ։ Խորհնայն և անոր հետևող աղգային պատմագիրքը կը համարին թէ Արմինիա կոչուեցաւ Հայաստան օտար աղգաց մատենագիրներէն Արամայ անունով՝ որ իր աշխարհակալութեամբ աշխարհս ծածանօթ էր օտար աղգաց. բայց հնագոյն և հաւանականն է՝ թերևս և աւելի ընական և պատմական՝ որ Արմինակ կամ Արմինեակ նահապետին անուամբ Արմինիա կոչուած է։

Հայաստանի սահմանն է, հիւսիսին՝ Եգերաց աշխարհ, Վիրք և Կուր գետ, ինչուան Կովկաս լերանց արևելեան կողմն. արևելքին՝ Կուր գետ և Կովկաս մասամբ, Կաղբից ծովն և քիչ մը վար Գիլան և Ատրպատական աշխարհներն. հարաւէն՝ Մարաստան, Ասորեստան, Միջագետք. իսկ արևմուտքը պատած է մաս մը Եփրատ գետ և մաս մ՝ալ Անթիտաւրոս լերինք։ Հայաստան լեռնակղզի մ՝է, և իր ազնաղնեալ լեռներէը Կովկասի և Տաւրոսի շղթայող կրնան համարուիլ, ուսկից կ՝ելլան շատ մը կղզեացեալ և պատմական յիշատակաւք նշանաւոր հայկական լեռները, որոց երևելիներն են Այրարատեան լերինք, Մասիք, Արագած, Նպատ, Սիփան, Գոհտամ, և այլն։ Գլխաւոր գետերն են Եփրատ, Եփրատ և Տիգրիս, երեքն ալ Հայաստանի լեռներէն կը բղխին և իրենց ընթացքին մեծ մասն Հայաստանի մէջ կ՝ընեն։ Անուանի ծովակներն կամ լիճերն ալ Որմեայ, Վանայ և Գեղամայ ծովակներն։ Երկիրն առատաջուր, բարեբեր և առատարօտ. կլիման ընդհանրապէս ցրտային թէ և մեղմագոյն՝ի հարաւ–արևելք։ Որովհետև միայն Հայկազանց պատմութեան համառօտութիւնն պիտի ընենք՝ յիշենք միայն Արմաւիր Հայկական նահապետաց և հարստութեան մայրաքաղաքն Երասխ գետոյն հարաւային ափանցը վրայ։

2. Նախնի բնակիչք։ — Ասորեստանի մատերը Բզնունեաց (Վանայ ծովն) ծովուն չորս կողմէ՝ ուր բուն Հայկազանց իսանձարտրքք եղաւ՝ Հայկն առաջ տեղացիներ կային՝ որոնք անտարակոյս Սեմայ ցեղէն էին. իսկ Երասխահովտին հիւսիսաբնակ քիչ բնակիչները չենք գիտեր ստուգիւ թէ ինչ ցեղէ էին, բայց կրնանք գուշակօրէն ըսել որ Յաբեթեան էին, որովհետև Յաբեթեանք գէպ՝ի հիւս–արևել. ինչուան հիւս–արևմ. կողմերը տարածուեցան։ Հայկայ գալուստը կամ գարձը՝ի Սենաարայ՝ Դիւցա-

զանց ժամանակին սովորական գաղթականու-
թեանց մեկն է, որ տեղացի ցեղերը նուաճելէ և
հետ գնեակ իւրացուց կամ հայացուց: Մեր
աղբին աշխարհագրական դիրքը, լեզուին ա-
փսեական յատկութիւնն (ըստ արդի լեզուագի-
տական քննութեանց) պատմութեան վկայու-
թեան հետ մեկ տեղ գալով կը ցուցընեն անտա-
րակոյս կերպով, թէ Յաբեթեան են Հայք: Յա-
բեթեան առհմին անհուն տարածութեան մէջ
իբրև ցեղ կամ ազգ կոչուած և որոշուած ենք
Հայկայ անուամբ:

3. Հայ: — Հայկը Թորգոմայ որդին է թէ
ըստ մեր Խորենացւոյն և թէ ըստ սուրբ Գրոց
և արտաքին ու եկեղեցական մատենագրաց.
սուրբ Գրոց Տուն Թորգոմայ (Թորգոմ) ըսելով
այն պես կրնայ հասկացուիլ Հայաստան, ինչպէս
Տունն Իսրայէլի ըսելով Երբայեցիք կ'նմա-
նցուին: Հայկը Մարաբբաս Կատինայի պատմու-
թենէն առաջ ազգին ծանօթ կ'երևնայ, բայց ոչ
իր կենացը բոլոր հանգամանօք, վասն զի Հայ-
կայ պատմութեան մէջ եկամուտ յաւելուած-
ներ կրնան եղած ըլլալ ժամանակաւ: Հայկայ
ազգին ծանօթ ըլլալն Խորենացւոյն պատմելու
կերպէն յայտնի է. Ագաթանգեղոս Հայկայ
մանաւանդ քաջութեան և ուժեղութեան յատ-
կութիւն կու տայ. սուրբ Գրոց Թարգմանիչ-
ները քաղդէական Բէմա և Բէմիկը և յունական
Որիոն բառը՝ Հայկ կը Թարգմանեն, գաղափարի
նմանութեամբ և մեծաւորութեամբ: Հայկայ
ժամանակին հնութիւնն և գրաւոր պատմու-
թեան առանց ժամանակագրութեան ըլլալը
խիստ մեծութեան մէջ կը ձգեն Հայկայ կենաց
դէպքերը, մանաւանդ Բէլայ հետ ըրած պա-
տերազմը և զանիկայ ապանելը. արդի ուղղա-
խոհ քննադատութիւնն Բէլը առասպելական
մեկը կը համարի:

4. Հայկազանց պապմութեան կրկին ընթաց: — Հայ-
կազանց ամբողջ պատմութիւնն երկու բնական
շրջան ունի, Տանուտէրական կառավարութեան
առեն և Թագաւորութիւն կամ Ազգապետու-
թիւն: Տանուտէրական միջոցը խիստ չափոտ և
մութ է, և նահապետաց ցանկ մը միայն հասու-
ցած է մեզի. բայց Հայկազանց թագաւորու-
թեան սկիզբը (759) և վերջը (330) պահանջելի
հաւանականութիւնը ունին:

5. Գաղթականութիւնք և Նահապետք: — Հայկէն
ինչուան Արամ առանց պատմական մեծամեծ
գիպաց՝ շարունակ նեբքին գաղթականները կը
սկսին գրաւել բոլոր երկիրը. գաղթականները
հարաւէն գէպ ի հիւսիս կ'երթան: Գաղթա-
կանութեան առաջին օրինակն է Հայկն՝ որ Կապ-
մոբ Ասորեստանեայց կողմէ կը խաբէբ բնակե-
լու. եաքը Արմենակ Բզնունեաց ծովէն եկաւ
գնաց Արագած լեռը կնքեց իր անուամբ, ըստ
աւանդութեան: Տեղեաց անուններըն՝ եթէ ոչ
ամենքը՝ գոնէ մեծաւ մասամբ՝ ինչպէս Արմաւիր,
Մասիս, Արագած, Շիրակ, կը ցուցընեն գաղթա-
կանաց նպատակը. լերանց սառոյտ, ձորակա-
չատ, բերրի և առատաջուր տեղեր կը փնտռէն:
Մեր գաղթականները Յունաց պէս ոչ մեծամեծ
պատճառներ ունեցան և ոչ ալ մեծամեծ յեղա-
փոխութիւններ բերին. այլ բնական կերպով
տեղւոյն անբաւականութենէն առիթուած տա-
նուտէրը պատրաստ տեղը որգեաց և թոռանց
կը թողուր, և ինքն ուրիշ տեղ կ'երթար կամ
հակառակն: Որոշ գիտնանք մ'ալ ունին հայկա-
զուն նահապետք, հայկ-յաբեթական ճիւղին
տարածուիլը մի և նոյն հողոյն վրայ. այս գիտ-
մունքն Արամայ վրայ որոշ գաղափար կը ցուցկէ:

6. Ազամ: — Արամ տանուտէրական կառա-
վարութիւնը խիստ կը կեդրոնացընէ, և անոր

միապետութեան կերպարանք կու տայ: Բայց ասուր-բաբելոնական բացարձակ և անձնական միապետութեան նման չէ. այլ աւելի տոհմային միութիւն մ'է, որուն չարժառիթ եղած են այլ և այլ պատճեղից Հայաստանի վրայ չորս կողմին յարձակումները, և հայկ-յաբեթեական ազգատոհմին գոյութեան սպառնալը. Մարք՝ արիական ցեղէն արեւելեան կողմին, Բարշամ ասորին հարաւէն, և Պայտակս Բաղեայ արեւմուտքէն փորձ կը փորձեն սրով և բռնութեամբ գաղթել ՚ի Հայս, և ամենապարտ յետ կը դառնան կամ կենաղրաւ կ'ըլլան Արամայ սրոյն և հրամանատարութեան, որ մեծն է, Արամայ սուրն և հանճարն մինչև ՚ի Կասպադովկիա կը ձգեն, որ այն գաւառն հայացընելով և կուսակալ գնելով՝ յաղթական յԱրմաւիր կը դառնայ: Եթէ այս պատմութեան արտաքին ձևն պարզ հրապուրական ալ ըլլայ՝ սակայն այս ինչ յայտնի է թէ Արամայ վրայ միապետութեան և ազգապետութեան ոգին մը կը տեսնուի, և այս ոգին ապարդիւն չէր կրնար ըլլալ այս կործանից արտաքին պատմագիրը ալ կը վկայեն:

Բաբելացւոց առջի տերութիւնը կ'ինայ, և անոր տեղ Հայաստանի ոտմանակից ուրիշ հզօր տերութիւն մը կը կանգնի (Ասորեստանեայց): փորձ կը փորձէ Արամ Հայաստան ազատ պահելու այս նոր համաշխարհակալ տերութենէն. քաջութիւնը բաւական չըլլար բռնութեան դէմ. կը յաղթուի Արամ, բայց իշխանութիւն կ'ունենայ իր ազգին ազատօրէն իշխելու երբև Թագաւոր, միայն հարկ կուտայ Ասորեստանեայց: Այս բանս Խորենացւոյն հաւասար Դիոդոր Սիկիլիացին ալ կը պատմէ, բայց Արամանուան տեղ Բարզանէս անունը կը դնէ հայ իշխանին:

7. Հայոպան գաւառ Ասորեստանի. Նահապետ: — Արդի քննադատութիւնն Շամիրամայ վիպասանութիւնը պատմութեան տապարիղէն դուրս կը սեպէ. բայց Շամիրամայ չգոյութիւնն Արայ Գեղեցկին հետ պատմութեան ընդ բեր: Շամիրամ անունը սեռականաբար գիւցազական Ասորեստանն է, որ կ'ուզէ հայ գեղեցիկ հողին բացարձակ տէր ըլլալ. հայ գիւցազն պատերազմի կ'ելլէ, ղէն ՚ի ձեռին կ'իյնայ և չորզէր բաց աչօք հայ անկախութիւնը կորսուած տեսնալ: Շամիրամակերպ[1] Ասորեստանի ուրիշ Թագաւորի մը չինուած կ'ենթադրեն ասորագէտ քննադատք և բևեռագրանդակաց վերծանողք: Այս բևեռագրանդակներն առնօք հայկազնց պատմութեան թերևս մեծ լուսաւորութիւն մը տան՝ կամ բոլորովին իսկ կերպարանափոխեն զայն: Ասորեստանեայց վարչութեան օրինօք Հայաստան ալ տուրք և զինուոր պիտի տար, բայց կուսակալը հայ էր և թերևս շատ

1 Երևելի ասորագէտ անդղիացին Ռաուլինսըն (Rawlinson) գեղեցիկ կը խորհրդածէ Վանայ գաւառին վրայ. «Կղզիացեալ աշխարհ մ'է, կ'ըսէ, տեսակ մը բնական ամրաբերդ, ուր հզօր զինուորական տերութեան մը հաստատուիլը շատ դիւրին էր: Ուստի Ասորեստանեայց և Մարաց առեն բոլոր Հայաստանէն հօս և միայն հօս մեծ և բաբելկարգ միապետութեան մը գոյութեան հետքեր կը նշմարենք: Վանայ բևեռագրանդակներն մեզի Թագաւորական ցեղ մը կը ցուցընեն որոնք արևելեան Հայաստանի կ'իշխեին, տեր էին բնիկն Արարատայ, և թէ քաղաքականութեամբ և թէ զինուորական ուժով Հայաստանի ամէն իշխաններէն հզօր էին: Հաւանական է թէ Վանայ Թագաւորք երբեմն աշխարհ թշնամիք եղած ըլլան Մարաց: Այս Թագաւորաց տիրապետութեան հետքերն ոչ միայն առ Որմեայ լիճն հակող բարձրաբերձ լերանց վրայ, այլև Մկիանտալի ցած դաշտին վրայ ալ կը նշմարուին քիչ շատ, այն ներքին ծովուն հարաւային ափանցը վրայ: Ուստի հաւանական է թէ ժամանակաւ մարական Ասորեստանի մեծ մասին կ'իշխեին»:

ծնդամ Նոյն ֆլխանն՝ որ ուզեր էր անկախու-
Թիւն ձեռք բերել և չէր կրցած, և այս կուսա-
կալները յաջորդական էին. այսպէս կուսակալ
էր Հայաստանի Զարմայր որ Աւոբեստանեայց
Տէսամոս Թագաւորին հրամանաւ Տրուվացոց
Պրիամոս Թագաւորին օգնութեան գնաց: Նա-
հապետք իրարու յաջորդեցին ինչուան Պարոյր:

8. Հայկազնց ՌագասդրոՒնի կամ Պարոյր: — Կը-
տեսնուի վկայասնութեան մէջ Սարդանապա-
ղի առեն Նինուէի տիրելու համար Վարբակէս
և Բելեսիս Պարոյր անունով Արաբատայ Թագա-
ւոր մը օգնութեան կը կանչեն, որ բոլոր Հայաս-
տանի Թագաւոր եղաւ: Բայց ժամանակագրու-
Թիւնն չի ներեր որ զՊարոյր Վարբակէսի առեն
դնենք, այլ աւելի կիաքսար առաջինին առենը
կ'իյնայ:

Աւոբեստանեայց վերջին հարստութեանց
Թագաւորները միշտ իրենց 'ի Հայաստան ըրած
պատերազմունքը կը յիշեն, և կը համարին Թէ՝
գոնէ Հայաստանի հարաւային մասին տիրեր են.
բայց տևական տիրապետութիւն մը եղած պի-
տի չըլլայ: Սարկն արձանագրութեանց մէջ
կը յիշէ Թէ մահուչափ պատերազմեցաւ բոլոր
Հայաստանի Ուբաս Թագաւորին (Թերևս Հրա-
չեայն ըլլայ) և անոր հպատակ Թագաւորաց
հետ, որոնցմէ էր Ուլլոսան Վանայ Թագաւորն:
Շմիդ կը խորհրդածէ Թէ այս առենս է Աբգենոխո-
ան, որ Վանայ բերդին վրայ մեծագործ շինքեր
ըրած է, զոր ասմիկ առանդութիւնն Շամիրա-
մայ կ'ընծայէ:

9. Մարեան դաշնադրութիւն և Տիգրան Ա. —
Աժդահակայ և Տիգրանայ իրարու հետ ունե-
ցած մեզի ծանօթ վերաբերութենէն՝ հաւանա-
կան կը կարծուի Թէ Մարաց և Հայոց մէջ դաշ-
նակցութիւն մը եղած էր, և այս դաշնակցու-

Թիւնս Պարոյրէն առաջ էջ. և բնական էր Հայոց
իրենց համացեղին հետ միաբանիլ ընդդէմ հա-
սարակաց Թշնամւոյն, որ էին Աւորեստանեայք
և Սկիւթացիք. կ'ենթադրուի Թէ նախագահու-
Թիւնը հզօրագոյնին էր: Հայկազունն Թագաւո-
րական ստոյգ պատմական և ժողովրդական
գիւցաղն է Տիգրան Ա. մեծին Կիւրոսի նիզա-
կակից 'ի կործանումն մարական Թագաւորու-
Թեան: Խորենացւոյն պատմութիւնը Տիգրանայ
նկատմամբ ըստ ամենայն ձևոյն ընդունելի չէ.
Տիգրան Կիւրոսի պէս ինքնագլուխ Թագաւոր
չէր, և ոչ ալ անոր բանակին հասւսար բանակ
մը կրնար գումարել, և ոչ ալ ինքն միայն իր
բանակաւ յաղթեց Աժդահակայ զօրացն, այլ
Կիւրոսի օգնութեամբ գործեց ինչ որ գործեց.
իսկ Պարսիկք ալ ինչ որ կ'երևնայ՝ կարօտ էին
ըստ աշխարհագրական դրից՝ Հայոց օգնութեան
և անոնցմէ օգնութիւն գտան, բայց չուզեցին
աւանդել յետոյ. երկու կողմն ալ անապարձ
ազգասիրութիւն մը կը տեսնուի: Կարծեմ
Թէ կարդէ գուբս չէ Խորենացւոյն Տիգրանայ
վասյ ըրած նկարագրութիւնը դնել այս համա-
ռօտութեան մէջ կրկին նպատակի համար. նախ
որ հին բանաստեղծներէն առնուած է, և հայ
մանկանց մտաց արժանաւոր կրթութիւն է.
երկրորդ, պատմական հին գիւցաղն մը բնական
և բարոյական նկարագիրն է, յորում կը փայլի իր
բոլոր գործերն ալ. «Խորտակաց այս և աղբեկ
ծայրիւ հերաց երուանդեանս Տիգրան, երեսաք
գունեան և մեզոսական, անձնական և թիկնաւէտն,
առյդաբարձն և դեղեցկատես, պարկեշտն 'ի կե-
րակուրս և յըմպելիս և 'ի խոտանձնութիւնս
օրինաւոր. զորմէ ասէին 'ի հինսն մեր, որք
բամբռամէն երգէին, լինել սմա և 'ի ցանկու-
Թիւնս մարմնոյն չափաւոր, մեծիմաստն և պեր-

Ճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի: ... Արքաբադատ և հաւատարմաբեր կչնաս ունելով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ՝ մտացն լծակաւ կշռեր: Ոչ ընդ լաւագոյնն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հաստարակաց հնարեր զինամոցն իւրոց 'ի վերայ տարածել ջգեաս» (Ա. Ի՛):

Տիգրանայ յաջորդները կառավարեցին ջՀայաստան Պարսից իշխանութեան ատեն, ոչ կամ քիչ ապստամբելով. հարստութեան վերջին թագաւորն Վահէ որդի Վանայ, Դարեհ Կոդոմանոսի դատը պաշտպանելով մեծին Աղեքսանդրի դէմ կռուեցաւ, և ինկաւ պատերազմի մէջ. և Հայաստան իբրև պարսկական գաւառ մի Մակեդոնացւոց տէրութեան մտան եղաւ:

10. Կրօնք: — Պարսից տէրութեան սկիզբն Հայաստան Պարսից գաւառներէն մէկն էր, և զանգիկ կրօնքը տիրող էր հայ ազգին մէջ, թէպէտ և Աւորեաստանեայց ապաւաղ բազմաստուածութեամբ քիչ շատ փոփոխութիւն կրած էր: Ինչուան հիմայ Աթրոսէ, Արեգնիւն, Լրա, Խարդ, պաչօն, հրէշտակ, դեւ, դժնխ հայ բառերն պարզ իրանական բառեր են: Նոյն իսկ Տիգրանայ յանկարծ Կիւրոսի հետ միանալը ընդդէմ Մարաց պետութեան՝ շատ հաւանական է թէ կրօնական համաձայնութեան մը արդիւնք ըլլայ:

11. Կառավարութիւն: — Հայաստանի քաղաքական վարչութիւնն երկրին բնական դրութեան հետ մեծ կապ ունի: Խարիր լերանց զուգահեռական գօտիներ և մէջնահակ ըլլոց օդակներ՝ մաս մաս կը բաժնեն բոլոր բարձրաւանդակը: Ա.յս լերանց մէջ պարփակուած հովտաց մէկ մասն անձուկ և կղզիացեալ ծորձորներ են, մաս մ'ալ ընդարձակ արգաւանդ դաշտեր՝ ինչպէս Եզոխայոն: Այսպիսի երկրի մը մէջ հզօր, բոլոր երկրին տիրող կենդրոնական վարչութիւն մը

չի կրնար ըլլալ. այլ 'ի հակառակն շատ մը անկախ իշխաններ էին, որոնք մեկմեկու կրնային դէմ դնել և մեկը միւսին զօրաւոր կամ տկար գտնուել, ուստի և մերձաւոր օտար տէրութենէ մը դիւրաւ կը յաղթուէին: Վարչութեան այս կերպին ոչ միայն Հայկազանց պատմութիւնն, այլ և յետագայ Արշակունեաց և Բագրատունեացն ալ կը վկայէ ըստ ամենայնի:

12. Զինուորութիւն: — Տիգրան զինուորութիւնը կարգաւորեց. հետեւակին հետ հեծելազօր ալ դրաւ. չերտաւորաց հետ՝ սուսերաւոր և տիգաւոր յաւելցուց, սպառազէնք և վահանաւորք, աղեղնաւորք և պարսաւորք, ամէնքն ալ կիւթ և գիպաղեղունք ըստ խոյնոյ ծերոյն:

13. Վաճառականութիւն. Արհեստք: — Վաճառականութեան գլխաւոր նիւթերն էին ձի, ջոբի. վաճառակից ազգերն՝ Բակտրիացիք, Բաբելացիք, Կապադովկացիք, Աւորիք և Փիւնիկեցիք: Վաճառականութեան ճամբաներն էին Եբասխ գետ, որ այն ատեն կասպից ծովով Ոքսոս գետոյն հետ կը կապուէր, և Ոքսոս գետին վրայէն ինչուան Բակտրիա կ'երթային. Եփրատ գետէն Բաբելն կ'երթային, կարաւանք 'ի Կապադովկիա, Աւորիս և Փիւնիկէ. վաճառականութիւնն աւելի ներքաստուտ քան թէ արտաքսահան. գլխաւոր ներս վաճառն մտած ոսկի, արծաթ, պատուական սիւնք, անկուածք, նիւթկք, ցորեն, իւղ և մեղր էր: Վաճառականութեան միջոցով նաւարկութեան արուեստին մէջ կը հմտանային Հայք, բայց աւելի գետոց վրայ կը նաւարկէին: Կենաց կարեւոր արուեստ ներն քիչ շատ ծաղկած էին Հայկազանց միջոց, ինչպէս ոսկերչութիւն, մշակութիւն և նարօտ չինել. գարբինութիւն և ուրիշ զինուորութեան կարեւոր արուեստքն:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԱՆ

Հայկազանց ժամանակագրութիւնն շատ անհաստատ և տարակամ է. Խորենացին ալ նոյն անհաստատութիւնը պահելով՝ Հայկազանց հաբըստութեան Թադաւորաց ժամանակէն կ'առնու ընդհանուր պատմութեան անձ մը կամ պարզ դիւցազնական անհատ մը՝ պատմական անձ կարծուած: Մենք ալ այն անորոշ ժամանակագրութենէն ազատելու բարեբաղդ վճակին չհանդիպելով՝ այն հայկազն իշխանաց գիւմացը, որոնք քիչ շատ յայտնի է թէ ո՛ր դարուն մէջ ապրած են, մերձաւոր թիւ մը կը դնենք. և անորոշ ժամանակի իշխանաց տարեթիւը զանց կ'ընենք:

Հայկազանց իշխանները.

Հայկ	2492	Աղուշաւան	
Արմենակ		Պարէտ	
Արմայիս		Արբակ	
Ամասիա		Զաւան	
Գեղամ		Փառնակ	
Հարմայ		Սուր	1600
Արամ	2090	Հաւանակ	
Արայ Գեղեցիկ	2009	Վաչտակ	
Կարդոս (Արայեան Արայ)	1990	Հայկակ Ա.	1400

Ամպակ		Գղակ	
Առնակ		Հաւրոյ	
Շաւարշ		Զարմայր	1200
Նորայր		Պերճ	1030
Վստամր		Արթուն	
Կար		Հոյ	
Գոռակ		Յուսակ	
Հրանտ		Կայպակ	
Ընձակ		Սկայորգի	680

Հայկազանց Բագաւորները.

Պարոյր	800	Առաւան	
Հրաչեայ	604	Ներսեհ	
Փառնաւազ		Զարեհ	
Պաճոյճ		Արմոգ	
Կոռնակ		Տերթեաղ կուսակալ	
Փաւոս		Բագամ	
Հայկակ Բ.		Վան	
Երուանդ Ա.		Վահէ	330
Տիգրան Ա.	365	Հայկազանց Թագաւորութիւնը կը վերջանայ:	320
Բաբ	302		
Յիրան			
Վահագն			

ՓՈՓՐ Ա. ՍԻՍ.

ԳԼՈՒԽ Ա.

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — 2. Բնակիչք։ — 3. Քաղաքական վիճակ։ — 4. Տրոյա. Փռիւգիա։ — 5. Լիւդիա. Գիւգես ու իր յաջորդները։

1. Աշխարհագրական տեղեկութիւն։ — Փոքր Ասիա կը կոչուի այն Թերակղզին՝ որ Ասիոյ դէպ՝ի արեւմուտք կ՝երկարնայ, ընդարձակ կամուրջ մը ձեւացընելով նոյն ցամաքին ու Եւրոպիոյ մէջ։ Ան երկրէն անցան կրկին և կրկին անգամ ազգեր՝ որոնք Եւրոպիոյ հարաւակողմը տիրեցու կ՝երթային, և կամ կը դառնային արեւելք իրենց նախահարցը նախկին բնակութիւնները նորէն ձեռք բերելու. ուստի ոչ միայն բանակաց անցք մ՝եղաւ՝ այլ և մեծամեծ խնդիրներ պատերազմաց որոշելու առաքելք։

Յամաքի կողմէն Ասորիքէն կը բաժնուի Ամանոս և Տաւրոս լեռներով, Հայաստանէն՝ Եփրատ գետով, և Կողքիսէն՝ Փասիս գետով։ Իսկ միւս եզերացը սահմաններն են՝ Եւքսինեան կամ Սև ծով, Պրոպոնտոս (Մարմարա), Եգեան ծով (Արշիպելագոս) և Միջերկրական։ Եւքսինեան ծովը կը թափին իր գլխաւոր գետերը, յորս անուանի է Ալիս, պատմական սահմանագլուխն Լիւդիոյ և Մարաց։ Թերակղզւոյն գետերուն մեծ մասը չկրնալով ծովը թափիլ լերանց չըլ-

թաներուն բազմութեան պատճառաւ, ընդարձակ և մեծաւ մասամբ աղի լիճեր կը ձեւացընեն։

Կլիման և բերքերը զանազան են, իսկ դաշտերն ու հովիտները խիստ պտղաբեր։ Ամանկ ալ բլուրներն և ոչ այնչափ բարձր լերինք՝ տեսակ տեսակ ծառերով ծածկուած են։ Ասով ոչ թերակղզւոյն բնակիչներն երկրագործ, վաճառական և նաւաստի եղած են։

2. Բնակիչք։ — Փոքր Ասիոյ բնակիչք զանազան ազգաց խառնուրդ ցեղ մը կրնան սեպուիլ։ Ասոնց բնակիչները կ՝երեւնայ թէ Քամոյ ցեղէն էին, որոնց յաջորդեցին Սեմեանք ու Յաբեթեանք՝ ու Քամոյ ցեղը բնաջինջ ըրին։ Սեմոյ ցեղէն էին Կիլիկեցիք, Պիսիդեանք, Սոլիմացիք, Կապադովկացիք և Թերևս նաև Լիւդացիք ալ։ Յաբեթեան կամ Արիական ցեղէն էին Փռիւգացիք, Տրոյացիք, Միւսացիք, Մէոնացիք, Միկոնացիք, Լիկիացիք և Թերևս Կարիացիք ալ։

3. Քաղաքական վիճակ։ — Ամեն այս ազգերն առջի բերան իրարմէ անկախ տէրութիւններ կը ձեւացընէին. եաքը Նինուէէ Թագաւորաց իշխանութեան հնազանդեցան, և երկար տարի Ասորեստանեայց Թագաւորութեան գաւառ։ Նինուէէ անկմանէն վերջը Լիւդացիք յաջողեցան Փոքր Ասիոյ բոլոր ազգերը իրարու հետ միաբանելով՝ զօրաւոր, բայց կարճատև Թագաւորութիւն մը հաստատել։

4. Տրոյա. Փռիւգիա։ — Դիժուարին է այս Թերակղզւոյն բազմաթիւ ազգաց պատմական այլ և այլ տատանումները յիշատակել։ Այս տատանումներուն մէջ հոչակաւորագոյն կրնան տեսնուիլ Տրոյիոյ Թագաւորութեան վերայ պատմուածները, զորս Յունաց պատմութիւնն սորվելու առենին՝ մէջ պիտի բերենք։ Փռիւգիոյ պատմութիւնը կ՝տատանի թէ՝ իր առջի Թագա-

ւորը Գորգիոն եղաւ, գեղացւոյ մը զաւակ, որ իր եղանց լուծը անլուծանելի հանգուցիւ կապելով՝ աստուածոց ընծայեց. իրեն յաջորդեց Միգաս որդին, և Դիոնիսոս կամ Բագոս աստուծմէ կարողութիւն ընդունեցաւ որ իր ամէն դպած նիւթերը ոսկի դառնան. Թէպէտ և շուտով զղջաց այդ ընդունած շնորհին վրայ:

Փռիւգիոյ Թագաւորութիւնն չատ հին է. Թագաւորները բոլորն ալ Գորգիոն և Միգաս անունը կը կրէին. Միգաս Են (560) մեռնելէն ետքը Փռիւգիա Լիւդիոյ գաւառ եղաւ:

5. Լիւդիա. Գիւգէս և իր յաջորդները: — Լիւդիոյ մայրաքաղաքը Սարդիկէ էր Տմոլոս լեռան տակը, և կ'ասանդուի Թէ երեք հարիւր տարի Լիւդիա յաջորդաբար Թագաւորած ըլլան ի Սարդիկէ. այսինքն՝ Ադիատ, Հերակլեանք, Մերմնեանք: Ասոնց վերջին հարստութեան առեն կը սկսի Լիւդիոյ ստոյգ պատմութիւնը, Թէպէտ և առասպելախառն:

Գիւգէս, որ հիմնադիրն է, չկրնալով տանել որ յոյն գաղթականք ծովեզերեայ իշխանութիւնն իրմէ առնուն, անոնց դէմ պատերազմ բացաւ. զԿոլոփոն նուաճեց, և Զմիւռնիոյ ու Միլետոսի երկիրներն ալ աւերեց աւերշտկեց: Իր յաջորդներն (Արտես, Սադիատես, Ալիատես) Թէպէտ և սակաւ էին չարունակ Կիմմերեանց և Սկիւթացւոց տհեղ արշաւանացը դէմ գնել, բայց Գիւգեսի նպատակին հետևելով՝ եռանդ յոյն գաղթականութեանց քաղաքները նուաճել: Ալիատես Փռիւգիոյ և Կապադովկիոյ ալ տիրեց, և այն պատճառաւ պատերազմ բացաւ Մարաց Կիաքսար Թագաւորին դէմ:

Իր Կրեսոս որդին 560ին Թագաւորելով, Յունաց դէմ սկսած պատերազմը լմընցուց հարիւր տարի ընելով զՅոնիա և զԵօղիա: Ասովհոչքլաւ

լով՝ սկսաւ նաւատորմիղ մը պատրաստել Եգիան ծովու կղզիները նուաճելու համար: Բայց եռքը չուզելով կղզեցիքը նեղել, ուրիշ աշխարհակալութեանց եռանդ եղաւ, և տիրեց գրեթէ բոլոր փոքր - ասիական Թերակղզւոյն: Երկայն տաեն կրնար վայելել իր տերութիւնը՝ եթէ Կիւրոսի դէմ պատերազմ բացած չըլլար. Կիւրոս յաղթեց, բռնեց զինքը՝ և տէր եղաւ իր Թագաւորութեանը 554ին:

ԹԱԳԱԻՈՐՔ ԼԻՒԴՈՎԻՈՑ

Ա. — Ատէոպէ.

Մանէս կամ Մէռիէ . . .	1376	
Կոռիս, Ախս, Լիսոս, Աքիասմոս .	1480	
Հերմոն կամ Աորէմիաս, Աղկիմոս, Կամպլիտ, Տմոլոս, Թէոկլիմենէս, Մաթսիաս, Յարտանոս, Ոմպալէս .	1550	
Փիլիմենէս	1292	

Բ. — Հերակլէական.

Ալկէս, Բէլ, Նինոս, Արգոն .	1292	1219
18 Թագաւոր, որոնցմէ յիշենք Հ Լէոն	1219	797
Արդիս Ա.	797	761
Աղեաոէս Ա.	761	747
Մելէս	747	735
Կանդաւղէս	735	708

Գ. — Մերոպէական.

Գիգէս	708	670
Արդիս Բ.	670	621
Սադիաոէս	621	610
Աղեաոէս Բ.	610	559
Կրէսոս	559	547
Կիւրոս տիրեց Լիւդիոյ . .	547ին։	
Մեծն Աղէքսանդր ալ . .	334ին։	

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ

Ա.ՇԽ ԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

---

1. Յունաստանի սահմանն: — 2. Բաժանումն: — 3. Հիւսիսային Յունաստան: — 4. Միջին Յունաստան: — 5. Հարաւային Յունաստան: — 6. Լերինք և Գետք: — 7. Ծոցք: — 8. Հրուանդանք: — 9. Կղզիք:

1. Յունաստանի սահմանն: — Այն երկիրն որուն Հռոմայեցիք Յունաստան անունը տուին, և՝ի բուն ընակչաց Ելլադա կը կոչուէր, հիւսիսէն սահմանակից էր Մակեդոնիոյ և Իլլիւրիէի, և միւս ամէն կողմէն ծովը պատած էր: Իր հիւսիսային սահմանագլուխը Եգեան ծովուն Թեսմայիկ ծոցէն, մինչև Յոնիական ծովուն Ակրոկերաւնեան հրուանդանը կը տարածուէր, լայնութեան 40 աստիճանէն քիչ մը վեր, և լերանց շղթայով մը կը ձգտար. որոնց գլխաւորներն են Ոլիմպոս և Կամպունեանք: Ինքն արեւելքէն շրջապատող ծովը Եգեան ծովն է, հարաւէն Կրետեայ և Միրտոսի ծով, և արեմուտքէն Յոնիական ծով:

2. Յունաստանի բաժանումն: — Յունաստան կը բաժնուէր Հիւսիսային, Միջին և Հարաւային:

3. Հիւսիսային Յունաստան: — Երկու գաւառ կը բաժնուէր հիւսիսային Յունաստանը, արեւելեանը Թեսաղիա կը կոչուէր, և եպիւռոս արև-

ձեռնարը: Այս երկու գաւառներն իրարմէ կը զատուին Պինդոս լերանց գօտիով մը, որ Ալիմպոս լերանց մասն է, և Յունաստանի Ապենենեան լերինքը կրնար սեպուիլ:

Թեսալիան որ Յունաստանի գաւառաց ընդարձակագոյնն է և աւելի հարուստ, իր մէջն ունէր զԵպիդոպիա, Պեղասգիա, Մագնեսիա, Թեսաղիոնիա և Փթիոդիա գաւառները: Գլխաւոր քաղաքներն են Փթիոտս, Փարսաղիա, Փերէս և Լարիսսա ցամաքի վրայ, իսկ Մագնեսիա և Յոլքոս ծովու վրայ:

Եպիւռոս որ պղտիկ է քան զԹեսաղիա, կը բովանդակէր իր մէջը զԹեսպրոտիա և Մողոսիդէս գաւառները, Փիմբրա, Ոդոն, Ամբրակիա, և Նիկոպոլիս քաղաքներով:

4. Մէջն Յունաստան: — Մէջին Յունաստան՝ որ բուն Ելլադան է, արեւմուտքէն կը սկսի Ամբրակիոյ ծոցէն և արեւելքէն Ոդրի լեռնէն ինչուան Կորնթոսի պարանոցը կը հասնի և կը բովանդակէր իր մէջը:

Այոռնանիա լեռնոտ և անտառային գաւառը, որուն բնակիչքն ամենաքիչ և վայրենի էին, և քաղաքներն են Ատիոս, Անակտորիոն, Արգոս, Ալիսիա և Սպարտոս:

Եթոլիա, որուն բնակիչները վայրագ էին բնաւորութեամբ, և ծովու և ցամաքի վրայ վարժ յեղուզակներ էին. և գլխաւոր քաղաքներն էին Գալէտոն և Թերմոս:

Լոկրիս արեւմտեան կամ Ոպոլ Կորնթոսի ծոցին վրայ Ամֆիսա և Նաւպակտոս քաղաքներով վերջինը նաւահանգիստ է:

Աբեւելեան Լոկրիս կամ Ոպունտիա, որ Եւրիպոսանեղուցին երկայնութեանը վրայ կ'երթայ, որ Եղրգայի և Եւբէ Թերակղզւոյն մէջ ծով մի է: Նշանաւոր քաղաքն էր՝ Ոպունտոս, ի հիւսիս

Թերմոպիլէի կիրճը՝ որ Թեսալիայէն ի միջին Յունաստանը բանակ մտցընելու միակ ճամբան էր:

Դորիա, Ոդրէս և Պառնասոս լերանց միջավայրը, որ խանձարուրք եղած այն Դորացւոց որոնք վերջը Պեղոպոնէսի տիրեցին: Դորոյ ըզբղեպոռնիւն, ալ կ'ըսուէր, իր ջրոս պղտի քաղաքներուն համար:

Փոկիս, որ մասամբ երկու Լոկրիս գաւառաց մէջ տեղն է, և՝ ի հարաւէն Կորնթոսի ծովը: Իր գլխաւոր քաղաքներն էին Անդիկիւռա ծովու վրայ, Կրիսա՝ Կիւռայինաւահանգստովը, և Դելփիս՝ Ապողոնի պատգամատեղին և ամֆիկտիոնեան առեղին տարեկան ժողովատեղին:

Բէոտիա, որուն հար. արեւմ կողմը պատած է Կորնթոսի ծոցը, իսկ հիւսիսային կողմը Եւբիպոս: Յունաստանի բազմաթիւ լճերն Բէոտիոյ մէջն են, որոնք հիմա ճախճախուտ դարձած են, Կոպայիս լիճ կոչուած որ գլխաւորապէս Կեփիսոս գետէն կ'ելլայ: Բէոտիա բարեբեր երկիր է, և պէտք է որ հին ատեն շատ բնակիչ ունեցած ըլլայ, որովհետև ցամաքի վրայ անուանի եղած են Քերոնէա, Որքոմեն, Լեպադէա, Փորոնէա, Ալիարտէս, Թեսպիս, Լեւկտրա, Պղատէա և Թեբէ քաղաքները. Եւբիպոսի վրայ ալ Դեղիոն և Աւլիսէս:

Ատտիկէ, Եգեան ծովուն մէջ եռանկեան ձեւով Թերակղզի մ'է, որուն խարիսխ կ'ըլլան Կիւբեռն և Պառնեդ լեռներն որ զԹերակղզին Բիւոտիայէն կը բաժնեն: Երկիրը՝ ցորենի մշակութեան անյարմար, առատ է պտղի ծառերով և ձիթաստանեօք: Իմաստեան լերանց մերը խիտ աղնիւ է. Պենտելիկ գաւառն ընծիր սպիտակ մարմարիոնի հանք ունէր, Լաւրիոն ալ արծաթի հանք. անոր համար բնակիչները գործունէութեամբ ճարտարութեան եռանդ եղան, և ատա-

թաց հետ վաճառականութիւն ընելու ըրաւէ-
ցան:

Աւտիկէացտան ուրիշ շատ գաւառներ ալ կը
բաժնուէր, որոնց մէջ դլխաւորներն են Ագաուն,
Դեկելիա, Մարաթոն և Ելեւսիս: Միակ քաղաք
Ալթէնիք կրնար սեպուիլ, որ Աւտիկէի լերանց
մէջ գտնուած քիչ և սահմանաւոր դաշտերուն
ամենէն մեծին մէջ շինուած էր. սակայն իր չորս
կողմը շատ բլուրներ կային, որոնցմէ յիշատա-
կութեան արժանի են Ակրոպոլիս, Արէոսպա-
գոս, Պնիւկ և Մուսէոն:

Թէպէտ և Ալթէնք ծովէն ութ հազարամեդր
հեռու էր, բայց երեք նաւահանգիստ ունէր, որ
երեք առանձին մասր գաւառներ էին. Փալէ-
րոս, Մունիկիա և Պիրէոն: Վերջինս միւսնե-
րէն շատ աւելի մեծ էր, և կամաց կամաց ա-
նուանի քաղաք մը գարձաւ հրապարակներով,
տաճարներով, վաճառատեղիներովև նաւարան-
ներով: Պիրէոնի և Ալթէնք մէջ եղած հաղոր-
դակցութիւնն ալ եռքը երկու երկայն պարիսպ-
ներով ապահովցուցին:

Մեգարա, Աւտիկէի հիւս. արևմ. կողմին լեռ-
նոտ ցամաքի թեւ մ'է, որ արևելքէն արևմուտք
կ'երկրննայ, ենչուան այն պարանոցն որկր միա-
ցընէ զԵլլադա Պեղոպոնեսի հետ: Հիւսիսէն
Կորնթոսի ծոցին է, և հարաւէն Սարոնեան ծո-
ցը: Մեգարա քաղաքն Սարոնեան ծոցի վրայ
Նիսէոս նաւարկելի գեաը ունէր, և կորնթեան
ծոցին վրայ ալ Բակէի նաւահանգիստը:

Տ. Հարաւային Յունաստան: — Հարաւային Յու-
նաստան կամ Պեղոպոնեսի թերակղզի, որ Սի-
կիկիոյ ընդարձակութիւնն ունի՝ լեռնագեղ
մըն է: Ութ գաւառ ունէր, Կորնթոս պզտի և
անբեր երկիր մը, որուն կը հանդիպինք եթէ
ուղեւոր Միջին Յունաստանէն՝ի Պեղոպոնես

անցնիլ: Գլխաւոր քաղաքն էր Կորնթոս, վա-
ճառականութեամբ խիստ ճոխացած: Կորնթո-
սի ծոցին վրայ Լէքէոս, և Սարոնեան ծոցին վրայ
ալ Կէնքրեայ, նաւահանգիստներն ունէին, մէկ
մէկէ հինգ հազարամեդր միայն հեռու:

Սիկիոնիա, Կորնթոսի ծոցին երկայնութեանը
վրայ, Սիկիոն քաղքովն և դաշտով, որ պզտի,
բայց անուանի է իր արգաւանդութեամբը:

Աքայիա, Կորնթոսի ծոցին վրայ, և քաղաքներն
են, Պէլլենէ, Եգիրա, Եգէոս, Ռիփէ, Եգիոս,
Պատրաս, Փարա, Ոլենոս, Դիմա և Տրիտէոս:

Եղիս, Պեղոպոնեսի հիւս-արևմտեան ափանց
վրայ. երեք գաւառ ունէր, իր համանուն քա-
ղաքաւն որ Պէնէոսի ձախակողմեան ափանցը
վրայ շինուած էր, Բիզա՝ Բիզա և Ողիմպիա քա-
ղաքներուն Ալփէոս գետին վրայ, որ անուանի
է հին ողիմպական խաղերուն համար: Տրիփիւլե-
լիա, ուր էր Պիւլոս՝ Նեստորի հայրենիքը:

Մէսսենիա, Թերակղզւոյն հար-արևմ. կողմն
է, Յունաստանի անկեա և բարեբեր գաւառ-
ներէն մէկը: Դլխաւոր քաղաքներն էին Իթո-
մէ, բարձր լերան մը վրայ շինուած՝ և Փսորոնէ,
Մէթոն և Պիղոս ծովու վրայ: Մեսսենա քաղա-
քը եպամինոնդայ ձեռքով շինուեցաւ, Լէկ-
տրայի պատերազմէն ետքը:

Լաքոնիա, արևմուտքէն բաժնուած է Մեսսե-
նայէն Տայիգետեան լեռան շղթայով և արևել-
քէն Պառնոն լեռներով. մեծ ձոր մ'է որ հարա-
ւէն դէպ'ի ծով կը տարածուի, և որուն մէջտե-
ղէն Եւրոտաս գետը կ'անցնի: Այս գետոյն ա-
ջակողմեան ափանց վրայ շինուած էր Սպարտա
մայրաքաղաքը: Միւս երեւելի քաղաքներն ալ
են Սելասիա, Ամիւկլէս, Իյուս և Կիւթէոն որ
լակոնական ծոցին վրայ շինուած՝ նաւահան-
գիստ էր Սպարտացւոց:

Աբգոզիա, Թեբակզոյ մը ձև ուշի Ատրիկէի գիմաց, և անկէց կը բաժնուի Սարոնեան ծոցով: Այս գաւառը կը բաժնուէր բուն Արգոլիս, Եպիտաւրոս, Տրեզէն, Հերմիոնիդէս, Կինաբիա. գլխաւոր քաղաքներն էին Արգոս, Միւկենէ, Տիւրինթ, Հերմիոն, Տրեզէն, Նաւպլիա և Եպիտաւրոս:

Սքիոփիա. Պեղոպոնեսի միջակէան կը սեպուի և գաւառաց ամենաարձակն: Արկադացիք խաշնարած էին: Իր քաղաքներէն յիշատակութեան արժանի են Ոլքոմէն, Տեգէս, Մանդինէա, և Մեգալոպօլիս, զոր Եպամինոնդ չինեց:

6. Լէքէում և Գենիս: — Այն լերանց հետ զոր արդէն յիշեցինք, նշանաւոր են Թեսսալոյ ա֊րևելեան կողմը պատող լեռներն ալ, և որոց մասն են Ոսսա և Պելիոն բարձունք:

Յունաստանի գաշտերը քիչ և սղմիկ ըլլալով, ջրոյ ընթացքն ալ հեղեղատք են քան Թէգաք, որոնք առատաջուր և երագընթաց են ձմեռը, իսկ գարնան և ամառ առեն չոր ցամաք: Այսպէս են Կեփիսոս և Ասոպոս Բեովտիոյ մէջ, Իլիսոս և Կեփիսոս Աթենքի գաշտին մէջ, ուր երկուքին մէջ տեղն է Ինաքոս որ Արգոսի քովէն կ'անցնի, Ալփեոս՝ Արկադիոյ և Եղիսի միջէն, Եւրոտաս՝ Լակոնիոյ, և Պամիսոս Մեսսենիոյ մէջ: Բայց ասոնցմէ աւելի մեծ է Թեսաղիոյ Պենէոս գետը, որ Պինդոսի արևելեան զառ֊ի վայրէն կը բղխի և Տեմպէի գեղեցիկ հովիտն կըռնելով Եգեան ծովը կը թափի: Պենէոսէն աւելի մեծ է Աքելովս գետը, որ Պինդոս լերան հակառակ զառիվայրէն կը բղխի և Յոնիական ծովը կը թափի:

7. Ծոցեր: — Երկրին մակերևոյթին համեմատութեամբ Յունաստանի ափունքը շատ տարածուած ըլլալով, բազմաթիւ ու կարևոր ծոցեր

կը ձևացընեն: Հիւսիս - արևելեան կողմէն, երևելի են Պագասէոս, Մալիական, Սարոնիկ, Արգոլիոյ, Լակոնական, Մեսսենական, Կորնթոսի, Ամբրակիոյ ծոցերը:

8. Հրուանդաններ: — Յունաստանի գլխաւոր հրուանդաններն են. Սեպիա Պագասիոյ ծոցին ծայրը, Սունիա Ատրիկէի հարաւային ծայրը, Մալէա և Տենարոս Լակոնիոյ մէջ, Ռիոն և Անդիռիոն Կորնթոսի ծոցին նեղ ծայրը, և Ակրոկերաւնոս՝ Եպիրոսի հիւսիսային ծայրը:

9. Կղզիք: — Յունաստանի չորս կողմը կըզգլնեռով պատած է, որոնց պատմական ժամանակց բնակիչները կը պարծէին թէ Հելլենացի են արեամբ, անուամբ, կրօնիւք և սանդուղթեամբ:

Գլխաւորներն միայն յիշենք, որոնք Յոնիական ծովուն մէջ կը գտնուին. և են Կորկիւրա, Համանուն քաղաքով. Լևկադիա, Իթակէ, Կեփալենիա՝ համանուն քաղաքով, Զակինթոս, Գորոպադ կղզիք՝ որոնք անուանի էին ձիւաղաց բնակութիւն ըլլալնուն համար, Սփակտերիա և Կիւթերէ:

Միւրտովեան ծովուն մէջ՝ Կալաւրիա, Եգինէ, և Սաղամինա: Եգեան ծովուն մէջ Կիւկլադայք, որոնք Դեղոսի չորս կողմը սփռած ըլլալնուն համար այնպէս կոչուեցան, և հոն կ'աւանդեն Ապողոնի ծննդեան տեղը: Ասոնցմէ են Միւկոն, Տենոս, Անդրոս, Կիաթոս, Կէոս, Սիրա, Կիւդնոս, Սիփնոս, Մեղոս, Նաքսոս, որ ամենէն մեծ էր և Բագոսի նուիրուած, և Պարոս՝ սպիտակ կաճոյն համար անուանի:

Ուրիշ կղզիներ ասդին անդին ցրուած կան Եգեան ծովուն մէջ և Սպորագեանք կը կոչուին: Ասոնց երևելիներն են՝ Լեսբոս, Սամոս, Քիոս, Դող, Հռոդոս:

Ուրիշ շատեր ալ Եգեան ծովուն հիւսիսային կողմը կ'ելնան. որոնցմէ են Սիրոս, Սիւթնոս, Սկոպելոս, Պեպարեաոս, Լէմնոս, Իմպրոս, Սամոթրակէ և Թաքսոս:

Բայց Յունաստանի ամենամեծ կղզին Կրեաէ էր, որ շատ հայակապ քաղաքներով կը պանծայը. ինչպէս Կնոսոս, Գորգինա և Կիւդոնիոս, որուն մէջն էր հռչակաւոր Իգա լեռը: Կրեաէին եաքը մեծուքեան կողմանէ կու գայ Եւբէա, որ անոր նման երկայնաձև և լեռնոտ է: Այս կղզին յաճախային գաւառներէն Եւրիպոսի նեղուցով բաժնուած է, Եւբէայի Գաղկիս քաղաքին և Բէոտիոյ Ավլիկ քաղքին միջտը միայն քանի մը քայլ երկայնութիւն ունի:

Գաղկիսէն զատ ուրիշ մեծ քաղաքներ ալ ունէր Եւբէա, ինչպէս Երետրիա, Կարիւստոս և Որէա:

ՍՈՍՊԻՆ ՇՐՋԱՆ

ԹՈՐԱՑԻՈՑ ԾԱԳՄԱՆԷՆ ԻՆՉՈՒԱՆ ԱՆՈՆՑ

ԱՐՇԱԻԱՆՔԸ

ԳԼՈՒԽ Ա.

Յունաստանի առջի բնակիչները.

1. Պելասգեանք: — 2. Ինաքոս և Դանաոս: — 3. Կեկրոպս: — 4. Կադմոս: — 5. Պեղոպս: — 6. Հելլէնք, Դորացիք, Եոլացիք, Յոնիացիք, Աքայեցիք:

1. Պելասգեանք: — Թէպէտ յոյն ազգին ծագումը խիստ մութ է, բայց հաւանական կ'ենթադրենայ թէ երկրին առաջին բնակիչք Յաւեթական ցեղէն ըլլան, Յաւանայ մեծ որդւոյն Ելիսայ սերունդէն. որոնք նախ Հելլէն անուանմէ կը կոչուէին. բայց ետքը՝ քիչ մը ժամանակ մէկ դի թողլով այդ անունը, Հելլենաց Հելլէն նախահօր ձեռքով սկսաւ նորէն գործածուիլ, երբոր երկրացան 'ի Յունաստան Պելասգեանք՝ գրեթէ 1900 տարի Քրիստոսէ առաջ:

Պելասգեանց գալուստը անտարակուսելի դէպք մ'է: Բայց որչափ որ իրենց գալստեան վրայ համաձայն են խմատաուռնք, իրենց ցեղին ծագմանը, անոնց քաղաքականութեան, և ին-

Չուան անուանը նշանակութեանը վրայ ալ խարմէ տարբեր կարծիք ունին: Ոմանք Հելլենաց ցեղէն կը համարին զանոնք, այլք ալ տարբեր ցեղէ մը առաջ եկած, ուրիշներն ալ Թէ Յունաստանի հիւսիսային կողմէն եկած ըլլան, և ոմանք հարաւէն. կան աւանդութիւններ, որ զանոնք անկիրթ, վայրենի և ամէն արուեստներէ զրկուկ կը համարին, մինչդեռ ուրիշներն ալ կ'աւանդեն Թէ Յունաստան եկած առեններն քաղաքականութեամբ խիստ յառաջացած էին: Վերջի կարծեաց ստուգութեանը հաւաստիք կրնան սեպուիլ Պելազգեանց ձեռքով եղած շինուածոց մնացորդները: Ասոնց մէջ նշանաւորներէն կրնան սեպուիլ Միկենէի պարսպաց մէկ մասը, և անոր մէկ դուռը՝ որուն վրայ կեցած են երկու առիւծ. նոյն քաղաքին մօտ եղած ստորերկրեայ տեղը, որ Աթրէոսի գանձ կ'ըսուի, և Տերինդոսի պարիսպները, որոնք ահագին քարերով շինուած են, և ամենէն սքանչելի՝ երկու ջրի չեն կրնար շարժել տեղէն:

2. Ինաքոս և Պանաւոս: — Յունաստանի մէջ ուրիշ գաղթականութիւններ ալ եղած են: Ամենահինը (1800?) Ինաքոսինն է, որ Եգիպտոսէն գաղթականութիւն մը բերաւ, և այն գաւառը բնակեցաւ՝ որ իր Արգոս Թռուան անունով ըսուեցաւ Արգոլիս: Արգոս ուրիշ շատ յաջորդներ ալ ունեցաւ, ինչուան Գելանոր, որ հալածուեցաւ Պանաւոսէն (160?) որ նոյնպէս Եգիպտոսէն եկաւ: Ասիկայ եգիպտական արուեստներ սորվեցուց բնակիչացը, և իրենց Պանայեի անունը տուաւ, զոր Հոմերոս կը գործածէ Իլիականին մէջ բոլոր Յունաց համար:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ

Յունաց հին ժամանակագրութեան անստուգութիւնն պատճառ եղած է այլ և այլ ժամանակագրական դրութեանց. մենք կը հետևինք այն մատենագրաց՝ որոնք մեզի Հին պատմութեան համառօտութիւնը տուած են:

Յունական առջի ժողովրդոց մէջ պէտք է համարիլ առաջին զՊելազգեանս, որոնք քսանեորդ գարէն մինչև վեցտասաներորդ գարը Յունաստանի մեծ մասին տէրն էին:

Հելլենք որոնք Պելազգեանց կը յաջորդեն և Կադմեեանք, որոնք Հելլենական ցեղին հետ խառնուեցան:

Ազգոսի Թագաւորք.

Ինաքոս Թագաւոր Պելազգեանց	1986
Փորոնէոս	1920
Ապիս	1896
Արգոս	1866
Կրիասոս	1846
Փորբաս	1790
Տրիոպաս	1742
Յասոս	—
Կրոտոպաս	1678
Սթենելոս	1625
Գելանոր	—
Դանաւոս Եգիպտացի	1572
Լինկէոս (Վինկէս)	1520
Աբաս	1510

Պրոխտոս	1498
Ակրեսիոս	1462

Ակրեսիոս կը սպաննուի Պերսէոսէն յամին 1451, որ Միկինք քաղաքը չինեց։

Հելլենացիք (Եօղացիք, Յոնիացիք և Ա. քայհ ցիք) զանազան թագաւորութիւններ կը հաստատեն ի Պեղոպոնէս 1480–1370։

Թագաւորք Միկինէի և Արգոսի.

Պերսէոս	1451
Սաւենէոս	1397
Եւրիսթէոս	1367
Հերակղէս յամին	1350
Ադրեոս և Թիեստոս, որդիք Պեղոպսի	1307

Հերակղեան Պեղոպոնեսէն իշ Վանդուն.

Ագամեմնոն	1280
Եգիսթոս որդի Թիեստոսի և Կլիտեմնեստրա	1270
Ովսեդէս Իլեան Պեղոպոնեսի .	1263
Տիրամենէս	1192
Բենեթիոս և Կոմեդէս . . .	1190

Հերակղեանք գարձեալ կը մանեն ի Պեղոպոնէս դովրացի հերակղեաններով։

Տեմենոս	1190
Կիսոս	1100

Իրենց յաջորդները կը թագաւորեն իրենցմէ

վերջը, որոնցմէ Մէդոն և Լաիէդէս մինչև ի 820 յԱրգոս թագաւորեցին և վերջինքն՝ ասոնք էն.

Փիտոն	860
Երագոս	820

Արգոսի մէջ կը թագաւորեն Փրիստոսի Թուականէն 243 տարի առաջ՝ Արիստոմագոս Ա. Արիստոդեմոս և Արիստոմագոս Բ. Արգոս կը միանայ ընդ Աբեայեանս յամին 233. Յունաստան Հռոմէական գաւառ կըլլայ յամին 146։

---

3. Կեկրոպս։ — Պանուսոսէն քիչ մը առաջ, Կեկրոպս Եգիպտոսէն յԱտտիկէ գաղթականութիւն մը բերաւ։ Աւանդութիւնք մեզի երբեմն օրէնսդիր և քուրմ կ'ընծայեն զԿեկրոպս։ Ատտիկէի մէջ կրօնական գաղափարներ մուծաց, տաճարներ ու սեղաններ կանգնեց, երկրագործութիւնը ծաղկեցուց, ցիրուցան տասնեւերկու քաղաքաց կամ աւանից բնակիչները միացուց. Աթենքի այն մասն որ եղաւ Ակրոպոլիս կոչուեցաւ՝ ինքը չինեց, և Արիսպագին տաճարը հաստատեց։ Իրեն յաջորդեցին տասնըվեց թագաւորներ, որոնց վերջինը եղաւ Կոդրոս։

4. Կադմոս։ — Ագենորի որդւոյն՝ Կադմոսին բերած փիւնիկեան գաղթականութիւնը Բեովոտիա հաստատ։ Կադմոս քաղաք մը հիմնեց իրեն անուամբ Կադմեական կոչուած, որ եղաւ Թեբեի միջնաբերդն եղաւ, քաղաքակրթութեան շատ սկզբունքներ մուծաց, և գրութիւն սորվեցուց, որ առաջ անծանօթ էր Յունաց։

Կադմոսին յաջորդներէն կը յիշուին Լապտագոս, Լիգոս, Աքիխոն, Լայոս և Իդիպոս։

5. Պեղոպս։ — Քրիստ. 1300ին առեւնելը, Պեղոպս Տանտաղոսի որդին սոսկալուած Լիւդիայէն ելաւ, բազմաթիւամբ և հարստու-թիւամբ եկաւ հասաւ այն Թերակղզին որ Ինա-քոսի յաջորդներէն մէկուն Ապիս անուամբն՝ Ապիա կոչուեցաւ, իսկ իր անուամբ Պեղո-պոնէս ըսուեցաւ։ Եաողիայի մէջ բնակեցաւ և Ենոմայոսի Իպոտամիա աղջկան հետ կար-գուելով, Պեղոպոնէսացւոց հարստութեան գլուխ եղաւ, որ քիչ ժամանակուան մէջ իրենց իշխանութիւնը տարածեցին Թերակղզւոյն մեծ մասին վրայ։ Աւոնցմէ երեւելիներն են Փիւս-սա, Աքրէոս, Ագամեմնոն և Մենելաւոս։

6. Հելլէնէ. Դօրոսէ. Եօղէնէ. Յոնիոսէ. Աէոլէոս։ — Բայց ամենէն աւելի կարեւոր գաղ-թականութիւնը Հելլենացւոցն է (ԺԴ. Դար). որ ուրիշ բոլոր գաղթող ցեղերէն աւելի նշմար-նեը և նշանարներ թողուցին։

Այս Հելլէնէ մեր վերը յիշած երկրորդ Հել-լէնք կոչուածներն են, և հաւանական է թէ նոյն են անոնց հետ՝ որոնք Պեղոպոնէսոյ գալէն առաջ Յունաստանի մէջ կը բնակէին։ Երբ ի-րենք եկան, հաւանականաբար Հելլէն ցեղին մէկ մասը հնազանդեցաւ իրենց, և նոյն տեղը ձեացին երբեմն գերիք, մաս մ'ալ գերութենէ փախչելով Եաողիա, Թեսալիա և Մակեդո-նիոյ սահմանակից լեռները քաշուեցան։ Փախ-չողներուն եաւէն ալ նգնեցան յարձակողները, ու Թերեւս երկայն արիւնահեղ պատերազմներ ալ եղան։ Երկարատեւ պատերազմին վերջին եղբ Հելլենացւոց նպաստաւոր եղաւ. վասն զի Յու-նաստանի զանազան կողմերէն շատ մարդիկ հօն գումարուելով, հզօր բանակ մը ձեացուցեր էին։ Պեղոպոնէսք ալ իրենց աշխարհակալութիւն-ները պահելու համար և նոր աշխարհներու

տիրել ուզելնուն՝ բաժնուած ու ակարացած էին։ Երկու ազգաց վիճակը փոխուելով, Պե-ղոպոնէսք ստիպուեցան Յունաստանէն Իտալիա անցնիլ. իսկ Հելլէնք սկսան գառնալ իրենց նախ-կին բնակութիւնը։ Այն տեղն էր որ անուն-նին աւելի համբաւ ստանալով՝ և բոլոր Յու-նաստան բնակող ժողովրդոց հասարակ անուն մը գտած։ Բայց ինչպէս Հայաստանի մէջ հա-սարակ անուամբ հայաստանցի անունը կը կրենք և եաքը տարօրինակի և շիրա-կացի, և այլն, կը բաժնուինք, այսպէս ալ Հել-լէնք չորս ցեղ բաժնուեցան. Դորոսէ, Եօղոսէ. Յոնիոսէ, Աէոլէոս։

Դորացիք, Թեսալիոյ (Եաոխոսիդէ) մէկ մա-սէն՝ ի զօր զանազան կղզիներու ալ տիրեցին. որոնցմէ էր Կրետէ, և բուն Յունաստանի մէջ Դրիոպեանց երկրին, որ այն տեղէն սկսաւ Դորիա անունը կրել, և ժամանակ անցնելէն եաքը Պեղոպոնէս ըսուեցաւ։ Իրենց այն Թե-րակղզին երթալուն պատմութիւնը Դոչ Հե-րոդէոն կը կոչուի, որուն վրայ եաքէն պիտի խօսինք։

Եօղէնէ տիրեցին Թեսալիոյ Փթիոդիսէս գաւառին, Եաողիոյ, Լոկրիսայ, Փովկիսայ, Պե-ղոպոնեսի մէկ մասին, այս ինքն Մեսսենիոյ և Ե-ղես գաւառին։ Եօղոսնոց բնակած տեղերը կը ցուցընեն Թէ ծովեզերեայ գիրքեր կ'ախորժին։

Յոնիոսէ Եգիալեաս և Աատիկէ գաւառաց տի-րեցին, բայց վերջնոյն մէջ միայն ձեացին։

Աէոլէոսէ որ երկար աւեն իրենց ազգակիցնե-րէն աւելի զօրաւոր եղան, տիրեցին Արգոլիսի և Լակոնիոյ. իսկ երբ Դորացիք վրանին վազեցին, փախան Յեգիալեա՝ որ այն տեղն Աէոլիա կո-չուիլ սկսաւ։

Այս չորս հելլենական ցեղերուն իրարան կամ

Էրեւակայական անձնասիրութիւն մը տուած են հին առասպելք, որ եթէ իրօք ալ եղած ըլլան, անկարելի է ըսել թէ արդեօք այն ժողովրդոց անունը տուողը իրե՞նք եղած են, թէ անոնց անուամբը կոչուած: Այս առասպելաց համեմատ, Դևկալիոն իր Պիրրա կնկանը հետ Թեսաղիա կը փախչի՝ այն ջահելղէն, որով ապատուածները բոլոր մարդկութիւնը պատուհասեցին: Դևկալիոն երկու որդիք կ՚ունենայ. Հելլենոս՝ յորմէ Հելլենացիք, և Ամֆիկտիոն, որ ամֆիկտիոնեան ատեանը հաստատեց: Հելլենոս երեք որդի ուներ. Դոպոս, ուսկից Դորացիք. Եոլոս, յորմէ Եոլեացիք, և ՔսուԹոս: Այս վերջինը իր երկու եղբարց հետ չկարենալով միաբանիլ, Թեսաղիայէն Աթտիկէ գաղթեց, ուր Երիքթէոս Թագաւորին կրնաս աղջիկը կին առաս. ուսկից ծնան Յոնն և Աքէոս, որ նախահարք եղան Յոնիացւոց և Աքայեցւոց:

Քանի որ Հելլենացիք Յունաստանի մէջ կը տարածուէին, այս չորս ցեղերը, իրենց մէջ էական նմանութիւն մը պահելով՝ սկսան շատ բանի մէջ ալ իրարմէ զանազանիլ. առանձին գաւառական լեզու, սովորութիւններ և տարբեր քաղաքական կառավարութիւն ունենալ: Ասանկով Ինչուան Իրարու հակառակորդք ըլլալով, արիւնահեղ պատերազմներ ալ ըրին իրարու դէմ, յորս Յոնիացիք և Դորացիք յաղթող եղան: Այն առեն Եօղնանք մեծաւ մասամբ միացան Յոնիացւոց հետ, Աքայեցիք ալ Դորացւոց. ուստի Դորացիք և Յոնիացիք սեպուած են գլխաւոր տարբերք կազմութեան յոյն ազգին: Դորական ցեղն ծանրաբարոյ էր, որ խօսելու կերպին մէջ, երգերուն, պարերուն, բարոյական սովորութեանց, քաղաքական կարգաց ամէն նորասիրութիւններէ ղգուշանալուն մէջ կը

ընէար: Իսկ Յոնիական ցեղը բնութեամբ շատ աւելի աշխոյժ, և յառաջադիմութեան սիրող էր ու պէտք եղած առեն կը Թողուր հին սովորութիւններն, գիւրութեանց հետեւելու համար: Ասկէ էր անոնց տարբեր և շատ անդամ երբարու ընդդիմակ վարչութիւն ունենալը, մանաւանդ երկու ցեղին գլխաւոր քաղաքներուն մէջ, Ի Սպարտա և Աթէնս:

ԳԼՈՒԽ Բ.

Դիւցազանց ժամանակ:

1. Դիւցազունք: — 2. Հերակլէս: — 3. Թեսէոս: — 4. Մինովս: — 5. Պատերազմունք ընդդէմ Թեբէի: — 6. Աղշանք Արգոնաւորդաց: — 7. Տրոյեայ պատերազմը:

1. Դիւցազունք: — Երկրորդ Հելլենացւոց երևնալէն ինչուան Փրիսատոսէն 1000 տարի առաջ եղած միջոցը Դիւցազանց ժամանակ կ՚ըսուի, որովհետև իրենց պատմութիւնը առանձնական կամ գործակցութեամբ եղած պատերազմայ վիպասանութիւն է, և այս պատերազմները այնպիսի անձինք կ՚ընէին, որոնք կարգ գերբնոյժ, վիթխարի հասակ, կամ գերմարդկային սեպուած յատկութիւն մը ունենալով Դիւցազունք կոչուեցան: Իրենց գործերուն նպատակն էր տկարները չատ անգամ պաշտպանել զօրաւորներէն, և մարդկային ընկերութիւնը վայրագ կենդանիներէն և ոճրագործ մարդիկներէն ազատել:

2. Հերակլէս: — Ամենէն հռչակաւոր հանգի-

ռացաւ Հերակլէս, Ակմենայ և Ամֆիտրիոն որդին, ծնած՝ի Թեբէ։ Դեռ մանուկ իր որբանին մէջ երկու օձ սպաննեց։ Մեծնալով ձեռնտու եղաւ Որգոմենեայ՝ Մինայացոց ձեռքէն զԹեբէ ազատելու համար։ Նէմէա անտառին մէջ առիւծ մը սպաննեց. Լեռնեան Կիթերոն կոչուած մը սպաննեց. Երիմանդոսի վարազն որ կ՚ապականէր զԱրկադիա՝ սատկեցուց. կատաղի ցլոց հետ կռուեցաւ միայնակ, որ հրեշաւոր կենդանիներ էին կէս մարդ և կէս ցուլ, սոսկալի ցուլ մը նուաճեց որ Կրետէ կըզձէն կ՚աւերէր կ՚աւրշոկէր, և ուրիշ շատ քաջագործութիւններ ալ ընելով՝ նշանաւոր դիւցազն անուն և համբաւ ժառանգեց։

3. Թեսէոս։ — Թեսէոս Աթենացոց Եգէոս Թագաւորին և Եթրա Թագուհւոյն որդին՝ ծնաւ՚ի Տրեզենէ։ Վէշտասանամեայ հասակին Տրեզենէ քաղքէն Աթենք երթալու առեն՝ ճամբան Պերիբատեան, Սկիռոն, Շերոն և Պրոկուստ աւազակները սպաննեց, որոնք անցաւորները կը չարչարէին և կը սպաննէին։ Աթենքի մէջ պատերազմեցաւ իր հօրեղբօր Պալլանտեայ որդւոց հետ, որոնք կ՚ուզէին Թագաւորութիւնը յափշտակել և յաղթեց։ Եաքը Կրետէ երթալով Մինոսաւրոսը սպաննեց որ բաւղի մէջ կը բնակէր, և որուն ննջը տարի՝ աթենացի եօթնեան աղջիկ և եօթնական մանչ տղայք՝ պիտի կերակուր ըլլային։ Ի դարձին Թագաւորեց, և քաղաքը ընդարձակելով՝ Ատտիկեան գաւառին մայրաքաղաքն ըրաւ. Ժողովուրդը բաղմացուց, օտարականներն հոն հրաւիրելով և երիք կարգ բաժնեց ժողովուրդը. ազնուականք, երկրագործք և արուեստաւորք։ Իսկ ձանձրանալով Թագաւորութենէն, Աթէնքէն Սկրոս կղզին գնաց և հոն մեռաւ։

Թեսէոսի պատմութեան մէջն ալ անկարելի է սուտը ճշմարտէն զանազանել։ Յունաց սորգ պատմութիւնն Փրկաւոսէ հազար տարի առաջ կը սկսի։

4. Մինոս։ — Ըստ Հոմերոսի, Մինոս Ամֆիտրիոն և Եւրոպեայ որդին էր։ Կրետէ կղզւոյն մէջ, ուր կը Թագաւորէր, շատ քաղաքներ շինեց, թէ ծովու և թէ ցամաքի վրայ բերդերով ամրացուց՝ Կիւկլադեայ մեծ մասին տիրեց, և շատ ընդարձակեց տէրութիւնը։ Կարիացիներն և Լելէքներն ծովու հէներէն ազատեց այն ծովերը որուն պիտի տիրէր միայնակ և իր ազգին այնպիսի արդար օրէնքներ դրաւ, որ իրաւամբ հին ժամանակաց օրէնսդրաց մէջ անուանիւրէն մէկը սեպուած է։

5. Պոպերազման ընդդէմ Թեբէի։ — Եգիպտոս Թագաւորն յետ այլ և այլ գժդեակ և թշուառարկածից, Թեբէին հեռացաւ, հօն Թողով իր երկու որդիքն՝ Եաեոկղէս և Պողինիկէ, որոնք որոշեցին մէյմէկ տարի Թագաւորել։ Եաեոկղէս առաջ Թագաւորեց, բայց տարին լմնալէն ետքը՝ չուզեց Թագաւորութիւնը եղբօրը Թողուլ։ Պողինիկէ իր անեղբօրը՝ Ադրաստ Արգոսի Թագաւորին դիմեց։ Անոնց հետ միաբանեցան Կապանէոս, Իպոմէտոն, Պարթենոպէ, Ամֆիարաւոս և Թէսէոս, և յարձակեցան Եաեոկղէսի վրայ։ Այս պատերազմը ըսուեցաւ Պոպերազմն Եօթն Թագաւորաց ընդդէմ Թեբէի։ Արիւնահեղ եղաւ պատերազմը, ամենքն ալ ինկան մեռան բաց՚ի Ադրաստէն, երկու եղբարքն ալ մեկզմեկ զարկին սպաննեցին։ Մեռած Թագաւորաց որդիքը վրէժխնդրութեան ելան, որոնք Եփիգոն ըսուեցան. և աւելի բաղդաւոր գտնուելով տիրեցին Թեբէի և Պողինիկէի որդին Թերսանդրը Թագաւորեցուցին։

6. Արքանաւորդաց արշաւանքը։ — Արգոնաւոր-

դայ արշաւանաց նպատակը՝ ըստ առասպելին էր գողնալ ոսկեգեղմը, որուն տէրն էր Կողքիսի Սկիւտաս Թագաւորն, Պոնտոսի (Սև ծով) արևելեան ծայրը, որուն համար կ'ասանգէին թէ վիշապ մը և ցուլեր կը պահպանեն, որոնք բերնեն և քթեն կրակ կը շնչէին: Այն արշաւանաց գլխաւորներն էին Յասոն, Պիղևաս Թեսաղիոյ Թագաւորին եղբօրորդին, որուն հետ միացան նաև յիսունուչորս հոգի, որոնցմէ երեքլինեքն են Հերակլէս, Թեսէոս և Պողիտեւկիս: Պիլէոս, Լայերտաս, Որփեոս երգիչը, Ասկլեպիոս բժիշկը, Թելամոն և Աբգոս: Այս վերջինը նաւուն շինողն ըլլալով՝ որ կոչուեցաւ Աբգո, նաւուն մէջ եղողներն ալ Աբգոնաւորդք: Յասոն Կողքիսի մէջ չատ նեղութիւն քաշելէն եաքը, սիրեց զՄեդիա և անոր ձեռքով իր վախճանին հասաւ:

Աբգոնաւորդաց արշաւանքը այլ և այլ ժամանակի մէջ եղած պատերազմներ են: Պոնտոսի կողմերը հաստատուած յոյն գաղթականութեանց, և տեղացոց անոնց ձեռքով քաղաքականացած ըլլալուն պատճառաւ ծովը որ երբեմն Անապնչեան կոչուած էր, Ասպնչեան (Եբբսինեա) համարուեցաւ:

7. Տրոյէոյ պաթերամը: — Տրոյա՝ Պեղասգեանց քաղաքն, փոքր Ասիոյ եւրոպակողմեան և Հլլեսպոնտոսի նեղուցին մօտ կ'իյնայ: Քսան աւանդութեանց Քրիստոսէ 1400 տարի առաջ՝ նախկին Թագաւորն եղաւ Տեւկրոս, և իր անուամբ Տեւկրիա կոչուեցաւ: Իրեն յաջորդեց Դարդանոս, Երիքոնիոս, Տրոյիոս յորմէ Տրոյա անունը, Իլոս՝ ուսկից Իլիոն ալ կոչուած է, Լաոմեդոն և Պրիամոս. որ յիսուն որդւոց հայր եղաւ: Այս որդւոց մէկը Պարիս, նշանաւոր իր գեղեցկութեամբը, գնաց ի Յունաստան և ի Սպարտա, և Մենելաոս Թագաւորին

տունը բնակելով, անոր կինը Հելենէ տարաւ ի Տրոյիա: Այսպիսի նախատանաց վրէժն առնելու համար վառուեցաւ Մենելաոս, և նախ Ագամեմնոնի իր եղբօրը հետ միացաւ. որ Աբգոսի և Միկինէի Թագաւորն էր: Շուտ մը դեսպան խրկեց Յունաստանի ամէն իշխանաց, որոնք հաւանեցան օգնական ըլլալ իրեն, և սկզբան այն պատերազմի պատրաստութիւն տեսնալ որ տասը տարի տևեց: Այն ատեն Բեովտիոյ Աւլիս քաղաքին մէջ բոլոր բանակը իրենց զօրավարներով ժողովուեցաւ: Զօրաց գլուխ և առաջնորդ էին Ագիլլեւս, Ոդիսեւս, Նեստոր, Դիոմեդես, Այասեանք, և ուրիշ չատ քաջազունք: Եւ այն նաւահանգստէն 1194ին Յունիսի ելան գէպ ի Սպա, հարիւր հազարէն աւելի զօրաց բանակով մը զորմնք տանող նաւաց թիւն էր 1186:

Տրոյեացիք ալ դաշնակիցներ էին փոքր Ասիոյ բոլոր ազգաց հետ. Դարդանեանք Ենէասայ առաջնորդութեամբ, Լիկեացիք, Սարպեդոնք, Կարիացիք, Լիւգացիք, Միւսացիք, Փռիւգացիք, Ալիզոնք և Մէոնացիք: Իրենց բոլոր ուժովը յարձակողաց գէմ կեցան, և մեծանուն եղաւ իր քաջութեամբ աւելի Հեկտոր Պրիամոսի որդին: Պատերազմը տասը տարի տևեց, և վերջապէս առնուեցաւ Տրոյա:

Ինչպէս անտարակուսելի պատմական գէպք մ'է Տրոյոյ պատերազմը, նոյնպէս անոր պատճառն Հելենէի յափշտակութիւն գնելն առասպել և պարզապէս բանաստեղծական գիւտ մը սեպուած է:

Սակայն պէտք է ընդունիլ որ պատերազմին թէ նպատակն և թէ արտաքին ձևն հելլենական է, և թէ հելլենական ցեղին վերջին և մեծ ձիգ մ'էր Պեղասգեանց ցեղին գէմ:

ԳԼՈՒԽ Գ.

Յունաստանի նախապատմական վիճակը։

1. Քաղաքական օրէնսդրութիւնք։ — 2. Բարք։ — 3. Արուեստք։ — 4. Գիտութիւնք։ — 5. Կրօնք։ — 6. Դրամ. Պատգամք։ — 7. Ամփիկտիոնեան ատեանք։ — 8. Պիւթեան, Նեմեան, Իսթմեան և Ողիմպիական խաղերն։ — 9. Ողիմպիադք։ — 10. Հոմերոս։

1. Քաղաքական օրէնսդրութիւնք։ — Դիւցազնական ժամանակներն Յունաստան շատ մը մանր տէրութիւններ բաժնուած էր իրարմէ անկախ՝ որոնք իրենց առանձին թագաւորներն ունէին։ Բիչ անգամ կը միանային՝ և այն միայն յօգուտ հասարակաց։

Թագաւորը պատերազմի ատեն բանակին զօրավարն էր՝ խաղաղութեան ատեն, դատաւոր և քրմապետ։ Սակայն չէր կրնար բան մը վճռել առանց ազնուականաց խորհրդեան և ասոնք էին այն ազատ մարդկին որոնք կը պարծէին թէ աստուածոյ մը ցեղէն իջած են և անձնական երևելի ձիրքերով զարգարուած էին։ Խորհրդէն ելած վճիռը կը ծանուցուէր ընդհանուր ազատաց ժողովքին դիմաց։ Ազատներէն և ազնուականներէն եօքը կու գային գերիները, որոնք ծառայական գործեր և մանաւանդ տնական բաներ կը տեսնային։

2. Բարք։ — Դիւցազնաց բարքը բերկրալի էր և բուռն, և վրանին սիրող կիրքը՝ փառաց տենչն էր։ Անոր համար պատերազմի ատեն կը ջանային ամենավտանգաւոր դիրքը բռնել։ Ամէն զօրա-

գլուխ սովորաբար իր պատերազմական կառքին վրայէն կը պատերազմէր զոր երկու ձի կը քաշէին, և որ պատերազմողը և կառավարը միայն կը տանէր։ Երկայն սուր մը և երկու նիզակ կ'ունենար։ և ինքզինքը վահանով, սաղաւարտով, զրահով և սրնապանով կը պատապարուէր։ Կերակրոց փափկութիւն չունէին, կերակուրնին խորոված կամ խաշած միս էր։ Բայց սիրելի էր անոնց երգիչներով սեղանին ուրախ բռնել։

3. Արուեստք։ — Դիւցազնական ժամանակները կանայք աւելի ազատութիւն ունէին քան թէ պատմական ժամանակը։ բայց հայրը միայն կրնար նշանել իրեն աղջիկը։ Ծիսոյ սովորաբար փեսան կու տար։ Մանելը և հիւսելը և ուրիշ անական գործերը որ և իցէ պայմանի և աստիճանի կանանց՝ զբաղմունքն էր։ Յունաց մէջ ասպնջականութիւնը նուիրական էր, և զայն արհամարհելը մեծ ամպարշտութիւն կը համարուէր։ և ասպնջականութեամբ սկսած բարեկամութիւնը կը պահուէր և յորդւոց յորդի կ'անցնէր։ Շատ դիւրութեամբ ջերմ և անբաժանելի բարեկամութիւններ կը հաստատէին։ Հռչակաւոր են, Պատրոկլէսի ընդ Աքիլլեայ և Որեստեսի ընդ Պիլատեանց բարեկամութիւնը։

Շատ ծաղկած էր բանաստեղծութիւնը որուն կից էր երաժշտութիւնն ալ, որովհետև սովորութիւն էր ոտանաւորը քնարիւ երգել։ Դիւցազնական հանճարեղութեան բանաստեղծութիւնը բոլորովին պատմական են։ բայց անոնցմէ հին է նուիրական քնարերգութիւնը։ Հոմերոսէն առաջ եղած բանաստեղծներէն կը յիշուին Լինոս, Թամիր, Որֆէոս, Մուսա, Եումոլպ, Պամիս, Տիլեան և Ընէոս։

Ճարտարապետութեան և քանդակագործութեան նկատմամբ որոշ չենք կրնար ըսել, թէ

ինչ վիճակի մէջ էին : Պատկերահանումեան վրայ ալ յիշատակութիւն չկայ Հոմերոսի մէջ :

4. Գիթութիւն : — Այն առենուան իբրև գիտութիւնք կը յիշուին բժշկութիւն, աստղաբաշխութիւն և աշխարհագրութիւն . բայց եթէ առջի երկուքին մէջ Յունաց ծանօթութիւնը չափաւոր էր՝ երրորդին մէջ կրնանք ըսել որ թէ չափաւոր էր և թէ սխալ : Ջերկիրս բոլորչի սփատառակ մը կը կարծէին, երբս կողմէն Ովկիանոս գետով պատած, որ հիւսիսէն ինչուան Դոնուբ կը տարածուէր, արեւմուտքէն ինչուան Գատիճէ նեղուցը, հարաւէն մինչև Ափրիկէի ծովեզերքը, իսկ արեւելքէն մինչև փոքր Ասիա ամբողջ : Ասկէս բաց ՚ի Յունաստանէն, զոր աշխարհքիս կեդրոն կը համարէին՝ կը ճանչնային նաև փոքր Ասիան, Եգիպտոսը և Իտալիան : Արևը առաւօտն Ովկիանոսէն կ՚ելլէր և իրիկունը Ովկիանոս կը մտնէր, և գիշերը հիւսիսէն արևելք կը գառնար ուսկից երկրորդ օրը նորէն կը ծագէր : Վ՚րջապէս երկինքը հաստատուն կամար մը կը համարէին բարձրագագաթ լեռնանց վրայ կոչած :

5. Կրօնք : — Յունաց կրօնքը բազմաստուածութիւն էր, որ բնութեան կերպ կերպ անձնաւորութիւն տուած՝ կը պաշտէին զայն, և իրենց աստուածները կեանք երևելի աշխարհքս կը ներկայացնեն, կէս մ՚ալ վերացեալ ծանօթութիւններ . Արամազդ զոյսը կը ներկայացնէր, Աստուրնիոս ժամանակը, Ուրանոս երկինքը, Պոսիգոն ծովը, Հեփեստոս կրակը, Դեմեարէ երկիրս, Ապողն արևը, Աթահիա գուսան, Աստղիկ գեղեցկութիւն, և Աթենաս գիտութիւն :

Բայց հանգերձ այնչափ աստուածոց պաշտամունքը՝ միաստուածութեան հետքը դեռ կը տես-

նուէր . որովհետև այն աստուածները գաս գաս կը բաժնուէին և ամենքն ալ Արամազդայ գերագոյն իշխանութեանը հպատակ էին : Արամազդ տիեզերաց տէրն էր . կը դղրդէր զայն ըստ հաճոյս՝ միայն գլուխը շարժելով կամ յօնքը պատռելով . ծանօթ էր իրեն անցեալը, ներկայն և ապառնին : Յոլիմպոս կը բնակէր և իր չորս կողմը կը հաւաքուէին իբրև իրեն գերգաստանը՝ աստուածոց գլխաւորները :

6. Բնդմ. Պոգմա : — Ժողովրդը կրօնից պաշտօնեայները կը յարգէր ամենայն կերպով. բայց աւելի անոնք յարգի էին՝ որոնք իբրև աստուածոց ընորհօք զպատուին կրնային գուշակել : Այն պատասխանները՝ զոր աստնք յանուն աստուածոց կու տային՝ պոգմա կ՚ըսուէին . նոյն անունը կը կրէին տեղերն ալ ուսկից պատգամ կը տրուէր : Յունաստանի բազմաթիւ պատգամատեղիներէն ամենէն անուանի և հինը՝ Դոդոնէի և Դելպիսի պատգամատեղիներն են : Երկու տեղէն ալ (՚ի Դոդոնէ Արամազդ և ՚ի Դելպիս Ապողոն) պատգամ կու տային քրմուհւոյ մը բերնով : Դելպիսի պատգամը միաներէն այնչափ աւելի անուանի եղաւ որ անոր խորհրդոյն կը դիմէին Թագաւորք, ազգ և ազնք, Յոյնք և բարբարոսք : Եւ պատգամ հարցընողներուն առատ արիւքը խիստ հարստացած էր, ուստի անոնց վրայ մեծ ազդեցութիւն ունէր . որով կըրնայ ըսուիլ ըստ իմիք Թէ երկայն ատեն գՅունաստան ինքը կառավարեց :

7. Ամֆիկտիոնք : — Ամֆիկտիոնեան ատենին պատակը կրօնական էր և զանազան քաղաքաց գաշնակցութիւն մ՚էր : Շատ ամֆիկտիոնեան ատեաններ կային ՚ի Յունաստան՝ բայց քան զամենը հռչակաւոր կը գերազանցէր Ամֆիկտիոնէն հաստատուածը, որուն անուամբը միւսներն ալ ամֆիկտիոնեան ատեան կ՚ըսուէին :

Տատուերկու Ժողովուրդ ասոր մէջ մաս ունէին, որոց երեսփոխանները տարին երկու անգամ զանազան տեղ կը Ժողվուէին, գարնան՝ի Դեղձիս, և աշնան՝ի Թէրմոպիլէ Անդէլայի մօտ։ Ամփիկտիոնեան ատենի պարտքն էր գլխաւորապէս Դեղձիսի մեհենին և անոր իրաւանց ու նուիրականութեան պահպանութիւնը և համարակաց պաշտամունքը կանոնաւորել։ Կրնան կոչուիլ վայ՝ Ժամանակաւ քաղաքականն ալ ատեցաւ. որովհետև գաշնակից ազգաց մէջ ելած խնդիրները կը քննէր, յանցաւորաց դէմ վճիռ կու տար. երբեմն ինչուան Յունաստանի գործոց վայ դեղձեան պատգամին ձեռօք մեծ ազդեցութիւն ըրեր է։

8. Պիւթիան, Նեմեան, Իսթմեան, Ոլիմպիական խաղերն։ — Ամփիկտիոնեան ատենէն առաջ կարեւորութիւն ունեցան իրենց արգասիքը՝ հասարակաց խաղերը. Պիւթիան խաղերը ամէն հինգ տարին մէյ մը կ'ըլլային՝ի Փոկիս՝ի պատիւ Ապողոնի. Նեմեանները ամէն երեք տարին մէյ մը, Նեմեայ գաշտին վայ Արգոլիս՝ի պատիւ Արամազդայ. նմանապէս Իսթմեան խաղերն ալ երեք տարին մէյ մը կ'ըլլային Կորնթոսի պարտեզին վայ՝ի պատիւ Պոսէոնի։

Իսկ Ոլիմպիական խաղերը խիստ հռչակաւոր էին քան զմիւսները, ամէն հինգ տարին մէյմը կը խաղային Ոլիմպիա Յեղիս, Ալփեոս գետին յաջակողման վայ Ոլիմպիան Արամազդայ մեհենի մը քով։ Հաստատուելուն սորգ ատենը չենք գիտեր, բայց կ'ատենգեն թէ Հերակղէս հաստատեր է։ Ամբողջ խաղին ատեն որ հինգ օր կը տեւէր՝ ամէն թշնամութիւն մէկ դի կը գրուէր. Եղիս գաւառը նուիրական կը հռչակուէր և ոչ ոք զինեալ կրնար հոն ոտք կոխել։ Այն հինգ օրուան մէջ այլ և այլ խաղեր կը խաղային. ինչ-

պէս վազ, ընթացք, գօտեմարտ, պիտեէ խաղ, արձակոյնի։ և հինգը մէկ տեղ՝ հնգամարտ անունը կը կրէին։ Կամաց կամաց նուիրականին վայ մտաւոր կրթութիւններ աւելցան, ինչպէս ընթերցումնէք, երաժշտութիւն, բանաստեղծութիւն։ Յաղթողը վայրենի ձիթենւոյ պսակ մը կ'ընդունէր. բայց յաղթողին իր հայրենի քաղքին մէջ դեռ ուրիշ պատուներ կ'ընէին. քաղաքը կը մտնար փառաւոր կառքով մը, քաղքին պատը քիչ մը կը փլցընէին և նշանակութիւն էր թէ այսպիսի քաղաքացւոյ համար պարսպի պէտք չկայ։ Ազատ կ'ըլլար տուրքերէ և հասարակաց հանդիսից մէջ նշանաւոր տեղ մը կը նստէր։ Այս անունին խաղերուն հանդիսաւոր կ'երեւային խոսուն ոչ միայն Յունաստանի ամէն կողմերէն, այլ և հեռաւոր և օտար աշխարհներէն։ Բայց օտարք խաղին մէջ չէին կրնար մտնալ. մինչդեռ ամէն յոյն կրնար մտնալ, միայն թէ ազատ ըլլար և պատիւը չարատաւորած։

9. Ոլիմպիադ։ — Յաղերուն հաստատուելէն շատ դարեր անցեր էին, երբ եւս էզան ասպարէզին մէջ յաղթողաց անուններըը յաճոյ աւանդել՝ կձեայ քարի վայ քանդակելով Ոլիմպիոյ սրահին մէջ։ Անուանց ցուցակը եղբը ժամանակագրութեան տեղ ծառայեց. և Յոյնք սկսան ժամանակն որոշել ոլիմպիադներով, այսինքն այն հանդիսին պարբերական շրջաններով, 776. Ն. Ք. հանդիսացածէն սկսելով։

10. Հոմերոս։ — Այս գլխոյն մէջ ամփոփուած իրաց մեծ մասը Հոմերոսի Իլիականէն և Ոդիսականէն առնուած է որք աննման են բանաստեղծական գեղեցկութեամբ, որոնց հեղինակութիւնը եթէ պատմական դիպաց նկատմամբ երկբայական ալ ըլլայ. բայց ոչ հոյնական քաղաքական կենաց նկատմամբ նկարուածները։ Այն անմա-

հական քանաստեղծն որուն խանձարուրք ուզեցին ըլլալ եօթն քաղաքք, ասելի հաւանական կ'երևի թէ 'ի Յոնիա ծնած ըլլայ 'ի տասներորդ դարուս: Հարկ չենք սեպեր յիշել Հոմերոսի վրայ 'ի գիտնոց յարուցեալ խնդիրները: Հաւսական ըլլայ ըսել թէ Իլիականին նիւթին Աքիլլեսի բարկութիւնն է, նախ ընդդէմ Ագամեմնոնի, որ Տրոյեայ պաշարման երկարելուն պատճառ եղաւ, եաքը ընդդէմ Հեկտորի, որ քաղքին անհուսալի փութացուց. իսկ Ոդիսականին նիւթը Ոդիսեւսի արկածներն են, որոնց տարաւ՝ երբ 'ի Տրոյեայ յիթակէ կղզին իր տունը կը դառնար:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԴՈՐԱՑԻՈՑ ԱՐՇԱԻԱՆՔԷՆ ՄԻՆՉԵՒ ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

Ագրաւանք Դորացւոց 'ի Պելոպոնէս:

1. Տրոյեայ պատերազմին արդիւնքները Յունաստանի մէջ: — 2. Գաղթականութիւն Դորացւոց:

1. Տրոյեայ պատերազմին արդիւնքները Յունաստանի մէջ: — Տրոյեայ պատերազմին եաքը, Յունաստանի ժողովրդեան վրայ նոր ոգի մը տիրեց և շատ փոփոխութիւններ կրեցին և շատերն ալ պանդխտեցան. կէս մը այն պատերազմով թաղաւորաց տիրանալուն կամ անոնց մահուանը պատճառաւ, կէս մը անոնցմէ ոմանց գարձէն վերջն ալ աքսորուելուն, և կէս մ'ալ մեծամեծ դիպուածոց մարդկանց վրայ կարգ դուբս ազդեցութիւն ընելուն պատճառաւ:

2. Դորացւոց գաղթականութիւնը: — Յիշատակելի ասելի արժանաւորը Դորացւոց գաղթականութիւնն է, որմէ Թողուվ Պարնասոսի հիւսիսային կողմերը, որ երբեմն անուաներ Դորիս կը կո-

ջուբը, Պեղոպոնէս անցան։ Հաւանականաբար իրենց տեղերուն չարժելուն Թեսալիացիք պատճառ եղան որոնք Թեսպրոտիայէն ելլալով գնացին հոն բնակեցան. բայց հին մատենագիրք ուրիշ պատճառ կու տան։ Կ'ըսեն թէ Հերակլեսի որդիքը Եւրիսթեոսի հալածանքներէն բռնադատուած՝ կրկին անգամ փորձեր ընելէն ետքը նորէն դառնալու համար, Թողուցին զՊէ ղոպոնէս և Դորացւոց գացին որոնց Թագաւորը Ժամանակաւ շատ բարերարութիւն ունած էր Հերակլեսէն։ Երկայն ժամանակ խաղաղութեամբ կեցան հոն, մինչև որ երեք Հերակլեան եղբարքը Թեմենոս, Փրեսփոնտես և Ակրիատադեմ ուզեցին նորէն պատերազմ բանալ. և Դորացիք յանձն առին գործակից ըլլալ իրենց՝ անոնց անուամբը և առաջնորդութեամբ պատերազմի երթալով Պեղոպոնէսի դէմ, Տրոյէոյ պատերազմին ութսուն տարի ետքը։

Այն առենը Դիսամենոս որդի Որեստեսի և Թոռն Ագամեմնոնի Պեղոպոնէսի մեծ մասին տէր էր։ Ուզեց Դորացւոց արշաւանքին դէմ կենալ, որոնք նաւապետին նաւարկելով և ծոցն անցնելով Թերակղզւոյն հիւսիսային ծովափանցը վրայ Թափեր էին. բայց իր ընդդիմութիւնը բանի չեկաւ։ Դորացիք յաղթեցին վանեցին զինքը ալեցին իր և ուրիշ ազգութենց. և եղեք մասն բաժնեցին. Արգոլիս Թեմենոսին լինաւ. Մեսսինիան Փրեսփոնտեսի, և Լակոնիան Ակրիատադեմի Պրոկլէս և Եւրիստենէս երկուքեակ որդւոց, արշաւանաց ժամանակ Ակրիատադեմ մեռած ըլլալուն պատճառաւ։ Յաղթուած Դիսամենոսն ու իր հպատակ շատ Աքայեցիք չուզելով ծառայել եկամուտ օտարականաց՝ յարձակեցան Յոնիացւոց վրայ, որ կորընթեան ծոցին ափանց վրայ կը բնակէին. և բըռ-

նադատեցին զանոնք գաղթել ի հայրենեաց. և իրենք այն գաւառին մէջ բնակեցան որ Աքայիա կոչուեցաւ։ Իսկ Յոնիացիք յԱտտիկէ քաշուեցան, մաս մը հոն բնակեցան, և մաս մ'ալ եաքն ի փոքր Ասիա գաղթեցին։ Իսկ Դորացիք տարածուելով՝ կամաց կամաց գրաւեցին Սիկիւոնը, Փլիոնդը, Կորնթոսը, Մեգարան և Եգինան. Յանացին զԱտտիկէն ալ ձեռք բերել բայց չյաջողեցան։ Դորացւոց այս արշաւանքէն եաքը, որ սովորաբար Դարձ Հերակլեանց կը կոչուի, Հելլենական չորս ցեղերն իրենց հայրենական երկիրը չփոխեցին, միայն գաղթականներ խաւրեցին գուրս տեղէր։ Ասկէ վերջը, թէպէտ կան գեղ անատյգ բաներ՝ բայց կընայ ըսուիլ թէ կը գտգրի առասպելախառն ժամանակը, և կըսկսի Յունաց բուն պատմութիւնը։

ԳԼՈՒԽ Բ.

Սպարտա մինչև պատմական պատերազմաց վերջը։

1. Դորացիք ի Լակոնիա։ — 2. Սպարտացիք, Եւրիկեանք, Իլոտք։ — 3. Լիկուրգոս։ — 4. Քաղաքական օրէնք Սպարտայ։ — 5. Կալուածոց հաւասարութիւն։ — 6. Հասարակաց սեղաններ։ — 7. Կրթութիւն։ — 8. Զինուորական կրթութիւն։ — 9. Մեսսենական առաջին պատերազմ. Արիստոմենես։ — 10. Մեսսենական երկրորդ պատերազմ. Արիստոմենես. Տիրտեոս։ — 11. Ջօրութիւն Սպարտայ։

1. Դորացիք ի Լակոնիա։ — Եւրիսթենէս և Պրոկլէս, երբոր Լակոնիոյ ալեցին, չի բաժնեցին զայն մէջերնին, այլ երկուքը միասին թա-

գաւօրեցին, և երկուքն ալ իրենց Թագաւորական իշխանութիւնն իրենց ժառանգաց աւանդեցին: Երկիշխանութեան մը հիմնադիր եղան՝ որ պատմութեան մէջ միակ դէպք մ'է՝ ինչը դար տևեց. բայց ցեղերին իրենց անուամբը չի կոչուեցաւ, այլ մէկ ցեղն Ախիաեան կոչուեցաւ Եւրիսթենեսի Ախիաէս որդւոյն անուամբ, և միւսը Եւրիպոնտեան Պրակլէսի Եւրիպոնտէոս Թոռան անուամբ:

2. Սպարտացի, Բերիկեանք, Իլոթք: — Լակեդեմոնիոյ բնակիչքն երեք դաս կը բաժնուին, Սպարտացիք և Բերիկեանք, Իլոտք: Առջիններըը Դորացիք էին որ հերակլեան երկու եղբարց հետ եկան, և աս անունն առին 'ի Սպարտա բնակելնուն համար. և հզօր աշխարհակալ ըլլալնուն համար՝ իրենց միայն սեփհականեցին ամենայն քաղաքական իրաւունքները:

Բերիկեանք տէրտոյն բնակիչց այն մարդիկն էին որ Դորացիներէն յաղթուելնէն վերջը չէլան իրենց երկրէն, և Դորացւոց հետ կամ եաքը եկողօտարականները, բայց Սպարտական քաղաքակ ցուրեան պատիւը չունէին: Անոնք թէպէտ անձնական ազատութիւն ունէին, բայց քաղաքական վարչութեան մէջ մարդ չունէին, և Սպարտացիներէն կը կախուէին և անոնց տարեկան հարկ կու տային:

Իլիոտաց դասը աւելի բազմաթիւն էր, որ կը բաղկանար Աքայեցւոց հին գերիներէն և բոլոր աքայեցիներէն որ երբեմն ազատք էին և Դորացւոց դէմ մեծապէս դիմացան. (ասոնց մէջն էին Իլոսի բնակիչքն ուսկից ծագեցաւ Իլոտացի անունը), և հետագայ պատերազմաց մէջ բռնած գերիներէն: Մարդկութեան խակ իրաւունքներէն զրկուած ըլլալով աւելի երբեմն ինչք կը գործածուէին քան թէ երբեմն մարդ:

Գերի էին տէրութեան համ անոր որուն տէրութիւնը վարձու կուտար. մասամբ 'ի Սպարտա կը բնակէին ամենանուաստ ծառայութիւններ ընելու համար, չատերն ալ գիւղերը կը բնակէին բուն երկրատերանց մշակներն էին, և երկիրը կը մշակէին ու պարտական էին բերքերուն մեծ մասն սպարտացի տերանց տալու: Նե տիրող ցեղին նախատանաց ու թշնամանաց ալ նիւթ էին միւս:

3. Լիւրգոս: — Այն պատերազմունքը զոր Սպարտացիք դանդաղ բայց չարունակ կերպով մղեցին մերձակայ ժողովրդոց հետ իշխանութիւննին ընդարձակելու և Պելոպոնէսի տէր աղգ մը ըլլալու համար, իրենց ներքին երկպառակութեանց արդիւնք մը չեղան: Այս երկպառակութիւնները հետ զհետէ կը տկարացնէին ղքաղաքը, և Սպարտա աւելի տխուր վիճակի մէջ կը ձգեին, թէ որ իննեորդ դարուն կեսին Լիկուրգոս չազատէր զանիկայ:

Լիկուրգոս Եւրիպոնտեան ցեղէն էր և Պոլիդեկտոս Թագաւորին պզտիկ եղբայրն էր: Երբ մեռաւ Պոլիդեկտոս, գերբրին էր Լիկուրգոսի արքայական գահին տէր ըլլալ. բայց, պատուաւոր կերպով չաւ սեպեց իրեն խնամակալ իր պզտիկ եղբօրորդին Քարիլաւոսի՝ կառավարել: Վերջը ճամբայ ելաւ գնաց Կրետէ կղզին ուր գիտեց Մինոսի օրէնագրութիւնը, գնաց Յոնիա և Եգիպտոս, և ըստ ոմանց նաև Լիբիա և Հնդկաստան: Դառնալով 'ի Սպարտա անիշխանութեան մէջ գտաւ զայն, և միտքը դրաւ գործման տանել նոր օրէնքներով. և այն գիտաւորութեան որչափ որ նպաստող եղան գլխաւոր քաղաքացիքը և մանաւորապէս Քարիլաոս Թագաւորն, սակայն ոչ նուազ հակառակներ ալ եղան: Սակայն յաղթեց և

իրեն օրհնագրուԹիւնը գործադրուեցաւ: Եւ նոյն միջոց ուրիշ անձնաւորուԹիւն մ՚ալ ըրաւ: Իրաւ իշխանները և ժողովուրդը ժողվեց, առնոց խմացուց որ ինքը Դեղփիս կ՚երԹայ և զածնեղոսն համար պատգամ հարցընելու, և ուզեց որ ամենքը երդմնէք ընեն որ ալիսի չփոփոխեն իրեն դրած օրինաց մէկ կէտն ալ՝ քանի որ ինքը չէ դարձած: Իսկ երբ պատգամը պատասխանեց ԹԷ Սպարտա փառաց ՚ի փառս պիտի բարձրանայ քանի որ իրեն դրած օրէնքները կը պահէ, պատասխանը իրեն քաղաքացեացը խրկեց՝ և որպէս զի իրենց երդմունքէն ազատ չըլլան, կամքը անօԹի մեռաւ:

4. Սպարտայի փաղաքական կազմուԹիւն: — Ըստ Լիկուրգոսի օրինաց, Սպարտայի գերագոյն հեղինակուԹիւնքն էին, երկու Թագաւոր, ծերակոյտ, պարէաք և ժողովուրդը: Երկու Թագաւորքն էին առաջնորդելին բանակացը, և անսահման իշխանուԹիւն մը կը բանեցնէին պատերազմի առեն, բայց խաղաղուԹեան առեն ուրիշ քաղաքացոց հաւասար հպատակ էին օրինաց, և աւելի առանձնաշնորհ պատիւներ ունէին՝ քան ԹԷ իշխանուԹիւն:

Ծերակոյտը երեսուն հոգի էին, որոնց Թուոյն մէջն էին երկու Թագաւորներն ալ ըստ երեւանց: Միւս անդամները ժողովրդէն կ՚ընտրուէին ցկեանս, և պատասխանատու չէին: Ծերակուտին իշխանուԹիւնը մեծ էր, որովհետև ընելի առաջարկուԹիւնները ինքը կը պատրաստէր ժողովրդեան առջև գնելու և դատաստանները ինքը կը կատարէր, ինչուան մահուան ալ կրնար դատապարտել:

Եփորոսք, Ոսկիկանք, հինգ հոգի էին, ամ յամէ ժողովրդէն կ՚ընտրուէին: Անոնց իշխանուԹիւնը նախ աննշան բան մ՚էր, ետքը երբ

Թալով այնչափ մեծցաւ որ ՏէրուԹեան ամէն իշխանուԹենց վրայ տիրեց:

Առնք օրինաց պահպանուԹեան վրայ կը հսկէին, ժողովրդը ժողովքի կը կանչէին, և ատորակարգ գաւառօրներէն հաշիւ կը պահանջէին, և ինչուան կրնային բռնել Թագաւորնեը և առաջարկել որ գահընկեց ըլլան և կամ պատժուին:

Ժողովրդէ մանաւանդ էր կառավարուԹեան ոչ միայն ծերակոյտն և պարեհանները ընտրելու մէջ, այլ և պարեւտաց և կամ Թագաւորաց առաջարկը ընդունելու կամ մերժելու մէջն ալ: Այս վախճանաւ ամիսը մէյ մը ժողով կ՚ըլլար, և սակայն ոչ օր կրնար առաջարկուԹիւնները քննուԹեան տակ ձգել և ոչ ալ նոր առաջարկ ընել:

5. Կալուածոյ հաւասարուԹիւն: — Ըստ կարելւոյն անհաւասարուԹիւնը վերցնելու համար Լիկուրգոս երկիրներու բաժանումնէք մ՚ըրաւ, և ոսկւոյ և արծաԹոյ արժէքն ոչնչացուց: Առաջին հրովարտակով 39,000 կտոր բաժնուեցաւ երկիրը, որուն 9,000ը Սպարտացւոց և 30,000ը Լակոնիոյ միւս բնակիչաց: Երկրորդ հրովարտակով երկաԹէ դրամը միայն գործածական սեպուեցաւ, տասը հնասը կրելու համար (որ գրեԹէ 500 ֆրանգ էր) զոյգ մը եզ պէտք էր:

Այս գիտմամբ զեղխուԹիւնը, զբօսական արհեստները, վաճառականուԹիւնն անգամ արգիլուեցաւ: Որով ոչ օտարականք Սպարտա կըրնային մտնալ, բայց եԹէ քանի մը որոշեալ օրեր, և ոչ ալ Սպարտացիք կրնային դուրս ճամբորդուԹիւն ընել առանց հրամանի:

6. Հասարակաց Սեղան: — Որպէս զի քաղաքացիք կերող ալբեցող և մեղի չվարժին՝ հասարակաց սեղան հաստատեց յոր պիտի գային ամէն

արու մարդիկ գրեթէ տասնուհինգ հոգւով խումբ խումբ բաժնուած։

Այս սեղանները խիստ չափաւոր էին. և իւրաքանչիւր սեղանակից պարտաւորւեալ էր ամեն ամիս բերելու իրեն բաժինը, գարեկ ալիւր, պանիր, գինի, թուզ, և քիչ մը սակ կերակրոց ծախքին համար։ Անոնց ամենէն համեղ կերակուրն էր սև արգանակն որ չգիտցուիր թէ ինչպէս կը շինուէր։

7. Դասախօսութիւն։ — Հայրենեաց կարօտութեան առեն անօգուտ քաղաքացիներ չջատցընելու նպատակաւ, Լիկուրգոս բարբարոսաբար հրամայեց որ տգեղ և տկար կազմուածքով ծնած տղաքը Տայգետոս գետը նետուին որպէս զի մեռնին։ Իսկ միւսները ծնողաց խնամոց կը յանձնէին ինչուան եօթը տարեկան հասակին։ Եօթը տարեկան ըլլալուն պէս Տէրութիւնը կը յանձնէր հասարակաց վարպետներու որ զանոնք դաստիարակեն։ Նախ ցուրտ, տաք, քաղց և ծարաւ կրելու կը վարժեցնէին. կը ծեծէին և կը չարչարէին, և առանց ցաւ զգալու նշան մը տալու՝ ծեծի և չարաչարութեանց համբերել պիտի վարժէին. բոկոտն կը քալէին առանց ոտքին անդին նայելու, միշտ աչքը դէպ՝ի գետին բռնած և ձեռքերը վերարկուին տակ գրած. կրաւոր հնազանդութիւն և՝ի չարգանս ծեղրուհեաց. կը կրթէին վազելու, բռնամարտ ընելու և ամէն զինաշարժութեանց* և ամէն տեսակ հրահանգաց որ զմարդ աշխոյժ և կորովի կ՝ընեն. չհարցուած՝ պիտի չխօսէին, և՝ի հարկէ պատասխան մը տալու առեն՝ ամենայն կարելի համառօտութեամբ պիտի տրուէր. և ինչուան գողութիւն ներուած էր՝ որպէս զի անով խորագիտութեան և ճարպիկութեան վարժին, այլ գող բռնուողին, համառօտ խօսելու

ոսիպուած վարժութիւն գարձաւ Սպարտացւոց ձիչտ և վճռական խօսել, զոր Լաքոնական ոճ կոչեցին։

Սպարտացիք քնարաւ և արնգաւ երգել ալ գիտէին և բոլորովին խամ չէին բանաստեղծութեան մէջ. բայց մտաց կրթութիւնը մարմնոյն կրթութեան համեմատութեամբ խիստ չափաւոր էր։

Գիտուն տարեկան ըլլալուն պէս գպրոցական կրթութեան ընթացքը կը լրանար։ Սպարտացի պատանին անկէ վերջ զինուք պիտի ծառայէր հայրենեաց, ուր և երբ պէտք ըլլար, և պարտքն էր միշտ քաղքին մէջ պատրաստ կենալ իշխանաց հրամաններուն հնազանդելու։

Երբ երեսուն տարեկան կ՝ըլլար՝ չափահաս մարդիկներու կարգը կ՝անցնէր, ժողովրդեան առեանը մտնալու և ամուսնանալու իրաւունք կ՝ունենար։

Կորովի մանկանց մայր ըլլալու համար աղջկանց ալ խիստ և այրական կրթութիւն կը տրուէր։ Կը վարժեցնէին ամէն տեսակ չարքաշութեանց. վազել, պատերազմ խաղալ և գօտեկռիւն սպարտուհեաց զբօսանքն էր, անոր համար քաջառողջ և ուժեղ, սրտիւ աննկուն և կարգէ գուրս վայրագ էին ոգւով՝ սպարտացի կանայք։

8. Զինուորական օրէնք։ — Այս կրթութեամբ Սպարտա աւելի զօրանիստ չէնք մ՝էր քան թէ քաղաք մը պիտի հանդիսանայր։ Լիկուրգոսի զինուորական օրէնից նկատմամբ՝ որ նախնեաց զարմանալի նիւթ եղաւ, առանց երկարօրէն խօսելու այսչափս ըսենք որ բանակը մեծաւ արագութեամբ և ճշդութեամբ կը շարժէր. առթնամին կը գիմէին անչափօթ կարգաւ՝ի ձայն սրնգի, մազերնին գեղեցիկ կերպով շինած և զգեստաւորուն ալ կոկ որ անսովոր է հայրենեաց

մէջ և տերևներով պսակուած. և թէ կատաղած կը պատերազմէին յաղթելու կամ մեռնելու փափաքանօք լցուած, որովհետև դասալիք կամ վատ զինուորին անարգ վիճակն անտանելի էր։

9. Մեսենեան առաջին պատերազմը։ Արիստոդեմ։— Կարելի՞ էր որ այսպիսի օրէնք և կրթութիւն ունեցող ժողովուրդ մը խաղաղութիւն սիրէր։ Սպարտացիք մեկէն պատերազմ բացին իրենց մերձակայիցը դէմ. բայց մենք անկարևորները թողլով մեկդի՝ պատմենք միայն այն պատերազմները որ Մեսենացւոց հետ ըրին։ Այս երկու համազգի (երկուքն ալ դորացի են) ժողովրդոց մէջ եղբայրասէց չար նախանձ մը կար որ պիտի դուրս ցատկէր բուռն կերպով՝ այս կամ այն առթով։ Առիթ կամ այն նախատինքն եղաւ որ մեկ քանի մեսենացի պատանիք սպարտացի օրիորդաց ըրին Լիմնադիսեան Դիանայ տանն օր Մեսենիոյ սահմանագլխոյն մօտ, և կամ Եւենոս սպարտացւոյն Պոլիքարէս մեսենացւոյն կռիւը գողցած ըլլալն։ Այսպէսովն է որ Սպարտացիք պատերազմ հրատարակեցին 743ին. և երկմտանք ըրին որ Սպարտա չտեսնան ինչուան որ Մեսենիա չըկործանեն։ Յանկարծակի Ամիկլա սահմանագլուխ քաղքին տիրեցին, և հօն մեկէն ամրացան։ Անկէ շատ մը յարձակմունքներ ըրին երկրին ասրըշակելու համար, և այն չատով որ Մեսենացւոց պիտի հանդիպին բաց դաշտի վրայ. բայց Մեսենացւոց Եւփայես թագաւորը զմեսենացիս պատերազմի անվարժ համարելով, քաղքին պահպանութեան համար վանունք քաղքին մէջ փակած կը պահէր։ Չորս տարի այս կերպով դնաց պատերազմը առանց որոշ եզք մը ունենալու։

Էնդեբորգ տարին Թէոպոմպոսի և Պոլիդո-

րոսի առաջնորդութեամբ սպարտացի նոր բանակ մը Մեսենացւոց բոլոր բանակին հանդիպեցաւ որուն կը զօրավարէր Եւփայես։ Առաջին պատերազմ մը սկսաւ, այնպէս տիարացան Մեսենացիք որ Իթոմոս լերան վրայ եղած ամառնի բերդն ապաւինեցան։

Պատգամ հարցուցին, և պատասխան եղաւ Թէ գիշերանց Թագաւորական տնէն կոյս աղջիկ մը պէտք է զոհել դժոխոց աստուածոյն։ Եւ վիճակը Լիկիսկոսի աղջկան վրայ եկաւ, բայց Լիկիսկոս ապահովութեան համար աղջիկն առաւ Սպարտա փախաւ։ Ան առեն Արիստոդեմ որ նոյնպէս Թագաւորազն էր, իր աղջիկը տուաւ. բայց փեսան յանդգնեցաւ ազատել աղջիկը պատիւը վտանգի մէջ դնելով. ըսաւ Թէ պատգամին պահանջած պայմանները չունի աղջկին որովհետև արդէն ինն էր աղջկին և քիչ առնէն գաւակ պիտի ունենար։ Չայրացած այս բանիս վրայ Արիստոդեմ սպաննեց աղջկին իր ձեռքով և ցցուց Թէ փեսան կը սպասիսէ։

Ան գործով Մեսենացիք աստուծոյ հետ հաշտուած համարուելով, մեծ վստահութեամբ պատերազմ հրատարակեցին։ Ան պատերազմին մէջ Եւփայես վիրաւորեցաւ, և քանի մը օրէն եռքը մեռաւ, և որովհետև որդի չունէր՝ Արիստոդեմ Թագաւոր ընտրուեցաւ։ Որ Թեպետև քանի մը յաջողութիւններ ունեցաւ, բայց չըկրցաւ Թշնամին վռնտել. ուստի հաղիւ վեց տարի Թագաւորելով՝ յուսահատաբար ինք գինքն իր աղջկան գերեզմանին վրայ սպաննեց։ Քառ Մեսենացիք, քանի մը ամիս ալ գիմանալէն եռքը, սովէն նեղուելով անձնատուր ըլլալու ստիպուեցան։ Մեսենացւոց չատը Արկադիա, Սիկիոն, Արգոս և Ելևսիս փախան. չատերը իրենց հին քաղաքներուն մէջ մնացին։ Քսան

տարի քշեց պատերազմը՝ այս դէպքս 723ին հանդիպած կ՚ըլլայ: Մեսսենիա՝ Սպարտիոյ իշխանութեան հպատակեցաւ, և հօն մնացած Մեսսենացիք ալ Իլիոգինէրէն ալ աւելի նեղութեամբ սպիտութեան երդմունք ընել որ ալ չապստամբին, և թէ ամէն տարի իրենց երկրին բերքին կէսը Սպարտա խրկեն:

10. Եւիրտր Մեսսենիան պոլերազմ. Արիստոմենես, Տէրթեոս: — Բայց Մեսսենացիք Իթոմոս լերան առնուելէն 39 տարի ետքը, որ է 688ին, ապստամբեցան Արիստոմենես անուանիացեալին առաջնորդութեամբ: Այս գիւցազն պատերազմի գաշտին մէջ այնպիսի քաջութիւններ և այնպիսի խիզախ քաջութիւններ ըրաւ, որ Սպարտա սարսափած Դելփիս պատգամ հարցուց. պատգամ եկաւ որ Աթենքէն զօրավար մը խնդրեն: Աթենացիք ծաղրածելու համար Սպարտացւոց վարժապետ մը խաբեցին որ բախած համարուած էր, այս յիմարը Տիրթեոս բանաստեղծն էր, որ իր պատերազմական տաղերովը զՍպարտացիս քաջութեամբ վառեց:

Անոնց ուժով պատերազմը շարունակեցին, յորում գրեթէ բոլոր Պելոպոնեսի բնակիչք մտան ունէին: Եւ շատ յաղթութիւններ ըրաւ Արիստոմենես, յորոց է և Սանեկլարի հռչակաւոր յաղթութիւն, երբ իր գաշնակիցն Արիստոկրատ Արկադիոյ թագաւորը զինքը մատնեց անուանի պատերազմի մը միջ: Իրերովին յաղթուած, ողջ մնացողաց հետ իրա բերդը քաշուեցաւ, ուր որ տասնուեմեկ տարի գիւցազնաբար դիմացաւ: Փիչէր մը երբ յորդ անձրեւ կու գար, գիչերապահները տեղերնին չկրնան. տա բանս իմանալով Սպարտացիք շուտ մը աճապարեցին պարսպին վեր ելան և բերդը մտան: Արիստոմենես ամենէն առաջ՝ ի զէն կ՚աղաղակէ, և սաստիկ պատերազմ մը կը սկսի, որ իրեք օր և իրեք գիչեր տեւեց: Եւ ստիպուած եղաւ քաշուելոյն և ինդրեցին Թշնամիէն որ դուրս կարենան ելլալ, Սպարտացիք կամ ակնածութեան համար կամ որպէս զի այն մնացեալ գիւցազունքը վերջին յուսահատութեամբ պատերազմի չգրգռեն, Թոյլ տուին որ ելլան երթան:

Այս պատերազմս ետքը որ 668ին լմնցաւ, Մեսսենացւոց վիճակը խիստ գէչցաւ: Իրենցմէ ոմանք Սիկիլիա գաղթեցին, և բնակեցան Զանկլէաս քաղքին մէջ, որուն անունը Մեսսենա դրին, որ հիմա քիչ մը փոխուած Մեսսինա անունն կը կրէ: Արիստոմէն Հռոդոս կղզին քաշուեցաւ և հօն մեռաւ:

11. Սպարթայի Էվհանութիւնը: — Այս յաղթութիւնները Սպարտացւոց արիւնը ծըծեցին, և շատ աւելի ետքը հազիւ ինքը զինքը գտաւ Սպարտա: Բայց հազիւ թէ զօրացաւ՝ նորէն աշխարհակալութեան ձեռք զարկաւ՝ սիրեց Արգեացւոց կամացը դէմ Թիկեա քաղքին, և Արգեացւոց կամացն ալ դէմ Թէբէա քաղաքն և կենուբեա գաւառը գրաւեցին: Որով Պելոպոնեսի երկու հինգերորդ մասը հնազանդեցան քաղքի մը միայն, և շահու դուռ եղան Սպարտացւոց միայն: Սպարթիոյ իշխանութեանը հզպատակ էր, և անկէ կը վախնար Թէբակզզին ամբողջ, ծանօթ էր և յարգելի միանգամայն ոչ միայն Յունաստանի մէջ կողմերուն, այլ հեռու աշխարհներուն ալ: Այսոր համար Կրէսոս Լիւդիոյ թագաւորն ալ բազում պարգևօք անոր բարեկամութիւնը և գաշնագրութիւնը փընտռեց:

ԹԱԳԱՒՈՐՔ

ՍՊԱՐՏԱՑԻ համ ԼԱԿԵԴԵՄՈՆԻ։

—

Սպարտոն Ըագ. Պելոպիդեան		1880
Լեվկտր		1742
Մէնէս և Պոլիգաւտոն		1680
Եւրոտաս		1651
Լակեդեմոն Ամիկլաս Աւրգալոս Կինադոնաս Եպալոս Հեպպոկոն Տինտարոս Տեհեվաս		1577 1240

Հերակղեանք Պեղոպոնեսէն կը վռնտուին իբր 1300։

Որեսդէս	1240	1192
Դիսամենէս	1192	1190

Հերակղեանք դարձեալ կը մտնեն Պելոպոնէս դարուցի Հելլենաց հետ, 1190։

Աբիտոդեմոս	1190	1186

Թագաւորութիւնը կը բաժնուի։

Ա. — ՃԻՒղ։ ԵՒՐԻՍԹԵՆԷՍ ԿԱՄ ԱԳԻՍԵՈՒՆ։

Եւրիսթենէս Ագիս Եգեստրատոս Լաբոտաս	1186	986
Դորիսոս	986	957
Ագիսիլաս	957	915
Արքեղայոս	915	855
Տելեկլոս	855	815
Ալկամենէս	815	776
Պոլիդորոս	776	724
Եւրիկրատէս Ա.	724	687
Անաքսանդրոս	687	652
Եւրիկրատէս Բ.	652	645
Լեոն	645	597
Անաքսանդրիտէս	597	519
Կլէոմենէս Ա.	519	491
Լեոնիդաս Ա.	491	480
Կլէոմբրոտ Ա.	480	479
Պաւսանիաս	479	469
Պլիստարգոս	469	466
Պլիստոդեմոս	466	408
Պաւսանիաս	408	394
Ագեսիպոլիս Ա.	394	380
Կլէոմպրոտ Բ.	380	371
Ագեսիպոլիս Բ.	371	370
Կլէոմենէս Բ.	370	309
Արէոս Ա.	309	265
Ակրոտատոս	265	264
Արէոս Բ.	264	257
Լեոնիդաս Բ.	257	254
Կլէոմպրոտ Գ.	254	239

Լեոնիդաս Բ. վերսաին . . 239 238
Կլեոմենէս Գ. 238 219
Ագեսիպոլիս Գ. . . . 219

Բ. — ՃԻՒՂ: ՊՐՈԿԼԻԴԵԱՆՔ ԿԱՄ

ԵՒՐԻՊՈՆՏԻՏԵԱՆՔ:

Պրոկլէս
Սոս
Եւրիւպոն
Պրիւտանէս
Եւնոմոս
Պոլիտէկտոս
. . . 1186 898

Լեգուբկոս 898

Քաբիլաւոս 898 809
Նիկանդէր 809 775
Թէոպոմպոս 770 720
Զեւքսիդամոս 725 690
Աինաքսիդամոս 690 645
Ակասիկլէս 645 597
Արիսդոն 597 510
Դեմարատ 510 491
Լեոտիքիտէս 491 469
Ագիդամոս Ա. . . . 469 427
Ագիս Ա. 427 400
Ագեսիլաս 400 361
Ագիդամոս Բ. . . . 361 333
Ագիս Բ. 333 330
Եւդամիդաս Ա. . . . 330 296
Ագիդամոս Գ. . . . 296 261
Եւդամիդաս Բ. . . . 261 244

Ագիս Գ. 244 240
Եւրիդամոս 240 234
Եւրիկլէդաս 234 219

ՎԵՐՋ ՀԵՐԱԿԱՊԱՆՑ:

Լեգուբկոս
Մնաքանիդաս
Նաբիս
} բռնաւորք . 219 192

Սպարտա Աքայեցւոց դաշնակցուեցան մէջ կը մտնայ Փիլոպեմենի ձեռքով 191:

Յունաստան Հռոմայեցւոյ գաւառ կ'ըլլայ, 146:

ԳԼՈՒԽ Գ.

Արեւը պարսկաց պատերազմներուն առջեւ։

1. Կոդրոս։ — 2. Արխոնք։ — 3. Դրակոն։ — 4. Կղէոն։ — 5. Սողոն։ — 6. Ժողովրդեան չորս դաս բաժնուիլը։ — 7. Քաղաքական սահմանադրութիւն. Արխոնից իշխանութիւնը. Վերակոչ. Ժողովրդեան ատեան. Արիոսպագեան ատեան։ — 8. Ջանազան կարգադրութիւնք։ — 9. Սողոնի ճամբորդութիւնները և մահը։ — 10. Պիսիստրատ։ — 11. Իպպիաս և Իպպարքոս. Ամոդիոս և Արիստոգիտոն։ — 12. Իպպիասայ մահը։ — 13. Կղեսթենէս. Անոր օրէնադրական փոփոխութիւնքն. Խեցեկոչ վճիռ։ — 14. Ագինէի դէմ եղած պատերազմունք։

1. Կոդրոս։ — Ագինէի մէջ Կոդրոս կը թագաւորէր, երբ Դորացիք Պելոպոնեսէն Ատտիկէի դէմ գնացին։ Վասն զի Դելփիսի պատգամը յաղթութիւն աւետած էր անոնց եթէ չսպաննեն Ագինէի թագաւորը. Կոդրոս այս բանս իմանալով՝ գեղացի ծպտեալ քաղքէն ելաւ, և կռիւ բացաւ քանի մը թշնամի զինուորաց հետ՝ որոնք զինքն սպաննեցին։ Դորացիք երբ ձանչցան սպաննուողին ով ըլլալը յաղթութենէն յուսահատած՝ տեղերնին դարձան։

2. Արխոնք։ — Այն վեհանձն զոհէն եաքը, կը կարծուի, կամ կարծուեցաւ թէ ոչ ոք ալ արժան էր թագաւոր պատուանունը կրելու Ագինէի մէջ, և իրմէ եաքը Արխոն դրուեցաւ, այսինքն է վարիչ իշխան։ Առաջին արխոն Կոդրոսի որդին Մեդոն եղաւ որ տասուերկու յաջորդ ունեցաւ։ 752ին տասից վերջինը մեռնելով՝ արխոնի իշխանութեան տեւողութիւնը տասը տարի եղաւ։ Եօթը՝ տանտամեայ արխոնք եղան, որոնցմէ եաքը 682ին, Արխոնութիւնը միամեայ եղաւ, և փոխանակ մէկի՝ ինը, արխոնք կ'ընտրուէին։

Այս քաղաքական փոփոխութիւններէն դուրս, ուրիշ բան չենք գիտեր Ագինէի վրայ երկար ատեն. բայց յայտնի է որ Ագինէ մեծ յաջողութեան և բարեկարգութեան մէջ էր, այնպէս որ 624ին օրէնսդրութեան կարօտացաւ։

3. Դրակոն։ — Օրէնսգրութեան պաշտօնը Դրակոնին տրուեցաւ, և ինքն այնպիսի խիստ օրէնքներ գրաւ որ ըսին Թէ արիւնով գրուած էին։ Մահուամբ կը պատժէր Թէ գաւառկութիւնը և բանջարեղէն ու պտղոյ գողութիւնը, և Թէ մարդասպանութիւնը և սեղանապուտութիւնը. և կ'ուանգէն Թէ ըսած ըլլայ՝ որ պզտիկ յանցանքները մահու պատուհասին արժանի են, և մեծերուն յանցանաց ալ հատասարազօր պատիժ մը չէր կրցած գտնալ։

4. Կղէոն։ — Դրակոնի օրէնքները անգործ մնացին, և քաղաքացւոց այլ և այլ դասերուն մէջ անկարգութիւնն և երկպառակութիւնները երթալով կը շատնային։ Այս բաներէս օգուտ քաղել ուզելով Կղէոն՝ որ աղնուականաց դասէն էր, փառասիրութեամբ ուզեց արքունի գահը կանգնել և 612ին տիրեց միջնաբերդին։ Մեծ երկպառակ կուսակցութիւնները մեկնի միանալով յարձակեցան միջնաբերդին վրայ, և երբ Կղէոնեանք սովէն նեղը մնած սոխպուեցան անձնատուր ըլլալ, մեծաւ մասամբ սպաննուեցան։ Եւ ասկէ եաքն ալ չդադրեցան անկարգութիւնները. ինչուան որ ամէն կողմնակցու-

թիւնները միացան Սողոնի ձեռքով։

Թիւնք միաձայնեցան և ընտրեցին զՍոլոն որ նոր օրէնքներ դնէ:

Ասոր ժամանակ լիակատար իշխանութեամբ գլուխ սկսան գրել 594ին:

5. Սոլոն: — Կոդրոսի ցեղէն էր Սոլոն: Իր հայրը Եւփորիոն շռայլութեամբ վատնելով իրեն ժառանգութիւնը, որպէս զի այս ինքնը գարմանի երիտասարդ տարիքը վաճառականութիւն կ'ընէր: Վաճառականութեամբ օտար աշխարհներ պտըտելով, շատ մտագրութեամբ գիտեց քննեց զանազան ազգաց սովորութիւնները և կարգերը, և շատ ծանօթութիւններով գանձ մը ամբարեց: Մանգամայն բանաստեղծ ալ էր: Աթենք գառնալէն ետքը բանաստեղծութիւնը ձեռք առաւ զԱթենացիս վառելու որ զԱալամինա կղզին նորէն ձեռք բերին, զոր Մեգարացիք գրաւեր էին: Իր խորհրդովը էր որ Ամֆիկտիոնականք պատերազմ հրատարակեցին Կիրացւոց դէմ, որոնք յանգըգնեցան Դելփիսի տաճարին գանձերը կողոպտել, և իրմով յաջողեցաւ այն պատերազմը: Ասոր գործերով սաստիկ համարմունքով և ազնուազգի ըլլալուն պատճառաւ, և իր խոհեմութեան համար, կարծես թէ մի միայն մարդն էր որ կրնար երաշխիք քաղքի մը նոր օրէնք դնել, օրինաց նոր գիրք մը հրատարակելով:

6. Ժողովրդեան լուծ կարգ բաժնուիլը: — Սոլոն սկսաւ գործել. ծննդեամբ ազնուականութեան առեղծ՝ ուրիշ ազնուականութիւն անուշ, Ատթիկէի Ժողովուրդը չորս կարգ բաժնեց՝ իրենց ընչիքը համեմատ: Առջի երեք կարգի մարդիկ քաղաքական ամէն իշխանութեան կրնային հասնիլ, բայց գլխաւոր իշխանութեանց, ինչպէս արխոնութեանը՝ միայն առջի կարգին մարդիկ կրնային հասնիլ: Իսկ վերջին կարգը զուրկ

էր ամէն իշխանութենէ. բայց ատեաններուն ձայնարկութեամբ ինչքը չատցնելով վերագրին կարգը անցնիլ և անոր իրաւունքները վայելել: Ժողովրդեան տաճարի մէջն ալ կրնային մտնալ:

7. Դատական ատեանները. Արիսթոպագոս, Մերակոյ. Ժողովրդեան ատեան. Արիսթոպագոսի ատեան: — Գառավարութիւնը չորս քաղաքական ընկերութիւն կը բաժնուէր. Ազնիք, ծերակոյս, ժողովրդեան ատեան և Արիսթոպագոսի ատեան:

Արիոնները Սոլոնին հաստատապետութեան, գլուխ գրուելուն ինք հոգի, տարեկան ընտրութեամբ, և գործադիր իշխանութիւն ունէին: Պաշտօն առնելու տարի երդում կ'ընէին օրէնքները պահել. իսկ երբոր պաշտօնը կը թողուին հաշիւ կու տային Արիսթոպագոսի տարիին, թէ ինչպէս գործածեր էն իշխանութիւնին. բայց պաշտօնի տարի անբռնաբարելի էին:

Մերակոյն 400 քաղաքացիներէ կը ձեռնարկ տարեկան ընտրութեամբ, բոլորն ալ առջի երեք կարգէն: Ընտրելի ըլլալու համար բաւական էր երեսուն տարեկան հասակին: Մերակոյն տասուերկու կարգ կը բաժնուէր, որոնք տասուսոյն ընթացիկ մէջ փոփոխակի երբորու կը յաջորդէին, ամբողջ ծերակոյսը ներկայացնելու և հարկաւոր գործերը շուտ լմնցնելու համար: Մերակոյսը ժողովքի համար կը խմբէր Բէյպոնեան կոչուած պալատը և սերութեան ծախքը կ'ապրէին: Հասարակաց անհատական և համատանձական գործոց վրայ կրնար ծերակոյսը վճռել, հրովարտակ հանել որոնք մինչեն երբեք օրէնք կ'անցընէին. բայց օրէնքները պիտի պատրաստէին միայն և վերջը ժողովրդեան տաճարին ներկայացնէին:

Ժողովրդեան տաճարի մէջ ամէն քաղաքացի իրաւունք ունէր մտնալ, խօ-

սել և քուէ տալ: Այս առենին իրաւունքն էր գատաւորաց ընտրութիւն, օրինաց հաստատութիւն կամ մերժումն: Բայց ի քանի մը դիպաց, յորս հարկաւոր էր գոնէ առ նուազն 6000 քաղաքացւոց ներկայութիւն, ժողովականաց թիւն որչափ ալ ըլլար, ընդհանրապէս ժողովները վաւերական էին:

Արիսպագոս հին առեան մ'էր, բայց այս անունը (որ առենին խմբելու տեղէն կը ծագէր) միայն Սողոնին ժամանակը կրեց, որն որ շատ պարգեւներով մեծցուց:

Ի սկզբանէ արդէն արդարութեան առեան մը կար որ մարդասպանութեան, թունաւորութեան և մատնութեան խնդիրները կը գատէր: Սողոն զանիկայ մեծագոյն առեան ըրաւ, որուն իշխանութիւնը մարդկային ընկերութեան ամէն կարգին վրայ կը զօրէր: Կը հսկէր քաղաքացւոց վարուց վրայ, հասարակաց բարոյականը և կրօնքը կը պաշտպաներ, և վարձատրելու և պատժելու իշխանութիւն ունէր: Արիսպագի անդամները խիստ յարգելի էին ամենուն. և անհրաժեշտ էր այս յարգանքը, որովհետև անոնց ընտրութեան անհրաժեշտ պայման էր որ պիտի արխոն եղած ըլլային, պարաքերնին աղէկ կատարած և վարուք անարատ:

8. Ջանալն Լոգոպրոնիոն: — Սողոն Թողուց որ ամէն մարդ ըստ կամս մատակարարէ իր տուացուածքը և կարենայ կտակաւ զայն ուրիշին անցնել: Տղայոց գաստիարակութիւնն ալ ծնողաց ազատութեան յանձնեց ինչուան տասնըվեց տարեկան հասակը, և անկէ ետքը երկու տարի հասարակապետութեան ուսումնարանը պիտի խաւրէին: Տասնըութը տարեկան աթենացին քաղաքացւոց հասակ ունէր և զինուորական կրթութիւն կը սկսէր ընել ինչ բերդի մէջ որ

խրկուած էր, և քանի տարեկան հասակին քաղաքական աւագութիւն կը տասնար, և պարտական էր կրթութեան տասն ծանր ծառայութիւնները ընելու, և այս պարտականութենէն ոչ ոք ազատ էր ինչուան 60 տարեկան հասակին: Աշխատութեան յորդորելու և Ատտիկէի բնական անպտղաբերութիւնը դարմանելու համար, Սողոն օրէնք դրաւ որ ծեր և հիւանդոտ ծնողք իրաւունք չունենան իրենց որդւոց քրտամբ ապրիլ, եթէ զանոնք արուեստի մը կամ գործոյ մը չեն վարժեցուցած: Նոյն դիտմամբ վաճառականութիւնը ծաղկեցուց հրապարելով զօտարազգիս որ Ատտիկէ գան, որոնց շատ յարգ և պատիւ կար: Օտարականք բնակէին անունը կը կրէին և առանձին կարգ մը կը կազմէին՝ խոնարհագոյն քան զքաղաքացիս:

Քաղաքացւոց և բնակչաց մէջ եղած տարբերութենէն աւելի մեծ էր ազատի և գերեզոյ տարբերութիւնը: Բայց այս ալ մեղմացուց օրէնսդիրն. իրաւունք տալով գերեզոյն որ ութրոջը անգթութեան դէմ օրէնքին դիմէ: Պատժական օրէնքներն ալ Սողոնի քաղցրասրտութեան կը վկայեն. քիչ էր մահապարտութիւն և աւելի տուղորական պատիժն վատահամբաւութիւնն էր, որուն ատելութիւնը և արդասիքն ալ կը զանազանէին յանցանաց համեմատ: Վատահամբաւ էր (և այս ալ Սողոնի օրէնք մ'էր) ով որ քաղաքական խռովութեան առեն անտարբեր կենայ առանց այս կամ այն կողմէն ըլլալու:

9. Սողոնի ճանապարհորդութիւնն ի Մահ: — Օրէնքները գնելէն ետքը միջնաբերդին մէջ՝ գագաթնահայեաց գաւազանի մը վրայ կախուած չորս կողմ պարտող տախտակներու վրայ գրած առաջարկեց Ժողովրդեան: Այն առեն սկսաւ անգադար երթևեկ մը Սողոնի տունը. ոմն կը գո-

վէր և ամի կը պարտաւէր, ամն աւելցած ընելու է կ'ըսէր, և ամոնք ալ պարզել կ'ուզէին: Զանձրացած՝ խնդրեց և հրաման առաւ տասը տարի Համբարձումեան ընելու: Տասը տարուան մէջոց Եգիպտոս, Կիպրոս և՝ ի Փոքր Ասիա պտըտելով և հայրենիքը դառնալով՝ դպչական, ծովեփնեայ և վեռանական հին կղզիանկցումեիններով բոլորովին տանուտէրլայ եղած դառաւ զայն: Ամենայն ճիգն ի թափեց խաղաղելու զամոնք բայց չյաջողեցաւ: Սակայն հայրենեաց՝ օգնելէն մինչև ցմահ չդադրեցաւ, ոսանաւորներով և խօսքերով, և մեռաւ ուխտուն տարեկան 59ին:

10. Պիսիդիա: — Երեք կղզիանկցումեիանց մեկուն և՝ ի մանաւորի վեռանականց գլխաւորն էր Պիսխատրատ՝ Սոզոնի ազգական: Մինչեամբ երևելի և իսխտ ունեւոր էր, և կը մտածէր Աթենքի վրայ բռնանալ. ուստի խորագէտ կեղծաւորութեամբ կը ջանար քաղաքացւոց սիրտը իրեն քաշել սիրով և մարդասիրութեամբ, ազգատներուն օգնելով, Թշնամեաց հետ քաղցրութեամբ վարուելով, արդարութեան և հաւասարասիրութեան նախանձով վառուած:

Երբ կարծեց Թէ բաւական սիրելի է անոնց, դեղեցիկ օր մը Աթենքի հրապարակին մէջ եկաւ բոլորովին արիւնաշաղ և ինքը զինքն վիրաւորուած. և առ սէր Ժողովրդեան մարախրոս հարթելով զինքը, պատմեց անոնց Թէ վրաս յարձակեցան Թշնամիները և զիս այս վիճակին հասուցին: Ուստի դեղեցիկ կերպով մը յիշեցնելով աւերութեան համար իր ըրած ծառայութիւնները, և ցուցնելով Թէ անկէց վերջը իրեն կեանքը ապահով չէր և ունկնդրաց պաշտպանութեան կը կարօտէր, մեկէն խնդրածին հասաւ, այսինքն յետուն հոգի Թիկնապահ տուին պահ-

պանութեան համար, զոր կամաց կամաց բազմացուց Թուով և գնաց սիրեց անոնցմով միջնաբերդին (560):

Պիսխատրատ վարչութիւնը ձեռք առնելով ջանաց պահել քաղցրութեամբ. Սոզոնի օրէնքները ամենևին չփոխեց, և կը ջանար իբրև սոսկ քաղաքացի մը երևնալ: Սակայն հինգ կամ վեց տարիէն վերջը, երկու երկտառակ կողմնակցութիւնները միացան և զինքը աքսորեցին: Բայց հինգ տարի վերջը նորէն Աթենքը դարձաւ և անոր վարչութիւնը նորէն ձեռք առաւ անոնման և գժուարահաւատալի հնարագիտութեամբ:

Նորէն աքսորուեցաւ և նորէն դարձաւ Աթենք 538ին: Թէ և բռնութեամբ մտաւ Աթենք այս անգամ, անուշութեամբ կառավարեց, և խաղաղութեամբ վարչութեան գլուխ կեցաւ ինչուան որ 527ին մեռաւ, զարդարելով Աթենքը գեղեցիկ և փառաւոր շինքերով և ուրիշ շատ բարերարութիւններով ձոխացնելով: Բարերարութեանց մեկն եղաւ (որ յիշատակի արժանի է) հիմնած հասարակաց գրատունն որ առաջինն է Յունաստանի մէջ. և հրատարակեց քաղաքացեացը հոմերական բանաստեղծութիւնները, զորս կը կարծուի Թէ ինքը հաւաքեց և արդի կարգին վերածեց:

11. Իպպիաս և Իպպարքոս. Արմոդիոս և Արիստոգիտոն: — Պիսխատրատի իշխանութիւնն անցաւ իրեն երկու որդւոց Իպպիասայ և Իպպարքոսի: Առջինը տերութեան մարգու ամեն յարմար յատկութիւններն ունէր, ազնիւ և քաղցր բարուքն հօրը կը նմանէր. իսկ միւսը՝ ուսման և մատենագրութեան սիրովը. և՝ ի մտերնագրաց սիրելագոյնքն էին Անակրէոնն և Սիմոնիդես: Քանի մը տարի իրենց կառավարու-

Թիւնն ալ քաղցր եկաւ, և իրենց ալ փոյթն և ջանքն եղաւ քաղաքը զարդարել և Ժողովուրդը կրթել:

Բայց այս խաղաղ վիճակը բոլորովին խռովեցաւ 514ին: Արմոգիոս ամենացն. ծանր կերպով կը նախատուի Իպպարքոսէն, և քինախընդրութեան ոգւով վառուած՝ իրմէ ոչնչ նուազ իր Արիստոգիտոն սիրա բարեկամն ալ: Այս երկուքը դաւակցութիւն մը պատրաստեցին երկու եղբարց դէմ, զԻպպարքոսն սպաննելին, բայց Իպպիաս ազատեցաւ: Սակայն Արմոգիոս ալ սպաննուեցաւ և զԱրիստոգիտոն ալ բռնեցին: Կը պատմեն թէ Արիստոգիտոն իրեն մեռնելէն առաջ տանջանաց մատնեցին, որպէս զի սակրոսի դաւակիցները յայտնելու. իսկ ինքը վրէժխնդրութեան ոգւով, բռնաւորին սիրա բարեկամները իրմէ դաւակից մատներ է: Կը պատմեն գործեալ թէ Լենա կինն ալ տանջանաց մատնեցաւ. վախնալով որ չըլլայ թէ տկարսիրտ գաղանիք յայտնէ, ակռաներովը խածաւ կտրեց լեզուն:

12. Իպպիասյ անկումը: — Այսկէ վերջը, Իպպիաս իրեն առջի բարքը և կերպը փոխեց, նեղդամիտ կասկածաւոր և անգութ մարդ մը եղաւ: Եւ Ժողովրդեան առ նա ունեցած սէրն օր ըստ օրէ կը պակսէր:

Այով Ալկմեոնեանք սկսա առին ներս մտնել. մտան քաղաքը և բռնաւորը կործանեցին. Ալկմեոնեան ցեղն հարուստ էր, Պիսիստրատեանց թշնամի և երկար տարիներ՝ ի վեր Աթենքեն աքսորուած:

Այսոր համար Սպարտացւոց գիմեցին, որոնք եկան Աթենք տեսնելին զԻպպիաս որ փախչի քերդ մը ապաւինի, ուր որ կրնար երկար ժամանակ դիմադրել. բայց վախնալով իրեն

մատուչ որդւոցը համար, մտածեց զանոնք գաղտուկ ապահով տեղ մը խաբրել: Բայց անոնք պաշարուած ձեռքն ինկան, և Իպպիաս զանոնք ազատելու համար եան քաշուեցաւ և Ասիա գնաց (510):

13. Կղիսթենէս: — Այն տարն Կղիսթենէս՝ Ալկմեոնեանց գլխաւորն առաջին արխոն եղաւ, որուն յանձնուեցաւ հատարակագիտութիւնը նորէն կարգաւորել: Թէպէտև ազնուական էր՝ բոլորովին ժողովրդեան կողմը անցաւ. և իրեն ըրած նորոգութիւնները աթենացի ռամկապետութեան բուն հիմնադիրը կրնայ համարուիլ: Նախ և առաջ Ատտիկէի ժողովուրդն որ ինչուան այն տարն չորս ցեղ կը բաժնուէր, տասնի վերածեց, ամենքը հաւասար իրենց մէջ, որոնց կարգը գտաւ քաղաքացւոց ամէն իրաւունքներով մէկ տէր Աթենքի հողոյն վրայ բնակող օտարականներն ալ և շատ ալ ազատագրեալ գերիներ: Ի-ւրաքանչիւր ցեղ, որոնք իրենց աշխարհին զանազան գիւղացիներն կրնային, թեմ թեմ բաժնուեցաւ: Այն թեմ պիտի ունենար իր հեռւակ և ձիաւոր զօրքը, և տարուէ տարի ալ զօրապետը կամ տարտետրատը պիտի ընտրէր:

Իսկ ծերակուտին թիւը 500 հոգւոյ հանեց Կղիսթենէս, ամէն մէկ ցեղէն յիսուն հոգի վիճակաւ ընտրուելով: Վերջը զանիկայ տասը խումբ բաժնեց և իւրաքանչիւր խմբէն 50 հոգի կ'առնուէր, որոնք մի և նոյն ցեղին կենդ որով ամէն ցեղ թէներկայ էր և թէ նախագահ բոլոր ծերակուտին և ժողովրդեան առներին:

Կղիսթենեսի արդիւնքն է խեղկատակ վճռոյն հաստատութիւնն ալ: Գանի մը գիպուածոց մէջ պէտք էր ժողովուրդը ժողվել, որպէս զի որոշէ թէ այս ինչ անձը պէտք է հեռացնել, ոչ

թէ յանցանաց մը ՚ի պատուհաս , այլ միայն սասակի փառասէր և ազդեցութիւն ունենալուն համար կը կասկածուէր թէ ազատութեան վտանգ բերէ : Ֆուէթարկուբ անձին անունը ոստրէի մը վրայ և կամ խեցիի վրայ կը գրէին (ὀστρακον է յունական բառն) , և քուէները արխունք կը բանային : Երբ վեց հազար քուէ միևնոյն քաղաքացին ակնարկէր՝ տասը տարի աքսորանաց դատապարտուած էր : Բայց այս տեսակ դատապարտութեամբ ընչից զրկուելն չկար և ոչ անպատուութիւն մը կը բերէր . զոհ մըն էր որ հայրենիքը կը պահանջէր , յարգանքն մ՚էր զոր զոհացու հասարակապետութիւնը կը պահանջէր զօրաւոր քաղաքացիէ մը :

14. Ալքինէի դէմ եղած պոռոտախօսութիւնը : — Կղեսթենեսի այս նորամուծութիւնքը բնականապէս աշխուժականաց հաճոյ չեղան , որոնց գլխաւորն էր Իսագորաս : Սպարտայի օգնութիւնը խրնդրեց , որ ծուռ նայելով նոր պայծառացած ռամկապետութեան վրայ՝ հաւանեցաւ օգնելու : Սպարտացիք իրենց Կղէոմենէս թագաւորին հետ Աթենքի վրայ եկան և մինչը մտան , բայց չուտով ժողովրդեան կատաղութենէն սոսկուեցան ետ քաշուիլ :

Վերջը Պելոպոնեսի բոլոր տերութիւններէն նոր օգնութիւն առած , Թեբացւոց , Եւբէոյ Կալքիդացւոց , և Եգինայի բնակչաց օգնութեամբ զօրացած երկու արշաւանք ալ ըրին : Սակայն Աթենացիք կրցան թշնամւոց դէմ դնել , և փճացնել անոնց յոյսը :

« Ուրեմն Աթենացւոց իշխանութիւնը մեծցած էր (կը խորհրդածէ պատմագիրը) : Ամէն և ուրիշ ալ անթիւ օրինակներէ յայտնի կը տեսնուի թէ որչափ օգտակար է տերութեանց ազատութիւն : Եւ իրաւունէ , մինչդեռ Աթենա-

ցիք հպատակ էին բռնաւորաց , պատերազմի մը մէջ չնչին ազգերէն ահեղի քաջութիւն չցուցին . եւ երբ ազատեցան բռնաւորներուն ձեռքէն , ամենայն ազգերէն ահեղի հզօր եղան : Պատճառն այս է . առաջ հպատակ ըլլալով՝ միայն իրենց իշխողին չահուն համար պիտի աշխատէին , որով անուն հանելու կանք մը չկար . բայց երբ ազատութիւնն ձեռք ձգեցին , ամենքը նախանձ ունեցան՝ գիտնալով որ ամենայն ոք իր անձին համար կ՚աշխատի՝ հասարակաց բարւոյն համար աշխատելու տեղն » :

ԳԼՈՒԽ Դ.

Երկրորդական Տերութիւնք Գաղթականութիւնք :

1. Երկրորդական տերութիւնք : — 2. Գաղթականութիւնք : — 3. Առաջին գաղթականութիւն : — 4. Երկրորդ գաղթականութիւն :

1. Երկրորդական տերութիւնք : — Բաց ՚ի Սպարտայէն՝ Յունաստանի անթիւ և մանր տերութիւններն ալ քիչ կամ շատ ժամանակի մէջ , առաւել կամ նուազ դէպքերով Աթենքի մէջ եղած քաղաքական յեղափոխութիւններ կրեցին . այսինքն միապետական կառավարութիւնը փոխեցին հասարակապետութիւն ըրին , բայց տեղ տեղ բռնակալութեան փորձեր ալ եղան , ինչպես Պիսիստրատոնը : Այնուամենայնիւ էր հասարակապետութիւնը՝ թէ որ Դորիացի էին քաղաքացիք կամ ուր որ Սպարտա կրցեր էր

ձեռք բառնել. ասիկաթեսական՝ Թէ որ Յոնիացի էին քաղաքացիք և կամ Աթենքի պաշտպանութեանը տակ կը գտնուէին:

Այս հասարակապետութիւնները ըստ մեծի մասին երբեմն անկախ էին, քաղաքական յարաբերութիւն մը չունէին միմեանց հետ. բայց մեկ քանի մը գաւառաց մէջ գաշնակցութիւն ձեացեր էին: Ինչպէս Աքայիա, որուն գաշնակից քաղաքները տասներկու էին. նոյնպէս և՝ ի Փռիկիա՝ որուն քսան կամ երեսուն փոքր տերութիւնները պարբերական ընդհանուր մը իրենց ժողովը կ՚ընէին ընդարձակ Հնչեի մը մէջ որ Փելլինեան չենք կ՚ըսուէր. ի Բէովատիա ալ 12 մանր տերութիւններ էին, որոնց գլխաւորներն էին Թեբէ, որ գաշնակցութեան գլուխը կը համարուէր, Պլատէա, Տեսպիա, Տանագրա և Փերոնէա:

2. Գաղթականութիւն: — Յունական գաղթականութիւնը հետաքրքրական է, և այս գաղթականութեան կողմանէ հին ազգ մը չի բաղդատուիր Յոյնի հետ: Գաղթականութենից շատ պատճառներ կային, բայց գլխաւորն եր գործունեայ կենաց կարևոր հարկը՝ որ հելլենական ազգին բնական յատկութիւնն էր: Գաղթականաց և բուն հայրենից յարաբերութիւնը այլ և այլ էին երկից այլ և այլ պատճառաց համեմատ: Թէ որ գաղթականները բնակալ գողջնակցութենէ մը սախպուած կը գաղթէին ակամայ՝ յայտնի է Թէ նուվին իսկ գործով անկախ կ՚ըլլային: Բայց երբ ոչ Թէ բռնութեամբ այլ օրինաւոր պատճառներով կը գաղթէին գոնէ ըստ մեծի մասին, երկայն ժամանակ առ երկից բուն հայրենիքը սէր և յարգանք կը ցուցընէին:

3. Առաջին գաղթականութիւն: — Երկու գլխա-

ւոր գաղթականութիւն կ՚ասանդէ յունական պատմութիւնը: Առաջինն ԺԲ, ԺԱ դարուն մէջ եղաւ. այս առեն Հերակլէս գիմեցին, Փոքրն Ասիոյ կղզեաց շատերը բռնեցին, ու սիսեցան Հելլեսպոնտոսէն մինչև Կիլիկիոյ սահմանագլուխները: Եօղացիք Բէովատիայէն փախչելով՝ մասամբ անոնց ծովը անցնելով Լէսբոս, Տենեդոս, Եկատոնեսոս կղզիները գրաւեցին. իրենց բնակութիւնը հաստատեցին Փոքր Ասիոյ ափանցը վրայ՝ Իդա լեռնէն ինչուան Երմոս գետոյն բերանը, և այս նոր հայրենեացը անունը Եօղիա գրին: Յամաքի վրայ տասը քաղաք հիմնեցին, և ամէն մէկ քաղաքն անկախ տերութիւն մ՚էր. գլխաւորներն էին Կումա և Զմիւռնիա, բայց վերջէն քիչ մը ետքը Յոնիոյ մասն եղաւ:

Կոդրոսի մահուանէ ետքը Յոնիացիք Աթէնքին եղան անոր Նելէոս որդւոյն առաջնորդութեամբ, շատ ցեղեր Թոպուցին Կիւկղոպեայց և ուրիշ կղզեաց մէջ, և բնակեցան ասիական եզերքայ վրայ, եօղական գաղթականաց հարաւակողմը՝ ընդ մէջ Երմոս և Մէանդրոս գետոց: Եւ իրենց ժառանգած երկրին անունը կոչեցաւ Յոնիա, որ գաշնակցութիւն մ՚էր տասը քաղաքաց. և ասոնք են. հիւսիսէն դէպ ի հարաւ դնալով՝ Փոկէա, Երեարէա, Կլազոմէն, Թէոս, Լեբեսոս, Կոլոփոն, Եփեսոս, Պրիէնէ, Միւնտէս, Միլետոս, Սամոս: Ինոս համանուն կղզեաց մէջ: Ազգային հանդիսական օրերը հասարակաց օգուտը մտածելու համար յայլ և այլ քաղաքաց Յոնիացիք Միւկալէս գլխոյն վրայ Պանիոնիան ըսուած մեհեանը կու գային կը ժողուէին:

Դորացի գաղթականք քիչ մը վերջը Պենտապոլեսէն եղան, ով և Հեռոդոս կղզեաց տիրեցին. և ցամաքին վրայ Կարիոյ մէկ մասն առին որ ըսուեցաւ Դորիա: Հոն վեց քաղաք չինեցին. յո-

ձիական գաղթականաց պէս հանդէսներ և հա-
տարակաց ժողովքներ ունէին։ Քաղաքներն ա-
ռանք են. Յալիսոս, Կամերոս, և Լինդոս, Հռոդոս
կղզւոյն մէջ. Կով Համանուն կղզւոյն մէջ. իսկ
ցամաքին վրան կային. Նինիդոս և Աղիկառնասոս։

4. Երկրորդ գաղթականութիւնը Ը և Է դարերուն մէջ եղաւ, և
այս ժամանակի գաղթականքը դէպ 'ի հիւսիս
արևմտեան կողմը գնացին։ Այս երկրորդ գաղ-
թականութեան մասնակից եղան, Երետրիա,
Կալկիդէս, Մեգարա և Կորնթոս։

Հիմնեցին Պիերիոյ մէջ Մեթոն, Կալկիդա-
կան Թերակղզւոյն մէջ Ենիա և Պոտիդէա.
Սարիմնիոյ ծոցին վրայ Ականտոս և Ստագիրա,
ինչպէս 'ի Կորնիւբա, 'ի Լէվկագէս, Ամբրակիա
և Եպիտամնոս ալ բնակեցան։ Եաքն անթիւ և
աւելի կարևոր քաղաքներ հիմնեցին 'ի Սիկիլիա
և Հարաւային Իտալիոյ մէջ, որ Մեծ Յունաստան
կոչուեցաւ իր բազմաթիւ գաղթականացը հա-
մար։ Սիկիլիոյ մէջ հիմնեցին, Նաքսոս, Լէոն-
տիոն, Կատանիա, Սիրակուսա, որ ամենէն այս
կղզւոյն մայրաքաղաքն եղաւ, Սելինոն, Գեղա,
Ակրագանդ և այլն։ Մեծ Յունաստանին մէջ
Տարենտոն, Սիբարիս, Կրոտոն, Մետապոնտոս,
Հելէա, Հռեգիոն, Կումա, Նաբոլի և այլն։
Սիկիլիոյ յունական գաղթականաց մէջ Դորիա-
ցիք բազմաթիւ էին Մեծին Յունաստանի գաղ-
թականներէն, բայց 'ի Դորացի Տարենտոն քա-
ղաքէն, զոր 707ին Սպարտացիք Փալանտոսի
առաջնորդութեամբը հիմնեցին, ուր բազմա-
թիւ էին Յոնիացիք և Աքայեցիք։

Զանց չընենք նաև Յունական ազգին տարա-
ծական զօրութիւնը յիշելու, որոնք Ասիրիկէի
եղերաց վրայ ալ հիմնեցին Կիւրենէ, Թարալի
և Ոչբիա 'ի Սարգենիա, Ալարիա Փորտիքայի

մէջ. Մասսալիա (Մարսիլիա) Գաղղիոյ ծովա-
փանց վրայ, Սագունտոն և Հռոդոն Սպանիոյ
մէջ։

ԳԼՈՒԽ Ե.

Քաղաքական գործագործութիւն։

1. Ասիական Յունաստանի քաղաքականութեան կանուխ յառաջադիմութիւնը։ — 2. Գեղարուեստք։ — 3. Բանաստեղծութիւն։ — 4. Առաջին արձակ գրող մատենագիրք։ — 5. Ճօճին իմաստութիւն։ — 6. Ի-մաստասիրութիւն։

1. Ասիական Յունաստանի քաղաքականութեան կանուխ յառաջադիմութիւնը։ — Կամ երկրին բերրնաւորու-
թենէ ու պարզութենէն կլիմայէն, կամ վայրկեան աղա-
տութենէն և խաղաղութենէ, կամ աշխարհա-
գրական դիրքէն, որով դրացի էին այն ժամա-
նակին յառաջացեալ ազգաց հետ, ասիական
գաղթական Յոյները նախապատ շատ ձեռնա-
ցան, որուն անմիջապես յաջորդեց գեղարուես-
տից և մտաւորական ճոխութիւնը։

2. Գեղարուեստ։ — Ճարտարապետութեան
մէջ երևելի եղաւ Հոնիոս սամոսացի, որ իր
հայրենեաց մէջ կանգնեց Հերայի տաճարը, և
անոր որգին Թեոդորոս որ չատ անուանի ե-
ղաւ ու Եփեսոսի Արտեմեայ հոյակապ տաճարը
կանգնեց։

Նկարչութեան նկատմամբ կը յիշատակուի
յոնիացի Պոլիգոտ նկար մը, որ Մէանդր գե-
տին վրայ Մագնիսիա քաղաքին կործանումը կը
ներկայացնէ։ Երկու վերջիւաղ մարդիկը Հռե-
կոս և Թէոդորոս 600ին պղինձ ձուլելու արուես-

տը գուան. ապա Տիղենոս և Սիւիէր, որոնցմէ եաքը բազմաթիւ հրաշալի արհեստաւորները եկան, առաջին մարմարեայ արձանները շինեցին։ Երաժշտութեան մէջ երեւելի եղաւ Տերպանդրոս լեսբացի եօթներորդ դարուս մէջ, որ կատարելագործեց ղքնարը, մինչեւ այն ատեն քառաղի էր եօթնաղի ըրաւ զայն։

3. Բանաստեղծութիւն։ — Յոմիրային եղաւ անհամեմատ Հոմերոս, որուն վրայ ուրիշ տեղ խօսեցանք։

Եւռղային Եսիոդոս, Հոմերոսի ժամանակակից էր և կամ անկէ քիչ մը եաքը։ Իր գլխաւոր բանաստեղծութիւնը, որ կ'ըսուէր Գործք և Տիւք, նպատակն է գեղջկաց զբաղմունքը նկարել և կանոնաւորել և սորվեցնել թէ աշխատութենէ և առաքինութենէ գուրս ամէն բան գժբաղդութիւն է մարդուն համար։

Հոմերի և Եսիոդոսի անթիւ նմանողները եղան, որոնք երկոց նիւթը կ'առնուին աշխարհքաքիս սկզբէն մինչև գիւցազնից ժամանակէն եաքը անցած երկայն միջոցը։ Սակայն անոնց անուններն և իրենց բանաստեղծութեանց խոտրագիրները միայն գիտենք։

Ոչխմպիական խաղերուն սկսելէն վերջը՝ եղան Քնարերգականը և Եղերերգական և երեք գար չարունակեցին մեծ փառքով, որուն կը վկայեն ձեռքերնիս հասած գրուածոց հատուկտորները։ Երեւելի բանաստեղծներ են, Տերպանդրոս, Ալկէոս, Սափփով և Արիոն, ազգէն ալ Լեսբոս կղզին. Միւճերմոս կոլոփոնացի, Անակրէոն տէոսացի, Սիմոնիդես քէոսացի. Կալլինոս եփեսացի, Արքիլոքոս պարոսացի. որոնց վրայ աւելցնենք Եղովթոս տառասիոս ալ, որ ի Սամոս ապրեցաւ Թէսպէսի ի Քրակիա ծներ էր։

4. Աստղին աբխագիր մաթեմագիրներ։ — Յոմիրէ եօթներորդ դարուն կիսէն սկսան արձակ գրել։ Աստղին եղաւ Փերեկիդես, Սիրա կղզին ծնած, և հեղինակ Աստուածոց ծննդաբանութեան մը։ Երկրորդ արձակագիրը կադմոս միլետացին եղաւ, որ պատմութեան մէջ արձակ շարագրութիւն գործածեց. և ասոր հետեւեցան Եկատէոս որ նմանապէս միլետացի էր. և Փերեկիդէս՝ Լերոսէն որ Յոմիրոյ մօտ կղզի մ'էր, և Հեկատեոս միլետեցի։

5. Եւթն իմաստունք։ — Նոյն միջոցները շատ հռչակուեցան քանի մը բարոյախօս իմաստասէրք, որոնք իմաստուն անունը կը կրէին։ Աստղ Թիւրը եօթնէն մինչև տասներեօթը կը հանեն. բայց առջի Թիւրը աւելի սովորականն է։ Սոլոն աթենացի, Թաղէս միլետացի, Պիտտակոս միտիլենացի և Բիտա պրիէնացի ամէն ցուցակի մէջ իմաստունք համարուած են։ Բայց միւսներու վրայ անմիաբանութիւն կարծեաց կայ։ Շատերը եօթն Թուոյն մէջ կը դնէին նաև Կղէոբուլ լինդոսացին, Հէսոդոս կղզւոյն մէջ, Պերիանդր կորնթացի և Քիլոն սպարտացին ալ։ Այս մարդիկն որ այսպէս մեծ համբաւ ունեցան, հասարակաց կեանք մը վարեցին իրրև գաստաւորք և իրրև օրէնսդիրք։ Իրենց իմաստութիւնը գործածական քանի մը բարձր, պարզ և գեղեցիկ բացատրութեանց մէջ էր։ Ձոր օրինակ «Ծանիր զքեզ»։ — «Ոչինչ չափաւն պատեհ»։ — «Ի վնասէն չապահովի կործանումն կայ առաջի» — և այլն։

6. Իմաստասիրութիւն։ — Եօթն իմաստուններէն միայն Թաղէս 640 նախ քան զՔրիստոս ծնած, տեսական իմաստասէր ալ եղաւ։ Երեւելի տեսական իմաստասէրներէն էգան, Հերակլիտոս էփեսացի, Դիոգինէս ապողնիացի, որ

Կրետէի մէջ քաղաք մի է, Քանոփան կոչուիւ-
նիացի, Պարմենիդէս և Զենոն եղնացի. և ա-
մենէն աւելի Պլութարքոս որ ծնաւ ՚ի Սամոս
յամին 507, բայց վերջը եկաւ ՚ի Մեծն Յու-
նաստան, ուր երևելի ուսուցմատեղի մը հաս-
տատեց ՚ի Կրոտոն:

ԵՐՐՈՐԴ ԾՐԶԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Պարսկական պատերազմին
վիճակ. Պետրոնեւսեան պատերազմները:

1. Յոնիական քաղաքաց ապստամբութիւնը: — 2. Պար-
սից առաջին արշաւանքն ՚ի Յունաստան: — 3. Դա-
րեհի նոր պատրաստութիւնները: — 4. Երկրորդ
արշաւանք: — 5. Մարաթոնական ճակատամարտ:
— 6. Միլտիադես:

1. Յոնիական քաղաքաց ապստամբութիւնը: — Աւրգէն
ասիական յունաղգի գաղթականք Պարսից լը-
ծանուածեան կը հպատակէին, երբ 501ին չատ
մը աղնուականք, ոմանք կուսակցութենէն Նաք-
սոս կղզին քշուեցով՝ Միլետոս ապաւինեցան,
և ապստեղին զԱրիստագորաս որ կուսակալ էր՝
իրենց օգնել որպէս զի հայրենիքնին գառնան:
Այս պատճառաւ Արիստագորաս 200 նաւով
նաւատորմիղ մը ուղեց ուղարկել Դարեհի Աս-
տափեռնէս եղբօրէն, որ ասիական ափանց և
երբեմն կրետոսի թագաւորութեան հարաւային
կողմանց նահապարն էր, և բնակութեամբ
Սարդիկ կը նստէր: Բայց չյաջողեցաւ արշա-
ւանքն, ասոր համար խիստ բարկացաւ Աս-
տափեռնէս Արիստագորասին վրայ, և կ՚ուզէր որ այն մեծ ձեռնարկն ծախքն վճարէ:

Առիւտագործաս միաքը դրաւ Յոհնան Պաբսից դէմ ապստամբեցնել և ազատութիւն տալ. իշխանութիւնը ձգելով՝ ռամկապետութիւն հաստատէ Միլետոսի մէջ, որն որ քիչ առնէն ուրիշ ամեն յոնիացի քաղաքաց մէջ ալ անցաւ։

Սակայն պէտք էր գաշնակիցները ուշնենալ Պարսից դէմ գնելու համար, որոնք պիտի վազէին ապստամբութիւնը զսպելու և զապստամբները պատժելու համար։ Առիւտագործաս Յունաստան գնաց օգնութիւն խնդրելու. նախ գնաց Սպարտա, բայց պարապ դարձաւ։ Աթենք անցնելով, հոն հասաւ այն առեն երբ Աթենացիք զայրացած և բարկացած, իրենցմէ դուրս ելած էին այն հրամանին դէմ որով Արտափեռնէս կը սպիտէր զԱթենացիս ղիպլիաս նորէն իր իշխանութեանը մէջ հաստատել։ Անոնք այս իրենց ասիացի եղբօրց կողմը բռնեցին, և չուտ մը 20 նաւ պատրաստեցին, որոնց հետ խրկեցին Երետրիոյ հինգ եւաթի նաւերն ալ։

Գաշնակիցք Եփեսոսի ցամաքը հասնելով, սկսան Սարդիկէի վրայ երթալ։ Եւ յանկարծակի վրայ հասնելով՝ առին քաղաքը և կրակի տուին. եաքը երբ Թշնամին մտեցաւ որ կուգար վրէժխնդիր ըլլալու՝ հետ քաշուեցան. բայց Թշնամին իրենց եաւէն հասնելով, Եփեսոսի գաւառին մէջ յաղթութեամբ ազապարեցին իրենց նաւերը մոտն և հայրենիքնին դարձան։

Երբոր լսեց Դարեհ Սարդիկէի աւերմունքը, հարցուց թէ ինչ մարդիկ են Աթենացիք, և իմանալով ուզեց իր սպեղը, լարեց չակեց և նետեց զայն գէպ 'ի երկինք կանչելով, «Ով Աբրամազդ, արգեօք պիտի կարենամ Աթենացիներէն վրէժս հանել»։ Եաքը հրաման տուաւ իր ծառաներէն մէկուն, որ ամէն օր ընթրեւացն առեն երեք անգամ ըսէ իրեն. «Տէր արքայ, յիշէ զԱթենացիս»։

Եւ սակայն գաշնակցաց երթալէն եաքն ալ, Յոհնացիք արիասրտութիւնը չի կորսուցին, չարունակեցին պատերազմը, որուն մասնակից ըրին Բիւզանդիոն (Կ. Պոլիս), Հելլեսպոնտոսի և Պրոպոնտոսի բոլոր քաղաքները, Կարիան ու Կիպրոսը։ Այլ Պարսիկք կամաց կամաց կը յաղթէին ապստամբաց, և եօթը տարիէն եաքը բոլորովին զսպեցին։

2. Պարսից առաջին արշաւանքն 'ի Յունաստան։ — Դարեհ յիշէց զԱթենացիս, և երկնեալ վրէժն անոնցմէ հանելու կամ մանաւանդ Սարդիկէի հրդեհին պատրուակաւ Յունաստանի ակրապատելու մտքով, 492ին իրեն փեսային Մարդոնիոսի հրաման տուաւ բազմաթիւ զօրքով ցամաքէն Յունաստան արշաւել, ծովափունքներէն ալ նաւատորմիղ մը անոր պիտի օգնէր։ Սակայն երկու բանակն ալ ձախորդութեան հանդիպեցան. նաւատորմիղը մինչդեռ Աթոս լերան քովէն կ'անցնէր, սաստիկ փոթորիկ մը բռնուելով՝ 300 նաւ և 20,000 մարդ կորսընցուց. ցամաքայինն բանակն ալ Թրակիայէն անցնելէն Սուրմանի կտրելէն և Մակեդոնիա աւերելէն աւրըշարկելէն վերջը, գիշեր առեն յանկարծակի Բրիկեան կոչուած Թրակիոյ անկախ ցեղէն յարձակմունք կրեցին։ Եղած ջնասը և Մարդոնիոս վերք առած ըլլալով՝ ասիպուեցաւ Ասիա դառնալ։

3. Դարեհի նոր պատրաստութիւնները։ — Դարեհ զայրացած հրամայեց որ աւելի հզօր բանակ մը պատրաստուի։ Նախապան խրկեց Յունաստան որ յանուն իւր այն ազգերէն երկրի և ջրոյ հարկ խնդրեն։ Շատ ցամաքի քաղաքներ և կղզիներ

մեծ մասը Պարսից արքային հրամանը կատարեցին: Ա.ՐՀ Սպարտա և Աթենք ոչ, որոնք մանաւանդ բռնեցին սպանեցին դեսպանները. Աթենքն վիրապի մը մէջ ձգեց զանոնք, ուր սովորաբար չարագործները կը ձգէին. իսկ Սպարտա ջրհորի մէջ, ծաղրածելով թէ՝ ջրհորէն կըրնան առնուլ խնդրած հողն և ջուրը:

4. Երէորդ արշաւանք. — Երկրորդ արշաւանայ առեն, որ եղաւ 490ին 600 նաւով էր նաւատորմիղը և 200,000 մարդ զինուոր կար, զորավարք էին Դատ մար ազգաւ և Արտափեռն Թագաւորին հօրեղբօրորդին: Այս արշաւանքով եգեան Ծովէն անցան, Նաքսոս կղզւոյն տիրեցին, որուն քաղաքները և մեհեանները այրեցին, և ուրիշ շատ կղզիներէ պատանդ կամ օգնական զօրք առին: Հասան Երէթրիա տիրեցին, եօթն օրէն վերջը մատնուեցաւ ա. ռին քաղաքը, կողոպտեցին այրեցին, և ինչպէս որ Թագաւորը պատուիրած էր, բնակիչները գերի տարին:

5. Մարաթոնի պատերազմը: — Պարսիկք Եւբիա յէն գէպ 'ի Ատտիկէ գիմեցին. և արդէն ծերացած Իպպիասի խորհրդովը, որ անոնց հետ էր, Մարաթոնի ծոցը մտան, և նաւերէն դուրս ելան համանուն գաշտին վրայ: Աթենացիք լսելուն պէս Թշնամւոյն վրայ յարձակեցան: Տասը հազար էին, տասը ցեղերէ կազմուած, և տասը ցեղին զօրավարները կ'առաջնորդէին, որոնցմէ էր և Կիմոնի որգին Միլտիադես: Միայն Պլատէա քաղաքը հազար հոգի Աթենացւոց օգնութեան խրկեց: Սպարտացիք ալ խոստացեր էին օգնել անոնց, բայց նոյն առեն չըրնին իրենց կրօնական տեղւոյն տաճարին մը պատճառաւ, կը սպասէին լուսնին լման որպէս զի Հարեայ ելլէն:

Արդ տանուտիկ հազար՝ հարիւր տասը հազարի գէմ պիտի գներ, տասը հատիր զօրավարներն չէին ուզեր պատերազմիլ ինչուան որ միւս ազգերն ալ չհասնէին: Բայց Միլտիադես համոզեց որ պատերազմը սկսի. և որովհետև տասը ցեղին զօրավարները կարգաւ կը զօրավարէին, հրաժարեցան և Միլտիադես միայն բացառակ զօրավար ձանչցան: Իուռն կերպով Պարսից վրայ յարձակեցաւ որ կարծես թէ յանգնուելիւն էր, և երկայն պատերազմէն եառը ցիր ու ցան ըրաւ զանոնք և փախուց:

Ազատութեան այս յիշատակաց արժանի պատերազմին մէջ, յորում քաջաց խմբէ մը այնպիսի ազգ մը յաղթուեցաւ որ այն ժամանակին ծանօթ աշխարհին մեծ մասին տէր էր, որով պզտի տէրութիւն մը էր զօրութիւնը կը ցուցընէր և նոր հոգի մը կ'առնուր, 192 Աթենացի ինկան. իսկ Պարսից 6,400 մարդ մեռան, որոց թուոյն մէջն էր և Հայրենատեաց Իպպիաս: Նաւերու վրայ ողջ մնացող բարբարոսներն, Աթենքի վրայ գիմեցին: Բայց Միլտիադես օգնութեան հասաւ և անոնցմէ առաջ Աթենք գտնուեցաւ. բարբարոսաց յոյսը պարապի ելնելով՝ գարձան ամենապարապ յուսիւ:

6. Միլտիադես: — Պատերազմը լմընալէն եառը Միլտիադես իրեն քաղաքացիներէն խնդրեց որ իրեն եօթանասուն նաւ և զօրք տան: Թէպէտ չուզեց յայտնել թէ ինչ կ'ուզէ գործել, բայց մարաթոնեան յաղթականին խնդիրքը չմերժուեցաւ. ամենքը կը սպասէին թէ այն զօրքերով շատ և փառաւոր գործեր պիտի տեսնայ, և հայրենեաց հարստութիւնն ալ պիտի աւելցնէ: Բայց Աթենացւոց զարմանքը և բարկութիւնը մեծ եղաւ՝ երբ իմացան թէ Պարոս

կղզւոյն դէմ գնացեր է իրեն անձնական թշնամիկ մը վրէժը հանելու համար։ Երբոր անօդաւոր կերպով Պարոս կղզին քանևվեց օր պաշարիչէն եաքն Ալեքսիք դարձաւ՝ ծանր կերպով աղբրը վիրաւորուած, ամբաստանուեցաւ թէ բոլոր ժողովուրդը խաբեց։ և դատապարտուեցաւ՝ ի տուգանս չիստուն տաղանդաց (275,000 ֆրանգ)։ Եւ այս դատապարտութենէն քիչ մը վերջը մեռնելով վերջին պատճառաւ, կիմին իր որդին վճարեց գումարն։

ԳԼՈՒԽ Բ.

Երկրորդ Պարսկական պատերազմը։

1. Թեմիստոկլէս և Արիստիդես. — 2. Նոր արշաւանքի համար Պարսից նախապատրաստութիւնները։ — 3. Քսերքսեսի արշաւանքը։ — 4. Յունաց պատրաստութիւնքը։ — 5. Արտեմիսիոյ նաւական պատերազմները։ — 6. Թերմոպիլէ. Լեւոնիդաս։ — 7. Ալեքսի առումը։ — 8. Սալամինայի պատերազմը։ — 9. Պղատեայ պատերազմը. — 10. Միկաղէի պատերազմը։

1. Թեմիստոկլէս և Արիստիդես։ — Ինչպէս առաջին պարսկական պատերազմին մէջ Միլտիադէս՝ երկրորդին մէջն ալ անուանի եղաւ Թեմիստոկլէս աթենացի։

Տակաւ հասակին մէջ հասարակաց գործոց եաւէ ըլլալու հակամիտութիւնը և բարձր ատիճաններու հասնելու բուռն ընութիւն և ատակ ցանկութիւնը ցերցուց։ Այնչափ բուռն էր այս ցանկութիւնն որ մարաթոնական պատերազմին եաքը ատակ մտածութիւններով մաղձոտ մէ-

կը եղաւ, ամբողջ գիշերներն անքուն կ'անցընէր։ երբ իր բարեկամները հարցուցին թէ՝ ինչ ունես, պատասխանեց թէ Միլտիադեսի յաղթանակները չեն թողուր որ քնանամ։ Անոնցմէ հրաշալի յիշողութիւն մ'ունէր, որ յանուանէ ինչուան ամենայետին աթենացին կ'ողջունէր։ ամէն հնարք ալ կը փնտռէր ուրիշներուն հմարտութեամբ և սէրն իրեն քաշել։ Երբոր ըմբռնման՝ ու հեռու դիտողութեան ալ նախատեսութեան հետ՝ որոշելու մեծ պատրաստականութիւն մը և արագաչքայ կարգի յաջողակութիւն մ'ալ ունէր գործ մը տեսնելու առեն։

Մինչդեռ Թեմիստոկլէս համբաւ և անուն ստանալու եաւէ էր, Արիստիդես արդէն համբաւեալ էր, որ և Մարաթոնի դաշտին մէջ մեծ անուն հանեց։ Այս միայն բաւական էր Թեմիստոկլէսի պէս փառասէր երիտասարդ մը նախանձորդ ընելու անոր։ բայց այս ալ կար որ Արիստիդես ազնուատեսական էր կարծեաք, մինչդեռ Թեմիստոկլէս ամպատեսութեան չափ կուսակից։ Արիստիդես քան զԹեմիստոկլէս վար էր սրամտութեամբ և հոգւոյ եւանդեամբ, բայց կը գերազանցէր արդարասիրութեամբ. ինչուան առակ եղաւ և չափազանցօրէն Աբդէր կոչուեցաւ։ Երկուքն ալ մէկ մէկու հետ չէին կրնար միաբանիլ. և երկուքէն յաղթանակողը Թեմիստոկլէս եղաւ. որ կըրցաւ 483ին թեեկեցոյց վճռով աքսորել դատապարտել զԱրիստիդես։ Փաղաքն էլլելու առեն խնդրեց աստուածներէն որ քաղաքն իրեն կարօտութիւն չունենայ։

2. Պարսկաց պատրաստութիւնները նոր արշաւանաց համար։ — Թեմիստոկլէս ազատելով իրեն հզօր նախանձորդէն, բոլոր իրեն ջանքն Թափեց որ Աթենքն այն աստիճանի հասցընէ որ կարե-

նայ Պարսից նոր յարձակմանը դիմանալ, և հասուց ալ նոյն ասպիճանին, համոզեց Ժողովուրդն որ 200ի հասցընէ նաւատորմիղը և կրթէ զայն։ Առանց ասոր Յունաստանի բանը գէշ պիտի երթար, որուն գէմ կը պատրաստուէր ահագին արշաւանք մը։ Չորս տարի Դարեհ, ինքը մեռնելէն եաքը ուրիշ չորս տարի ալ անոր յաջորդը Քսերքսէս բոլոր Ասիա տակնուվրայ ըրին ահաւոր բանակ մը պատրաստելու համար ի հնաս Յունաստանի։ Բաւական է ըսել որ Հերոդոտոս 1,700,000 հետեւակ զօրք և 80,000 ձիաւոր կը հաշուէ. որոնց վրայ նաև 1,207 հատ բակ ծառաներն ալ յաւելցնելով, ուղտաւոր և սայլորդ մարդիկ մեկտեղ, 2,600,000 կ'ըլլայ պատերազմողաց թիւը։

3. Քսերքսէսի արշաւանք։ — Ասյս բանակին գլուխ կեցած Քսերքսես 4 Օնին, գարնան Սարդիկ քաղքէն ելան և մեծ կամրջով մը Հելլեսպոնտոսը անցան, և նաւակամուրջը մանաւանդ շինուած էր ընդ մէջ Աբիտոս և Քեոսատոս քաղաքաց։ Եւրոպա ոտք կոխելով Պարսիկները եւ բնիկ գունդ բաժնուեցան օրոնցմէ մեկուն հրամանատարը Մարդոնիոս էր. Մակեդոնիային և Թեսսալիային հասան Թերմոպիլէի կիրճը։ Ուսկից որ կ'անցնէին, կ'աւերէին կ'աւրըշակէին։ Նաւատորմիղն ալ ծովափնեայքն կ'երթար, միշտ ցամաքային գնդաց աչքին առջեւէն։

4. Յունաց պաշտպանութիւն։ — Սակայն Յոյնները պարապ չէին կեցած։ Արդէն առաջուց ըսինք թէ Թեմիստոկլէս չնաց մեկնեցաւ Յունաց ծովային զօրութիւնը զօրացնել։ Երբոր ատուգիւ տեղեկացան թէ պատերազմ պիտի ըլլայ, Յունաստանի ժողովրդոց մեծ մասը խորհրդի եկան, ժողովո՛ըրնին Կորնթոսի պարանոցին վրայ, և հոն հաւատարմութեան եղբայրութեան ուխտ ընին երդմամբ։ Ապա պաշտպանութեան եղանակը հաստատուն կերպով սահմանեցին. Թերմոպիլէի կիրճը ցամաքէն փակեցին, ուսկից պէտք էր որ անցնէր ով որ կ'ուզէր Թեսսալիայէն դէպ ի միջին Յունաստան երթալ. ծովու կողմանէ նաւատորմիղը Արտեմիսիոյ մօտեցաւ Եւբիոյ հիւսիսային կողմը, որպէս զի աւելի աղէկ գիտէ Թշնամւոյն շարժմունքը և Թերմոպիլէի և ցամաքային զօրաց հետ ունեցած հաղորդութիւնն ալ ապահովցընէ։ Նաւատորմիղը 271 նաւ ունէր, որոնց մէ 127ը Աթենացւոց էր, և Թեմիստոկլէս զօրավարը. 10 հատ ալ Սպարտիոյ՝ որոց Եւրիբիադէս կը զօրավարէր։ Սակայն Եւրիբիադէսի յանձնեցին բոլոր նաւատորմիղն ապարատեւութեան. Թէ և անիրաւ էր այս գործն, սակայն վճռանձնաբար յանձն առին Աթենացիք։

5. Արտեմիսիոյ նաւական պատերազմները։ — Պարսկական նաւատորմիղը Յունաց նաւատորմիղն գիմացը ելլելուն պէս սասիկ ինասուեցաւ, քիչ մը եաքը երկու աւգին փոթորիկներ ալ եկան, որ ժայռերուն զարնելով նաւերուն շատը խորտակեցին։ Այնէ Յոյնք սիրտ առին, որ տակի բերան սասիկ վախեր էին, ու Արտեմիսիոյ մէջը կեցան։ Մէկ քանի մանական պատերազմներէ եաքը, յոյս միշտ Յոյնք յաղթեցին և Թշնամին շատ նաւեր առին, Պարսիկները ընդհանուր պատերազմ մը սկսան, և ինչուան գիշեր տեւեց կատաղաբար պատերազմը։ Այս անգամ ալ Յոյնք յաղթող ելան, բայց սասիկ ինասուեցան այս յաղթութեամբն. աթենացի նաւերուն ալ կէսը բանի չէր գար։

Այս ինան և ախուր գուժը թէ՝ ձիլա նոյն պատերազմի օրը (6 Յուլիս 480), Քսերքսէսի բանակն ալ Թերմոպիլէի կրճէն անցեր է՝ ստիպեց որ քաշուին ի Սալամինա։

6. Թերմոպիլէ. Լէոնիդաս։ — Թերմոպիլէն պաշտպանողներն էին 300 Սպարտացի, և ուրիշ 7,000 հոգի Յունաց այլ և այլ քաղաքներէն, և որոնց գլխաւորն էր Սպարտիոյ Լէոնիդաս թագաւորն։ Երբ Խերքսէս իր բազմաթիւ բանակով հասաւ, չորս օր սպասեց համարելով որ առանց պատերազմի անոնք պիտի փախչին։ Հինգերորդ օրը, Լէոնիդասին նամակ մը գրեց, « Զէնէէրդ տուր »։ Լէոնիդաս պատասխանն եղաւ « Եկո՛ւր ա՛ռ »։

Այն առեն Խերքսէս հրաման տուաւ որ յարձակին անոնց վրայ, բայց այն յարձակմունքը թէպէտ ամենայն ուժով եղաւ կրկնելով և երեքնելով և միշտ նորանոր զօրայ գնդերով, և երկու օր անգադար, սակայն մեծաւ զօրութեամբ էս մղուեցաւ։ Սկսաւ Խերքսէս տալ բակուսիկ թէ գործը ինչ եղաւ պիտի ուսնենար. բայց Եփիալտէս անունով մտանիկն անոր ցըցուց լերան վրայ ծածուկ ճամբայ մը, ուսկից կարելի էր Թերմոպիլէէն անցնիլ և յանկարծ զՅոյներն եւսի կողմէն բռնել։

Լէոնիդաս իմանալով այս բանս՝ պարսկական բանակին փախստականներէն, որոշեց որ իրեն քաղաքացւոց հետ տեղէն չի շարժին, և յորդորեց դաշնակիցներն որ էս քաշուին, և ամենքն ալ Թղոյացին գնացին բայց՝ի Թեսպացիներէն և Թեբացիներէն։

Պատմական պարագաներ կը յիշուին յորս բանաստեղծութիւնը ազգասական ցրտութեամբ դուրս կը ցատկէ։ « Եկէք » կ՚ըսէ Լէոնիդաս իր ընկերացը « ուրախութեամբ ճաշերնիս ընենք, այս իրիկուն ընթրիքնիս պղտուռնի հետ պիտի ուտենք »։ Մէկը խորհրդածեց թէ պարսից բանակն այնչափ բազմաթիւ էր, որուն նետերը արեգակը կը խաւարեցնեն, « Ա՛հա՛ լաւ

ինչ է », ըսաւ Դիէնիկէս, « Շուքի մէջ կը պատերազմինք »։ Լէոնիդաս ուղեղով իր ազգականներն ազատել, իրկեղով զնոսա՛ի Սպարտա առ պարեան ուղղեալ նամակներով, « Հոս ենք, ըսէն, պատերազմելու համար և ոչ եթէ պատգամաւորութիւն ընելու »։

Լէոնիդաս և իրենները չորս կողմէն պաշարուելով, Թշնամեաց բազմութեան ամենքն ալ զոհ եղան. տասնըմէկ պէս պատերազմեցին և 20,000 մարդ կարդելէն եաքը։ Սպարտացի մը որուն անունը Աբիսոդեմ էր, յԱլպենա լուսնատութենէ բռնուելուն համար պատերազմի մէջ չէր մնած, և երբ՛ի Սպարտա գարձաւ իր քաղաքակիցներէն նախատուելով Ծոյլ Աբիսոդեմ կոչուեցաւ։ Ես միս տարուան պատերազմին մէջ իր պատիւը չտեսնց, ուրեմն ցնծալով պատերազմեցավ Պղատէայի պատերազմին մէջ ինկաւ։

7. Անենդ տուողը։ — Խերքսէս անցնելով կիրճը՝ի Փովկիս, ի Բեոոտիա, յԱտտիկէ մտաւ համարձակ, տաճարները, քաղաքները և գեղերը կողոպտեց և այրեց։ Խերքսէսի մօտենալը տեսնալով Պեղոպոնեսացիք, իրենք զիրենք միայն մտածեցին, պարանոցին վրայ պատնէշ կանգնեցին։ Աթենացիք Թեմիստոկլէսի խորհրդով ծովու վրայ ելան. ոմանք՝ի Տրեզենէ, ոմանք յԵգինա, և ոմանք՝ի Սալամինա գնացին։ Քանի մը հոգի ալ ուղեցին կենալ՝ Ակրոպոլիս պաշտպանելու համար. իրենց գիւցազնական դիմադրութեամբ հանգերձ Թշնամին ներս մտաւ, կրակ տուաւ և պաշտպանողները սպանեց, որոնք բոլորովին յոյսահատած տաճար մը ապաւիներ էին։

8. Սալամինայի պատերազմը։ — Յունական նաւատորմին գլխաւորները տեսնալով մեկ կողմանէ որ Թշնամւոյն ցամաքային բանակը դէպ՛ի

թերակղզին կը դիմէ, և միւս կողմանէ ալ անոր նաւատորմիղն առաջ կու գայ, սկսան երկպատակել. Պելոպոնեսացւոց նաւերը կ'ուզէին պարանոցին մտնել, իսկ Եգինացիք, Մեգարացիք և Աթենացիք կ'ուզէին ծով և ծովու վրայ Սալամինայի քով պատերազմիլ: Պելոպոնեսացւոց յամառութիւնը դժբաղդաբար պիտի յաղթանակէր, եթէ Թեմիստոկլեսի հնարքը չըլլար: Թագաւորին բարեկամ ձևանալով՝ պարսկային նաւատորմիղին գլխաւորներուն ծածուկ լմացուց որ անգանգաղ Յունաց նաւերը պաշարեն և փախչելու առեն չթողուն: Այնպես ըրին Պարսիկք, Յոյներն ալ ստիպուեցան պատերազմել: Ահաւոր խառնուրդ մ'եղաւ. բարբարոսք իրենց նաւաց բազմութեան և մեծութեան պատճառաւ, որով գժուար կը շարժէին այն նեղ ծովուն մէջ, միմիանց կը զարնուէին և իրարու արգելք կ'ըլլային, և չէին կրնար Յունաց գիւրաշարժ նաւերուն երագ հարուածներէն փախչիլ: Որով պարսիկ բանակը խորտակեցաւ, և նաւատորմիղը բոլորովին փճացած՝ ստիպուեց փութալ Փաղերիա քաշուելու: Արտաբան զօրապետ, որ Քսերքսէսի եղբայրն էր և ուրիշ շատ մեծանուն զօրավարներ մեռան նոյն պատերազմին մէջ: Արտեմիսիա կարիացւոց թագուհին ալ մեծ արիւնթիւն ցըցուց: Տեսնելով որ աթենացի նաւ մը եռևէն կու գայ և իրեն հասնելու մօտ է, Պարսից նաւու մը վրայ յարձակեցաւ որ իրենաւն մօտ էր, և զանիկայ ընկղմեց: Յանկարծ մտածած հնարքն. Աթենացիք կարծելով որ այն նաւը իրենց բարեկամ նաւ է, ետ կեցան և ալ եռևէն չգնացին: Ընդհակառակն Քսերքսէս, որ Ատաիկէի ծովափունքէն Արտեմիսիա Թագուհւոյն ըրած քաջութիւնը տեսաւ, կարծեց որ

ընկղմած նաւը Յունացն էր, և գովելով զԹագուհին, բարձրաձայն աղաղակեց Թէ այսօր զիւրօրք իրրև զկանայս վատացան՝ և կանայք իրրև զպիտուրս քաջացան: Յոյնք քիչ կորուստ ըրին, բայց Թշնամեաց 200 նաւը խորտակեցին, և անոնցմէ շատն ալ ձեռք ձգեցին. իսկ միւսներն հետևեալ գիշերը փախան դէպ 'ի Ասիա. Քսերքսէս ալ աճապարեց ստիպուածիւ զինուորներով, Բէովտիոյ, Թեսալիոյ, Մակեդոնիոյ և Թրակիոյ միջէն անցնելով գնաց:

Թեմիստոկլէս, իրրև զգլխաւոր պատճառ՝ Սալամինայի փառաւոր յաղթութեան որ եղաւ 480ին սեպտեմբերի 20ին, պատուեցաւ Սպարտացիներն ալ ձիթենի պսակ մը և քաղքին ամենէն մեծ կառքը 'ի մրցանակ ընդունեցաւ:

9. Պղաթէայի պատերազմը: — Պարսից Թագաւորը Մարգոնիոսի աղաչանքին մարկ ընելով, որ կը յուսար միշտ Թէ պիտի կարենայ զՅունաստան նուաճել, զինքը հոն Թողուցեր էր 300,000 պարսիկ զօրք, որոնց հետ էին նաև 50,000 օգնական Յոյնք, որոնք նուաճուած գաւառներէն էին: Մարգոնիոս Թեսալիոյ մէջ անցուց ձմեռը, նոր պատերազմին յարմար պատրաստութիւն տեսնելով: Նախ քանաց Աթենացիքն Սպարտացիներէն բաժնել՝ զանոնք իրեն դաշնակից գրելով. բայց երբ Աթենացիքն բացարձակ մերժեցին դաշնակից ըլլալը, Աթէնքի վրայ գնաց Քսերքսէսի Յունաստան մտնելէն տասը ամիս ետքը, առաւ և աւերեց այս երկրորդ անգամ: Այս իմանալով որ Սպարտացւոց և ուրիշ Յունաց զօրքը իր գիմացն պիտի ելլէին, բանակեցաւ 'ի Բէովտիա քաշուեցաւ: Յոյնք 110,000 հոգւով եռևէն գնացին Բէովտիոյ մէջ. իրենց զօրավարը Պաւսանիաս սպարտացին էր, որ և Հօրեղբօրորդւոյն Պլիստարքոսի Լեւոնիդասի մանուկ որդւոյն

խնամակալն էր: Եւ հօն քանի մը մանուկներ պատերազմներ Աղվեսոս գետին վրայ մղելէն եաքը՝ Պղատէայի ընդհանուր պատերազմին եղաւ, որ Պարսից սոսկալի հարուած մը բերաւ: Մարդոնիոս ինկաւ, և իր ամբողջ բանակէն 40,000 հոգի հալիւ կրցան ազատիլ և հայրենիք դառնալ:

Յաղթականք թշնամւոյն բանակին մէջ անբաւ հարստութիւն գտան: Պատանիա բոլոր ատրը՝ ի մի ժողվեց. և անկէ մաս մը Դելփիսի աստուածային նուիրելու համար պահեց, մաս մը Ոլիմպոսի համար և մաս մը աղգային տաճարին համար, երրորդ մասը կորնթեան պարանոցին Պղատաոնի պղնձէ արձանին համար. մնացածը զօրաց մէջ բաժնուելու ըստ արդեանց և արժանեաց: Պատանիասի ման եղաւ ամենածանրագին բաներու տանտերորդ մասը: Զանազան յիշատակներ կանգնելով մեռելները պատուեցին, և Պղատէայի հասարակաց հրապարակին մէջ Աթենասպայ էրկրդին սեպան մը կանգնեցին: Եւ սահմանեցին որ ամեն տարի Պղատէայի մէջ պատերազմին տարեդարձը տօնեն, և խոզեր որոշեցին որ ամեն հինգ տարի կատարուին, տօն ազատութեան անուամբ:

10. Մէկուէի պոլէմոսը: — Նոյն անմահ յաղթութեան օրը, Յունիք ուրիշ մեծ յաղթութիւն մ'ալ ըրին ասիական հողին վրայ: Յունական նաւատորմիղն որ 110ը եռաթեի նաւ ունէր, որոնց զօրավար էին Լեւոտիկիդ ասպարապետ և Փըսանթիպպոս աթենացի, Յոնիոյ մօտերքն որուն քնակիչքը Պարսից լուծը թօթվելու պատրաստ էին: Պարսից նաւատորմիղը Յունաց մօտենալուն պէս՝ գէպ ի ցամաք քաշուեցաւ, որպէս զի նաւական պատերազմի մը առիթ չըլայնի: Միլիդոսէի հրուանդանը հասնելով՝ Մկալեսոսի մօտ՝

նաւատորմիղը դուրս ելան ու նաւերը ցամաքը քաշեցին և 60,000ով բանակ մը ձեւացուցին, որպէս զի Յոնիան զսպեն: Յոյնք առաջ չէին գիտեր թէ ինչ ընելու է. բայց ետքն որոշեցին որ իրենք ալ ցամաք ելլան. և կարգի մտնալով գիմեցին Պարսից վրայ, յարձակեցան վրանին, և քիչ առենի մէջ կատարեալ յաղթութիւն մը ըրին: Յաղթութենէ ետքը, որուն մէջ Աթենացիք քան զամենքն աւելի քաջ գտնուեցան, յաղթականք ժողվեցին կապուտ կողպուտ, և պարսկական նաւերն ալ այրեցին:

ԳԼՈՒԽ Գ.

Աբելի հախտագործությունը:

1. Աթենքի և Պիրէոնի երկրորդ ամրութիւն: — 2. Պատանիա, Ծովային զօրութեան Սպարտայէն Աթենք անցնելը: — 3. Պատանեասի մահը: — 4. Փոխարէն և վերջ Թեմիստոկլեայ: — 5. Մահ Արիստիդեայ: — 6. Կիմոն. — 7. Իր քաջութեան գործերը: — 8. Մեռ. սենական գ. պատերազմ: — 9. Խնդիկոյտ ժ՛ծիռ Կիմոնի: — 10. Աթէնքի զանազան պատերազմները: — 11. Կիմոնին ետ կանչուիլը և մահը: — 12. Պարսից Թագաւորին հետ հաշտութեան խօսքը:

1. Վէրանորգուհին և ամբուխն Աթենից և Պիրէոնի: — Պղատէայի յաղթութենէ ետքը, Աթենացիք խուժմբ խուժմբ գաւձան իրենց տեղը ի զանազան կողմանց ուր որ ապաստներ էին իրենց ընտանեօք, և ձեռք զարկին քաղաքը նորէն շինել: Մինչդեռ սոսկական մարդիկ իրենց կողմանէ իրենց բնակութիւններու վրայ պահ մը տածէին, մեհեանները սկսան շինուիլ հասարակաց ծախքովը: Բայց մեհեաններէն առաջ, Թեմիստոկլէս և Արիստիդես որ Սալամինայի պատերազմէն վերջը խեցեկոյտ վճռով երկու պատժէն ազատեր էր, մտածեցին որ քաղաքն ամրացնեն պարիսպ բարձրացնելով: Այս բանս Սպարտա չախորժեցաւ և ջանաց գործադրութիւնը խափանել. բայց Թեմիստոկլէս այնպիսի ճարպիկութիւն մը բանեցուց, որ Թէպէտ Սպարտացիք դէմ կեցան, բայց պարիսպները բարձրացան և

հինէն աւելի լայն շրջապատով մը Աթէնքի սպագայ մեծութեան համեմատ: Բայց ասկէ՝ Աթենացւոց նաւատորմիղին մեծութեան և դեռ մեծնալու եռանդ ըլլալնուն համար Պիրէոնը քաղքին առաջին նաւահանգիստը ըրաւ Թեմիստոկլէս, պարսպով մը ամրացուց զայն և միացուց Աթէնքի և միւս երկու փալէրոս և Մանիկոս նաւահանգիստներուն հետ:

2. Պատանիա. Սպարտացւոց սպարապետութիւնը Աթենացւոց յ'անդի: — 477ին դաշնակցաց նաւատորմիղն 30 աթենացի նաւով և 20 Պելոպոնէսի միւս ազերութեանց տուած նաւերով ծովը մըտան, որպէս զի բարբարոսաց ձեռքէն Յունաց միւս բոլոր քաղաքները ազատէ: Աթենացւոց նաւերուն հրամանատարութիւնը Արիստիդէսի և Կիմոնի ձեռքն էր, իսկ ընդհանուր հրամանատարը Պաւսանիան էր: Նախ գիմեցին ի Կիպրոս, և Պարսիկներէն հալածեցին այն կղզւոյն մեծ մասէն. ապա գնացին ի Բիւզանդիոն՝ որ Թէպէտև պարսկական մեծ բանակէ մը պաշտպանեալ էր, սակայն անոր ալ տիրեցին:

Երբոր Բիւզանդիոնի ծովուն մէջ էին՝ սաստիկ փառասիրութեամբ վառեալ Պաւսանիաս միտքը դրաւ բոլոր Յունաստանի տէր ըլլալ եթէ կարելի էր և մինչև անգամ իբրև հպատակ իշխան մը Պարսից Թագաւորին. քանի մը պատուաւոր պարսիկ գերիներ ազատելով՝ գրեց Թագաւորին ուշքը մոնալէն եռքը Պարսից Թագաւորին ուղղակի կին առնուլ, և խոստացաւ բոլոր Յունաստանը հպատակեցնել: Քաջքաչախ հաւանեցաւ և իր կողմանէ ամենայնկարելին պատրաստեց խոստացաւ: Պաւսանիաս սկսաւ այնպիսի կեանք մը անցընել իբրև Թէ ալ իր դիտաւորութիւնը ծածկելու հարկ չկայ: Մէկդի ձգեց սպարտական պարկեշտ զգեստը և Պարսից փա-

ուսուցչ զգեստով զարդարուեցաւ, եգիպտացի և մար թիկնապահաց գունդ մը կազմեց, յամենայնի ասիական ձեռնարկութիւն ցըցուց, և սկսաւ իրեն դաշնակցաց հետ նախարարի պէս գոռոզութեամբ վարուիլ։

Իրեն այս կերպը խրտչեցուց զՅունիացիս, որոնք ազգակցութեան պատճառաւ զԱթենացիս աւելի կը սիրէին, և ինդրեցին Արիստիդէսէն որ իրենց ընդհանուր հրամանատար ըլլայ, և բայց ի Պեղոպոնեսացիներէն՝ բոլոր դաշնակիցք իրենց հետ միաբանեցան, և այսպէս Արիստիդես իր արդարութեամբը և չափաւորութեամբ այս փառքն ունեցաւ՝ որ Յունաց սպարապետութիւնն որ մինչև ան աւուն Սպարտացւոց ձեռքն էր՝ Աթենացւոց անցնի։

Նոր Յունական դաշնակցութեան վարձանն Թէ պաշտպանողական և Թէ յարձակողական էր ընդդէմ բարբարոսաց։ Աթէնք իշխանութիւն ունէր դաշնակից քաղաքաց ուժը միացընել և ուղղել ի նպատակն, բայց առանց անոնց ներքին գործոցը մէջ միջամտելու։ Հասարակաց ժողովներն ի Դեղոս Ապողոնի և Անահտայ տաճարին մէջ պիտի ըլլային. ի Դեղոս էր միանգամայն և հասարակաց գանձը, որուն իւրաքանչիւր դաշնակից պարտական էր կարողութեանը համեմատ օգնել։ Ամբողջ տարեկան հարկը 460 տաղանդ էր (գրեթէ 2,650,000 ֆրանգ)։

3. Պատահական Խոչ։ — Մեծ հարուածք մը եղաւ այս բանս Սպարտիոյ, որուն իշխանութիւնը միայն Պեղոպոնէս կը ճանչնար։ Սպարտան աճապարեց յետ կանչելու զՊաւսանիաս, որ կրկին կրկին դատաստանի տակ ձգուելով, յաջողուց անպատիժ եղաւ. բայց իր հայրենիքը Պարսից մատնելու ամպարիշտ գաղափարը ձեռքէ չձգեց և չարուճտակ հնարից եւեւէ եղաւ

յաջողելու, բայց վերջապէս գաղտնիքը յայտնուեցաւ և դուրս եկաւ. որպէս զի չբռնուի Աթենասիայ տաճարը գիմեց։ Անկէ դուրս չբերհանեցին, որպէս զի տեղւոյն սրբութիւնը չպղծեն. բայց դուռը պատով գոցեցին որպէս զի անօթութենէն մեռնի։ Մատնչին պատաւ մայրն առաջին քարը դնողն եղաւ, կ'ըսեն։ Երբոր վերջի չունչը տալու վրայ էր՝ տաճարէն դուրս հանեցին, որպէս զի իր մահուամբը տաճարը չպղծի։ Այս բանս հանգիպեցաւ 467ին։

4. Թեմիստոկլէսի արիածնէրը և խոստրածը։ — Պաւսանիասին վախճանը՝ ազգեցութիւն ըրաւ Թեմիստոկլէսին կատարածին վրայ։ Այս մեծանուն մարդը Քանաց պատժել հարկահանութեամբ այն կղզեցիներն որոնք բարբարոսաց օգներ էին։ Նշածն իրաւացի կրնար ըլլալ. բայց կաշառակուրծ և ագահ ամբաստանուեցաւ. և իրաւցընէ իր հայրենական միայն երկը տալանդ գառանգուեցինը՝ հասարակաց գործոց մէջ մնալէն առաջ։ Ասկէ զատ իր արդեանցը վրայ մեծ գաղափար ունէր, այս ամբարտաւանութիւնն կը վերաբերէր աթենացւոց անձնասիրութիւնը, որ մեզ անհասի իր արժանաւոր արդեանց յարգը միայն կ'ընծայէր։ Թեմիստոկլէսի Թշնամեացն գիւրին եղաւ իրմէ հասարակապետութեան վտանգաւոր անձ մը խեղկատակ վճռով դատապարտել զինքը 471ին։ Երբոր չորս տարի եղեր Պաւսանիաս մահուընէ եկաւ, պարեպաք քննեցին իմացան որ Պաւսանիաս Թեմիստոկլէսի հետ վերաբերութիւն ունի, որով ապացուցուեցաւ Թէ մատնութեան մէջ մաս ունի։ Աթենացիք զինքն իրմէ Պաւսանիասին գործակից գտատատանի կանչեցին, և որոշեցին որ Թէ Աթենացիք և Թէ Սպարտացիք զինքը բռնելու եւեւէ ըլլան

որ Արգոս էր։ Երբ խմացաւ այս բանս, եկաւ Կորնիւթոս գնաց, ուսկից Եպիւրոս անցաւ, որուն Ադմետոս Թագաւորին ձեռքով՝ որ մարգասիրութեան համար չուզեց մատնել հալածական ձեռքը՝ Պիւդնա Մակեդոնիոյ նաւահանգիստը խրկուեցաւ։ Պիւդնայէն վաճառականնաւով մը որ Յոնիա կ'երթար, Յեփեսոս եկաւ, անկէ Շօշ գիմեց ուր որ Փեերքսէսին Արտաշէս որդին յայտնուած գտաւ։ Նոր Թագաւորին մեծ հիւրընկալութիւն գտաւ, և ըստ արևելեան սովորութեան՝ երեք բարգաւաճ քաղաք ապրուստի համար արուեցան իրեն, Մագնեսիա հացի համար, Լամիսակոս գինիի և Միւնդէս կերակրելոյնց համար։ Թեմիստոկլէս Մագնեսիոյ մէջ բնակեցաւ, ուր իշխանի պէս ապրեցաւ և ուր մեռաւ ալ. բայց չենք գիտեր սուռգիւ ոչ ժամանակը և ոչ թէ ինչպէս մեռեր է։ Իր բարեկամները ծածուկ ոսկորները Ատտիկէ փոխադրեցին և թաղեցին 'ի Պիրէոն։ Այս եղաւ իր վերջին փափաքն. սրտաշարժ փափաք մը որ կարծել կուտայ թէ միշտ հաստատուն հաւատարմութիւն ունեցաւ իր քաղքին։

5. Մահ Արիստիդէսի։ — Արիստիդէսի մահուան վայր ունեցած տեղեկութիւններս աւելի երկբայական է, ըստ ոմանց 'ի Պոնտոս մեռած է, ըստ այլոց 'ի Յոնիա և ոմանք կը կարծեն թէ Յունիք մեռած է։ Սակայն սույգ է թէ ինքը մինչև վերջը պահեց քաղաքակցոց յարգը և թէ խիստ աղքատ մեռաւ։ Հասարակաց ծախքով յիշատակարան մը կանգնուեցաւ, իր երեք աղջկուիքը հասարակապետութենէն օժտուեցան, և Լիսիմաքոս իր որդւոյն ալ Թռչակ կապեցին։

6. Կիմոն։ — Թեմիստոկլէսի կորուստը Մելգիսէոկ որդին Կիմոն լեցուց. խմաստուն և

Թեմիստոկլէսի պէս և Միլդիատեսին հաւատարիմ, բայց ուղղամտութեամբ և քաղաքական առաքինութիւններով երկուքն ալ կը գերազանցէր, որոնց համար Արիստիդեսի խորհրդոցը երախտագէտ պէտք էր ըլլար որն որ իրեն մեերիմ բարեկամ ու իրեն չերմեռանդ էր։ Սաղամինայի քով հասարակ զինուորաց հետ քաջութեամբ պատերազմեցաւ, և քիչ մը ետքը Արիստիդեսին խրախուսանօք Թեմիստոկլէսի դէմ կենալով, կամաց կամաց անոր տեղը անցաւ Ժողովրդեան յարգանքը և սիրտը գրաւելով։ Իրեն նպաստեցին ոչ միայն իր զգացմանց պարզութիւն և անկեղծութիւն, այլ և իրեն բարերարութիւնները. որովհետև արդէն հարուստ ըլլալով հայրենի ժառանգութեամբ և դեռ աւելի հարստանալով իր յաղթանակաց աւարներով, ամեն օր իր ցեղի աղքատաց սեղան կուտար, զգեստ և ստակ կը բաժնէր կարօտելոց, հասարակաց համար բացաւ իր պարտիզաց դռները, չէնքերով գեղեցկացուց քաղաքը, ծառատնկօք զարդարեց հրապարակները, և երկայն պարսպաց չինութիւն սկսաւ Աթենքէն ինչուան Պիրէոն և Փաղերիա. այնպէս չինուած էին պարիսպները որ Աթենքը կարող էր որ և իցէ յարձակմանց դիմանալ երկայն ատեն և չվախնալ Պէղոպոնեսի միացեալ բոլոր ամբողջութենէն։

7. Կիմոնի ըրած պատերազմները։ — Իր ըրած պատերազմները գլխաւոր Պարսից գէմ եղան։ 476ին Եյոն Թրակիոյ քաղաքն պաշարելով և առնելով որ Սարիմոնի բերանին քովն է, զանոնք Եւրոպացին բոլորովին հանեց։ Ետքը 466ին ատենց նաւատորմիղին հետ զարնուեցաւ Պամֆիլիոյ Եւրիմեդոնի բերանն քովը, որ խիստ բազմաթիւ էր իրեն ունեցած նաւատորմիղէն։ Պար-

սիկնեբը երբ Կիմոնը տեսան, յետ քաչուելեան գետին հակառակ ընթացքով. Կիմոն ալ ուղելով որ և իցէ կերպով զարնուիլ Թէնամոյին հետ, առաջ քալեց և յարձակեցաւ անոնց վրայ. Պարսիկք քիչ մը դէմ դնելէն ետքը ցամաք ելան, և նաւերը Աթենացւոց ձեռքը թողուցին, որպէս զի մնասուր բանակած զօրաց հետ միանան: Կիմոն ալ ցամաքը հանեց բանակը, վազեց Պարսից վրայ ու արիւնահեղ պատերազմ մը ետքը տիրեց անոնց բանակատեղւոյն և անբաւ հարստուԹեանց տէր եղաւ: Այս երկու փառաւոր յաղԹուԹեանցը վրայ որ մի և նոյն օրուան մէջ եղան, Աթենացիք երրորդ յաղԹուԹիւն մ'ալ աւելցուցին ընդդէմ փիւնիկեցի 80 նաւերու. որոնք Թշնամոյն օգնուԹեան եկեր էին և զանոնք բոլոր գերեցին: Որովհետև Աթենացիք սկսան խրոխտալ իրենց իշխանուԹեան մեծնալուն վրայ, գաշնակիցները չուզեցին սահմանեալ զօրաց գումարդ մը տալ անոնց: Այն ատեն Կիմոն առաջարկեց որ զօրք տալէն ազատ ըլլան բայց յառաջագոյն սահմանեալ գրամէն աւելի մեծ գումար մը տան, որպէս զի Աթենք կարող ըլլայ կարևոր եղած զինուորական պատրաստուԹիւնները տեսնալ: ԱռաջարկուԹիւնը ընդունեցան. որով Աթենք քալլաքը հզօր նաւատորմիղ մը տէր եղաւ, որ ուրիշներ ծախքով կը պահուէր և գաշնակիցները նախ իբրև հարկատու եղան Աթենքի, որպէս զի եռքը հպատակ ըլլան: Եռքը ո՛վ որ չուզեց հարկ տալ, ինչպէս ըրին Կարիստոս և Նաքսոս՝ իբրև ապստամբ քաղաք համարուեցան ու նուաճուեցան Կիմոնէն աւելի ծանր պայմաններով:

8. Երրորդ Թէնեան պատերազմ: Կիմոնին խելքէն էր վճիռն: — Սակայն Կիմոն ալ իր քաղաքական գործ սպեղծագործուԹեան նշանակ եղաւ: 464ին

բոլոր Լակոնիա տակն ու վրայ ընող երկրաշարժին չհոգուԹիւնը յարմար առիԹ սեպելով Իլոզները՝ Մեսսենացւոց հետ միացան, և Իդոմէոս ամրացան: Ասով սկսաւ մեսսենական երրորդ պատերազմն, որ տասը տարի տեւեց, և յորում ապստամբներն ալ իրենց վճռաքը ունեցան. որոնք ԹԷպէտ վերջապէս ստիպուեցան անձնատուր ըլլալ, բայց շատ անգամ յաղԹեցին Սպարտացւոց: Սպարտացիք Աթենացիներէն օգնուԹիւն խնդրեցին. և Աթենացիք Կիմոնի խորհրդով զինքն և զինքը բազմաձեռն գնդով մը խաբրեցին որ զիդոմէ լեռը պաշարէ: Որովհետև Աթենացւոց գալատեամբ մեկէն յաղԹուԹիւն մը չէղաւ, Սպարտացիք ետ խաբրեցին զԱթենացիս ըսելով որ ալ պէտք չունինք: Աթենացիք այս բանս իրենց նախատինք սեպելով, Սպարտայի հետ վերաբերուԹիւնն կարեցին. և որովհետև զօրաց խրկուելուն խորհրդատուն և առաջնորդն Կիմոն էր, և ԹԷ ազատականաց կողմնակցուԹեան հակառակ էր և ԹԷ սահմանադրուԹիւնը իր առջի ազնուապետական սկզբանը սկսաւ վերածել, 461ին զինքը խեցեկոյտ վճռով գաղտապարտեցին:

9. Աքենացւոց ըրած ղանազան պատերազմները: — Թիչ մը ետքը Յունաստանի մէջ ներքին երկպառակուԹիւններ ինկան և հարկ եղաւ որ Աթենք պատերազմի ելնիսաբոսի, ԿորնԹոսի, Եգինայի, Բեովոտիոյ և նոյն իսկ Սպարտիոյ հետ: ԹՂպէտ տեղ տեղ կորուստներ ըրաւ բայց կատարածն Աթենքի նպաստաւոր եղաւ. որովհետև Եգինա նուաճեց, Պելոպոնեսի ծովափունքը աւերեց աւերըշակեց և Կեռիոս սպարտացւոց նաւակայքը այրեց և Բեովոտիոյ բոլոր քաղաքները տիրեց բաց 'ի ԹեբեԷն որ դաշնակից ըլլան Աթենքի ու ազնուապետական կառավարուԹեան տեղը՝ դեմոկրատուԹիւն հաստատեն:

Նոյն յաջողութիւնը չունեցան Եգիպտոս։ 460ին Լիբիոյ Ինարոս թագաւորին առաջնորդութեամբ Եգիպտացիք գլուխ քաչեցին պարսկական իշխանութեան դէմ. Աթէնք 200 նաւով նաւատորմիղ մը Եգիպտացւոց օգնութեան խաբեց։ Նեղոսը մանալով Աթենացիք նաւերով ինչուան Մեմֆիս՝ պաշարեցին զքաղաքն։ բայց Արտաչէսի զօրքէն ստիպեալ պաշարումը վերուցին. Պարսիկք եռանկեան և փակեցին զանոնք Տելգայի ճահիճներու մէջ ուր մեծաւ մասամբ մեռան։ Ապստամբութիւն կատարելապէս նուաճուեցաւ և Ինարոս խաչի վրայ մեռաւ։

10. Կէմոն չէր կը խանգարէր։ Անոր մահը։ — Այս ձախորդութեանց մէջ Աթենացիք յիշեցին զԿիմոն և 453ին Պերիկլեսի հրամանաւ չեթ կանչեցին։ Դառնալուն պէս սկսաւ երկպառակութիւնները գադրեցնել և Աթէնքը Սպարտայի հետ հաշտեցնել։ Երեք տարիէն վերջը Նոքին պատերազմ բացաւ Պարսից դէմ, և երկու հարիւր եռաթի նաւով դիմեց 'ի Կիպրոս։ Յաջողքը ելլալուն պէս Կիտիոս հզօր քաղաքը պաշարեց, բայց պաշարման առեն մեռաւ. չի գիտցուիր հիւանդութեամբ թէ վերաւորուելով մեռած է. իր ընկերները մինչդեռ գիակը Աթէնքը կը տանէին՝ 'ի Կիպրոս Սալամինայի դիմացը փիւնիկեցի և պարսիկ նաւատորմիղին հանդիպեցան և պատերազմելով Աթենացիք ցիրուցան ըրին զանոնք։ Անկէ սկսած առնելով Աթենացիք նոյն օրը ցամաքը ելան, և հնձ ցամաքի վրայ բանակեալ բանակ մ'ալ խորտակեցին։ Կիմոն ասկէ առելի գեղեցիկ յաղթարկաւորութեան մը չէր կրնար փափագել։

11. Պարսից նախաձեռնին հետ եղած հաշտութիւնը։ — Այս կրկին յաղթութիւնք պարսկական պատե-

րազմաց վերջին գործը եղան։ Արտաչէս հաշտութիւն ուզեց և պայմանագիրն էր. Թագաւորն Ասիոյ բոլոր յունական քաղաքաց ինքնագլխութիւնը կը ճանչնայ, և կը խոստանայ կիանեան ժայռերէն անտին Թրակիոյ Վոսփորի նեղուցը բնաւ նաւ չմտցնել, և կը հրամայէ իր զօրավարացը որ երեք օրուան ճամբայ հեռաւորութեամբ հեռու կենան յունական ծովէն. իսկ Աթենացիք Պարսից տերութեան մէջ պիտի չբռնանային, յորում էին Կիպրոս և Եգիպտոս ալ։

ԳԼՈՒԽ Դ.

Արեւք Պերիկլեսի առեն։

1. Պերիկլէս։ — 2. Աթենքի և իր դաշնակցաց վերաբերութեանց նորութիւնները։ — 3. Սամոսի պատերազմ։ — 4. Աթենացւոց գաղթականները։ — 5. Աթենքի բնակիչը։ — 6. Ընտանեական զբաղութիւն։ — 7. Իրեն եկամուտքը։

1. Պերիկլէս։ — Հասարակ թուականէն 494 տարի առաջ ծնաւ։ Մայրը այն կղեսթենեսին ցեղէն էր, որ Պիսիստրատեաններուն վերնատեղով Սողոնի սահմանադրութիւնը ամկապետութիւն ըրաւ. Հայրը Միկալէի պատերազմին Քսանթիպպոս էր։ Ծնողաց աղնուականութեան հետ գեղեցիկ դէմք, մեծ ճանճար, ճիշ հարստութիւն, քաղցր քաղաքավարութիւն, լայնածաւալ և ճիշտ գիտութիւն միացուցեր էր, և այնպիսի ճարտասանութիւն մ'ունէր որ ոչ ոք կրնար անոր պատճառաբանութեանց ուժգին դիմանալ։ Հասարակաց գոր-

ծոց մէջ ուշ մնաւ, որով ուզէց նախ պատրաստուիլ խոհմամբ և փորձառութեամբ. բայց երբև քաղաքացի երիտասարդ՝ իր զինուորական ամէն պարտքերը կը կատարէր և անձնական քաջութեան շատ նշաններ ցցուց: Իրեն հասարակաց կեանքը այն ատեն սկսաւ երբ Թեմիստոկլէս խեցեկոյտ վճռով աքսորուեցաւ և Արիստիդէս մեռաւ: Ասպարէզը այն ատենը կիմոնին էր, որ աղնուապետութեան սիրով վառուած էր: Իսկ Պերիկլէս ժողովրդեան կողմը բռնեց: Ապա չանաց սահեցնել նախ զկիմոն, եաքը զծերն Թուկիդիդէս, որ աղնուապետական մասին գլուխ եղեր էր կիմոնին տեղ. բայց սկիզբան կամ ժամանակը բաւական չյարմար չսեպելով կամ վարպետութեամբ բարեկամացը ձեռօք գործեց քան Թէ անձամբ: Ինչ կը տեսնուէր, ատեանը միայն ամենահարկաւոր գործոց համար կ'երևնար. ասով վարժեցաւ ժողովուրդն Պերիկլէսի գործոց մեծ կարևորութեան տալ. միայն Թէ տեսնար որ Պերիկլէս գործոյ մը եռեւ էր: Որով անզգալի կերպով՝ բայց անդադար կը չանար ժողովուրդը սերել: Ժողովուրդը սիրեց զինքն, յարգեց և անոր անձնատուր եղաւ. այնպէս որ 444ին երբ ժողովուրդն ատեան խմբեցաւ որ խեցեկոյտ վճռու ասյ Պերիկլէսի կամ Թուկիդիդէսի համար որոնք բացարձակապէս չէին կրնար միաբանել, Թուկիդիդէս և ոչ Պերիկլէս աքսորուեցաւ: Պերիկլէս ազատ մնալով, չանաց իր նպատակին հասնելու և բոլոր կենացը մէջ այնպիսի իշխանութիւն մը գործածեց որ ոչ այլ ոք: « Կառավարութիւնը (կըսէ Թուկիդիդէս պատմագիրն) ըստ երևութին ռամկապետական էր, բայց ըստ իրին՝ միայ միայն իշխանութիւն էր »:

2. Աւելորդ է իր գաղափարց մէջ եղած վերաբերու-

թեանց նորութիւնները: — Երբ Պերիկլէս միայն գործոյն գլխաւոր մնաց, քայլ մը միայն կը մնար որ Արիստիդեսի չենած և կիմոնէն քիչ մը կերպարանափոխած յոնիական գաղութութիւնն փոխուի Աթենքի համար գերիշխանութիւն ըլլայ, և գաղութացց համար հպատակութիւն, կամ սպարզ խօսելով՝ գաղութացութիւնը մեծ տերութեան մը վերածելով՝ Աթենքը զայն կառավարէ գերագոյն իշխանութեամբ: Վերջին գաղափարքն ալ տրուեցաւ: Հասարակաց գանձը յորում տարուէ տարի 600 տաղանդ կը մտնար, Դելոսէն Աթենքը փոխուեցաւ՝ պեղպտնեացցիներէն տպահովցնելու պատրուակաւ: Որով Աթենքը իրաւունք կ'ունենար ոչ միայն մատակարարելու զայն, այլև ըստ կամս գործածելու գիւրութիւն, թէ զօրք ռազմի վրայ պահելու և թէ Աթենքն գեղեցկացնելու համար. և այս բանիս համար ամբոխ գաղութացց կը պատասխաներ Պերիկլէս թէ՝ Աթենք պարտք մը չունի ուրիշին հաշիւ տալու: Գանձին տեղափոխութեամբ Դելոսի գաղութացց ժողովն դադրեցաւ. այն պզտիկ տերութենց հասարակաց օգտին խնդրոյ մը լուծումն՝ Աթենքի իրաւունք դարձաւ: Մանաւանդ թէ Պերիկլէս կամաց կամաց գաղութից տերութենց ներքին գործոյն ալ խառնուեցաւ, և ուզեց որ քանի մը երկրներք ալ փոխանակ տեղւոյն տեսնի գիմացը հանելու՝ յԱթենս ժողովրդական գատաւորաց գիմացը տարուի: Այս ժողովրդական տեսան՝ որ արդի գատաւորաց ժողովոյն (giuri) նման բան մ'էր Պերիկլէս դրաւ: Այս տեսնի գատաւորներն տարեկան էին և ամէն քաղաքաց՝ քսան անգամ անդամ կրնար ըլլալ: Պերիկլէս գատաւորաց (obilo) բնիսն մը կապեց (15 հարիւրեակ) որ եաքը կղէսն երեք բնիսն ըրաւ:

3. Սամոսի պատերազմ. — Դաշնակցայ մէջ Սամոսը որ առելի կը դժուարէր Աթենքի գերիշխանութիւնը ճանչնալ. ասկէ երկուքին մէջ մեծ պատերազմ բացուեցաւ: Մելիտոսի և Սամոսի մէջ խնդիր մը ծագելով 440ին, Պերիկլէս յանուն ժողովրդեան հրամայեց Սամոսացւոց խնդիրն Աթենացւոց որոշման ձգել: Սամոսացիք յանձն չառին, Պերիկլէս 40 նաւով կղզւոյն դէմ գնաց, աղնուապետութիւնը վերուց և ռամկապետութիւն հաստատեց, հարիւր պատանդ առաւ, Լեմնոս կղզւոյն մէջ թողուց և ինքն ելաւ Սամոսէն՝ պզտիկ բանակ մը թողլով հոն: Ֆիլէմը եաքը աղնուական կողմնակցութեան հզօր ախոյեաններ աթենացի պահակապան զօրքն բանտեցին, Լեմնոսէն հարիւր պատանդներն յետ դարձուցին, նոր կառավարութիւնը վերուցին և յայտնի հրաժարակեցին թէ Սամոս կապ մը չունի Աթենքի հետ: Պերիկլէս լսելուն պէս դարձաւ Սամոսին դէմ գնաց առելի մեծ նաւատորմիղով մը, կղզին ելաւ և պաշարեց քաղաքն, որ լինն ամէն եաքն անձնատուր եղաւ: Պայմաններն ասոնք եղան. բերդերն կործանել, պատանդ տալ և պատերազմին ծախքն ալ նորէն վճարել որ հազար տաղանդի կը մօտենար: Ի դարձին Պերիկլէսին արտաքոյ կարգի պատիւներ ըրին:

Ըստ յունական վաղնմի սովորութեան Պերիկլէս դամբանական մը խօսեցաւ 'ի գովեստ մեռնողց զինուորաց և երբ լսեցաւ ճառախօսութիւնը՝ կանայք ծաղկամբք պսակեցին զինքն, ցուցնելով իրենց զարմանքն անոր ճարտասանութեան և գործոցը վրայ:

4. Աղետի գաղթական: — Այն պատերազմին յաջողութիւնը հաստատութիւն մը եղաւ Աթենքի գոռոզ պահանջմանցը: Աթենքը իր ատիկէ գաւառաւ՝ ինչպէս երբեմն ալ պարզ քաղաք մը չէր, ապա բռնակալ քաղաք մը, ինչպէս որ իրեն թշնամիներն ալ կ'ըսէին: Արտաքին այս իշխանութիւնը պէտք մը գարձաւ Աթենքի համար, ներքնապէս ալ ռամկավարութիւնը: Այս նպատակով և հայրենիքը չափազանց բազմութիւ ժողովրդէն թեթեւցնելու համար, որպէս զի աղքատաց վիճակը բարւոքի, Պերիկլէս բազմաթիւ գաղթականներ դուրս խաւրեց: Սակայն գաղթական հանելու դրութիւնը շատ տարբեր էր հին դրութենէն. վասն զի հին ատեն գաղթականները իրենց հայրենեաց հետ բարոյական միայն կապ մը կը պահէին, մինչդեռ Պերիկլէսի գաղթականները իրենց մայր հայրենիքէն կախմունք ունէին, և աթենացի քաղաքացւոյ ամէն իրաւունք և պարտքերը ունէին: Պերիկլէս այս տեսակ շատ գաղթականներ հաներ 'ի հիւսիսային Եւբէա, 'ի Նաքսոս, և յԱնդրոս, 'ի պիսալտեան Թրակիա, յԵգոսխոս՝ ուր բարձրավանդակի մը վրայ Սարեմոնի երկու Թևաց մէջ տեղ զԱմֆիպոլիս քաղաքը հիմնեցին ու 'ի Փերսոնեսոն:

5. Աղետի բնութիւն: — 444ին Փոտիդիքոս եգիպտացւոյն 'ի պարգև խրկած ցորենը բաշխելու համար, Պերիկլէս աշխարհագիր ըրաւ, և բուն աթենացի քսան տարեկահէն առելի տարիք ունեցող արուներուն թիւը որ իրաւունք ունէին հասարակաց տեղին մէջ մտնելու, 14,040 ելաւ: Աստոց վրայ առելցնելով կանայք, տղայք և օտարածինք, ազատ աթենացւոց թիւը կ'ըլլայ իբր 50,000 հոգի:

6. Աղետի վնասարար ջրաւրինակը: — Աղետի ամէն քաղաքացին զինուոր էր, օտարածինք և գերիներն ալ նաւերու մէջ կը ծառայէին. և դուն մ'ալ վարձաւոր զօրք կը պահէին: Ո-

ԳՐԱԴԱՐԱՆ

նէր Աթէնքն 300 նաւ, 6,000 նաւաստի, որոնք կազմ և պատրաստ էին ամէն վայրկեան ճամբայ ելլելու։ Ունէր 29,000 սպառազէն զինուոր, 1,200 պրուժի, որոնցմէ 400 նետաձիգ. ու 1,200 ալ սկիւթացի նետաձիգ հեծեալ։ Ուսոյ գումարելով ցամաքային և ծովային զօրութիւնները 91,400 մարդ կ'ըլլայ. մեծ թիւ է, եթէ դիտնանք թէ Ատտիկէի բոլոր ժողովուրդը և ոչ կէս միլիոն էր։

7. Եկամուտ։ — Աթէնքի հարստութիւնը տէրութեան սեպհականքներէն, ճարակաւոր դաշտերէն, վարձու տրուած անտառներէն, թէսոորներէն և հանքերէն կուգային. տուրքերէն և գաղտնական տուգանքներէն, մեքսատուներէն, օտարականներուն տուրքերէն ծառայից տուրքէն, զոր ամէն տէր պարտական էր տալ իր ծառային համար, և նիզակակից ազգերուն հարկերէն, որոնք գլխաւոր եկամուտն էր։ Այս ամէնը մէկ տեղ կարծես թէ տարւէ տարի 1,300 տաղանդ պիտի ելլէ (7,674,982 ֆրանգ)։ Բայց այս կայ որ այն տեսնուան արծաթը եօթը կամ ութը անգամ աւելի արժէք ունէր քան թէ հիմայ, որով Աթէնքի եկամուտը չիսուն, վաթսուն միլիոն ֆրանգի կ'ելլէ։

ԳԼՈՒԽ Ե.

Պերիկլէսի ատեն եղած ռամկաց գործոցումը։

1. Աթէնք յունական ուսմանց կեդրոն։ — 2. Աթէնքի մէջ չինած մեծագործութիւնները։ — 3. Բանաստեղծութիւն։ — 4. Ողբերգութիւն. Եսքիղէս, Սոփոկղէս և Եւրիպիդէս։ — 5. կատակերգութիւն։ Արիստոփան։ — 6. Հերոդոտ։ — 7. Ճարտասանք։ — 8. Սոկրատ։

1. Աննդ յունական ուսմանց ինքնուն։ — Պերիկլէսի հոգ և մտածութիւնն եղաւ Աթէնքի հարստութիւնը գործածել անոր իշխանութիւնը պահելու ու զինքը մեծամեծ շէնքերով զարդարելու համար, որպէս զի յոյն ժողովուրդը հանգիստ խաղաղութիւն մը վայելելով, կարենայ ուսմանց, դպրութեան և վաճառականութեան բոլորովին զբաղիլ, և ամէն օր յառաջադիմել բեղնաւոր քաղաքականութեամբ։ Պերիկլէսի վարչութեան միջոցն, մարդկութեան փառաւոր միջոցներէն մէկն է, և իրաւամբ այն դարը Պերիկլէսի անունը կրեց։ Այն աեն Ատտիկէի մէջ ոչ միայն երևելի հանճարներու աշխուժական յաջորդութիւնը սկսաւ, այլ ամէն կողմէն հոն կը վազէին, տպահով գիտնալով թէ Ատտիկէ և ոչ այլուր պիտի գտնային ուսում սէր, գովեստ և մրցանակ։

2. Աննդի հեծագործութիւնները։ — Աթէնք մեծ գործարան մը դարձեր էր, մարդ մը չկար որ անգործ կենար. իրեն զարդարանքները ամենուն

համար շահու և նիւթական բարեկեցութեան աղբիւր էր։ Արուեստից տեսակ տեսակ ընկերութիւններ ձեւացեր էին ըստ որում արուեստաւորն պղնձի, կաճեայ քարի, ոսկւոյ, եղևնափայտի կամ փղոսկրեայ վայ կ'աշխատէր։ Ամէն գործարան ունէր իր առանձին ճարտարապետն, ամէն ընկերութիւն իր գլխաւորն, բայց ամէն գործարան և ամէն ընկերութեան և ժողովոյ ոսոկրեան էր հրամանատար Պերիկլէսի՝ փիլիսոփայ ոլիմպիական Արամազդայ անմահ հեղինակն։ Իկտինոսի և Կալլիկրատեսի գործն եղաւ Պարթենոն, պարթենեան Աթենասայ մեծագործ տաճարը, որ Ակրոպոլսոյ մէջտեղի ամենաբարձր կէտին վայ շինուած էր։ Տաճարին մէջ դիցուհւոյն արձանը կար փիլիասայ ձեռագործ 14 1/2 մեդր բարձր, մէկ ձեռքով նիզակ մը բռնած էր և միւս ձեռքով յաղթութեան արձանն։ Գլխաւոր ոսկի էր, մարմինը փղոսկր, և աչքերը ծանրագին քարեր։ Կրէկոս, Մէսոգենէս և Սենոկլէս որ իրարու եաւէտ Եղևսիսի Դեմետրէ յաստուածուհւոյն տաճարին շինութեան գլուխ կեցան։

Կալլիկրատեսի յանձնեցին որ Պիրէոնի և Աթենքի երկարգ պարիսպ մը քաշէ, որպէս զի Աթենացւոց նաւահանգիստներու հետ ունեցած հաղորդութիւնը ապահով ըլլայ։ Ինչպէս Պերիկլէս Օդեոն թատրոնին յատակագիծը տուաւ, որ տօներուն երաժշտական և բանաստեղծական տեսարանաց հանդիսարան պիտի ըլլար։ Մնէսիկլէս ճարտարապետը մտածեց և գլուխ կեցաւ շինել ճերմակ մարմարիոնէ մեծագործ գաւիթները, որոնք միջնաբերդին մուտքը գեղեցկացնելու համար շինուեցան. 437ին սկսաւ շինքը, տևեց 5 տարի, և 2,012 տաղանդ գնաց շինելու համար։

Շատ երկայն կ'ըլլար բոլոր այն ժամանակը շինուած յիշատակարանները մեկիկ մեկիկ յիշել, և որոնք տեսակ մ'ալ հակապատկեր էին սոսկականաց շինքերուն որ գեռ պարզ և անզարդ էին և մնացին. կարծես թէ Պերիկլէս կուզէր ցուցընել թէ հասարակապետութեան մեծութեան գլխացը անհատի մը մեծութիւնը որչափ ալ ըլլայ՝ ոչինչ է։

Զենք կրնար բոլոր մեծամեծ արուեստաւորաց անունը յիշել, սակայն կանխաւ յիշուած քանդակագործաց թուոյն մէջ աւելցնելու է Պոլիկլէտոս և Միրոն և Պոլիկնոս, Ագորդոր և Պրոքսիս պատկերահանները։

3. Բանասրեղծութիւն։ — Փնարերգականին մէջ, որ անկախութեան պատերազմներէն երկու երեք դար առաջ բանաստեղծութեան ամենածաղկեալ ձևն էր, Պերիկլէսի ատեն երևելի էին Սիմոնիդես կէացի, արդէն ծերացած. Պինդարոս, Կրէննա և Պինդարոս։ Պինդարոսի երկասիրութիւններէն չատերը անթերի ունինք և փնարերգականին մէջ ըստ առաւելազանցութեան մեծ սեպուած է։ Փնարերգականը ասոնց ձեռքովը խիստ ծաղկելով ապա տեղի տուաւ թատերերգականին, որ մանաւանդ փառքն է Աթենքի։

4. Ողբերգութիւն. Եսխիլէս, Սոփոկլէս, Եւրիպիդես։ — Բաքոսի տներուն Աթենքի մէջ պարերգ մեկ տեղ կար, որ նախապերգութիւն կոչուեցաւ, վասն զի կ'երգէին և կը պարէին բագնի մը չորս կողմը, որուն վրայ նոխազ մը կը զոհուէր տօնելի աստուածոյն։ Պիսիստրատոս առաջին Թէսպիս բանաստեղծը մտածեց պարին մէջ մարդ մը մտցնել որ առանձնախօսութիւն մը ընէ։ Ասոր հետևելով ոմանք քանի մը ուրիշ բանաստեղծներ ալ, հետ զհետէ կատարելա-

գործելով և Թատերական մասը յաւելցնելով 'ի միասս քնարերգականին:

Բայց քան զամենն գերազանցեց Եսբլէս զըր Աթենացիք հայր ողբերգութեանց կը կոչեին. ծնած է Յ.Ատիկէ Ելևսիս քաղքին մէջ 528ին, պատերազմեցաւ քաջաբար 'ի Մարաթոն, 'ի Սաղամինա և 'ի Պղատէա և ինչուան 446ին ապրեցաւ: 460ին հրատարակեց իր Ո-րէսթէս անուանի երկասիրութիւնը: Եռախօսութիւն մի է. այսինքն մի և նոյն առասպելյօդ պատմութենէ հանած մի և նոյն նիւթի վոյ խօսող երեք ողբերգութիւններ են իրարու եռաւէ. և կը ներկայացընէին նոյն օրուան մէջ եռաւէ եաև կամ երեք օրուան ընթացիկ մէջ. իր առնուազն եօթանասունէն չափ ողբերգութիւն ներբէն, եօթը միայն հասած է ձեռքերնիս:

Սոֆոկլէս Կեփիսոս գետին ձախակողմեան վոյ եղած Կողոնոն քաղաքին մէջ ծնաւ հինգերորդ դարուն սկիզբը և մինչև 406ին ապրեցաւ. իրեն պատանեկութեան աաեն Եսբլէսի նախանձորդ եղաւ, որ իրմէ մեծ էր հասակաւ և համբաւով. այս բանաստեղծական մըրցմանց մէկուն մէջ որ այնչափ կը սրէին զՀանճարս 'ի զարգացումն և 'ի բացատրութիւն գեղեցկին, դատաւորները 'ի նպաստ Եսբլէսի վճռեցին: Իրեն մրցմանց մէջ քսան անգամ առաջին մրցանակ առաւ, և երբ առաջնոյն չէր հասներ՝ երկրորդը կ'առնէր: Սոֆոկլէսէն ալ եօթն միայն ողբերգութիւն ունինք. մինչդեռ գիտենք թէ հարիւրէն աւելի ողբերգութիւն գրած է: Հանճարով Եսբլէսէն վար կը մնայ բայց քան զնա աւելի արուեստագէտ է, և կրցաւ գեղեցիկ կերպով կանոնաւորել ընդհանուր ներքաշնակութեամբ մը իր Թատերերգութիւններն, աւելի շնորհալի կերպով և մեծ յաջողութեամբ տեղատորել անոնց մասունքը:

Սաղամինայի յաղթութեան օրը ծնաւ Եւրիպիդէս բանաստեղծն 'ի Սաղամինա, որ Սոփոկլէսէն քանի մը ամիս ալ առաջ մեռաւ: Եւրիպիդեսի ողբերգութեանց ալ մեծ մասն կորսուած է թէպէտ և տասնուվեց անթերի ողբերգութիւն ձեռքերնիս ունինք: Չունի Եւրիպիդես ոչ Սոփոկլէսի մեծութիւնն և ոչ Եսբլէսի վեհութիւն. բայց հետևակ գրիչ էէ և գողարիկ փափկութեամբ և քաղցրութեամբ կը դերազանցէ երկուքն ալ, և մարդկային կիրքերը այնպիսի ճարտարութեամբ կը նկարագրէ, որ մեկէն կը համոզուի միաքն թէ հեղինակն մարդու բնութեան խորը թափանցեր էր:

Ց. Կոքոլերգուիւն: Աչխոքոխանէս: — Կատակերգութիւնն ալ Բաքոսի հանդիսէն էլաւ. սկզբնաբար սեզանի վոյ երբ գինին սեղանակցաց խնջապատակները կը ջերմացնէր՝ այն ատեն կատակերգութիւն կ'ընէին: Կը կարծուի թէ Սուսարիոն Յ.Ատիկէ ծնած և Թէսպիսեայ ժամանակակից է: Բայց բուն փոփոխութիւն այն ատեն կրեց երբ Թատրոնական մասնաւոր կատակերգութեան մէջ, որուն բուն հեղինակն կ'ըսեն թէ Եպիխարմոս կոլացին եղած ըլլայ: Բուն առաջին ձշմարիտ կատակերգութիւնները այն ատեն հանդիսացան, երբ որ Եսբլէսի համբաւը հռչակուած էր. և մեծարանօք յիշուած կատակերգակներն են Կրատինոս, Եսպէս, Պղատոն և Թելեկլէիդէս:

Բայց ամենէն գերագոյնը՝ կատակերգութեան ձշմարիտ Թագաւորն՝ Արիստոփանէս եղաւ, որուն տասնեւերկու անթերի գրուածքներն ձեռքերնիս հասած է, այնպիսի կենդանի արտայայտութեամբ և կատակաբան պատմութեամբ,

այնպիսի վայելուչ ոճով, միով բանիւ այնպիսի արուեստով մը գրուած է, որնոյն իսկ Սոփոկլէսի հետ կրնայ բաղդատուիլ: Աթենացի հին կատակերգութիւն կենդանի քաղաքացիներն տեսարանի վրայ կը հանէր, որոնք այս կամ այն կերպով խաժամուժէն վեր էին և անսահման ազատութեամբ մը անոնց գործերը ուշնկրցաց ծաղրու նիւթ կ'ընէր:

6. Հէրոդոտոս: — Ի ր ի ս տ ո ս ի 446 տարի առաջ և 38 տարեկան հասակին մէջ Երոդոտոս Յ Ա ղ ի կառնասոսէն Ա թ է ն ք ը ի կաւ Պանաթենեան տօներուն առթիւ. և հօն հասարակաց դիմաց կարդաց իրեն դէռ անկատար պատմութեան քանի մը կտորներ: Աթենացիք զարմացած մէկէն տասը տալանդ պարգեւեցին անոր: Պատմութեան նիւթն է Ասիոյ և Յունաստանի հին տեսնէ՛ի վեր ուշեցած պատերազմունքն Քսէրքսէսի պատերազմին:

7. Ճարպանոս: — Այս տեսն խիստ շատ ճառախօսք կայնի, որոնք տեսնի մէջ իրարու ձեռքէ յաղթութիւնը կը ջանային յափշտակել, ինչպէս որ սովորական է հասարակաց կեանք սիրող ազգաց մէջ, որոնց խօսքն ալ մտաց պէս կ'ուզէ ազատ թռչիլ: Այս ճառախօսներէն առնուանիները միայն յիշենք, որպիսի էր Թուկիդիդէս, Աղկիբիադ, Կրիտիաս, Անդիդան, Լիսիաս և Անդոկիդէս:

8. Սոլթոպ: — Աթենքի մէջ ժամանակին այն անգադար յուզմանց միջոցն բնութենէն արհամարհալ քաղաքացի մը կար. քիթը տափակ և վեր ցցուած, խոշոր շրթունքներ, դուրս ինկած աչքեր, վիզը լայն և կարճ և ուռած փոր: Բայց որչափ որ արտաքին տեսքը ոգեղ էր, նոյն չափ ալ գեղեցիկ էր հոգին և խորագնին և լուսաւոր էր հանճարն: Սոլթոպն էր այս մարդն,

Սոփրոնիսկոս քանդակագործին և Փենարէդա ծնուցչին որդին, 470ին ծնած: Պատանեկ հասակին մէջ ինքն ալ քանդակագործութեան եւեւ եղաւ, բայց չուտով մը մեկդի դրաւ քանդակիչ գործին, իմաստասիրական ուսմանց պատրաստելու, և աւելի ժամանակին իմաստակաց սիրող նախապաշարմանց առջևն առնելու համար: Ինքը նէրքին համոզումն մ'ունէր թէ աստուածք կը յորդորեն զինքն որ այս բանին ձեռք զարնէ, և թէ 'ի մանուածոյն ոգի մը կամ դև անդադար կ'ազդէր իր վրայ: Դեղփիսի տաճարին Ճակտին վրայ կարդալով այն անմահական վէմուն թէ « Ծանէր ղեկ », հիմ դրաւ նոյն վէմուն իր իմաստասիրական ուսմանց և մանրազնին քննութեամբ սկսաւ իր պարտաւորութիւն վրայ մտածել: Բոլոր կեանքը ծախեց ուրիշներն իրենց մոլորութենէն ուղղելու և զանոնք բարձր և ազնուական խորհրդոց հասուցնելու համար:

Այս նպատակին համար մրցարանները, գրպրոցները և հասարակաց հրապարակները մէջ յաճախ կ'երթար առաւօտներն, երբ բազմութիւն կը գտնուէր նոյն տեղերն. և ամեն տեղ քալելով կը ջանար խօսելու ամենուն հետ. պատանւոյ, ծերու, հարուստի կամ աղքատի, քաղաքագիտի կամ զինուորի, իմաստակի կամ արուեստաւորի հետ: Իր լսարանն միշտ լի էր և տարբեր մարդիկներով, բայց չատերն ալ կային որ իր քովէն չէին հեռանար և անոր աշակերտներն էին: Սորվեցնելուն ոճն խիստ բնական էր: Ամեն բանի ոգեմ ձևանալով իր խօսակցին հարցմունքներ կ'ընէր, երբ թէ կը յարգէր զինքը մեծասիս և կ'ուզէր բան սորվիլ: Բայց հետ զհետէ բռնադատիչ հարցմունքներով կը ստիպէր ղիմացին որ ան-

առվոր խորհրդածութիւններ ընէ, որով յաղթահարուած կը թողուր մնացոր գաղափարներն և ուղիղ և բանաւոր գաղափարներն ընդունելով։ Ահա ոճրոյն նախնիք սէրպեան ծաղրաբանութիւն անունը տուին։

Եթէ ճշմարտութիւն միայն քարոզէր, աղջամուդ խմաստասիրութիւնը սահմանէր և անմահական Պղատոնին ճամբան բանայր, մեծ բան էր արդէն ըրածը. իր քաղաքական պարտքերէն իբր թէ պակսած ըլլայ՝ ոչ ըք աւանդեր է։ Բայց պարտք չունայ զոր զօրաթի հոգւով և կրօնական եռանդեամբ չկատարէ։ Իբրև գլխաւոր քաջութեամբ պատերազմեցաւ Պոսիդէայի պաշարման առեն, ուր ազատեց զԱղկիբիագ Թշնամեաց ձեռքէն, և Դեղոսի պատերազմին մէջ ազատեց զԽսենոփոն և թէ ըստ բանից զօրավարաց՝ պատերազմը չէր կորուսեր թէ որ ամէն քաղաքացի Սոկրատի պէս ըլլար։

Իբրև քաղաքացի երբ ամենայն ինչ յԱթէնս կը խռնարհէր վատութեամբ երեսանից բռնաւորաց գիմացը, ինքը միայն համարձակեցաւ դէմը կենալ յանուն արդարութեան և բռնաւորաց չհնազանդել։ Իբրև հայր անգադար յեղյեղեց և ընչեց որդւոյն սրտին մէջ պարտաց զգացմունքը առ իւր կինն Քսանթիպպա. Քսանթիպպա որուն դէպ բարքը չարուհակ համբերութեան կրթութիւն մ՝եղաւ իրեն։

Կինքենք խօսքերնիս, աղքատ ծնանելով՝ աղքատ ալ ուղեց ապրիլ։ Աղկիբիագ երկիրներ պարգեւեց անոր, բայց յանձն չառաւ. Մակեդոնիոյ Ալքեղայոս թագաւորն մեծամեծ խոստմունքներով զինքը իր պալատն հրաւիրեց և ինքը չուզեց երթալ. միշտ բոկոտն քալեց և ամառ ձմեռ նոյն զգեստը գործածեց։ Միով բանիւ, բոլոր իր կեանքը չարուհակ յաղթանակ

մը եղաւ կամաց ու կրից վրայ։ Սակայն մարդոյն չարութիւն և անիրաւութիւն անոր դէմը ելաւ, և զինքը աղետալի բայց հանդիսաւոր մահուամբ մը վերջուց աշխարհքէն, մեծահանճար և վեհանձն մարդու մը արժանավայել անդորրութեամբ։

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՊԵԼՈՊՈՆԵՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸՆ ԻՆՉՈՒԱՆ ՄԱՆՏԻՆԷԱՅԻ ՁԱԿԱՏԱՄԱՐՏՆ

ԳԼՈՒԽ Ա.

Պելոպոնեսական պատերազմին հիմնական Նիկեասայ հաշտութիւն։

1. Պելոպոնեսի պատերազմին բուն պատճառը։ — 2. Թշնամութեան սկիզբը։ — 3. Երկու հակառակորդ կողմանց ուժը։ — 4. Աւտիկէի վրայ արշաւելը։ — 5. Աթենքի ժանտախտը։ Պերիկլեսի մահը։ — 6. Մելիտինէ քաղաքին ապստամբութիւնը. Կղէոմէն։ — 7. Պլատէայի վրայ յարձակումը և անկումն։ — 8. Կորկիւրա։ — 9. Պիղոս և Սփակտերիա։ — 10. Աթենացւոց ձախողիլը։ — 11. Նիկեասայ հաշտութիւնը։

1. Պելոպոնեսական պատերազմին բուն պատճառը։ — 435ին Կորկիւրա և Կորնթոս քաղաքաց մէջ կռիւ մը բացուելով՝ եպիդամնոս քաղաքին համար, երկու քաղաքն ալ Աթենացիներէն օգնութիւն խնդրեցին և Աթենացիք Կորկիւրացւոց կողմը բռնեցին, և քանի մը նաւ խրկեցին օգնութեան։

Հազիւ թէ այս խնդիրը մարեր էր՝ երբ 432ին

Պոտիդէա քաղաքը որ Կորնթոսի գաղթական էր Քալկիդական Թերակղզւոյն մէջ, բայց Աթենացւոց հարկատու էր, ապստամբեցաւ իշխող քաղքին դէմ։ Կորնթացիք չուտ մը 1600 ապառազէն և 400 թեթեւազէն զինուոր խաբեցին, բայց Աթենացիք ալ զօրք հասուցին, որոնք բաց գաշտի վրայ յաղթեցին Թշնամեաց և սակսեցին որ՛ի Պոտիդէա քաշուիլն, ուր որ պաշարուեցան։ Ա՛յն պատերազմին մէջ Սոկրատ վտանգաւանձին ազատեց զերիտասարդն Ալկիբիադ որ վիրաց մէջ խեղդուած Թշնամեաց ձեռքը պիտի իյնար։ Այս պարտութենէն ետքը Կորնթացիք մոռնալ չկրցան որ Աթենացիք կենաց քանի որ իրենց մեծասը իբրև բոլոր Պելոպոնեսացւոց հասարակաց մեծաս չցուցնեն, և շարժեցին Սպարտա որպէս զի իր գաշնակիցներով ժողով մը գումարէ այս խնդրոյն նկատմամբ։ Ժողովը բացուելուն պէս, նախ եգինացիք և Մեգարացիք ցցուցին իրենց ոճգտնութիւնը Աթենքի դէմ։ Ապա Կորնթացւոց դեսպանները սկսան խօսիլ և մեղադրեցին զՍպարտացիս որ Թեզէտուն Աթենքի որ պարսպներով ամրանայ, և բարեսրտութեամբ Թողուցին որ բռնութիւն կրեն այն քաղաքները՝ որոնց պէտք էր պաշտպան կենալ։ յայսմ առնչի մեզապարտ գանուեցան Սպարտացիք քան բռնակալները, որովհետև բռնաւորութեան մէջ այնչափ յանցաւոր չէ բռնաւորը, որչափ նա որ կրնայ բռնութիւնը խափանել և չի խափաներ։ Ուրիշներ ալ խօսեցան զանազան կերպով, բայց ժողովը պատերազմ որոշեց։ Արիւնահեղ պատերազմը մ՛եղաւ, քսանըեօթը տարի (431–404) տևեց և որուն այն վերոյիշեալ մասնական ձախատամարտները պարզ պատահական պատճառներ էին։ պատերազմին բուն պատճառն Աթենքի մեծնալն էր

որ Սպարտայի առեղծուածին և նախանձը այն-
չափ գրգռեց մինչև մղեալ 'ի կրից՝ ձեռք զարկաւ
զինուք խոնարհեցնել զԱթենքը։

2. Թշնամութիւնը։ — Թշնամութիւնը
Թեբացիք սկսան։ Յամին 431 ապրիլ ամսոյն
սկիզբը, երբք հարիւրեն աւելի Թեբացիք կըր-
յան Պղատէայի սիրել որ աւելի Աթենքի քան
Թէ Թեբեի դաշնակից ըլլալ կուզէր։ Ասոնք
յանկածակի գիշեր առեն քաղաքը մտան ազ-
նուականաց գլխաւորին օգնութեամբ, որ քա-
ղաքին դռները բացաւ անոնց։ Պղատէացիք
առջի բերան սարսափեցան, բայց եաքը Թեբա-
ցւոց թուոյն նուազութիւնը տեսնալով սիրտ
առին, նոյն գիշերը յարձակեցան և զանոնք
խողխողեցին։ Այս դէպքերուն լուրը Աթէնք
հասնելուն պէս, Աթենացիք մեկէն Ատտիկէի
մէջ եղած բոլոր Բեովոտիացիները կալտաւորե-
ցին և 'ի Պղատէա գաւառ մը խրկեցին և պա-
հեր, որպէս զի Ը՛րկայ Թէ յանկարծ Թեբացիք
զՊղատէա պաշարեն։ Այս բանս Սպարտացիք
յանդգնեք սեպեցին և իրենց դաշնակցաց հրա-
ման տուին որ Ատտիկէ մտնան։

3. Երկու հակառակորդ կողմանց ոյժը։ — Ըսա
Թուկիդիդեայ Լակեդեմոնացւոց կողմն էին բո-
լոր պելոպոնեսացի ազգերն, որոնցմէ Ախայե-
ցիք վերջերը միայն պաեերազմի մէջ մտան, և
Արգոսացիք ալ բոլորովին հեռու կեցան։ Պելո-
պոնեսէն դուրս Սպարտացւոց կողմն էին Մեգա-
բացիք, Լոկրացիք, Բեովոտիացիք, Փոկէացիք,
Ամբրակիացիք, Լեւկադացիք, Անակատորիացիք
և Եոազացիք։ Ակէ դուրս Իտալիոյ և Սիկիլիոյ
քաղաքները որոնք Սպարտայի կողմը բռներ
էին, տուած էին անոնց 500 նաւ և սակայն իսկ
Աթենքի կողմն էին Քիոս, Լեսբոս, Պղատէա,
Նաւպակտ, Մեսսենացիք, Ակառնանիացւոց մեծ

մասը, Կորկիւրա, Զակինդոս և Կարկատու քա-
ղաքները, Ծովահայեացն Կարիա, Դորիա, Յո-
նիա, Ելլեսպոնտոս, Թրակիոյ քաղաքները և
արևելեան բոլոր կղզիները ընդ մէջ Կրետէի
և Պելոպոնեսի, բոլոր Կիւկլադացք բայ 'ի Մի-
լոս և Թերա կղզիներէն։

4. Ապրնկի սրբատանդն։ — Հրաման տուաւ
Սպարտա իրեն դաշնակցացը որ իրենց զօրքեր
խաբեն Թերակղզւոյն պարանոցին վրայ։ Հօն
համախմբեց զանոնք իր զօրացը հետ Արքիդա-
մոս Թագաւորն. և ամենուն գլուխը հենալով
մտաւ Հ Ատտիկէ։ Պերիկլէսի հրամանաւ բոլոր
գիւղականք իրենց բնակութիւնը աւերր ա-
րըշակեր էին, և իրենց անասուններն Եւբէա և
ուրիշ մօտաւոր կղզիները խաբերը էին, և իրենց
ընտանեօք մեկաեղ Աթենք եկեր էին։ Ամառ ըլ-
լալով բերքերով առաղձուն գաշտերն թշնա-
միներն աւերըշարկելով ինչուան Աթենքի քո-
վերը հասան։ Սարսափը սիրած էր Աթենա-
ցւոց վրայ, կ՛ուզէին պատերազմիլ և չը նեղա-
նային Պերիկլէսի անհոգութեան վրայ. բայց
ինքը այն ամենայն չիսթութիւնները դադրե-
ցուց աներկիւղ սիրտաստութեամբ. Ժողովը-
դեան առաջը խորհրդով ալ չկանչեց, արգիլեց
որ ոչ ոք ալ քաղաքեն դուրս ելլե, և քանի մը
հեծելազօրաց գունդ խաբերց որ զթշնամին նե-
ղէ միայն։ Ասով թշնամեաց պաշարը հատնելով՝
պատերազմը չկատած՝ ստիպուեցան յետ գառ-
նալ, երեսուն օր Ատտիկէի մէջ կենալէն վերջը։
Բայց այս միջոցն Աթենացիք Պերիկլէսի խոր-
հըրդովը ծովու վրայ կը գործէին. Պելոպոնեսի
ջրոս կողմը պաբատեցան բոլոր եղերքները ա-
րըշակեցին, Ակառնանիոյ մէջ Սոլիոսի և Ա-
տարկոսի, Մեգարայի մէջ ալ սիրեցին Կեփա-
լենիա, Եգինէ և Նիսէա կղզեաց։ Նոյն տարւոյն

աշնան վերջերը պատերազմի մէջ մեռնող զինուորաց յուղարկաւորութեան հանդէսը կատարեցին, և Պերիկլէս այն աքաղէլնեերբողը խօսեցաւ զոր մեզի կատանդէ Թուկիդիդես։ 430ին գարնան, Արքիդամոս նորէն մտաւ Ատտիկէ նոյն զօրքերով, և աւերէ մնտեցաւ Աթենքին. ամէն անցած տեղերն սաստիկ աւերելով ու աւերըշտկելով, բայց քառասուն օրէն ստիպուեցաւ յետ քաշուիլ. ոչ թէ Աթենացւոց զօրութենէն վախցաւ, այլ ուրիշ աւելի ահաւոր թշնամիէ մը որ գժբաղդաբար սկսեր էր զԱթենքը պատժել, և այս թշնամին ժանտախտն էր։

5. Ա՛ենոֆ ֆանֆախոը։ Պերիկլէսի մահը։ — Թուկիդիդես որ ոչ միայն հանդիսատես եղաւ, այլ ինքն ալ բռնուեցաւ նոյն ախտին, կը պատմէ թէ այս ախտը Եթովպիա, Եգիպտոս, Լիբիա և պարսկական Ասիա պատաւէրն վերջը, Պիրէոնի մէջ երևցաւ. անշուշտ նաւով հոն մը հասած և ի Պիրէոնէ անմիջապէս քաղաքը մտաւ։ Անպատմելի է այն խուռն բազմութեան ժողովըրդոց ջարդն. բարոյական ու ահաւոր անտանելի տխրութեան մը մէջ թաղուած իրենց ընչիցը և դիւղից կորստեան պատճառաւ. բնակութիւնները դէշ, անուշդն անպիտան։ Ոչ սեռը ոչ հասակը ազատէր այս ժանտ ախտին ահեղ հարուածէն, որ և՛ ինաբնց բժշկական գիտութեան ապտաժամբ էր։ Ախտացելոյն տանջանքները սոսկալի էին, գլխոյ սաստիկ ջերմութիւն, ուժով հազ, բանի տրտի խառնուած, սաստիկ ցնցմունքեր, ներքին կրակ մը որ սղիքները կը տոչորէր, և այրիչ ծարաւ մը։ Եօթներորդ կամ ուրերորդ օրը ձախորդ օրերն էին, բայց շատերն որոնք այս օրերն անվտանգ ալ կ'անցընէին՝ քիչ ատենէն այս ախտէն ունեցած տկարութենէն կը մեռնէին. իսկ այլք որ ցաւէն սպառած կ'ապրէին,

մարմնոյն անդամներէն մէկը կը կորսնցընէին և կամ խելքի պակասութիւն կ'ունենային։

Պերիկլէս 100 նաւով Աթենքէն ելեր էր 400 հարիւր սպառազէն զինուորօք, և Եպիդաւրոսի և Տրեզենէ քաղքին շրջակայքը կ'աւերըշտկէր, Պրասիա քաղաքն ալ առած էր որ Լակոնիոյ արևելեան ափանցը վրայ է, երբ յանկարծ ժանտախտը իր բռնակին մէջ տարածուելով ստիպուեցաւ դառնալ ի հայրենիս։ Քաղաքն շատ ընդդիմութիւն և տհաճութիւն ցըցուց իրեն դէմ, որովհետև պատերազմին ձախորդութեան և ամէն կրած վնասուց պատճառը զինքը կը համարէին։ Պերիկլէս ոչ միայն խաղաղցուց զանոնք, այլ բոլոր ժողովրդեան վստահութիւնն ալ նորէն իրեն քաշեց, և որոշուեցաւ որ պատերազմն աւելի ուժով առաջ տարի։ Եւ իրաւցընէ Փորմիոնի առաջնորդութեամբ Ա՛առնացիոց վրայ նաւատորմիղ մը խաբեց, և քաղքին պաշարումն այնչափ սաստկացուց որ երկու տարի դիմանալէն ետքը անձնատուր եղաւ։

Բայց Պերիկլէսի վերջը հասեր էր։ Ա՛յն ախտը՝ որ իր սկիզբն բարեկամաց մեծ մասը, քոյրը և երկու որդիքը տարեր էր, ալ իր վրայ եկաւ 429ին սկիզբներ, երբ արդէն ախտը անցնելու վրայ էր, և քիչ մարդիկ կը մեռնէին. և դանդաղ ընթացիւք զինքն ալ տարաւ։ Հոգի տալէն քանի մը վայրկեան առաջ, շատ քաղաքացիք անկողնոյն չորս կողմը առած կը խօսէին մեկմեկու հետ իր առաքինութեանց ու իր իշխանութեան վրայ, և այն յաղթանակացը որով զՀայրենիս փառաւորեց։ Լսեց Պերիկլէս. և վերջն ոյժը թափելով զարմացաւ որ զինքը այնպիսի բաներու համար կը գովէն, ուսամենևին չեն խօսիր իրեն ամենէն գեղեցիկ փառացը վրայ. այսինքն՝ թէ ոչ մի Ա՛թենացի իրեն պատճառաւ սուգ մտած էր։

6. Մեթիւնէի սպիսկոպոսն, Կղէոն։ — 428ին մինչդեռ Աթենացիք Արքիդամոսէն երրորդ անգամ կրած վնասուց ոչ ժը կ'ողջային, ասկէ առաջ վնասներ կրեցին Մեսիլինէ քաղքին սպասամբութեամբը։ Այս քաղաքը և ամբողջ Լեսբոս կղզին ալ, միշտ հաւատարիմ դաշնակից մնացեր էր Աթենքին։ Դէղոսի դաշնակցութեան ժամանակէն ի վեր դրուած որոշեալ պայմաններով, որ էր միայն պատերազմի առեն զինեալ նաւեր և ոտակ տալ։ Բայց արդ չուզեց տալ և յայտնի կերպով իմացուց երբեմն որ ալ Աթենքի հետ բան չունի և Պելոպոնեսացւոց հետակը միացեր էր որ Աթենացիք ամենայն ջանք թափեին այս սպասամբութիւնը զսպելու, քանի որ միւս դաշնակիցներն ասոնց օրինակին չէին հետեւած։ Եւ սուգիւ մեկին պաշարեցին զՄեսիլինէ ծովէն և ցամաքէն, որ անձնատուր եղաւ. պարիսպները քանդեցին, նաւերը գրաւեցին և հազար հոգիէն աւելի քաղաքացի սպանեցին։ Առջի բերան Կղէոնէի խորհրդովը որոշեր էին բոլոր բնակիչներն ալ ջնջել։ Այս Կղէոնէը՝ որ խազաղորդ մ'էր, Պերիկլէսի մահուընէն ետքը քաղաքացիս մարդկան դասէն մեկն էր, որոնք աւելի ալ ցած ազգէ առանց ուղիղ դաստիարակութեան մեծցած, և սակայն եռանդ էին մեկզմեկ գերազանցել և քաղքին վարչութիւնը ձեռք առնուլ։ Առնցմէ էր Կղէոնէը, ռամիկ, շողոքորթող, Ճարտար, յանդուգն և բուռն, և ուժով խօսող Ճարտասան, որ յարմար առեն գտաւ և Պերիկլէսի իշխանութիւնը ժառանգեց։

7. Պղոպէնէի պաշարումն և անկումն։ — Լեսբոսի պատերազմին յաջողութենէն եռքը յաջորդեց Պղատէայի ախտը անկումն։ 429 Արքիդամոս պաշարեց, որովհետև չէր ուզած Աթենքի հետ ունեցած դաշինքը լուծել. փառասէր՝

միանգամայն և չուտ քաղաքն երկու տարի դէմ կեցաւ։ Իսկ քաղքին մէջը միայն 400 պղատէացի 80 աթենացի և 110 հացեփկանայք կային. միւս կանայք, տղաք, ծերք և անկարող մարդիկն Աթէնք խրկուած էին։ Երբոր պաշարուողները սովով նեղուած ալ կարող չէին գիմանալու, որոշեցին պարիսպներէն վար իջնալ և փախչիլ։ Այս յանդուգն գործը կատարելու առեն, անոնցմէ կէսը վհատեցան և չջարժեցան, իսկ միւսները փորձեցին և յաջողեցան։ Որոնք որ միացեր էին 225 հոգւոյ չափ սպանուեցան, կանայք գերեցան, քաղաքը հիմնայատակ եղաւ, և իրենց երկիրը Թեբացւոց՝ անոնց ոխերիմ թշնամեացը արուեցաւ։

8. Կոէյրա։ — Դիմացէ դիմացը Լեսբոսի և Պղատէայի մէջ պատերազմողք, գարձեալ մեկմեկու հանդիպեցան Կորկիրայի քով։ Կղզեցւոց մէջ սաստիկ երկպառակութիւն կար, ժողովրդեան մասն Աթենքին կողմնակից էր և աղնուականք Սպարտայի։ Ժողովրդեան մասին Աթենացիք նաւեր խաբեցին օգնութեան, իսկ ազնուականաց Սպարտացիք։ Ծովու և ցամաքի վրայ պատերազմ սկսաւ, և ժողովրդեան կողմը յաղթանակեց, և եօթը օր քաղքին մէջ արիւն կը վազէր։

9. Պիղա և Սիակուբիա։ — 425ին Դիմոսթենէս, Աթենացի զօրավարը պղտի նաւատորմիղով մը Ակառնանիոյ և Ամբրակիոյ մէջ քիչ մը յաջողութիւն գտնալով սիրեց Պիղոսի (այժմ Նաւարին) Մեսսինիոյ արևմտեան կողմին վրայ, և հօն ամրացաւ։ Այս բանս իմանալով Սպարտացիք շուտով եռանդն ինկան ծովու և ցամաքի ղօրքով, և յարձակեցան անոնց վրայ երկու կողմեն. բայց աւելի ապահով ըլլալու համար լաւ սեպեցին Սիակուբիա փոքր կղզւոյն սիրել որ

Պիղոսի գիմացն է, և հոն 420 սպառազէն գրկեն և գերիներ անոնց ծառայութեան համար։ Սպարտացւոց յարձակմունքներէն յորս երևելի հանգիսացաւ Պրասիդաս անօգուտ եղան։ Աթենացի նաւատորմիղն վրայ հասնելով՝ զարկաւ Թշնամեաց նաւատորմիղը և բոլորովին խորտակեց ու Սփակտերիոյ մէջ պաշարեց բնակիչները։

Եղածին լուրը Սպարտա հասնելով մեծ չփոթութեան պատճառ եղաւ, զինադադարումն խնդրեց և պաշարուողները ազատելու համար դեսպաններ խաւրեց Աթէնք հաշտութիւն ընելու համար։ Բայց Կղէոն խաղաղութեան ամէն ակնկալութիւնը վճռացուց. ծաղրածութեան համար իրեն յանձնուած ըլլալով որ Սփակտերիոյ տիրէ, սուգիւ Դիմոսթենէսի հետ՝ի Սփակտերիա նաւէն կ'ելլէն, կը յարձակին Լակեդեմոնացւոց վրայ և ապրածները կը դերեն։

10. Ընծայոյ խոստէն։ — Աթէնք կարևոր սեպեց ծեծել երկաթը քանի որ տաք էր։ Նիկիա՝ Կորնթոսի պարանոցի քով ցամաք ելաւ և Կորնթացւոց յաղթեց։ Եաքը եղերքներէն նաւելով և աւարելով դԱրգողիս, Մեթոնի թերակղզին հասաւ և տիրեց տեղւոյն, և ապա Կիւթերա կղզւոյն։ Կիւթերայէն անցաւ Լակոնիոյ ծովափունքն իջաւ, և կողոպտեց զայն, Թիւրէայի վրայ յարձակեցաւ՝ի Կինուրիա և այրեց զայն։ Միւս կողմէն Դիմոսթենէս արշաւանք մը ըրաւ Բէովտիոյ դէմ, բայց ձախող գնաց։ Աթենացիք ական պատերազմին Դէլոսի քով և ամբողջ օրը կռուելէն եաքը սակաւութեան փախչել 1000 հոգի դաշտի վրայ մեռած թողուով։ Այս պատերազմիս մէջ Սոկրատ ալ մտեր էր, և քաջութեան գովեցիկ օրինակ տուեր։ Քսենոփոն

տակաւին պատանի և սաստիկ վիրաւորուած ըլլալով, կեանքը Սոկրատին շնորհքն էր, որովհետև մինչդեռ թշնամեաց ձեռք պիտի իյնար, ուսին վրայ առաւ և մշտնեռով ճամբայ ընելով ազատեց։ Պրասիդաս Սպարտացին, Աթենացւոց ձախորդութենէն օգուտ քաղելով, մտածեց որ պատերազմի ասպարէզն Քաղկիտակեի և Թրակիա մէջ փոխագրէ, ինչպէս որ Աթենացիք Սպարտայի երկիրներուն մէջ փոխեր էին։ Գնաց և դիւրաւ շատ քաղաքաց տիրեց, ինչպէս Ամֆիպոլիս քաղքին ալ։ Թուկիդիդէս առենին չփոթելով պաշտպան կենալ քաղքին, ինչպէս որ իրեն յանձնուած էր, քսանամեայ աքսորանաց դատապարտուեցաւ Կղէոնի խորհրդով։ Այն անգործ ըլլալուն դատապարտութեան առեն, Պելոպոնեսական պատերազմին պատմութիւնը գրեց։

Միւս տարի, 422ին, Աթենացիք զԿղէոնի իրենց զօրավար ընտրեցին, որ մեկնի՝ի Թրակիա անցաւ 1200 սպառազէն և 300 այրուձիով։ Բայց այս ընտրութիւնը ձախորդ էր, վասն զի որչափ որ Պրասիդաս յաջողակ էր, հմուտ և ինչուան բանակի մը հրամայելու գիւցազն, նոյնչափ ալ Կղէոն անյարմար և բանակի գլուխ կենալու անփորձ, ու այս անգամ և ոչ զինմսթենէս օգնական ունէր։ Ամֆիպոլսոյ քով հանդիպելով Պրասիդաս Կղէոնի բանակին սկսաւ շարժմունքէ մը օգուտ քաղել, քաղքէն դուրս ելաւ և մեծ ուժով Աթենացւոց վրայ յարձակեցաւ։ Աթենացիք չփոթեցան, փախան և Սպարտացիք յաղթութիւնը կատարեալ եղաւ։ Այն պատերազմին մէջ մեռաւ Կղէոն, և Պրասիդասն ալ վերքէ մը։

11. Նիկիասյ հաշտութիւնը։ — Պրասիդասյ մահը մեծ կորուստ էր Սպարտայի համար, ո-

բովհետև իբրև զօրավար և քաղաքագէտ ուրիշ հաւասարը չկար: Ա. յս պատճառաւ, և Սափակատերիոյ մէջ եղած գերիներն փրկանաւորելու փափաքով, և արդէն յոգնած ալ ըլլալով երկարատև պատերազմին, խաղաղութիւն առաջարկեցին. և որովհետև Կղէոնի մահուընէն ետքը, Աթենքի իշխանութիւնը խմաստուն և խոհական Նիկիասայ ձեռքը անցեր էր, հաշտութեան խնդիրն դիւրացաւ: Յիսուն տարուան խաղաղութիւն եղաւ 421ին մարտ ամսուն մէջ, այս պայմանով որ երկու կողմին բռնուած գերիներն ետ դառնան, և ինչ երկիր որ առեր էր իւրաքանչիւր կողմը պատերազմի առեն՝ ետ դարձընեն: Եւ՝ ի պահիւ խաղաղութեան բուն պատճառին՝ երկու կողմանք ցնծութեամբ սրտի Նիկիասայ խաղաղութիւն կոչեցին:

ԳԼՈՒԽ Բ.

Պելոպոնեսեան պատերազմը: Նիկիասայ խաղաղութենէն իվեր Աղկիբիադէսի առումը:

1. Աղկիբիադ: — 2. Պատերազմը նորէն կը սկսի: — 3. Սիկիլիոյ արշաւանք: — 4. Սթենոցլեց արիական ոգին: — 5. Աթենքի դէմ ապստամբութիւնը: — 6. Աղկիբիադայ ետ կանչուիլը: — 7. Աղկիբիադայ յաղթանակը: — 8. Աղկիբիադայ պալոծնէն խյնալը: — 9. Լիսանդր և Կալլիկրատիդաս. Արգինուսայի ճակատամարտ: — 10. Եգոս գետին ճակատամարտը: — 11. Աթենքի անկումն:

1. Աղկիբիադ: — Աղկիբիադ կորսնցնելով իր հայրը հինգամեայ հասակին մէջ, իր ազգականին Պերիկլէսի պաշտպանութեան տակը մեծցաւ: Բայց կամ թէ Պերիկլէս շատ հոգ չէ ըրած և կամ թէ աւելի հաւանաբար չէ կրցած անոր անընկճելի բնութիւնը չտկել, որով Աղկիբիադ մեծցաւ առանց զգացման ծանրութիւն մը և հաստատամտութիւն մը ունենալու. մանաւանդ տարօրինակ խառնուրդ մ՚էր բարեաց և չարի, առաքինութեանց և ախտից: Ինչը սերնդեամբ Աթենքի ամենէն ազնուական ցեղէն էր, բայց եռանդեամբ ռամկապետականաց կողմը բռնեց: Իբրև քաջ՝ Պոտիդէայի ճակատամարտին մէջ քաջութեան մրցանակ ընդուներ էր, ինչպէս Դելոսի պատերազմին մէջ ալ, և սակայն ամենէն անկալուկ և կնամարդի երիտասարդն էր

քաղաքին մէջ: Այդ նեղութեանց և աչխատութեանց համբերող և մարմնով աւելի չարքաշ քան զՕպարատացի մը, միանգամայն յարուած էր ասիական զեղխութեանց, և նախապարագ կ'անցընէր: Երբեմն ուշագրութեամբ Սոկրատայ խօսքերը մտիկ կ'ընէր անկէց անյառ խմաստասիրութեան մը պատգամները մտիկ ընելու համար, և երբեմն ընկերաց հետ ինքը զինքը կրկին կատաղ: Վերջապէս երեն վրայ կը սեմնուէին երկու հակառակ բնութիւն, երկու անձ էր 'ի մի անհատ, երբեմն մէկ անձի գործ կը ցուցընէր և երբեմն ալ ուրիշ անձի, տեղեաց և պարագայից համեմատ. որովհետև կարգէ դուրս հոգւոյ ճկունութիւն ունէր և անթերի պատրաստութիւն մը յարմարելու ինքզինքն տարբեր անձանց, դիպաց և բոլորովին տարբեր սովորութեանց:

Եթէ բարուց այս յատկութեան վրայ աւելցընենք ունեցած անբաւ հարստութիւնը զոր կը շռայլէր, Աթենացւոց մէջ գտնուած միակ գեղեցկութիւնն, և իր ազգու և վայելուչ ձարտասանութիւնն, թեպէտ Թուկիդիդես պզտիկ սուիթիւն մ'ունէր, գիւրաւ կը հասկընանք թէ ինչո՞ւ չարունակ չորս կողմը բարեկամներ և հաղորդներ ունէր, և թէ ժողովուրդը շատ անգամ ժպտելով կը խօսէր և կը գբաղէր Ալկիբիադի վրայ:

2. Պոպերպէնն գործեալ պոխը: — Խաղաղութեան դաշնից գործադրութիւն շատ մը դժուարութեանց, դիտողութեանց և խօսակցութեան առիթ տալով, Ալկիբիադ որ եռեւ էր հասարակաց գործոց գլուխ կենալու, Սպարտա գնաց իբրև դեսպան Աթենքի նոյն ինդրոց համար: Բայց Սպարտացիք իրենց շահերը Նիկիասայ ուղեցին յանձնել. Ալկիբիադ ալ գլուխ կեցաւ պատերազմը ուզող կողմնակցութեան և սկսաւ գրգռել զԱթենքը որ Արգոսի, Մանտինէացի և Եղիսի հետ յարձակողական դաշնակցութիւն մը կազմէ: Փիչ մը ետքը, 419ին, պզտիկ բանակ մը ելաւ Պէղոպոնէս գնոց դաշնակցութիւնն կարգի դնելու, և բարեկամ քաղաքները ամրացնելու գիտաւորութեամբ: Նոյն առենները Եպիտաւրոս և Արգիոս ինդիր մը ունենալով իրարու հետ, ինքը գրգռեց զԱրգոսացիս որ պատերազմ բանան Եպիտաւրոսի դէմ: Պատերազմն սկսաւ, և երբոր տարին լմընալուս վրայ էր և Սպարտացիք Եպիտաւրոսի օգնութեան 300 վհանակիր հեռաւակ խրկեցին, Ալկիբիադ որ արգէն Աթենք գարձեր էր՝ հրատարակեց թէ Սպարտա դաշինքը ջնջեց: Եւ սկսաւ պատերազմը, որ երկու տարի Պէղոպոնէսի մէջ փոփոխ բաղդիւ տեւելէն ետքը, Սիկիլիոյ մէջ լմընցաւ ահաւոր կերպով մը:

3. Սիկիլիոյ արշաւանք: — Այս կղզւոյն մէջ 415ին սահմանադլխոյն ինդիրներով աւրուեցան Եգեստա և Սելինոն քաղաքներն իրարու հետ: Եւ որովհետև Սիրակուսա քաղաքը Սելինոն քաղքին հետ միացաւ, Եգեստացիք ազատարանօք Աթենք մարդ խրկեցին և դաշինք ուզեցին գնել: Իրենց ինդիրը խաւիս մերժեց Նիկիաս որ կ'ըսէր թէ Աթենք արգէն շատ գործեր ունի առաջս, ինչո՞ւ համար Սիրակուսայի հետ պատերազմ բանայ, որ իրենց շատ ծանրագնի պիտի նստէր և գժուարին էր միանգամայն: Բայց եռանգեամբ պաշտպանեց խընդիրն Ալկիբիադ, և որոշուեցաւ որ Սիկիլիա արշաւեն: Այս արշաւանաց գլուխ կեցան Նիկիաս, Ալկիբիադ և Լամաքոս: Պատերազմական նաւատորմիղը որ ամառուան կեսին Պիրէոնէն

ելաւ, 134 երկաթի նաւեր ունէր, որոնցմէ հա-
րիւրը Աթենքէն էին և միւսները դաշնակիցնե-
րէն, և մէջը կային 6,400 զինուորք: Ասոնց հետ
մէկտեղ կային շատ մ'ալ նպարակառոր նաւեր:

Փիչ սաեն էր Սիկիլիա հասեր էին, և արդէն
Ադկիբիադէ խորհրդովը տիրեր էին Նաքսոսի և
Քագանիոյ որ նաւերուն սովորական կայան
պիտի ըլլային, երբ Ադկիբիադէն հրաման եկաւ
որ շուտ մը գառնայ իրեն սրբապիղծ յանցա-
նացը պատասխանելու համար. որովհետև ամ-
բաստանութիւն եղած էր թէ Հերմէսի կիսար-
ձաններըը Աթենքէն էլլալէն առաջ կործաներ է
և սրբազան խորհուրդներն ալ ծաղրեր է: Ինքը
Թողուց բանակը ելաւ գնաց, բայց փոխանակ
Աթէնք երթալու՝ Սպարտա գնաց ապաւինե-
լու: Ասով Աթենացիք զինքը իր կամակորու-
թեան համար մահուան դատապարտեցին, և
բոլոր սաացուածքները յափշտակեցին:

Ադկիբիադէն երթալէն վերջը գրեթէ բոլոր
զօրաց հրամանատարութիւնը Նիկիասի անցաւ,
որ երեք տիս առանց բան մը ընելու անցընե-
լով, որոշեց Սիրակուսայի վրայ ելլալ: Քաղաքը
ազէկ ամրացուցած գանալով, վարպետու-
թեամբ մը Սիրակուսացիքը քաղաքէն դուրս
հանել տուաւ, եաքը վրանին յարձակեցաւ և
յաղթեց անոնց. բայց չկրցաւ պատուղը վայելել,
և Թողուց որ մեծ մասը նորէն քաղաքը մտնան:
Միւս տարւոյն գարնան Եպիպլէի տիրեց, որ
քաղքին վրայ տիրող բարձրաւանդակ մ'էր:
Ասով շատ ձակատամարտեր ըրին Սիրակուսա-
ցիք, որոնք միշտ ձախողեցան. բայց ձակատա-
մարտով մը Աթենացիք կորնցուցին զլանաքոս
ձարտար և քաջ զօրավարը, որ իր վերջին աղբա-
տութեան մէջն ալ՝ միշտ յարգելի և պատուա-
ւոր եղաւ: Նիկիաս իրեն վերջին բարեյաջող-

յաղթութիւններով յոյս առաւ որ գործը ա-
զէկ կատարած պիտի ունենայ: Ընդհակառակն
Սիրակուսացիք վհատեցան, և անձնատուր ըլ-
լալու միտք ունէին երբ լսեցին թէ 3000 սպար-
տացի օգնութեան կը հասնին, որոնց կը զօրա-
վարէր Գիլիպպոս:

Հասաւ Գիլիպպոս. իրմէ քիչ մը եառաջ
Թէ նաւ ալ Կորնթոսէն հասաւ, և տեսարանն
բոլորովին փոխուեցաւ. պաշարող Աթենացիք
պաշարուած գտնուեցան: Նիկիաս նորէն վհա-
տեցաւ, և չուտ մը մարդ խաբեց Աթէնք ի-
մացնելու թէ ինչ վիճակի մէջ կը գտնուի, և
թէ օգնութեան պէտք ունի: Մէկէն օգնութեան
հասաւ նախ Եւրիմեդոնդէս 10 նաւով, եաքը
413 տարւոյն սկիզբները Դիմոսթենէս ուրիշ
74 նաւով հասաւ, որոնց մէջ 5000 վահանաւոր
հետևակ և գրեթէ 3000 հոգի նետաձիգ, ալեղ-
նաւորք և պարսաւորք կային:

Քանի մը ձակատամարտներ եղան ծովու և
ցամաքի վրայ, որոնց ահաւորը՝ Սիրակուսայի
նաւահանգստին մէջը եղած ձակատամարտն է-
ղաւ, բայց ամէնքն ալ Աթենացւոց կործանութիւն
եղան. այնպէս որ որոշեցին նաւերն, հիւանդ-
ներն, վիրաւորներն Թողուլ և դէպ 'ի ցամաքը
երթալ և կղզւոյն ամէն կողմը ցրուիլ: Երբոր
երկու խումբ բաժնուած կը քաշուէին, հասան
եաւէն Թշնամիք, յարձակեցան ու ամբոխեցին
անձնատուր ըլլալ: Նիկիաս և Դիմոսթենէս մա-
հուան դատապարտուեցան, միւսները ետեղ
հաղար հոգի մեսալներուն մէջ ձերբակալուեցան,
ուր որ սոսկալի տանջանքներ քաշեցին, շատե-
րը մեռան վերջերէն, դէչ օդէն և կամ խեղճ
կերակուրներէն:

4. Աթենացւոց պրխալ ոգին: — Ադկիբիադ
Սպարտա կեցած՝ կը մտածէր վատութեամբ

Աթենքէն ոխը հանել. և ինչպէս զԱպարատացիս գրգռեց որ Սիրակուսացւոց օգնութեան երթան, այսպէս ալ համոզեց որ Աւտիկէի վրայ վազեն և Դեկելիա գրաւեն: Այս քաղքին սկսեալ՝ որ Աթենքէն քիչ հեռու էր՝ Ագիս Թագաւորը ուզածին պէս չքնաղակազմ գաւառները կ'աւերըշտկէր, Աթենացւոց Եւբէացի հետ ունեցած հաղորդակցութիւնը կը կտրէր, որ իրենց ցորենոցն էր, և կը ստիպէր որ Աթենացիք միշտ պաշտպանողական վիճակի մէջ մնան: Աստ Աթենացիք այս միջոց իրենց բուն աշխարհքին մէջ, աւելի գէշ վիճակ ունէին քան թէ Պելոպոնեսեական պատերազմին որ և իսկ ժամանակ, երբոր Սիկիլիոյ դժբաղդ արկածին բօթը առնին: Սակայն առջի անգամուան ազդեցութիւնը անցնելուն պէս, աճապարեցին իրենց բնական արիասրտութիւնը ձեռք առնել, և հրատարակեցին թէ յաղթուած չէնք. մէկէն նոր նաւատորմիղ մը պատրաստեցին. Սուննիոյ հրամանատանը ամրացուցին, և ամէն կերպով պատրաստութեան որ և իսկ Թշնամւոյ գիմանալու:

5. Ապոմբութիւն Աթենքի դէմ: — Մինչդեռ Աթենք բոլոր ձեռք պատրաստութեամբ անցուց, իր բոլոր գաշնակիցք ապստամբողական խորհրդոյ եռանդ էին: Յունաց աշխարհին ամէնէն հեռաւոր քաղաքներէն ալ դեսպաններ կուգային Սպարտա, որպէս զի գրգռեն ուժով պատերազմելու, և իրենց ապստամբութեան համար օգնութիւն կը խնդրէին: Պարսկաստանի նախարարք ալ չարժեցան, Տիսափեռնէս և Փառնաւազ դեսպան խաւրեցին 'ի Սպարտա՝ խոստանալով որ պատերազմին ծախքին վճարման կ'օգնեն: Այսչափ թշնամիներէն որոնք աՄէն կողմէն կ'եղերէին Աթենքի դէմ Սպարտացի-

ներէն օգնութիւն խնդրելու, Սպարտայի ուրիշ բան չէր մնար, բայց եթէ այս թշնամիներէն յարմարագոյնը ընտրել: Ազկիբիագ ազդկ գիտնալով Փիլոսի ուժը և կարեւորութիւնը՝ խորհուրդ տուաւ որ առաջ զՓիլոս ոաք հանեն: Այս կղզին գիմացին, և անոնց հետ մեկտեղ էր և նոյն ինքն Ազկիբիագ, և ոաք հանեցին: Փիլոսի օրինակին հետեւեցան Երեսբիա, Կալզոմեն, Թէհոս, Լեբեատս, Միլետոս, Կնիտոս և Հռոդոս: Եւ կամայ կամայ իրենք զիրենք Աթենքի հպատակութենէն ազատ հրատարակելէն ետքը սկսան ամրանալ և պատերազմի պատրաստուիլ:

6. Ազկիբիագի յեղաշրջութիւնը: — Աթէնք իր ամէն ջանիւք հանդերձ՝ պիտի չկրնար այնչափ մրրկայց դիմանալ, բայց անակնկալ դիպուածը իրեն օգնեց՝ որով Ազկիբիագ ալ Աթէնք գարձաւ: Այս արտառոյց մարդը, Սպարտա եղած ատեն Ագիս Թագաւորին կնկան նախատինք ըրեր էր: Ագիս ուզեց անկէց վրէժ խնդրել, հրաման խաւրեց որ զԱզկիբիագը սպանեն: Ազկիբիագ ժամանակէն առաջ այս բանս գուշակելով մեկներ Սպարտայի բանակէն ելաւ, Տիսափեռնէի քովը գնաց և հօն անոր սիրան իրեն քաշելով, պատճառ զՏիսափեռն Սպարտացւոց հետ՝ որպէս զի կամայ կամայ Աթենացւոց 'ի նպաստ չքնաղ անոր բարեկամութիւնը: Այս գործոյ ատեն և ատոնց արդեամբը Աթենքի մէջ քաղաքական յեղափոխութիւն մը եղաւ, աղնուականաց կողմին 'ի նպաստ. ընդհանուր ատենին տեղ հինգ հազար միայն քաղաքացեաց ատեանն անցեր էր, և հինգ հարիւրեան ատենին տեղ չորս հարիւրեանը փոխանակեր էր անասնման իշխանութեամբ:

Այսպիսի փոփոխութեանց լուրը Աթենացւոց ըղձաց գլուխը ապչցուց, որ Սամոսի ծո-

վուն վրայ կը գտնուէին: Առաջին կրկնց սաստիկ թեամբ զինուորները զսակաւապետութեան կողմնակիցները կ'ուզէին խողխողել. բայց եաքը հանդարտելով մէկ տեղ ժողովելեան որպէս զի հանդիսաւոր երդում ընեն որ հաւատարիմ կեանան ռամկապետութեան, սակաւապետութեան կողմնակից կասկածաւոր զօրավարաց ձեռքէն հրամանատուութիւնը առնին, նոր զօրավար ընտրեցեն զԹրասիբուղ և զԹրասիլլոս: Եաքը զԱղկիբիադ ևս յիշեցին, աքսորի դատապարտութենէն ազատ հրատարակեցին: Զօրաց համաձայնեցաւ Աթէնք, չորս ամսէն եաքը քաղաքական վարչութեան կարգը փոխեց, հին սահմանադրութիւնը հաստատեց և զԱղկիբիադ յետ կանչեց:

7. Աղիբիադէ յաղթանակը: — Բայց Աղկիբիադ ջուղեց իր հայրենիքը դառնալ առանց զարմանալու արժանաւոր գործ մը տեսնելու: Եւ յաջողեցաւ: Աթենացւոց Սամոսի նաւատորմիղին հրամանատարութիւնը առնելով, Պելոպոնեսացւոց նաւատորմիղին եւս էն ինկաւ որ Եղլեսպոնտոսի քովերը կը գտնուէր և որուն Մինդարոս կ'առաջնորդէր. երկու անգամ մեկմեկու հանդիպեցան, մէյմը Քսեստոս մէյ մ'ալ Աբիտոս քաղքին քով, և երկու ձակատամարտին մէջն ալ յաղթութեան պելոպոնեսացիք, ու Թշնամւոյ ձեռքը 30 նաւ թողուցին: Այս յաջողութենէն վերջը Աղկիբիադ եռաթիռ նաւով մը միայն գնաց Տիսափեռնեսի դիմացը, որ նոյն միջոցը Եղլեսպոնտոսի վրայ կը գտնուէր, կը յուսար իրմէ դրամական օգնութիւն մը գտնել: Ընդ հակառակին նախաբարը, որ Լակեդեմոնացւոց հետ կ'ուզէր նորէն բարեկամանալ, զինքը բռնել տուաւ մէկէն և կապուած Սարդիկ խաբեց: Բայց երեսուն օրէն վերջը

Աղկիբիադ փախչելու հնարք գտաւ, և իր բանակը երթալով անոր հետ մեկտեղ մտաւ Պրոպոնտոսի մէջ և Կիւզիկոնի մեծ յաղթութիւնը ըրաւ: Կիւզիկոնի նաւահանգստին գիմացը կեցած էր Մինդարոսի նաւատորմիղը, որ 60 կտոր նաւ ունէր: Մօտեցաւ անոր Աղկիբիադ, վրանին յարձակեցաւ և սաստիկ զՊելոպոնեսացիս որ ցամաք ելլան, նաւերը թողուն և փախչին. բոլոր նաւատորմիղը երեն ձեռքը մնաց: Ասով ալ գոհ չեղաւ, երեն զօրքն ալ ցամաք հանեց և մեծ յարդ տուաւ փախստականներուն, որոնց հետ մեռաւ Մինդարոս ալ:

Այս յաղթութիւնը զգալի կերպով պատերազմողաց դիրքը փոխեց, և Աղկիբիադ անկէց օգուտ քաղել ուզելով, սկսաւ արշաւել Փառնաւազի երկիրներուն վրայ, Եղլեսպոնտոսէն և Բերսոնեսոնէն սկսաւ հարկ պահանջել, Սելիմպրիոյ և Պերինդոսի տիրեց, Աթենքին հնազանդեցուց Քալկեդոն և Բիւզանդիոն:

Այսպիսի գեղեցիկ գործերը կատարելէն եաքը՝ Աղկիբիադ դիմաւ իր բարեկամաց յորդորանացը, և 407ին մայիս ամսուն մէջ հայրենիք դարձաւ: Իր դարձը կատարեալ յաղթանակ մը եղաւ: Աթենացւոց բոլորը նաւերն զարդարուած էին վահաններով և թշնամեաց աւարներով: Ամսնմէ վերջը ուրիշ քանի մը նաւերու միացորդքը կուգային, զորս ինքը թշնամեաց ձեռքէն առեր էր. ամէնքը մէկտեղ գրեթէ 200 կտոր նաւ: Հաղիւ թէ ցամաք ելած էր, ժողովուրդը բոլոր գիմաց ելաւ ուրախութեան աղաղակներով: Ոակէ պատկերը ընծայեցան իրեն, ծովու և ցամաքի զօրութեանց զօրապետ եղաւ, և իր բոլոր ստացուածները յետ գարձուցին:

8. Աղիբիադէ էբեռ խնալը: — Աղկիբիադէ ամենակարող համբաւը ուր ուրեմն զինքը կոր-

ծանեց: Մովսէս վրայ հասաւ փորձ փորձեց Անդրոսին ախրելու, բայց փորձը անյաջող եղաւ՝ փոփոխական ամիսը զօրավարին անհոգութեան յանգանաք սեպեց: Փիռոսի և Յոնիոյ միացած տեղերուն ախրելուն լսոյն ամենայն յոյսով կը սպասէր Ժողովուրդն, և այս յոյսը պատճառ եղաւ՝ Աթենացւոց ոգիքը զայրացան Աղկիբեադի դէմ: Բայց այս ամէն գանգատանքը Ալկիբեադ դաշնակցաց հարկը Ժողվելու գնաց, նաւատորմիղը Անտիոքոս անուանով մարդու մը յանձնեց, պատուիրելով որ ամենայն կերպով զգուշանայ պատերազմելէն: Իսկ Անտիոքոս ընդհակառակն գրգռեց զԹշնամին՝ ի պատերազմ, զարնուեցան և իր կեանքը և շատ նաւեր կորսընցուց: Այն առեն կասկածեցան Աթենացիք Թէ մանուածքին ըրած ըլլայ, և տասը զօրավար խաւրեցին որպէս զի վար առնեն զԱղկիբեադ, որոնց մէջ էր և Կոնոն որ գերագոյն իշխանն էր: Աղկիբեադ գիտնալուն պէս, կամաւոր աքսորանօք քաշուեցաւ՝ ի Թրակիա, իրմէ չնահ ամուր բերդի մը մէջ:

9. Լիսանդր և կալլիկրատիդաս: Արքինուսայի պատերազմէն յետոյ: — Այն առեն Սպարտացւոց հրամանատար և արժանի ախոյեան Աղկիբեադայ՝ Լիսանդրն էր. քաջ միանգամայն և թեթեւամիտ, զօրաւոր և խորամանկ, կէս առիւծ և կէս աղուէս: Ձարտարութեամբը փոքր կիւրոսը իրեն քաշած էր, որ այն առեն՝ ի Սարդիկ կը նստէր իրրև կուսակալ փոքր Ասիոյ կենդրոնական գաւառաց, և կաշառուած էր: Լիսանդր էր Անտիոքոսին յաղթողն, սակայն իշխանութեան ժամանակին լմընալուն պէս անոր տեղ Սպարտա գրաւ զԿալլիկրատիդաս, հաւատարիմ, ողջախոհ և օրինապահ մարդն, որ կու-

բօրէն ուր որ խաւրէր հայրենիքը՝ կ'երթար:

Կալլիկրատիդաս զօրացներով նաւատորմիղը, բացաւ առագաստը և գիմեց՝ ի Մեգինոս և առաւ զայն. Ձակատեցաւ ընդդէմ Կոնոնի և 30 նաւ առաւ, և զանիկայ հալածեց ինչուան Մելինէ և հօն պաշարեց: Փիլ մը եղբը (յոյլիսին մէջ 406ին) ուրիշ թշնամի նաւատորմիղ մը հետ զարնուեցաւ որ կուգար զԿոնոնը ազատելու, և պատերազմը Արքինուսա կղզեաց քովն եղաւ, որ Եւողիայի ծովեզերացը մօտ երիք պզտիկ կղզիներ էին: Թէպէտև զօրքը քիչ՝ սակայն սկսաւ կռիւը, բայց ինքը ընկաւ խեղդեցաւ ծովուն մէջ, նաւատորմիղն ալ խորտակեցաւ:

Արքինուսայի պատերազմը որն որ երկու կողմին ունեցած 275 նաւաց թուոյն համար ամենաչնչին կարգի նաւական պատերազմն եղաւ Պելոպոնեսեան պատերազմին մէջ, ալէտալի եղաւ յաղթական զօրավարաց համար. որովհետև երեսնեմ վեցը դատաստանի կանչուեցան պատերազմէն եռքը նաւաբեկեալներն ջազատելնուն և մեռելներն ջթաղելուն համար, և՝ ի մահ դատապարտեցան:

10. Եգոս գետոյն պատերազմը: — Արքինուսայի պատերազմէն եռքը, Սպարտիոյ դաշնակից ասիական քաղաքներն Կիւրոսին հետ մեկտեղ, խնդրեցին Սպարտայէն որ նաւատորմիղն հրամանատարն նորէն Լիսանդր ըլլայ և եղաւ: Լիսանդր սեպտեմբերի մէջ 405ին Եզիսպոնտոս գնաց և բռնութեամբ Լամփսակոն Աթենացւոց դաշնակից քաղաքն առաւ: Լիսանդր դեռ նաւերուս խարխափը ձգած այն քաղքին քովն կեցեր էր, երբ 180 աթենացի նաւ հասան Եգոս գետոյն քովն Լամփսակոնի գիմացն: Առաւօտը ուղեցին պատերազմը սկսիլ,

Լիւսանդր տեղէն չշարժեցաւ. իրիկունը Աթենացիք գարձան և եգոս գետոյն քովը յամաք իջան կերակուր գտնելու համար: Երկրորդ օրն նորէն կ'ուզէին պատերազմ սկսիլ. Լիւսանդր բռնած դիրքէն չշարժելով՝ Աթենացիք կարծեցին թէ Լիւսանդր մեծ վախի մէջ է և բոլորովին իրենք զիրենք անհոգուԹեան տուին: Բայց հինգերորդ օրը միւդեռ ասդին անդին ցրուած կէին, և շատերը վրանները մէջ կը քնանային, կ'երևնայ սպառնալից Լիւսանդր:

Կոնոն որ առաջ իմացաւ Լիւսանդրի շարժուԹիւն, մէկէն կանչեց որ նաւ ելլան և պատրաստուին դէմ կենալու: Բայց 'ի զուր. Պելոպոնեսացիք բոլոր նաւաստիովին ձեռք ձգեցին, ուրԹը նաւ միայն փախան Կոնոնին հետ, և 3000 հոգի գերի բռնեցին Սպարտացիք. Լիւսանդր երեն ձեռքովը սպաննեց Փիլոկղէս զօրավարը, և այս սպառնուԹիւնը նշան եղաւ բոլոր 3000 հոգւոց կոտորածին:

11. Ընդհանուր անկումն: — Լիւսանդր մէկէն դէպ նայ Բիւզանդիոն, Քաղկեդոն և ուրիշ շատ քաղաքներու վրայ, որոնցմէ և ոչ մէկը համար ձակեցաւ դէմ կենալու, վերցուց ամենայն տեսակ կառավարուԹիւններն և տասը աղնուական հոգի կառավար դրաւ, որոնց գլխաւորը Սպարտացի մ'էր: Անկէ վերջը Աթենքի վրայ գնաց 150 նաւով ծովէն պաշարելու համար. միևդեռ Ագիս Թագաւորը Դեկելեայէն և Պաւսանիաս Թագաւորը Պելոպոնեսէն եկան որպէս զի ցամաքէն պաշարեն: Աթենացիք նաւ մ'ալ չունէին Պիրէոնի մէջ, հասարակաց գանձարանը տալանդ մը չկար, և քաղքին մէջ զինուոր: Սակայն նորէն պաշտպանուելու պատրաստուեցան, անձնատուր չ'եղան, ինչուան որ սովէն ջոխպուեցան: Անձնատուր եղան 404ին, պայ-

մաններն են. Աթենք Պիրէոնի բերդերն և երկայն պարիսպն կործանել, տիրած երկիրներէն դուրս քաշուիլ, տասուերկու նաւէն աւելի չունենալ և աքսորեալները հայրենիքներն դարձնել: Լիւսանդր անձամբ կործանել տուաւ պարիսպները 'ի ձայն նաւագարանաց և 'ի ցնծուԹիւն դաշնակցաց: ՔանուեօԹը տարի տևեցին եղբը՝ այսպէս լմնցաւ Պելոպոնեսեան պատերազմն:

ԳԼՈՒԽ Գ.

Արևելքի տակուռնեն մինչև Աղեսիլաոս դաշնադրութիւն:

1. Երեսուն բռնաւորք: — 2. Աղկիբիադի և Թերամենեսի մահը: — 3. Աթենքի ազատուԹիւն: Թրասիբուղ: — 4. Իմաստակք: — 5. Մահ Սոկրատայ: — 6. Փոքրն Կիւրոսի արշաւանքը: Կունաքսայի ճակատամարտն: — 7. Դահանջն բիւրուն: — 8. Պատերազմ Պարսից և Սպարտիոյ մէջ: — 9. Ագեսիլայոս: — 10. ԴաշնակցուԹիւն Սպարտիոյ դէմ: Մահ Լիւսանդրի: Քորոնէայի ճակատամարտն: — 11. Կոնոն. Կնիտոսի ճակատամարտը: — 12. Դաշինք Անտալկիտայ:

1. Երեսուն բռնաւորք: — ՍակաւապետուԹիւն սիրող Աթենացիք՝ Լիւսանդրէն խնդրեցին և ընդունեցան, որ երեից վրայ երեսուն հոգւոյ խումբ մը դրուի, որպէս զի նոր օրինաց կազդուրուԹիւն և փոփոխուԹիւններ ընեն ժամանակին պիտոյից համեմատ: Բայց այն երեսուն հոգիք օրէնսդիր կոչուելէն աւելի՝ իրա-

ամբ բռնաւորը կոչուեցան: Սպարտայի հաճոյանալու համար Աթենքի բոլոր ծովական զօրութիւնը փճացնելով պիտանքը հիմնայատակ կործանեցին, որուն վրայ հազար տպաւնդ ծախք եղած էր, և երեք միայն տաղանդով ատաղձը ծախեցին: Իրենց եղեռնագործութեանց մէջ ապահովելու համար, 700 ապստամբացի զինուոր վարձեցին, որոնց Ակրոպօլիս յանձնեցին, և անոնց ուժիկ վճարելու համար՝ տաճարներն կողոպտեցին: Որպէս զի Ճարտասանները Պերիկոնի տեսութեամբ հայրենասիրութեամբ չվառուին՝ իրենց ձեմարանը ուրիշ տեղ փոխեցին, դպրոցներէն կը վանային՝ գոցելին, թատրոնէն կամ թէ՛ի կատակերգուներ Թեանց Արիստոփանեայ կը վանային՝ ազատութիւնը բռնաբարելին: Ով որ ժողովրդին կը ցուցընէր, որուն դէմ անձնական ատելութիւն մը ունենար բռնաւորաց մէկին, անտարակոյս պիտի հալածուէր, դատապարտուէր և յընչից կը մերկանար:

2. Ալկիբիադէ և Թերամենէսի մահը: — Բռնաւորաց վայրագ իշխանութիւնն հեռուէն ալ կը հարուածէր: Ալկիբիադ իրենց հրովարտակով աքսորի դատապարտուած, Թրակիան Թողուց՝ի Փռիւգիա քաշուեցաւ: Բայց գիշեր մը կրակ արուեցաւ բնակած տանը. և երբոր անկէ դուրս վազեց բոցերու մէջ, նետերու անձրևի մը ընդունեցաւ որով զինքը սպանեցին սկիւթեան մարդիկ: Եւ որ մեծն է՝ Թերամենէս իրենցմէ մէկը, զոհ եղաւ անոնց վայրագութեանը: Թերեւս մարդասիրական զգացմամբ մը կամ քաղաքական տեսութեամբ այս արհաւիրը բերող կառավարութեան դէմ կեցաւ. այս բաւական եղաւ զինքը իբրև մտանիչ՝՝ի մահ դատապարտելու:

3. Ընկնիլ ապստամբին: Թրասիբուղ: — Ինչպէս

Թէրացիք պահարակելով եղածն՝ Աթենքէն աքսորուածները բարեկամաբար կ՚ընդունէին: Աքսորեալներէն մէկն էր Թրասիբուղ որ ջանաց իր քաղաքը դարձնել: Թէրացւոց օգնութեամբը տեղւոյ մը տիրեց, ուր ջանաց համախմբել բոլորը փախստականքը: Երբոր 1200 հոգի ունեցաւ, շարժեցաւ՝ի Պիրէոն դիմաց, զօրաց յայտնեց, վազեց բռնաւորներէն Արիստիոն սպաննեց, որ Երեսնից գլխաւորն էր, և նաւահանգստին տիրեց: Շատացած քաղաքացիներով և աքսորեալներով որոնք ամէն կողմէն կը վազէին իր քովը, կը պատրաստուէր Աթենքը պաշարելու: Այն առեն քաղաքացիք վար առին և վանեցին զՆիւսունքը, և գիւղապատառաստ դաշինքով մը զԹրասիբուղ իրեններով նեղս առին որոնք խոստացան մնալ կրած բոլոր անիրաւութիւնները: Այսպէս տարիէ մը ետքը Աթենքէն վերցուեցաւ բռնաւորութիւնը և ռամկապետութիւնը հաստատուեցաւ:

4. Իմաստասէ: — Բայց արդէն իշխանութիւն ըսուած բանը վերցուած էր միջա Աթենքէն: Բարոյական մեծամեծ յեղափոխում մը, հին կարծեաց և բարոյից փոփոխութիւնը՝ իշխանութեան վերանորոգուելուն արգելք էր: Արդէն երկայն առեն՝ի վեր սկսեր էին իմաստակք հռչակուիլ և աղգեցութիւն ունենալ, որոնց արուեստն էր պաշտպանել որ և իցէ անիմանալի գաղմունքին պատճառաբանութեամբ և հանճարաբանութեամբ: Իրենց համար քաղաքական կամ բերականական քննական ճառմը խօսիլ, դամբանական մը կամ ներբող մը, ճանճ և մլուկ պաշտպանել՝ կամ անմեղ մը մահապարտել, առեն առջև նոյն բանն էր: Որով իրենց համար չկար ոչ առաքինութիւն, ոչ ախտ, ոչ ճշմարտութիւն, ոչ ստութիւն,

ոչ արդարութիւն, ոչ անիրաւութիւն. և երբ տասարդաց բազմութիւնը որ կ'երթար անոնց խօսքը լսելու, անասրբերութեան զարկեր էր և ամենայն բանի վրայ կ'երկբայէր. երկբայութիւն մը որ Ժանտախտ է, երբ խմասուութեան ակզբնաւորութիւն չ'ըլլար:

5. Մահ Սոկրատայ: — Այս Ժանտախտին գլխացն Սոկրատ ուզեց առնուլ: Իմաստասիրներն, բանաստեղծներն զորս կը ծաղրածէր, ամպահարները և բոլոր ախտաւոր մարդիկ՝ որոնց մոլութիւնին երեսին կը զարնէր, կ'ատէին զինքն և ատելութիւնին կ'ուզէին յագեցնել: 399ին Մելիտոս, Անիտոս, և Լիկոն ամբաստանեցին զՍոկրատ իբրև աերութեան կրօնքը եղծանող և ապականիչ մանկութեան: Դատաւորաց առջև եկաւ և երկար խօսեցաւ. իր անմեղութիւնը գիտցող՝ և արդէն տարեայց տակը ձնշուած, մարմինը բոլորովին արհամարհող իմաստնոյ մը պէս խօսեցաւ: Դատաւորքն 559 հոգի էին, քուէ ձգեցին և 281 հոգի ընդդէմ 278 հոգւոյ յանցաւոր վճռեցին: Բայց երեն ձգեցին որ երեք պատժէն մէկը ընտրէ կամ տուգանք կամ աքսորանք կամ մահ: Բայց Սոկրատ տեսնալով որ ամենափոքր պատիժ մ'ալ յանձն առնուլ ինքը զինքը յանցաւոր խոստովանել է, և իբրև հայրենեաց բարերար բողոքեց թէ պէտք էր որ մինչև ցմահ հասարակապետութեան ծախքովը սալի: Ուրիշ դատաւորք, որոնք սկզբան 'ի նպաստ իրեն քուէ ձգեր էին, այն պահուս համարձակութեան վրայ բարկացած միացան հակառակ կողման հետ, և երկրորդ քուէարկութեամբ 'ի մահ դատապարտեցաւ: Սոկրատ վճռոյն հրապարակութենէն առաջ 30 օր բանտը կեցաւ. և անդադար բարեկամաց հետ իր փիլիսոփայական վարդապե-

տութեանց վրայ խօսելով և անոնց վերջին գաղերը տալով անցուց: Իր մեկ բարեկամը, ամէն բան կարգի դնելով յորգորեց որ փախչի, բայց յանձն չառաւ Սոկրատ ըսելով. Ձեմ ուզեր ծերութիւնս անպատուել հայրենեաց օրէնքը ոտքի տակ առնելով: Հասաւ ալեւաալի օրը, և այն օրը բոլոր հոգւոյ անմահութեան վեմ Ճառը խօսելով անցուց, զոր վերջը Պլատոն Փեդոն մականգրեալ տրամախօսութեան մէջ մտուց: Իրիկուան դէմ մուրհակ տրուեցաւ, զոր անխռով անդորր հոգւով խմեց, մինչդեռ հօն գտնուող բարեկամները և բանտապանները կուլային:

6. Փոքր Կէորգի արշաւանք: Կոնոփայի ճակատամարտն: — Այս առեն Պարսկաստանի վրայ կը Արտաշէս Բ. 404ին մեռած Դարեհ Բ. որդին կը թագաւորէր, և թագաւորին եղբայրը Կիւրոս, Սարդիկէ նահելով կուսակալ էր Լիւդիոյ, Փռիւգիոյ և Կապադովկիոյ: Կիւրոս քաջ և փառասէր երիտասարդ մ'էր, կը մտածէր եղբայրը աթոռէն վար ձգել և պարսկական գահին վրայ ելլալ. և Յոյներուն օգնութեամբը ուզեց նպատակին հասնիլ, որոնց զինուորական դերազանցութիւնը բուն ասիացւոց համեմատելով աղէկ ճանչցած էր: Արդ Պելոպոնեսական պատերազմը լմընալով, յորում Լիսանդրի չատ օգնեց, քանի մը Յոյներ խաբեցոր'ի Բէռվոիա, Թեսալիա, Մաքեդոնիա և'ի Թրեքոն բնակող ազգերն զորք վարձեն, և ուզած առեն 13,000 մարդ դումարեցաւ. զորոնք Ասիա անցուց, և 100,000 ասիացի պատրաստ բանակին հետ միացուց:

Այս բանակով, մինչդեռ ոչ ոք գիտէր թէ որուն դէմ կ'երթայ, Կիւրոս 401ին մարտի մէջ Սարդիկէն ելաւ. և այլ և այլ պատրուակներով անցաւ Լիւդիային, Փռիւգիային, Լիկայո-

նիայէն, Կիլնիխայէն և Ասորիքէն: Միայն երբ Թագաւոր՝ Եփրատ վրայ շինուած մեծ և հարուստ քաղաքը հասաւ, Կիւրոս յայտնեց իր միտքն Թէ Բաբելոնի Թագաւորին դէմ կ՚ուզէ երթալ: Յոյն զինուորները խռովուելնին հանեցին և չէին ուզեր յառաջել. բայց քիչ մը Թոշակներն աւելցնելով սրտերնին շահեցաւ: Վերջապէս Կոնաքսա գիւղը հասան, Բաբելոնէն քիչ հեռու, Արտաշէսի հանդիպեցան, որն որ լսած էր և անվիճակաս 1,200,000 հետեւակով 6000 ձիաւորով և 200 դերանգազէն կառքով գէմ կենալու եկեր էր: Սեպտեմբեր 3ին երկու բանակները մէկմէկու հետ զարնուեցան: Յոյները երթալով, այնպիսի քաջութեամբ յարձակեցան Թշնամեաց վրայ որ՝ ի փախուստ տիպեցին և եռնին ինկած հալածեցին: Կիւրոս այս բանը բարի գուշակութիւն մը սեպեց. բայց Արտաշէսի մահուն սպասելով ձեղքեց զԹշնամի բանակն և հասաւ Արտաշէսի քովը, եւս կողմէն յարձակեցաւ և վիրաւորեց զԱրտաշէս. բայց նոյն ատեն ինքն ալ վիրաւորուելով ինկաւ մեռաւ: Զօրքը զայս տեսնալով փախան և Թագաւորն եղբօրը բանակատեղին բռնեց: Քիչ մը վերջը Յոյները յետ դառնալով և տեսնալով որ Արտաշէս բանակատեղին կը կողոպտէր, նորէն երթը կը սկսին և ուժով անոր հետ կը զարնուին ու՝ ի փախուստ կը տիպեն: Ասով դէշ դիրք բռնեցին. բարբարոսաց երկու բանակին մէկը գաշնակից միւսը Թշնամի՝ երկու հակառակ ճամբաներով կը փախչէին, ի՛ բենք միայն պատերազմի դաշտ տէր էին, և կը կարծէին Թէ կատարեալ յաղթութեան մէջ են: Չէին կարծեր Թէ Կիւրոս մեռած ըլլայ. և կ՚ենթադրէին Թէ զԹշնամին հալածելու ելած է, կամ յառաջեր է դիրք մը բռնելու համար:

7. Նահանջ Բէ-բուռ: — Մինա տաւեօտան երբ եղածը գիտցան և Արտաշէսէն ալ զինաթափ ըլլալու առաջարկն ընդունեցան՝ սարսափեցան. այս սարսափն աւելի ևս սաստկացաւ երբ հինգ զօրավար խաբելով որ Թշնամւոյն հետ խօսին, Թշնամին բռնեց զանոնք ու գլխատեց: — Բայց Քսենոփոն գլխաւոր զօրքը ժողվեց, խորհուրդ տուաւ անոնց որ հինգ նոր զօրավար ընտրեն. և գեղեցիկ ճառով մը քաջալերեց զանոնք և հաւանեցուց Թէ ընտրելի է ելլալ երթալն քան Թէ գերի բռնուիլ: — Մեկէն ճամբայ ելան 2400 հազարամեգը նահանջ մ՚ընելու, հիւսիսէն՝ ի հարաւ գնալով գետ՝ ի Տրապիզան Եւքսինեան Պոնտոսի վրայ, անծանօթ անապատներ, գետեր և լեռներ կարելով անցնելով, շարունակ բարբարոս ազգաց հետ մրցելով և անտանելի սովու տանելով. այսպիսի նահանջ մը երկայն առանին քաղաքական պատերազմներէն երբը պատահելով, կը ցուցնէ Թէ ինչ պնդութիւն հոգւոյ, ինչ խելք և ինչ բաղդախնդիր ոգի ուներ յոյն ազգն. այս նահանջն՝ նահանջ Բէ-բուռ հռչակաւոր անունն կը կրէ, վասն զի գրեթէ այս կը զինուորաց Թիւն:

8. Սպարտացոց Պատրէն մէջ եղած պատերազմը: — Կիւրոսի կրտսերըն արշաւանքը լսնալով, փոքր Ասիոյ կուսակալութիւնը Թագաւորն Տիսափեռնեսի տուաւ. որ հանելուն պէս իմացաւ յունական քաղաքաց որ իր իշխանութիւնը ճանչցան. անոնք ջընդունեցան անոր իշխանութիւնը և Սպարտացին օգնութիւն խնդրեցին. Սպարտացիք ղրկեցին Թիմբրոնը՝ հետ 5000 զինուորի աւելի, որուն հետ միացան եռքը Քսենոփոնին Բիւրուն ծերացօղդները: Թիմբրոն տարտամ և անկարմար մարդ էր, և շուտ մը իշխանութենէն ընկաւ, ու իր տեղը անցաւ Դերքիլիդաս, որ

չաս բայց անօգուտ յաղթութիւններ ըրաւ Պարսից վրայ, որոնք խնդրոյն վերջ մը չտուին. մինչև որ 397ին ղենադադարում եղաւ։

9. Ադեսիոյ։ — 399ին Ագիս Թագաւորն մեռնելով, անոր պիտի յաջորդէր իր որդին Լեւոտիքիտաս. բայց Լիւսանդր ջանաց զԼեւոտիքիտաս իբրև ապօրինաւոր՝ Թագաւորութենէն զրկել, և Թագն Ագեսիլայոսի տալ, որ մեռած Թագաւորին պզտի եղբայրն էր։ Արդ 396ին, Լիւսանդր եաւէ եղաւ որ նորապսակ Թագաւորը Աւեա Պարսից դէմ պատերազմելու երթայ։ Եւ որովհետև իր հետը 30 ապարտացի Ներէ ժողովք մը պիտի ունենար, որոնց գլուխը Լիւսանդրոս էր, ասով Լիւսանդրոս կը յուսար որ արշաւանաց զօրագլուխ ինք պիտի ըլլայ և իրմէ խնամակալեալ Թագաւորին անուամբ միայն պիտի գործուի։

Բայց Լիւսանդր զԱգեսիլայոս տղէկ չէր ճանչցած։ Ագեսիլայոս Թէպէա ապէղ էր դէմքով, կարճահասակ և կաղ, բայց շատ բարոյական բարեմասնութիւններով զարդարուած էր. իշխանութեան յարգող, քաղցրաբարոյ, բարեսէր, չափաւորութիւն սիրող, պարզ բարուք, համբերող ամէն տեսակ զրկանաց, արտաքոյ կարգի քաջասիրտ և անընկճելի կորովի։ Ուրեմն այն պիտի մարդ մը չէր որ Լիւսանդրի հպատակի. և որ մեծն է՝ Լիւսանդրի գաղտնի դիտաւորութիւնը իմանալուն պէս, հասկըցուց անոր որ ինքն էր և ինքը կ'ուզէր ըլլալ այն արշաւանաց զօրագլուխ։ Լիւսանդրի յոյսը պարապի երթալով, հրաման մը ուզեց Ագեսիլայոսէն և ընդունեցաւ, ու այս պատրուակաւ հեռացաւ։

Երբ Լիւսանդր գնաց, Ագեսիլայոս Փռիւգիա մտաւ և դէմ կեցող քաղաքները առաւ աւարքեց, Միւս տարի Լիւդիոյ վրայ գնաց և աւերչա-

կեց. Սարդիկէի մօտ Տիսափեռնն բոլոր բանակաւն դիմացն ելաւ, զարնուեցաւ Ագեսիլայոս անոր հետ և բոլորովին յաղթեց։ Արտաչէս այս բանս իմանալով՝ Տիսափեռնի իշխանութիւնը Տիտրաւստէսին տուաւ, որ Տիսափեռնի գլուխը մեկնի երեն պիտի խրկէր։ Տիտրաւստէս ընդունած հրամանը կատարեց մեկնի, երբը Ագեսիլայոսէն զինադադարումն խնդրեց՝ երեսուն տաղանդ տալով, որպէս զի զօրքը պահէ։ Ագեսիլայոս այս զինադադարումէն օգուտ քաղելով՝ Փռիւգիա գարձաւ, որուն կուսակալն Փառնաւազ էր, աւերմունք ընելով և շատ քաղաքներ առնելով։ Օր ըստ օրէ յոյսը կը զօրանար որ պիտի կարենայ պարսկական պետութիւնը կործանել, ուստի կ'ուզէր Ասիոյ խորը յառաջել։ Բայց յաջողութեան ծայրը հասած կարծելու ատեն՝ հրաման եկաւ որ մեկնի անյապաղ Սպարտայի օդնութեան հասնի, որուն վրայ զօրաւոր դաշնակցութիւն մը յարձակած էր։

10. Դաշնակցութիւն Սպարտայի դէմ. Լիսանդրի մահը. Կրոնէայի պատերազմը։ — Տիտրաւստես Ագեսիլայոսը Ասիայէն հեռացընելու համար, Տիմոկրատես անուշով մեկը խրկեց՝ որ կաշառքով Յունաստանի քաղաքաց բոլորը մեծամեծ նները Սպարտայի դէմ պատերազմի գրգռէ։ Յաջողեցաւ Տիմոկրատես, ու Փռլիկիացւոց ու Լոկրիսացւոց խնդրոյն պատճառաւ Թեբացիք պատերազմը սկսան։ Սպարտացիք զԼիսանդր՝ ի Բէոտիա խրկեցին, որպէս զի Ալիարտոս քաղաքը պաշարէ. բայց քաղքին պարսպաց տակը սոսկալի պատերազմ մը սկսաւ, յորում մեռաւ ինքն ու զօրաց մեծ մասը։ Թեբէի հետ միացան Աթենք, Արգոս, Կորնթոս և Եւբէա. և այս քաղաքաց զօրքը Բէոտիոյ Կորնթոյ քաղքին քովն երբ Ագեսիլայոս հասաւ նոյն ճամբով որով

գացեր էր Քաբբքախ գրեթէ հարիւր տարի առաջ: Կատաղի պատերազմ մը եղաւ, Ափեսլղայոս շատ տեղէ վիրաւորուեցաւ և հազիւ կեանքը ազատեց, բայց յաղթութիւնը իրեն եղաւ (394):

11. Կոնոն. Կնիդոսի պատերազմ: — Կորնթացի յաղթութենէն քիչ մը առաջ մեծ ծովային պատերազմ մը կորսընցուցեր էին Սպարտացիք: Կոնոն աթենացին ուրիշ նաւով Եգոս գետէն փախչելով Կիպրոս քաշուած էր, ու գրեթէ հայրենեաց համար մեռած էր: Բայց երբոր Սպարտացիք Ասիա մտան պատերազմելու համար, Կոնոն արքայից արքային գաղտնի նաւատորմիղ մը ուղեց անոնց հետ պատերազմելու և Աթենքի ալ օգնելու համար: Խընդրածը առած՝ ծովը վրայ ելաւ, և Կնիդոսի ծովուն վրայ Լակեդեմոնացւոց նաւատորմիղին հանդիպելով, որ 85 եւաթի նաւ ունէր, յարձակեցաւ վրանին, սպաննեց անոնց Պիսանդրոս զօրավարն, 50 նաւ առաւ և մնացածները փախուց: Ասյս յաղթութենէն ետքը, Կոնոն ծովեղերեայ քաղաքաց վրայ գնաց որոնք Սպարտիոյ հետ էին, ոմք հանելու համար. ու առանց գժուարութեան յաջողեցաւ. վասն զի Սպարտացւոց լուծը աւելի ծանր էր քան թէ Աթենացւոց: Ետքը՝ ի Պիրէոն գնաց նոյնպէս աւերմամբ և սկսաւ պարիսպները նորէն շինել զոր Սպարտացիք Աթէնք առնելու առեն քանդեր էին: Պարիսպները շինելէն ետքը Աթենք Կանաց որ կորնթացւոցած երկիրները նորէն տուն նայ. շուտ մը պատերազմի նաւեր շինեց Կոնոն և Եգեան ծովուն մէջ մտաւ ու անհաւատարիմ քաղաքները սպիպեց որ նորէն իր իշխանութեան հնազանդին: Ասյս պատճառաւ նախապարհները բարկացան Կոնոնի վրայ. Սար-

դիկէ կանչուեցաւ, ու յանցաւոր գտաւ և իբրև Թագաւորին շահուց մասնիչ՝ ի մահ տապուեցաւ:

12. Ագեսիլէոսի խաղաղութիւն: — Սպարտացիք Աթենքի գերագոյն իշխանութեան նորոգուելէն վախցած, Անտալկիդասը իրկեցին որպէս զի Պարսից Թագաւորին նիզակակցութիւնը խնդրէ, ու ասոր համար միք ունէին ինչուան փոքր Ասիոյ Յոյներն ալ Թագաւորին տալու: Ու 387ին Անտալկիդաս հետապայ դաշնագրութիւնը ըրաւ, որ իր անունը կը կրէ. « Արտաշէս Թագաւորն իրաւամբ Ասիոյ քաղաքները և Կլազոմենէս և Կիպրոս կղզիները իրեն կը համարի, և թէ միւս յոյն պզտիկ և մեծ քաղաքները ինքնագլուխ ըլլան, բայց ի Լեմնոս, Իմբրոս և Սկրա կղզիներէն՝ որոնք ինչպէս հին առեն, հիմայ ալ Աթենացւոց ըլլան: Ով որ այս խաղաղութիւնը կը մերժէ, ես ընդդեմ նորայ հետ մեկտեղ պիտի պատերազմիմ անոր դէմ՝ ի ծովու և ի ցամաքի իմ նաւերովս և զանձերով »: Ասյս դաշնագրութիւնը՝ թէ ըստ ձևոյն և ըստ իրին մեծ նախատինք էր Յունաց. որովհետև բարբարոս Թագաւորն Յունաստանի հին Թշնամին՝ բացարձակ գտաւոր եղաւ Յունաց խնդրոց մէջ, և խաղաղութեան նախանձայոյզ պահապան եղաւ աւելի քան զՅոյնս:

ԹԱԳԱՒՈՐՔ ԱԹԵՆՔԻ

—

Ովթիգէս Պելոպեանց կը բռնաւորէ	1869	1852
Կեկրոպս Ա. Եգիպտոսէ	1643	1594
Կրանաւոս	1594	1585
Ամֆիկտիոն	1585	1573
Երեկթոնիոս	1573	1525
Պարաւոն Ա.	1554	1325
Երեքթէոս	1525	1460
Կեկրոպս Բ.	1460	1405

Յաջորդեցին Հելլենք Ասաիկէի մէջ թագաւորող Թիւն կը հասաստեն 1440 – 1430։

Պանաւոն Բ.	1405	1362
Եգէոս	1362	1325
Թէսէոս	1325	1292
Մենեսթէոս	1292	1270
Դեմոփոն Ոքսինթէս Աֆիտաս Թիմովեթէս	1270	1190
Մելանթոս	1190	1160
Կոդրոս	1160	1132

Մշանջենաւոր Արխոն։ 1132 754

Մեդոն, Ակաստ, Արքիբ, Թերսիպոս, Փորպաս, Մեգակղէս, Դիոգնետ, Փերեկղէս, Արիփրոն, Թեսպիկոս, Ագամեստոր, Եաքիղէս, Ակմէոն։

ՏԱՍՆԱՄԵԱՅ ԱՐԽՈՆԴ

Կարոբս, Եսիմեդէս, Կլիդիկոս, Հիպպոմենէս, Լեոկրատէս, Ապսանդր, Երիքսիաս։

Տարեկան Արխոնք որոնց անուանքը ծանօթ են մեզի մինչև 290։

Կրէոն առաջին արխոն	684	
Դրակոն արխոն օրէնսգիրը	624	
Կիւլոն	612	
Եպիմենիդէս	596	
Սողոն արխոն օրէնսգիրը	593	
Պիսիստրատ Իպպիաս և Իպպարքոս — բռնաւորք	561	510
Կլիսթենէս արխոն	510	
Իսագորաս արխոն	508	
Մէգաքոպէս	490	
Թէմիսթոկլէս	480	
Արիսթիդէս	480	
Կիմոն	460	
Պերիկլէս	436	
Սոկրէթէս	420	
Նիկիաս	415	
Կոնոն	406	
Երեսուն բռնաւոր	404	
Թրասիբուղ	403	
Անտոնինոսի Հաշտութիւն	387	
Դիմոսթենէս	մօտ	344
Եսխինէս	»	344
Փոկիոն	»	344

Քերոնէայի Ճակատամարտ 338.

Մակեդոնացւոց տիրապետութիւն.

Դեմետր վաղեբացի . . .	318	307
Դեմետր, Անտիգոնոսի որդի .	307	301
և	297	288
Լիսոգարէս բռնաւոր . .	301	297

Աթենացիք ազատութիւն կը գտնան 287ին. կը միանան Աքայեցւոց դաշնակցութեան հետ 233ին. Յունաստան Հռոմայեցւոց գաւառ կ'ըլլայ 146ին:

ԳԼՈՒԽ Դ.

Սպարտիոյ և Թեբէի կռիւը:

1. Թեբէն մասնութեամբ կ'առնէ: — 2. Թեբէի ազատութիւն: — 3. Եպամինոնդաս և Պելոպիդաս: — 4. Սպարտացւոց Բէովտիոյ մէջ ըրած արշաւանքը: — 5. Լեւկտրայի պատերազմը: Մեգաղոպոլսոյ հիմնարկութիւնը: — 6. Եպամինոնդի Պելոպոնեսի մէջ ըրած երկու արշաւանքը: Մեսսենայի հիմնարկութիւնը: — 7. Թեսաղիոյ խնդիրը: Յասոն: Աղեքսանդր փերէացի: Մահ Պելոպիդայ: — 8. Երրորդ և չորրորդ արշաւանք Եպամինոնդայ'ի Պելոպոնէս: Մանտինէայի ճակատամարտն և Եպամինոնդի մահը:

1. Մագնութեամբ Թեբէէի առաջը: — Անտալկիդասի հաշտութենէն ետքը, հզօրն Սպարտա Մանտինէան առաջ ու բնակիչները սիրեց որ չորս զանազան գեղերու մէջ ցրուած բնակին. և հրամայեց Փլիուսեսին որ սակաւապետութեան կողմնակից աքսորեալները ներս ընդունի. Ոլինթոսի դէմ պատերազմ բացաւ որուն չանկարծական մեծնալը բոլոր Քաղկիտեականի քաղքերը կասկածի մէջ ձգեց, և չարաչար կրեցին ետքը սովէն բռնագատուած անձնատուր ըրած: Այս պատերազմին սկիզբները, որ երեք տարի քշեց, ծանր դէպք մը պատահեցաւ, որուն վրայ բոլոր Յունաստան բարկացաւ, և որ Սպարտիոյ պատմութեան մէջ սեւ էջ մ'է: Փեբիտաս սպարտացին, որ ցամաքէն 2000 հոգւով Քաղկիտեական խրկուած էր, Բէովտիայէն անցնելով

Թէբէէն քիչ մը հեռու բանակէցաւ։ Այս քա-
ղաքն սովօրաբար երկու երկրաւոր կողմն ու-
նէր, բայց այն առեն Ժողովրդական կողմը զօ-
րաւոր էր։ Լէոնդիտաէս իշխանը աղնուական
կողմնակցութեան գլխաւորը գնաց առ Փէբէ-
ոտս, և առաջարկեց անոր, որ Թէբէի սիրէ։
Սպարտացին չատ ազատանաց չէր սպասեր,
և քանի մըօրէն Լէոնդիտաին առաջնորդու-
թեամբ կազմական միջնաբերդին մէջ մտաւ Փէ-
բիտաս։ Իսմենիաս ժողովրդական մասին գլխա-
ւորն բանտ դրուեցաւ, և որովհետև ամեն ընդ-
դիմութիւն անոր կողմնակիցներէն էր, երեք
հարիւր հոգի, կամաւոր աքսորով յԱթէնս դի-
մեցին ու ազատեցան։ Եփորք և Սպարտիոյ ժո-
ղովուրդը եղածին չհաւնիլ մը ձևացուցին, սա-
կայն կազմականն ձեռքերնին ունայ և զԹէբէ-
ոտս չպատժեցին։

2. Աղաթօնիկեան Թէբէէ։ — Երեք տարի եռքը
փախատական Թէբացիք, ի Թիւս որոց էր և Պե-
ղոպիդաս, մտածեցին որ իրենց քաղաքը ազա-
տեն, և օրինակաւ Թրասիբուղոսի մեկմեկ կը
խրախուսէին։ Այս բանիս համար Պելոպիդաս
ծածուկ հայրենեաց մէջը համախոհներ ժողվեց,
որոնց մէջ աւելի զօրաւորն էր Փիլլիդաս, որ
իշխանաց քարտուղարն էր. ամեն բան ըստ
կարգի չակուած էր. սահմանեալ օրը հասաւ,
տասուերկու հոգի Թէբէ մտան, ոմանք մեկ
գանէն, ոմանք միւսէն որնսորգի կամ գեղացւոց
զգեստով ծպտեալ. և գնացին համախմբելու
հայրենասէր անձի մը տունն որ կարմնէս կը
կոչուէր։

Միւս երիկունը Փիլլիդասայ տունը մտան,
որ կամաւ զինեալներէն սեղանի հրաւիրած էր,
և խողխողեցին զանոնք։ Եւ երբ Փիլլիդասայ հետ
բանտերը վազեցին, ազատեցին բանտուածներ-

ը և զինեցին զանոնք։ Աչաւօտեան հասան ազէկ
զինուած միւս աքսորեալները որոնք եաև ունացեր
էին կամաւ, և իրենց հետ ալ աթենացի բանակ
մը։ Այն առեն իմացաւ Ժողովրդը Թէ ինչ է
խնդիրը, կը դիմէ հայրենեաց ազատարարներուն
օգնութեան, կը վազէ զինավաճառաց խանութ-
ները՝ զէնք առնելու համար, և մեկէն միախուռն
բազմութեամբ կագմական միջնաբերդն կը պա-
շարեն։ Լակեդեմոնացիք 1500 հոգի էին. պահա-
կապանները քանի մը օր դիմադրելէն վերջը կեան-
քերնին ազատելու պայմանաւ ելան գնացին։

3. Եպամինոնդաս և Պելոպիդաս։ — Իրաւցընէ ժա-
մանակին մեծ բազդ եղան Թէբէի այն երկու
մեծ մարդիկ Եպամինոնդաս և Պելոպիդաս։

Եպոմինոնդաս աղքատ ծնաւ, և բոլոր կեանքը
աղքատ անցուց։ Ուսմունք արհեստ ու մար-
մնակրթանք, և ամեն ինչ որ Թէ միտքը և Թէ
մարմինը զարգացընէր՝ չատ կը սիրէր։ Իրեն
իմաստասիրութեան վարպետը եղաւ Պիւթա-
գորեան Լիսիդէս տարեւոտացին. Թէպէտ մեծ
մաղձ և գեղ ծեր մ'էր, սակայն Եպամինոնդաս
միշտ կը յարգէր. անպատմելի յարգ մը և սէր
ցուցուց առ նա։ Քիչ կը խօսէր. բայց պէտք ե-
ղած ժամանակը, Ճարտասանութեամբ կրնար
Աթենքի չատ Ճարտասանից հաւասարիլ։ Ամեն
դիպաց մէջ բարեկամ, համբերող, և աքանչելի
վեհ հոգի մը կը ցուցընէր։ Անչափ ձգտմարտա-
սիրութեամբ էր վառուած որ ոչ երբեք կը սակը
և ոչ խակ կատակով, այնչափ արդարասէր էր որ
չուզեց Պելոպիդասի և ուրիշ աքսորելոց գաղ-
անի դաւանացը մէջը մտնալ. այլ վերջը երբ
յայտնի գործելուն ժամանակը հասաւ՝ այն ա-
տեն գործեց։

Իսկ Պելոպիդաս այր գործոց էր քան Թէ
ուսման. աւելի սիրելի էին իրեն մարմնակրը-

Թանքև որսորդութիւն քան թէ նմաստասիրութիւն: Սակայն ազնուական և վեհանձն հոգի ունէր, եռանդուն սէր հայրենեաց և զինուորական հանճար: Որչափ որ Եպամինոնդաս աղքատ էր, այնչափ ալ ինք հարուստ էր. բոլոր ունեցածը ի բեն աղքատ բարեկամաց օգնելու կը գործածէր: Եպամինոնդաս միայն որուն հետ Ջնմարիա բարեկամութիւն ունէր, չհամղուեցաւ և բան մ'ալ չառաւ անկէ: ինքն շատ էր պարզ. անպաճոյճ կը հագնէր, գրեթէ խեղճաբար և խիստ սահաւադէտ կ'ապրէր:

4. Սպարտացւոց Բեովէոյ դէմ ըրած արշաւանքը: — Թեբէի ազատութենէն քանի մը ամիս ետքը Սպարտացիք Բեովոտոյ վրայ արշաւանքնին ըրին: Մինա տարինները ասոր պէս ուրիշ երկու արշաւանք ալ յաջորդեցին. երբեմն Ագեսիլայոս էր զօրավարն և երբեմն Կղեոմբրոտ Թագաւոր: Աթենացիք որ առաջ բարկացեր էին, վասն զի Սփոդրիա սպարտացին խաբեութեամբ փորձ փորձից որ Պիրէոնի ափրէ, վերջը Թեբացւոց հետ միացան: Ագեսիլայոս պատերազմը սկսաւ՝ յամպի ու ծովու վրայ անորոշ կռիւներ կ'ըլլուէին, բայց միշտ յօգուտ Թեբացւոց կը յառաջէր պատերազմն: Թեբէի այսպէս չուտ մեծնալուն վրայ Աթենք նախանձեցաւ. որուն համար գիւրութեամբ Սպարտայի հետ միացաւ և հրաւիրեց զԹեբէ՝ի խաղաղութիւն: Այս պատճառաւ 371ին յունիսին Ժողովք եղաւ՝ի Սպարտա. պայմանները որոշուեցան, բայց ստորագրելու միջոց, Եպամինոնդաս ըսաւ որ Բեովատացւոց անուանքը ստորագրելու չանձն կ'առնուի, բայց ոչ Թեբացւոց անուանք: Այս ըսել էր որ Թեբէի կլեռաւորութիւնը Բեովոտոյ վրայ պէտք է ճանչնալ, ուստի Ագեսիլայոս Թեբացւոց անունը ափրեց, և ծանր կերպով սկսաւ պատերազմը:

5. Լեւկտրայի պատերազմը. Մեգաղոպօլոյ հիմնարկութիւնը: — Վերջ օրէ վերջը, Կղեոմբրոտ Թագաւորը Բեովոտիա գնաց 10,000 հետեւակօք և 1000 ձիաւորով, և յորկիս Յին Լեւկտրայի քով էր, որ ընդ մէջ Թեսպիայի և Պլատէայի պզտիկ երկիր մ'է: Հոն կը սպասէին անոր Եպամինոնդ և Պելոպիդաս 7500 հետեւակով և 5000 ձիաւորով: Պատերազմեցաւ և Պելոպոնեսացիք արտաքոյ կարգի յամառ դիմադրութեամբ մը Եպամինոնդի յարձակմանցը դէմ դրին. սակայն սոսկալի կորուստներով յետ քաշուելէ, որոնց Թագաւորն ինկաւ մահացու վէրք առած: 700էն 400 հոգի Սպարտացի մնան, և 1000 հոգի Լակեդեմոնացի:

Եպամինոնդի Լեւկտրայի յաղթութիւնը ըրած օրը խաղաղութեան ժողովին քսաներորդ օրն էր: Այս գէպքն խորին տպաւորութիւն մը ըրաւ բոլոր Յունաստանի վրայ: Մեծ յուզմունք ծագեցաւ բոլոր ափրութեանց մէջ, մանաւանդ՝ի Պելոպոնէս: Իսմիական մասը զօրացաւ ամէն տեղ՝ի Փլիւսէա, ՝ի Կորնթոս, ՝ի Սիկիոն, ՝ի Փլիոնտ, Այգոս արեան հեղեղներ վազեցին, Մանտինեացիք արգելն չորս գիւղի մէջ ցիրուցան եղած՝ փութացին միացան և իրենց քաղաքն նորէն չինեցին, և ոչ Սպարտա կրցաւ արգելք հանել:

Յիշեալ յեղափոխութիւններէն ամենակարեւորն է Արկադիա եղած փոփոխութիւնը: Արկադացիք միշտ Սպարտացւոց հպատակեցան. Սպարտացւոց նոր պարտութենէն եռքը սիրտ առին միացան և Աստիկէի և Լակոնիոյ նման ինքնագլուխ ափրութիւն մը ձեւացան. մայրաքաղաք մը չինեցին, արտաքին գործոց վրայ դերագոյն իշխանութիւն ունեցող ազգային Ժողով մը կազմեցին, և ափրութեան պահպա-

Նուվեհան համար զինուորական բանակ մը ոտք հանեցին: Սարսափեցաւ Սպարտա, իսկ Թեբէ գովեց եղածը. և Եպամինոնդ դիւրացուց եղածին գործադրութիւնն, քաղաքը չինողաց 'ի պաշտպանութիւն հազար զինուոր խաբեբելով: Գիշեր մը ամիսն էառքը Մէգալոպոլիս արդէն չինուած էր և լի բնակչօք, որոնք Արկադիոյ ամէն կողմէն եկան ներս թափելացան:

6. Եպամինոնդ կրկին արշաւանքն 'ի Պելոպոնէս. Մէսսենիոյ հիմնարկութիւն: — Եպամինոնդ տեսնալով որ Սպարտա կը սպառնայ նոր կանգնուած պետութեանը վրայ, բազմաթիւ բանակաւ 'ի Պելոպոնէս ինքաւ, մտաւ 'ի Լակոնիա, կողոպտեց զԱրկադիա և Սպարտոյ դաշտն հասաւ: Անհնարագրելի է, կ'ըսեն պատմագիրք, այս դարուս քաղքին սարսափն, որ Դորիացիներէն շինուելէն ետքը Թշնամի չէր տեսած: Եպամինոնդ յարձակելու փորձ ըրաւ և չյաջողեցաւ. ուզեց զԱգեսիլաոս սակսիլ որ 'ի գաշտի պատերազմի, բայց նա տեղէն չշարժեցաւ. 'ի վերջ Եպամինոնդ երկիրն աւերըշակելէն յետոյ սակսուեցաւ դառնալ 'ի հայրենիս: Սակայն նոր Թշնամի մը հանեց Սպարտայի դէմ. Իթոմէ լեռան ապրնուեան կողին վրայ զՄեսսենա շինեց և ցնորացան եղած Մեսսենացիք ժողվեց մէջը բնակեցուց: Սիւս տարի 368 նորէն 'ի Պելոպոնէս ինքաւ և 'ի Լակոնիա ասպատակեց. բայց Սպրտացւոյ Դիոնիսիոս բռնաւորին օգնութեամբ Սպարտացիք զօրաւոր գտնելով՝ խոհեմութիւն սեպեց 'ի հայրենիս դառնալ:

7. Թեսաղիոյ խնդիրն: Յասոն: Ալեքսանդր Փերեացի: Պելոպիդաս մահը: — Թեբէ Թողուց զՊելոպոնէս և Թեսաղիոյ գործոց մէջ խառնուեցաւ: Երկայն ատեն Թեսաղիա իրրև օտար երկիր մ'էր Յունաստանի համար. Յասոն սկզբան

միայն Փերէս քաղքին իշխան էր, բայց որով հետև մեծ ազդեցութիւն, ընդարձակամիտ, ատակից գաղտնի էր և արտաքոյ կարգի յաջողակ մարդ մ'էր Յասոն, կարող եղաւ կամաց կամաց բոլոր Թեսաղիոյ տիրել, որ մեծամեծ աշխարհակալութեանց գուռն պիտի ըլլար: Սակայն 370ին մինչդեռ կը պատրաստուէր 'ի Դեղփիս պիւթեան խաղերուն երթալ, ոբր փառաց 'ի փառս պիտի բարձրանար, ութին պատանի մօտեցան ահոր գոտեստանական խնդրոյ մը պատրուակաւ և զինքն սպաննեցին: Իրեն Պոլիդորոս եղբայրն յաջորդեց, որ Պոլիփրոն եղբօրէն սպանուեցաւ: Հազիւ տարի անցեր էր՝ Ալեքսանդր, որ Փերէս քաղքին ամենահռչակաւոր բռնաւորն է, սպաննեց զՊոլիփրոն: Շատ է լիչելել մարդիկ ողջ ողջ Թաղել, կուտար և վրանին վարդի ու արջուճ մորթ անցընելով՝ որպէս ըները կ'արձակէր ու պատռել կուտար: Թեսաղացիք օգնութիւն ուղեցին Թեբացիներէն բռնաւորին դէմ, և Պելոպիդաս խաբուեցաւ բանակաւ: Բռնաւորն սարսափած յետ դարձուց զՊելոպիդաս դեղեցիկ խոսամուքներով: Տարին չէր լցացած՝ Ալեքսանդրի նորանոր անգթութիւնք սոսկեցին զՊելոպիդաս որ երկրորդ անգամ 'ի Թեսաղիա երթայ. բայց մէկ ընկերաւ և անդէն բռնաւորին դիմացն ելլալով՝ բռնուեցաւ և բանտը գրուեցաւ: Այն ատեն Թեբացիք Եպամինոնդի զօրավարութեամբ նոր արշաւանք մ'ըրին և զՊելոպիդաս ազատեցին բռնաւորին ձեռքէն: Պելոպիդաս 364ին նորէն երրորդ անգամ Թեսաղիոյ վրայ գնալով Շնագլխոյ ճակատամարտ ըրաւ Թշնամւոյն բազմաձեռն բանակին դէմ, 3000 մարդ չարգեց և զԹշնամին 'ի փախուստ դարձուց: Այս նշանաւոր յաղթութիւնն Պելոպիդասի գլուխը կե-

բաւ: Յաղթուելիւնը կատարեալ ընելու համար Թէբացիք անմիջապէս նոր բանակ մը խաբեցին որ սակսէց զԱղէքսանդր փերեան քաղքով գոհ ըլլալ, միւս բոլոր քաղաքները ազատ թողու և երդմամբ հաւատարիմ հնազանդութիւն խոստանայ Թէբէի ամէն հրամանացը:

8. Եպամինոնդ երբոր ի լրբոր անգամ արշաւէն 'ի Պելոպոնէս: — Մանթինէայի ճակատամարտն ի Եպամինոնդէ տաճը: — Սպարթիոյ և Արկադիոյ մէջ նոր պատերազմ մը բացուելուն և Արկադացւոց մէջ մեծամեծ երկպառակութիւնները ծագելուն համար՝ Եպամինոնդ ուրիշ երկու անգամ մ'ալ ելլաւ 'ի Պելոպոնէս: Առաջին անգամ Ակքայիոյ մէջ համակարծութիւն հաստատեց Թէբացի իշխանները դնելով, և զԿորնթոս և ուրիշ քաղաքներ սակսէց որ ալիպատած երկկերները յետ տան: Երկրորդ անգամ (362ին) օր մը երբ լսեցաւ թէ 'ի Սպարտա զօրք չկայ՝ ինչուան քաղաքը գնաց և իրեն Թռչնոյ բուն մը պիտի առնէր զայն, ի'ըսե Քսենոփոն, թէ որ Ագեսիլայոս լուեսէ մը չիմանար և տագնապաւ օգնութեան չհասնէր: Եպամինոնդ յԱրկադիա քաշուեցաւ. բայց Մանթինէայի քով Թշնամին եւ տեսնելով, մկկէն կը պատրաստուի և յանկարծակի Թշնամւոյն վրայ կը յարձակի: Թշնամին սկզբան չդիմացաւ, բայց ետքը կատաղաբար դէմ կեցաւ: Արիւնահեղ երկայն կռուէ մը ետքը Թշնամւոյն բանակն քաշքշեց, և դիւցազնաբար կը կռուէր երբ մահացու վէրք մը առաւ կուրծքին վրայ: Թէբացիք ամենայն ձըգտմբ ազատեցին Թշնամւոյն ձեռքէն և պատերազմին գաշտէն հանելով իր վրանը տարին: Զգաստանալով չատ ուրախացաւ երբ լսեց որ յաղթուելիւնը Թէբացւոց է: Բայց երբ լսաւ թէ երկու հոգի մեռեր են որոնցմէ կը յու-

սար թէ մեծ պատուղ պիտի քաղէն այս յաղթութենէն, ըսաւ թէ Ուրիշ լաւագոյն խորհուրդ մը չեմ կրնար տալ Հայրենեացս՝ բայց եթէ հաշտութիւն ընել. այս խօսքն ըսէլէն ետքը քաշեց նետը վէրքէն հանեց ու մեկնեն մեռաւ:

Մանթինէայի ճակատամարտն Սպարտայի զօրութիւնը ապառաժուց չանջնջեց առանց Թէբէի ուժը զօրացընելու: Երկու կողմն ալ գերբին եղաւ հաշտութեան գալու. ամենայն ինչ նախնական վիճակի մէջ պիտի մնար. հետեւաբար արկադական գաշնակցութիւն և Մեսենիոյ անկախութիւն ճանչուեցաւ:

ԳԼՈՒԽ Ե.

Մակեդոնացւոց պետութեանն առաջ եղած դպրոցական զարգացումն:

1. Աբոնոփ: — 2. Պերճախօսութիւն. Իսոկրատ. Լիգուրգոս. Իպերիդէս. Դեմադէս և փոկիոն: — 3. Եւքլիդէս և Դիմոսթենէս: — 4. Իմաստասիրութիւն. Պղատոն, Արիստոտէլ: — 5. Պատմագիրք. Թուկիդիդէս. Քսենոփոն: — 6. Բանաստեղծութիւն:

1. Պերիկլէսի անունը կրող դարն երեսն հետ դեռ բոլորովին չէր լմընցած: Արուեստից դեռ հզօր զարգացուցիչներ եղան Եւռիպիդես և Պանթիոս սիկիոնացիք, Եւֆրանոր կորնթացի նկարիչ միանգամայն և քանդակող, Ապելլէս և Նիկիաս աթենացիք, Պրաքսիթելես հռոդացի, Փիլոքսենես Եւրեարիացի և ուրիշ շատեր: Ի մէջ ամենեցուն հռչակաւոր եղան Ապելլէս որ գնկարչութեան ծայրը կատարելութեան հասուց. Լիսիպոս

վեցհարիւր տասը կտոր պղնձէ գործ թափեց, ուսկից միայն Աղէքսանդր Մակեդոնացի կ'ուզէր նկարուիլ. և Սկոպա և Պրաքսիթելէս արձանագործները որոնց վրայ նախնիք վկայեցին թէ երկուքէն մին է Նիոբէի և իր որդւոց խմբին հեղինակն, որուն վրայ այսօր իսկ Փլորենտիոյ արձանաց դահլիճին մէջ սքանչելի միտք կը հիանայ:

2. Պերճախօսութիւն. Խոհեմապահ. Լիփոքիոս. Իպէրէիդես. Դեմոփէս և Փոկիան: — Արուեստից աւելի պերճախօսութիւն և իմաստասիրութիւն կը ծաղկէր: Յունաց և Մակեդոնիոյ քաղաքական խնդրոյն մէջ չափով իմն և գրեթէ վտանգաբար, սման ունեցաւ Խոհեմապահ որ փիլիպպոսի ուղղի կարծուած դիտաւորութեան վրայ մեծ վստահութիւն ունէր, և զանիկայ Յունաստանի հետ հաշտեցընելու պաշտօնը վրան առեր էր: Սակայն ամենևին ատեան չ'ելլաս, հռետորութեան դասատու էր և յանձնարարութեամբ ձառեր կը գրէր. իր գլխաւոր բարեմտանութիւնն է ճշդիւ պերճախօսութեան օրէնքները պահել, ինչուան անօգուտ բան մը խօսելու աուէնն ալ և սպարերութեանց խորհրդով եղած ողորկութիւն և զուգաչափութիւն:

Իրմէ բոլորովին տարբեր են Լիփոքիոս Լիփոփրոնի որդին և Իպէրէիդես. յունական անկախութեան հզօր ախոյեաններ և շատ վաւերուն և կորովաբան ճարտասանութիւն ունին: Ըստ Պլուտարքեայ Դեմոսթենէս իր բնական պերճախօսութեամբը անկատճ էր. և Փոկիան շատ վարպետ էր քիչ բառերով շատ գաղափարներ բացատրել [1]:

1 Պլուտարքոս կ'ըսէ «Եւ պատմեն ևս՝ եթէ և ինքնին Դեմոսթենէս՝ քանիցս անգամ և յառնէր փոկիոնի ՝ի բեմն պպ քարել ընդ նմա՝ ասէր առ իւր բարեկամս: Արդ ա-ւադիկ յառնէ տապարն իմոց բանից: Սակայն և անկայո-

3. Եսքինէս և Դեմոսթենէս: — Եսքինէս Աթենացի գիւղի մը մէջ ծնաւ 389ին յաղքատ ծնողաց, ուսուցչէ, զինուոր, գաղափարող, թափառաշրջիկ, խեղկատակ, ատենադպիր եղաւ Աթենքի մէջ, ուր որ բանաստեղծութեան եւևէ խնայողով քաղքին մեծամեծ անձանց մէկն եղաւ: Մակեդոնացւոց հետ հաշտուելու հակամէտ, որոնցմէ կաշառուած կը կարծուի, յայտնի և բուռն հակառակորդ հանդիսացաւ ընդդէմ Դեմոսթենի: Դեմոսթենէս զինքն երբև քաղաքական օրինաց զանցառու հատարակաց առջև դատաստանի կանչեց. իսկ ինքն երբ իմացաւ որ Կտեսիփոն առաջարկեց որ Դեմոսթենի ոսկի պսակ տրուի, ձառով մը ընդդէմ Կտեսիփոնի ցըցուց որ Աթենքի ամենայն չարեաց պատճառն Դեմոսթենէս էր: Եաբլինեսէն երեք ձառ ունինք, որ երեք Շնորհք կոչուին:

Դեմոսթենէս գրեթէ 382ին ՝ի Պէանեֆա ծնաւ Աատիկէի մէջ: Եօթը տարեկան էր հայրը մեռաւ և ձոխ ժառանգութիւն ձգեց որդւոյն, զոր խնամակալք փոխանակ բազմապատկելոյ՝ բոլորովին չքայլեցին: Տասնուեօթը տարեկան հասակին մէջ մեկներ գաս բացաւ ընդդէմ խնամակալաց և յաղթեց: Բայց ոչ ոք այն առեն գուշակեց անոր պերճախօսական մեծ հանճար ունենալն՝ ինչպէս վերջը յայտնի եղաւ. մանաւանդ թէ իր երկայն պարբերութիւններով, ակար ձայնով, կարճ շնչառիչ, անշնորհք շարժ-

է, արդեօք ճարտարախօսութեանն սակս փոկիոնի ասէր այնպէս Դեմոսթենէսեայ, կամ թէ վասն կենացն քաղաքավարութեան և համբաւոյ առնն. քանզի և անշուշտ բան մի ևեթ՝ նաև ակնարկել մի՝ արգոյ և մեծարոյ առն, յայժ առաւել է քան զբանս բազումս և երկայնս »: Պլուտարքոս Զուգակ թարգմ: Հ. եզ. Թովմ. Հտ. Ի. էջ 460:

մամբն, լեզուին թոթովուելութեամբ ուննկդրաց ծաղրը չարժէց: Անկէ ետքը աննկուն պնդութեամբ մը եռանկ եղաւ այն ընական պակասութեանցը յաղթել: Սաորերկրեայ տուն մը շինել տուաւ. և կէս գերծեալ դլխով, որպէս զի դուրս ելլալէն ամչնայ, օրեր և ամբողջ ամիններ հօն կ'անցնէր, բոլորովին մոռածելու, գրելու և շարադրելու զբաղած: Երբեմն երբեմն չունչը զօրացնելու և լեզուն արագաշարժ ընելու համար, բերանը խճաքարեր դրած ծովուն եզերքը կը վազեր ոտանաւոր կամ արձակ հատուածներ բարձրաձայն կարդալով, մինչև ձայնովը ալեաց խորտակման ձայնը կը լսէցնէր. կամ լեռան մը վրայ ելած նոյնը կը կրկնէր: Այս ընթացքով 25 տարեկան հասակին մէջ, նորէն հասարակաց դիմացը ելաւ. և որովհետև արդէն արուեստին ամէն հանդամանացը տէր էր և վարժեր էր հասարակաց առեներն ամէն մրրկալից ալումներուն դիմացն առնուլ աներկիւղաբար, քիչ ժամանակի մէջ ընկերհաչոութեան վրայ մեծ ազդեցութիւն ըրաւ: Իրեն ամենադեղեցիկ ձառերն և գլուխ գործոցն են Փիլիպպեանք և Պասկի ձառը՝ որ 'ի պաշտպանութիւն Կաեսիփոնի խօսեցաւ ընդդէմ Եսքինէսի:

4. Իմաստասիրութիւն: Պղատոն: Արիստոտէլ: — Սակրատեն գլխոցէն ալ բազմաթիւ իմաստասէրք ելան. բայց 'ի գլուխ ամենեցուն է Պղատոն որ Պերիկլէսի մեռած տարին ՅԱԹէնս ծնաւ: Երբ իր սիրելի վարդապետն մեռաւ, ինքն ալ հակառակորդացն առելութենէն խուսափելու համար Թոզուց հայրենիքն և Ճանապարհորդեց 'ի Մեգարա, 'ի Կիւրենէ, յԵգիպտոս, յԻտալիա: Տասուերկու տարի անցնելէն ետքը դարձաւ ՅԱԹէնս ու Ակադեմոսի պարտէզի մէջ դըպրոց բացաւ, ուր բոլոր կենդքը սորվեցուց՝ այս-

ինքն ինչուան 348, և ուսակից մեծամեծ իմաստասէրներէ ելան: Այնէն աւելի հաւատարիմ մնալով Սոկրատայ իր վարդապետին Պղատոն, դեռ աւելի խորը թափանցեց, զարգացուց և ամենայնիւ ընդարձակեց վարդապետութիւնները. և նոյն վարդապետութիւնները տրամախօսութեան ձևով այնպիսի հակաճառութեամբ, այնպիսի վառվռուն կերպով և այնպիսի լայն և վսեմ ոճով, որ Դիւրբին չէ որոշել թէ Պղատոն աւելի իմաստասէր է, բանաստեղծ է թէ ճարտասան:

Պղատոնի աշակերտ եղաւ Արիստոտէլ քսան տարի. Սարեմոն ծոցին վրայ չինուած Ստագիրա քաղաքը ծնած է 384ին: Պղատոնի մեռնելէն ետքը դարձաւ ՅԱԹէնս և հիմնեց 'ի Լիկէոն կոչուած զբօսավայրն գալրոց մը, յորում քալելով դասատուն պատճառաւ Շէմական ըսուեցաւ: Այլ դէն աշակերտութեան միջոցն Պղատոն հիացեր էր անոր մեծաւոր գործնականութեանը վրայ: Բոլոր լսած ծանօթութիւններն ամփոփեց մտքին մէջ, զարգացուց զանոնք, կարգի վրայ տուաւ, նոր գիտութիւններ կազմեց և ամէն բանի վրայ գրեց:

5. Պափաֆիրտ. Թուխիդիդէս. Բենոփոն: — Թուկիդիդէս Ատիկէի գիւղաքաղաքի մը մէջ ծնաւ, և 471ին չարագրեց իր հիանալի գրուածն Պափոնիսի պեղոպոնեսեան պատերազմին, յորում կ'երևի որ Զէմիստոքլեսի բարեկամ, արուեստագէտ և իմաստասէր է միանգամայն: Բայց գործը պատերազմին քսաներորդ տարին հասուց. Թոզուց կիսատաար 411ին: Ինչպէս որ էր հրատարակեց զայն Քսենոփոն. զոր իր Հելլենականներուն ուզից չարունակել, ուր պատմութիւնը լինչուան Մանտինէայի ճակատամարտն հասուց 362ին: Նահանջ բիւրոն ընող Քսենոփոնն

է զոր ետքը Նահանջ խորագրաւ հրատարակեց։ Վիպասանութիւն է քան թէ պատմութիւն կի-ըմարզ, յորում կը փայլին առատօրէն իր ոճային շնորհքները։ Ամէն մեծ և փոքր գրուածոց մէջ ուղղամտութիւն մը, պարզութիւն և աքանչելի վայելչաբանութիւն մը ունի. իրեն Սոկրատայ արձանի յիշատակաց էանփ և գործփ, որուն առաջ բանից լսող և սիրուն աշակերտն է։

6. Բանասիրութիւն։ — Բանաստեղծութիւնն աղէկ վիճակ մէջ չէր։ Թէպէտ նախնեաց բանաստեղծական հանճարոյն սիրով կը հետևէին և շատ անգամ՝ ի հրապարակս հաղներգուած Հոմերոսի երգերը կը նուագէին խուռն բազմութեան դիմացն, սակայն բանաստեղծութեան աստուածային արուեստիս վառեալ հանճարները չկային։ Թատերերգութեան և՝ մանաւանդ կատակերգութեան համար մեծ գործնականութիւն կար։ Թէպէտ կատակերգակ բանաստեղծից անուններ շատ կան, սակայն իրենց գործոց հատուկտիները միայն ունինք։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾՐԱՆ

ՄԱՆՏԻՆԷԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ, ԻՆՉՈՒՄՆ ՄԵԾԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՀՆ

ԳԼՈՒԽ Ա.

Մակեդոնիա դիւցազանց ժամանակէն հիւպատոս փիլիպպոս Բ։

1. Աչխարհագրական տեղեկութիւն։ — 2. Կարանոս, Պերդիկկաս Ա։ — 3. Աղեքսանդր հելլենաբեր։ — 4. Պերդիկկաս Բ։ — 5. Աքեղպոս։ — 6. Իր յաջորդներն հիւպատոս փիլիպպոս Բ։

1. Աչխարհագրական տեղեկութիւն։ — Մակեդոնիա որ այլ և այլ ժամանակ այլ և այլ ազգաց տիրեցեր էր, երբ փիլիպպոս Բ. աթոռն ելաւ արևելքէն Սարմատաց գետով Թրակիայէն կը զատուէր, հիւսիսէն լերանց շղթայով մը՝ ի Պեոնիայէն, արևմուքէն Պինդոսի շղթայով Լիւբնիկէն և Եպիւռոսէն կը բաժնուէր, և հարաւէն մասամբ Թեսաղիոյ սահմանակից էր ուսկից Կամպունեան լեռներով կը զատուէր, և մասամբ ալ Ծովուն և Փաղկիտական Թերակղզոյն։ Այս Թերակղզին Սարմատաց ծոցին մէջ երկըն-

նալով, ուր որ Սարիմեն գետը կը թափի և մասամբ ալ Թերմայիկեան ծոցն ուր Աչիոս գետն կը բերանանայ, որ Մակեդոնիոյ գլխաւոր գետ մ'է, արտաքոյ կարգի բերնաւոր երկիր էր և Մակեդոնիոյ ամենահարկաւոր. ասոր համար Յոյնք խնամքով կը ջանային հոն գաղթական հաստատել: Մակեդոնիոյ անուանի քաղաքներն են Սկոպիա հիւսիս արևմտեան կողմն. Եգեսա հին մայրաքաղաքն գրեթէ 'ի կեդրոնի չինուած Սագրեոսի ափունքին վրայ. Պէլա Փիլիպպոսի և Աղէքսանդրի մայրաքաղաքն աւելի ծովմօտ և Թեսաղոնիկէ ծովուն վրայ:

Մակեդոնացիք հելլէն և բարբարոս ազգաց խառնուրդ մ'էին, բուն Յունաց լեզուին մերձաւոր լեզու մը կը խօսէին և նոյն կրօնք և սովորութիւններն ունէին:

2. Կարանոս. Պերդիկկա Ա: — Իննեորդ դարուն մէջ Կարանոս անուանով հերակլեան մը գաղթականութեան մը գլուխ կեցած Արգոսէն եկաւ, գնաց Մակեդոնիոյ Թագաւորին ծառայելու, որ այն ատեն (Մակեդոնացի) սահմանակից ցեղի մը հետ կը կռուէր, և 'ի փոխարէն յաղթութեան Եմաթիա Կարանոսի պարգևեց Թագաւորն: Այս գաւառն հոքը Մակեդոնիա ըսուեցաւ և համաց համայ բոլոր աշխարհն ալ նոյն անունը կրեց: Աւանդութիւն էր թէ Կարանոս Եմաթիա մտնալու ատեն այծ մը առաջնորդեց իրեն ինչուան եգեսա. 'ի յիշատակ այս դէպքին քաղքին անունը փոխուեցաւ Եգէ (քաղաք այծու): Ասով յայտնի կ'ըլլայ թէ ինչու համար Մակեդոնացւոց նշաններն այծու գէմքեր կը կրեն և թէ ինչու նոյն կենդանեայ կերպարանք նկարուած կը տեսնանք Փիլիպպոսի և իր յաջորդաց դրամոց վրայ:

Կարանոսէն դար մը հաքը Հերոդոտոս զՊերդիկկաս կը համարի հիմնադիր Մակեդոնիոյ մէջ ծանօթ հարստութեան: Մէկին վերաբերեալ աւանդութիւնը թէպէտ և աւելի սեթևեթեալ և գեղեցկացուցած առասպելներով՝ միւսոյն աւանդութեան շատ նման է. վասն զի Պերդիկկաս ալ Արգոսէն կ'ելլէ, Մակեդոնիոյ Թագաւորին կը ծառայէ և ապա կը Թագաւորէ իր ընտանեաց յաջորդաց վրայ ալ գրեթէ բան չենք գիտեր: Պարսկական պատերազմներու ատեն կը սկսի Մակեդոնացւոց պատմութեան խաւարն փարատիլ, որ արդէն շատ մեծցած էր: Երբ պարսկական պատերազմներն սկսան՝ Ամինդասայ որդին Աղէքսանդր Ա. կը Թագաւորէր: Երբ Քսերքսեսին սոխպուեցաւ որ միանայ Պարսից հետ և անոնց հետ մեկ տեղ՝ 'ի Յունաստան արշաւէ, յանձն առաւ այս գիտմամբ՝ օգտել կամ գոնէ նուազ վնաս հասցընել հարստահարեալ ազգին, որուն արիւնակից ըլլալն գիտէր: Ամենայն կերպով ջանաց օգտել Յունաց, թէ Քսերքսեսի կողմանէ գրած գաշնագրութեան առեն և թէ ծածկաբար անոնց տեղեկութիւն տալով: Եւ այս գիտաց մէջ այնպիսի ճարտարմտութեամբ չարժեցաւ որ Պարսից անհաճոյ չէղաւ և տերութիւնն ալ մեծցուց:

4. Պերդիկկաս Բ. — Պերդիկկաս Բ. իր որդին ու յաջորդը՝ գրեթէ անդուլ պատերազմ ըրաւ Ոլիւնթացւոց Սիտաղկէս Թագաւորին հետ, որուն իշխանութենէն վախ ունէր. և վերին Մակեդոնիոյ նախարարաց հետ՝ որոնցմէ կը պահանջէր որ իր գերիշխանութիւնը ճանչնան: Քաղկիտականին տիրելու չատ փափագ ունէր, անոր համար ապստամբեցուց Աթենքի դէմ, Պոտիդէայի ապստամբութեան օգնեց, գրգռեց

զԱպարտա որ ՅԱտալիկէ արշաւէ, ինդրեց անկէ որ 'ի Քաղկիտական ՊՐաբանիդաս խաւրէ որ Ականդոս, Ստադիրա, Ամֆիպօլիս, և ուրիշ քաղաքներ առաւ ԱԹենացիներէն: Սակայն Աթենացւոց հետ ալ երբեմն դաշնակցեցաւ, Սիտալկէսի դիմանալու և չՓողլու համար որ Սպարտա այն տեղերուն վրայ զօրանայ:

5. Արքելայոս: — 413ին Ալքեղայոս յաջորդեց Աչխարհակալ ըլլալու տեղ, օրէնգիր ուղեց ըլլալ. Թագաւորութիւնը ընդարձակելու ոչ՝ Հանաց անոր վիճակին ապահովցընել և բարւոքել: Շատ քաղաքներ ամրացուց. կանոնաւոր զօրք պատրաստեց. արուեստները ծաղկեցուց և՝ի մանաւորի երկրագործութիւնն. երկրին ամէն կողմէն Համբաներ բանալ տուաւ, Աթէնքի բանաստեղծից և իմաստասիրաց հետ միշտ տուրհաւ ունեցաւ. արքունիքը կանչեց ամէն անուանի մարդիկ, ինչպէս Զևս, Եւրիպիդես, Սգաթոն, Տիմոթէոս հռչակաւոն երգիչն. Թէպէտ չՀասաւ փափաքին՝ բայց զՈսկրատ ալ յարքունեաս հրաւիրեց:

Այս նորոգութիւններն կատարելու Համար մեծամեծ նեղութիւններ քաշեց ազնուականաց կողմանէ, որոնց իշխանութենէն Մակեդոնիոյ Թագաւորն կախմունք ունէր գիւցազանց ժամանակին պէս: Ալքեղայոս յաղթեց, մերթ խրամանդ հնարիւք և մերթ բռնութեամբ: Մինչդեռ արիաբար նորոգութիւններ կ'ընէր սպանեաւ 399ին. և հաւանական է Թէ Ալքեղայոսի մահն ազնուականաց վրէժխնդրութեան հետևանք մ'ըլլայ:

6. Իչէն յաջորդէ ինքնան Փիլիպպոս Բ: — Քաղաքականութեամբ նորածաղիկ Թագաւորութեան մը յաջորդելն քառասուն տարի եղեր ունք, յափշտակութիւնք, սպանութիւնք,

քաղաքական պատերազմներ: 364ին երբ Պերդիկկաս Գ. սպաննեց իր անհաւատարիմ խնամակալն և ինքը կեցաւ վարչութեան գլուխ, տէրութիւնն ներքին խոր խաղաղութիւն մը վայելէր: Կարծես Թէ Պերդիկկաս պիտի ակեր և պիտի յառաջ վարէր Ալքեղայոսի բռնած Համբան. բայց 360ին Լիւրիկեցիք պատերազմի ելան Մակեդոնացւոց վրան և Մակեդոնացիք չարաչար կերպով յաղթուեցան: Պերդիկկաս աներկիւղ պատերազմելու տաճն վիրաւորուեցաւ, ուսկից քիչ տաճնէն մեռաւ:

ԳԼՈՒԽ Բ.

ՓԻԼԻՊՊՈՍ Բ:

1. Փիլիպպոսի բնութիւնն և առաջին գործերն: — 2. Փիլիպպոս 'ի Թեսսաղիա: — 3. Ողնութիւն առաւին: — 4. Նուիրական պատերազմ: — 5. Յունաստանի յուզմունքն: — 6. Փոկիոն ընդդէմ Փիլիպպոսի: — 7. Փիլիպպոս 'ի մէջն Յունաստան: — 8. Աթենքի և Թեբէի դաշնակցութիւն: — 9. Փերոնէսոսի ճակատամարտն: — 10. Կորնթոսի ժողովն: Փիլիպպոսի մահն:

1. Փիլիպպոսի բնութիւնն և առաջին գործերն: — Պերդիկկաս Գ. Աթինդաս որդին պիտի Թագաւորեր. բայց դեռ մանկահասակ ըլլալով. իր հօր եղբայրն Փիլիպպոս իրեն խնամակալ և Մակեդոնիոյ վարիչ եղաւ: Տասնուհինգ տարեկան էր Փիլիպպոս՝ Պելոպիդաս 'ի Մակեդոնիա գնաց խաղաղութիւն ընելու Հրկու հոգւոյ մէջ, որոնք գահ ժառանգելու եաւէ էին, և զՓիլիպպոս ա-

ած իբրև պատանդ ուրիշ քանի մը մակեդոնա-
յի պատանեաց հետ բերաւ՝ի Թեբէ։ Անկէց վերջ
կենաց մեծ մասն՝ի Թեբէ անցուց Փիլիպպոս,
եպամինոնդէն՝ որուն մեծ բարեկամին էր՝ սորվե-
ցաւ հնարիմացութիւն, ճարտարմտութիւն,
պերճախօսութիւն և իմաստասիրութիւն։ Անկէ
Աթէնք և Յունաստանի քաղաքներն գնալով
կարգաւորութիւնը դիտեց, կողմնակցութիւն-
ներն քննեց իմացաւ, Պղատոնին, Իսոկրատայ և Ա-
րիստոտէլի հետ բարեկամացաւ։ Մարդկան և ի-
րաց այս ճանաչողութիւնք ըստ պիտոյից ժամա-
նակին իրեն պէս խորագէտ, իրահամարձակ,
պնդամիտ, անաչառ մարդու մը շատ օգտակար
պիտի ըլլային։

Քանի ու իրեք տարիկան էր սկսաւ կառավա-
րել. առաջին փոյթն եղաւ աշխարհն այն նեղքին
և արտաքին անթիւ վտանգներէն ազատել, որոնց
մէջ խեղդուած էր. և քիչ ժամանակի մէջ այն-
պիսի ուժով և խելամտութեամբ՝ ժամանակին
համեմատ զէնք կամ ստակ գործածելով, որ
Մակեդոնացիք երախտագէտ մեռք և հնազմամբ
ուղեցին մեկէն զինքը թագաւորեցնել։ Երբ թա-
գաւոր եղաւ, չանաց աղնուականաց գոռոզու-
թիւնը չախչախել, որոնք Աբքեղայոսի մեռնե-
լէն ետքը գլուխ վերուցին, և յաջողեցաւ։ Այս
ամենայն կարելի միջոցներով սկսաւ բանակը
կանոնաւորել և բարեկարգել և կամաց կամաց
երեսուն հազարի հանեց զօրաց թիւն։ Այս բա-
նակին հիմը հռչակաւոր փալանգն եղաւ, որ
ահաւոր էր քանի որ հռովմէական լեգէոնաց
դիմացը չէր կրնար չախչախուած։

Բանակն կազմելէն ետքը սկսաւ եռանդեամբ
աշխարհակալել. և Աթէնք սուտ խոստմամբ խա-
բելով՝ որպէս զի Թշնամի չհանդիսանայ, Ամֆի-
պօլսոյ, Պիւգնայի և Պոտիդէայի տիրեց և

Թրակիոյ մէջն ալ կրնէտաս առաւ, ուր մակե-
դոնացի գաղթական խաւրեց և անոնցն փոխելով
Փիլիպպեան դրաւ։ Անկէ դէպ՝ի հիւսիս դիմեց
և ոսկեբեր Պանգէոս լերան տէր եղաւ. իրեն
համար մեծ և կարևոր էր այն լեռն, որովհետև
ոչինչ նուազ աշխարհակալ գործի կը համարէր
ոսկի հատասաք զինուց և նէնգութեան, և որ
կ՚ըսէր Թէ՝ բերդն անմատոյց չէ՝ երբ կրնամ ոս-
կիէ համեստ կրով էշ մը ներս մտցընել։

2. Փիլիպպոս՝ի Թեսաղիա։ — Թեսաղիոյ խառ-
նուածութիւնները պատճառ եղան որ Փիլիպպոս
Յունաստանի մտնէ։ Փերէս քաղքին Աղէք-
սանդր բռնաւորին երեք փեսաներն զինքն ապան-
նելէն ետքը մէյմէկ վայրագ բռնաւորներ եղան։
Ասոր համար ապստամբութիւններ և երկպա-
ռակութիւններ եղան և զՓիլիպպոս օգնութեան
կանչեցին։ Հոն կը խոյանայ, բռնաւորներն կը
կործանէ ու հաստատակեցուածութիւն կը հաս-
տատէ. բայց Թեսաղիոյ Թերմոպիլիոս ծոցին
վրայ ունեցած զինարանք և բանակատեղիք գոր-
ծածելու իրաւունքն իրեն կը սեփականէ։ Ա-
սով ալ գոհ չըլլալով, 352ին պահակազան բա-
նակ կը դնէ Փերէս, Պահասոս և Մագնեսիա
քաղաքաց մէջ։

3. Ողնիոյ առումն։ — 349ին Փիլիպպոս Ո-
ղինթոս քաղքին վրայ գնաց որ երեսուն քաղա-
քաց դաշնակցութեան մը մայրաքաղաքն էր։
Երկու մակեդոնացի իշխան իրեն գաւաճանիք
կենաց Փիլիպպոսի փախան յՈղինթոս տպաւի-
նեցան. Ողինթացւոց հիւրընկալութիւն Փիլիպ-
պոս պատերազմի յարմար առիթ առաւ։ Ողը-
ղակի մայրաքաղքին վրայ երթալէն առաջ Ապո-
դոնիա, Աստիերա և ուրիշ քաղաքաց տիրեց։
Ողինթացիք սարսափած մերձաւոր ահեղ վտան-
գէն՝ դեսպան խաւրեցին Աթէնք։

Երբ դեսպաններն հասան, Դիմոսթենէս որ Մակեդոնացւոյն աշխարհակալ դիտումներն աղէկ ճանչցեր էր, և արդէն երկու տարի էր որ իր առջի Փիլիպպեանը խօսեր էր անոր դէմ և տասնուչորս տարի ահեղ պատերազմ մը կը մղէր խօսիլ զինուբք, եռանգեամբ պաշտպանեց Ողինթացւոց գաղտ. և որպէս զի իր քաղաքն համոզէ որ զօրաւոր և պատրաստ օգնութիւն մը խաբէբ անոնց, քանի մը ամսոյ մէջ երեք ձառ խօսեցաւ որ ըստ նիւթոյն Ողինթական ըսուեցան: Այնենացիք երեք անգամ օգնութեան գըրնացին Ողինթացւոց. բայց առջի երկուքն աւելի ճշտոյ քան թէ օգուտ բերին Ողինթացւոց, վասն զի վարձկան զօրք էր և կարեգէս և Կալիւիմոս զօրավարներն ալ մելի և աւազակ մարդիկ էին. երրորդ անգամ զօրաւոր և բազոր քաղաքացիներէն կազմուած բանակով մը գնացին, բայց այն տաեն հասան երբ արդէն քաղաքն մատնութեամբ առնուած և այրուած էր:

4. Նաւիքական պատերազմ: — Աւազքին նաւիքական պատերազմին վերջը՝ որ Սողոնի ժամանակին եղաւ, Կրնայի և Կիւբրայի գաշտագետինն աստուածոց նուիրուած էր, այսինքն միշտ անմշակ պիտի մնար: Բանի մը Փովկիսացիք մաս մը մշակեցին, Ամիւիկտիոնեան տաեանն զանգք 357ին տուգանքը գասատարակեց: Որովհետև Փովկիսացիք չվճարեցին տուգանքն՝ միւս տարի Թեբացիք, Լոկրացիք, Թեսաղացիք պատերազմ բացին անոնց դէմ: Պատերազմը տասը տարի տևեց փոփոխ բաղդիւ. Փովկիսացւոց յաջորդաբար զօրավարեցին Փիլոմելոս: Ոնոմարք երեն եղբայրն, Փայելոս Ոնոմարքոսի որդին: Պատերազմը յաւաջ տանելու համար Դելփիսի տաճարին գանձն գործածեցին:

Փիլիպպոսերբ Թեսսալիա էր՝ մանաւանդ եղեր էր պատերազմին, վասն զի ինչուան Թեսսալիա գնաց Ոնոմարքոս և եաքը Փիլիպպոսն յաղթեալ սպանուեցաւ: Փիլիպպոս քաշուեցաւ Թողոց որ Յոյնք ղերար ակարացընեն: 346ին Թեբացիք զինքը կանչեցին, գարձաւ Թերմապիլոյ ոիրեց, Փովկիսի մէջ երեցաւ և սիրեց զՓիլէքոս որ՝ի Պեղոպոնէս քաշուի. և այսպէս անուն հանեց թէ ինքը միայն վրէժխնդիր է սուտածոց և պատերազմը լըմնցուց: Ամիւիկտիոնեան տաեան գումարեց Փիլիպպոս, որն որ վճռեց որ Փովկիս գաւառին քաղաքներն կործանուին, ժողովուրդն այլ և այլ գիւղերու մէջ ցրուին և արգելուն որ ձի և զինք չունենան ու Ապոլոնի տաճարին հարկ վճարեն: Փիլիպպոս այն հրամանագրին գործադրին՝ Ամիւիկտիոնեանց անգամ ընտրուեցաւ և Փովկիսացւոց քուէները իրեն տրուեցան, ու Բէովատացւոց և Թեսսաղացւոց հետ մէկ տեղ նախագահ էր պիւթեան խաղերուն:

5. Յոռնապահի յոռվնեն: — Խրոխտ Փիլիպպոսին գերիշխանութիւնն և յոռնական խնդրոց մէջ մանալու նոր առած իրաւունքն բոլոր Յոռնատան աղմկեց: Մանաւանդ Աթենք սոսկաց. հայրենիքն՝ի վտանգ հրատարակուեցաւ, զրաժողով ընելու և Պիրէոն ամրացընելու հրամայ եղաւ: Աթենքի չարժմունքը Պեղոպոնեսի հաղորդուեցաւ, երբ լսեցին որ խորամանգ Մակեդոնն՝ի Մեգարա դաւակցութիւն մը կը պատրաստէր որպէս զի պաշտպանութեան պատրուակաւ ինք զինքը հօն ձգէ. բայց իր հնարքներն բոլորն ալ ցրուեց Դիմոսթենէս որ ամէն հասած տեղն Փիլիպպոսի դէմ կը խօսէր և կը վառէր ժողովուրդն որ անոր դէմ կենայ: Փիլիպպոս խոհեմութիւն համարեց առ ժամ

ուրիշ կողմը մ՚երթալ, և գնաց Թրակիոյ մէջ իր աշխարհակալութիւնները տարածելու։

6. Փիլիպոս ընդդէմ Փիլիպպոսի։ — 341ին վերջերն Փիլիպպոս Պրոպոնտոսի Պերինդոս քաղքին վրայ գնաց 30,000 զինուորօք և անթիւ պատերազմական մեքենաներով։ Երեք անգամ յարձակեցաւ և երեք անգամ յետ քաշուեցաւ։ Բանակին կէս մասը Թողուց հոն որ քաղաքն պաշարուած պահէ և միւս կէս մասով Բիւզանդիոնի վրայ գնաց՝ համարելով որ գիւրաւ կառնուի։ Բայց Աթենք Դիմոսթենեսի եռանդեամբը վառուած՝ 120 նաւով նաւատորմիղ մը Փոկիոնի զօրավարութեամբ խաւրեց. Բիւզանդիոն սերով ընդունեցաւ զՓոկիոն՝ որ ստիպեց զՓիլիպպոս որ քաղքէն հեռանայ և քիչ մը ետքը Պերինդոսէն և Պրոպոնտոսի բոլոր գրաւած երկիրներէն ալ քշուեցաւ։

7. Փիլիպպոս ՚ի Տղէն Յունաստան։ — Փիլիպպոսի կաշառաբերութեան առիթ ալ չպակսեցաւ։ Եսքինէս կաշառակ՝ Ամֆիսացի Լոկրացւոց գեմ դատ բացաւ որ նուիրական երկիրը մշակեր էին. և Ամֆիկտիոնեան ատենին նուիրական պատերազմ հրատարակել տուաւ, և պատերազմի զօրավարն Փիլիպպոս եղաւ։ Փիլիպպոս որ ալ լաւագոյնի չէր փափաքեր՝ կեղծաւորեցաւ Թէ յանձն չառնուր, բայց ապա յանձն առաւ և յԵղիս մտաւ։ Մէկէն ՚ի Փոկիս խոյացաւ, բայց բանակը կեդրոնացընելէն եաքը փոխանակ Լոկրացւոց գեմ երթալու՝ ելադէս քաղքին ակրեց, անցաւ ՚ի Բէովոտիա և սկսաւ դէպ ՚ի Ատտիկէ գիմել։

8. Աթէնք և Թէբէի դաշնակցութիւն։ — Փիլիպպոսի մօտենալուն գոյժը ամենուն վրայ սարսափ ձգած էր. Դիմոսթենէս միայն համարձակեցաւ բերանը բանալ առ ժողովուրդն. և քաջալե-

րեց զանոնք որ չվհատին և սկսին պատերազմի պատրաստութիւն և ՚ի Թէբէ դեսպան խաւրել՝ որպէս զի Բէովոտիա դաշնակից ըլլայ Աթենքի ընդդէմ հասարակաց թշնամւոյն։ Աթենացիք հաւանեցան և զինքը ՚ի Թէբէ խաւրեցին իրենց գլուխ դեսպանութեան։ Ի Թէբէ Փիլիպպոսի դեսպանները գաւաո որ Փիլիպպոսի կողմանէ եկեր էին զԹեբացիս անոր կողմը քաշելու համար, և Թեբացիները տարտամ և տարակուսեալ տեսան. բայց լինքը իր Ճարտարախօսութեամբ ապստամբութեան սիրով վառեց զԹեբացիս և դաշնակից ըրաւ Աթենացւոց։

9. Փերընթեայի պաթերազմը։ — Երկու զօրաւոր թշնամիները, որոնց իւրաքանչիւր 30,000 հետևակով և 2000 ձիաւորով, Ճակատեցան Փերընթէա քաղքին քով։ Աթենացիք, կարեւոր և Լսսիկլէսի զօրավարութեամբ ձախ թեւը կը կազմէին. Բէովոտացիք աջ թեւը, և կեդրոնը կը կեներին Փովկիսացիք, Ախայեցիք և Կորնթացիք. Սպարտացիք հոն չէին. ազատութեան վերջին պատերազմը առանց իրենց եղաւ։ Ի սկզբան յաջող չգնաց պատերազմը, Աթենացիք ինչուան դիմացի թշնամին ալ ցրուեցին. բայց Թեբացիք հանգերձ իրենց գիւցազնական ընդդիմութեամբն, ասիպուհետև Ալեքսանդր ուԹեսաղոնիկեայ արքայորդւոյն յարձակմանը տեղիք տալ. ապա Աթենացւոց վրայ գիմեցին, որոնք արգէն կարգերնին կորսընցուցած Թըշնամւոյն եաևէն չէին կրնար երթալ և սպառած կը փախչէին։ Յունաց կորուստը մեծ էր. միայն հազար հոգի Աթենայի մեռան, և երկու հազար ալ գերի լինան։ Այս պատերազմով, որ 338ին, օգոստոսի մէջ եղած կ՚ենթադրուի, Փիլիպպոս մահացու հարուած մը տուաւ յունական ազատութեան։ Մինչդեռ Ա

թենացիք նախնական ցաւալի ապաւորութիւնը անցընելով, եւ անդեմամբ մը պատերազմի նոր նոր պատրաստութիւններ կը տեսնէին, Փիլիպպոս առաջ քան 2000 գերի չէ գարձուցած ու խաղաղութիւն ըրաւ պատուաւոր պայմաններով։ Հաղթացողց մեծ մասն միաբերնին փոխեցին և հաշտութիւն ըրին։ Թեբացիք ընդ հակառակն սակրուեցան գերեզց փրկանք վճարել. և Կադմեականի մէջ ալ մակեդոնական գունդ մը պահել։

10. Կորնթոսի ժողովը. Փիլիպպոսի սպանութիւնը։— Յունաստանի սիրելով Փիլիպպոս, բոլոր տէրութիւնները Կորնթոսի պարանոցին քով ժողովքի կանչեց, և յայտնեց անոնց Պարսկաստանի սիրելու գիտաւորութիւնն և յայնմ կարգողելու հաւանականութիւնը, ու նահանջ ինչրեց և Ագեսիլայոսին օրինակով ուզեց ցուցնել։

Ժողովքը հաւանեցաւ և զինքը ընդհանուր հրամանատար անուանեց և սահմանեց որ ամէն յունական քաղաք որոշեալ բանակ մը պատրաստէ։ Այն առեն Թագաւորն Մակեդոնիա գարձաւ պատրաստութեղու, և երկու տարի եաքը, երբ գրեթէ պատրաստութիւնը լրնցած էր, իր աղջկան հարսանեաց հանդէսին մէջ մահուամբ վերաւորուեցաւ, աղնուական մակեդոնացիկ մը, որուն անունն էր Պաւսանիաս։ 47 տարեկան էր Փիլիպպոս ու 24 տարի թագաւորեց։

ԳԼՈՒԽ Գ.

Մեծն Աղեքսանդր։

1. Աղեքսանդրի դաստիարակութիւնն և բնաւորութիւն։— 2. Աղեքսանդր՝ ի Յունաստան։ — 3. Պարսկային տէրութեան վիճակն։ — 4. Աղեքսանդր Ասիա։ Գրանիկոսի ճակատամարտն։ — 5. Իսոսի ճակատամարտն։ — 6. Աղեքսանդր՝ ի Փիւնիկէ և Եգիպտոս։— 7. Դարձն Ասիա. Արբելլայի ճակատամարտն։ — 8. Աղեքսանդր՝ ի մայրաքաղաքս տէրութեան Պարսից։ Դարեհի մահը։ — 9. Աղեքսանդրի բռնած կերպն։— 10. Աղեքսանդր՝ ի Հնդիկս։ — 11. Աղեքսանդրի դիտաւորութիւնը։ Անոր մահը։ — 12. Վերջաբան։

1. Աղեքսանդրի դաստիարակութիւն և բնաւորութիւն։ — 359 յունիսի 19ին ծնաւ Աղեքսանդր։ Փիլիպպոս՝ որդւոյն դաստիարակութեանը մեծ հոգ և խնամք տարաւ, որուն այլ և այլ վարժապետներ բերաւ. յորս բացայայտց՝ էր և Լիւսիմաքոս որ սորվեցուց Աղեքսանդրի մեծ սէր ունենալ Պինդարոսս, Սոեսիկորոս և Հոմերոս բանաստեղծից վրայ, որուն բոլոր Իլիականը և Ոդիսականին մեծ մասը սորվեցաւ։ Ու ամենէն գերագոյն Արիստոտէլ՝ որ բարոյական, քաղաքական և բժշկականն սորվեցուց։ Տակաւին մանուկ տղայ, էր կարողութեանց կանխահաս զարգացումները շատ փորձեր ցըցուց։ Առնցմէ մէկը միայն յիշենք. Պարսից գեսպաններն Մակեդոնիա եկան. փոխանակ անոնցմէ տեղեկանալու՝ ինչպէս որ կը կարծուէր, համբաւաւոր պարտէզներուն և Պարսից Թագաւորին մեծութեանը վրայ,

ապչեցուց զանոնք, հարցընելով թէ ինչ ձամբաներով կ'երթեցուն յԱսիա, մրջոյի հեռու են գլխաւոր քաղաքները իրարմէ, Պարսից թագաւորին զօրութիւնը ինչպէս է, պատերազմի մէջ յոյրում է անոր ուժը և զօրութիւնը:

2. Աղեքսանդր 'ի Յունաստան: — Հազիւ թէ քսանամեայ գահին վրայ ելաւ, ուղիղ գործադրել մտածած և արդէն մեծաւ մասամբ պատրաստած Ասիոյ արշաւանքը: Սակայն գիտնալով թէ Յոյնք Փիլիպպոսի մահը առիթ առնելով իրարու հետ միացած իրեն դէմ կը շարժին, զամանս սպառնալիք և զամանս խոստմամբ իրեն քաշեց:

Ապա հիւսիսային կողմը գործաւ, Մակեդոնիոյ չորեակայ բարբարոս ժողովրդոց մեծ ապրստամբութիւնը նուաճելու համար. և սաստիկ երթագութեամբ մը մէկէն 'ի միւսն անցնելով խորտակեց զԹրակացիս, զԹրիբալլցիս, զԻլլեթս, զՏաւլանտիացիս, զԼիւրիկեցիս: Ան առեն լուր առաւ թէ բոլոր Յունաստան իր մահուան սուտ լուրովը նորէն կը յուղի: Թողուց բարբարոսաց արշաւանքը և իր սովորական երագութեամբը սատուկրկու օրուան մէջ Բէովոտիոյ սահմանը հասաւ, և քսան և չորս ժամէն եաթը Թեբէի պարսպաց տակը բանակեցաւ 33,000 հոգւով: Թեբացիք Աղեքսանդրէն հրաւիրուեան որ խաղաղութեամբ հպատակին. հրաւիրանաց պատասխանը սատկիկ յարձակմամբ մը տուին: Կատաղաբար պատերազմեցան. բայց Մակեդոնացիք առին քաղաքն, և ամբողջ օր մը սեւեց կողոպուտը և կոտորածը: Քաղաքը հիմնայատակ կործանեցին բաց 'ի Պինդարոսի տունէն և Կադմեականէն ուր որ Մակեդոնական զօրքը դրուեցաւ:

Թեբէի կատորածին վրայ Յունաստանի ուրիշ

քաղաքները սոսկացին, և փութացան Թագաւորին հպատակելու: Լաշտուեցաւ ամենուն հետ, և անոնց երեսփոխանները Կորնթոս գումարեց, ինչպէս Փիլիպպոս ըրաւ՝ զինքը յունական զօրաց ընտրել տալու համար դէպ ի Պարսից դէմ, և Մակեդոնիա դարձաւ չուտով մը արշաւանաց պատրաստութիւնը տեսնելու:

3. Պարսից պերսեպոլեան ՀՀամպն: — Պարսից տէրութիւնը, թէպէտև արտաքսապէս կարող կ'երեւէր, այլ ընդհակառակն ամենատկար վիճակի մը մէջ էր: Տէրութիւնը կազմող բոլոր ազգերն ատելի կ'ուզէին որ կործանի, քան թէ զանիկայ պաշտպանել: Նախարարները միշտ մեծագոյն իշխանութեան եռանդ էին, և Թագաւորներուն ալ նախանձորդ կ'ըլլային: Երկար ժամանակէ 'ի վեր, Թագաւորները ուրիշ բան չէին, բայց միայն Թուլամորթ, բռնաւոր կամ ակարամիտ իշխաններ: Ասոնց գաւառաց մէջ անընդհատ ապստամբութեան ձայներ կը լսուէին. խոհ կառավարութեան կենդրոնի մէջ ծածուկ գաւակցութեանց և սպանութեանց անաւարտելի շղթայ մը կար: Արտաշէս Բ. Թագաւորութիւնը երկայն բայց անհանգիստ եղաւ: Ինքը 359ին մեռաւ յաջորդեց իր որդին Ովքոս կամ Արտաշէս Գ. որ իր աթոռը ապահովելու համար իր երկու եղբայրները և ուրիշ շատ ազգականներ սպաննեց: 338ին ինքն ալ Թունաւորուելով մեռաւ, և Արշէղնի ինկաւ Թագն որ Ովքոսին որգեորը կրտսերագոյն էր. բայց երեք տարի չանցած, այս Թագաւորն ալ սպանուեցաւ, և Կոդոմանոս Թագաւոր հրատարակուեցաւ՝ որ Դարեհ անունը կրեց:

4. Աղեքսանդր յԱրեւ. Գրանիկոնի պատերազմը: — Ամենայն ինչ այս վիճակիս մէջ էր, երբ Աղեք-

ամանդր չարժեցաւ անոր դէմ երթալու, 334 տարուան գարնան մէջ, 30,000 հետեւակ և 4500 ձիաւոր զօրաց գլուխն կեցած: Զննտիպատրոս իբրև վարիչ Թողուց ի Մակեդոնիա: Պարսիկք անհոգութեամբ և կամ արհամարհանօք, Թողուցին որ Մակեդոնացիք անարգել ելլեսպոնտոսէն անցնին: Բայց ցամաքէն պատրաստուէր կին անոնց դէմ կենալու. և անոնց մէկ բանակը Փռիւգիոյ Կրանիկոն գետին վրայ բանակած էր: Աղէքսանդր հօն հասնելով մէկէն գետը անցնել փորձեց և ահեղ պատերազմ մը սկսաւ. բայց զօրաց ճարտար չարուածքը և զինուորական հրահանգը՝ բազմութեան յաղթեցին, և Մակեդոնացիք կատարեալ յաղթական հանդիսացան: Պարսից ահագին կոտոր մը եղաւ, և 2000 գերի յաղթականաց ձեռքը ինկան:

5. Խոսոյ Ճակատամարտն: — Այս յաղթութենէն եաքը. Աղէքսանդր փոխանակ յառաջ երթալու, տարին ամբողջ Փռիգ Ասիոյ մէջ անցուց որպէս զի բոլոր գաւառները նուաճէ: Մինչ տարի առաջ խաղաց, և Կիլիկիոյ մէջ Իսսոս գետին քովն Դարեհի հանդիպեցաւ որ 500,000 զօրքով հօն կը սպասէր: Այս պատերազմը Պարսից երկրորդ մեծ խորտակումն եղաւ. հարիւր հազար հոգի մեռան, ճնշմանդները ի մէջ որոց և Դարեհ՝ փախան. իր մայրը կինը և որդիքը Աղէքսանդրի գերի ընկան. որ թշնամեաց բանակին մէջ երեք հազար տաղանդ ալ գտնուեցաւ:

6. Աղէքսանդր ի Փիւնիկէ և Եգիպտոս: — Եւ ոչ այս անգամ ուղեց Աղէքսանդր բուն խորին Ասիա մտնալ և Թողլով որ Դարեհ փախչի ամենայն գիւրութեամբ, ինքը մտաւ Փիւնիկէ: Փիւնիկէի ամէն քաղաքները, բաց ի Տիւրոսէն, ամենայն յօժարութեամբ դռները բացին. ի Տիւ-

րոս բռնութեամբ մտաւ. Հօն Թը ամիս պաշարեցին վերջը: Յաղթականք ներս մտնելով բարկացած 8000 հոգի սպաննեցին, և միւսները գերեցին, գերեց 30,000 հոգի: Ան պաշարման առեն Աղէքսանդր խաղաղութեան պայմանները ընդունեցաւ Դարեհէն, զորոնք մերժեց:

Անկէց Եգիպտոսի ճամբան բռնեց. այս աշխարհն արդէն պարսկական լուծը Թօթափելու պատրաստ՝ որուն տակը երկու գարէ ի վեր կը հեծեր, մէկէն հպատակեցաւ Աղէքսանդրի: Աղէքսանդր մինչև Մեմֆիս գնաց. վերջը Նեղոս գետէն իջնելով եկաւ Կանոպիոյ բերանը. և հօն ուզեց հաշակել իր աշխարհակալութիւնը՝ Աղէքսանդր քաղքին հիմնարկութեամբ: Մեմֆիս դառնալով, անապատը անցաւ և Ամմոնի մեհեանը գնաց, ուր քրմապետը զանիկայ Աբրահամայ որդւոյ անուամբ պատուեց:

7. Դարեհ և Ասիա. Արբելայի պատերազմը: — 331ին գարնան, Աղէքսանդր Եգիպտոսէն գարձաւ որ Դարեհի վրայ երթայ, քաղաքական վարչութիւնը երկու Եգիպտացւոց յանձնեց, բայց զօրաց հրամանատարութիւնը Մակեդոնացւոց տուաւ: Փիւնիկէ հասաւ, ի Կէղեսիւրիա անցաւ, անկէց ի Միջագետք և Տիգրիսէն անցնելով՝ Կաւգամէլայի ընդարձակ դաշտին մէջ, Արբելայ քաղքէն քիչ հեռու Դարեհի բազմաթիւ բանակին հանդիպեցաւ որ գրեթէ միլիոն մի էր: Իսկ Աղէքսանդրինն որ նոր օգնութիւն ալ առած էր, 40,000 հետեւակ էր և 7000 ձիաւոր:

Միւս առաւօտը երկու թշնամիները իրարու հետ զարնուեցան, բայց պատերազմը սակաւ ևս եղաւ: Աղէքսանդրի զօրաց ուժգին յարձակումն, եռանդնալից հոգին զինուորական կըր-

թուրքիւն թշնամւոյն վրայ ընդիմանալու արիա-
կան հոգի մը չգտան: Կ'ըսեն թէ 300,000 պար-
սիկք մեռան. և գերիներուն թիւն ալ աւելի
բազմաթիւ եղաւ: Դարեհ առջի փախչողնե-
րէն մէկն եղաւ:

8. Աղէքսանդր 'ի մայրաքաղաքս պերսէպոլիս
պոլոյ. Դարեհի մահը: — Աղէքսանդր իր ընթացքը
ուղղելով դէպ 'ի Բաբելոն, որուն բնակիչները
զինքը սիրով ընդունեցան, Բաբելոնէն Շօշ ան-
ցաւ, ուր Դարեհի անթիւ գանձը գրաւեց. մի-
այն դրամը 50,000 տաղանդ կը կշռէր (գրեթէ
280 միլիոն ֆռանգ): Պերսեպոլիս, որ յան-
գըգնեցաւ գէմ հենալ, կողոպտեցին և արքու-
նիքը այրեցին: Պերսեպոլսէն գնաց Պասարգատ,
անկէց Եկբատան անցաւ, ուր գիտէր որ Արբե-
ղայն պարտութենէն վերջը Պարսից Թագաւորը
փախեր էր:

Յաղթականին մնաւնալու միջոց՝ Դարեհ հան
եղած զինուորներովը փախաւ. բայց Բեսոս
Բակտրիոյ նախարարը, որ կը յուսար անկախ
Թագաւորել, ձգեց զինք վերջին ճամբուն վրայ:
Աղէքսանդր գտաւ զայն որ վերջին չունչը կու-
տար: Յուզարկաւորութեան փառաւոր հան-
դեսներ ըրաւ, և Պարսից Թագաւորներուն գե-
րեզմանոցը Թաղել տուաւ: Անկէց ձգեցաւ որ
Բակտրիա նուաճէ. և զբեսոս ձերբե-
լով անոր անգութ մահնուագութեանն համար պատ-
ժեց ահաւոր տանջանքներով: Դարեհի մա-
հուամբը Պարսկական միապետութիւնը կոր-
ծանեցաւ զոր երկու դարէն աւելի էր՝ մեծն
Կիւրոս հիմնեց:

9. Աղէքսանդրի բռնած ճերպն: — Բան չկար
որ պատանի գերեցաղին դիմանայր, որ աղեկ գի-
տէր ուղղել և շարժել իր բանակն. որպէս զի
Թշնամեաց վրայ երկիւղ ձգէ, միշտ պատերազ-

մէջու տանն առաջին կարգին մէջ կը կենար,
անոր համար շատ անգամ վիրաւորուեցաւ. իր
զօրացը գերազգին քաջասրտութեան օրինակ էր
աշխատութեանց և վտանգներու մէջ:

Բայց չկրցաւ իր բարեբախտութեանը յաղ-
թել: Տէրութեան մայրաքաղաքացը սիրելին
վերջը, սկսաւ ասիական զեղուածութեան ձեռնու-
թիւն և մեղկութիւնը վայելել, և ամէն տեսակ
ախտից մատնել ինքզինքը: Այս մեծ փոփոխու-
թիւնը յայտնի փուշ էր այն Մակեդոնացի
ազնուականացը, որունք զԱղէքսանդր տղայ
տեսած և ծերացեր էին: Ամենք սկսան գա-
տաստան ընել, ժժգոհալ, լըռանալ և նաև ին-
չուան դաւադրութիւն ալ ընել. իսկ ինքը 'ի վի-
սուածութիւն և 'ի բռնակալութիւն կ'երթար: Իր
ձեռքով երեւելի զօրավարներէն զոմանս սպան-
նեց, ինչպէս զՓիլոտաս, որ ձիաւորաց զօրավարն
էր, զՊարմենիոն, որ միւնչ նոյն տանն իր մաե-
րիմ բարեկամն էր, զԿղիտոս, որ Գրանիկոսի
պատերազմին մէջ իր կեանքը ազատեց էր, և
զԿալլիսթենէս իմաստասէրը, որ Արիստոտելի
աշակերտն էր:

10. Աղէքսանդր 'ի Հնդկաստան: — Գոհ Պար-
սից Թագաւոր իշխանութեանը տէր և իբրեն
այնպիսի տէրութեան մը գլուխ ըլլալուն վրայ,
որ մինչև այն տանն ամենէն մեծն էր, 327ին գի-
մեց դէպ 'ի Հնդկաստան: Ճամբան քանի մը
դաւադրայ ինքնակամ հպատակութիւնը ընդու-
նելով ոմանց ալ բռնութեամբ տերելով, հինգ
գետը հասաւ. վերջը Իսաար հասաւ՝ ուր Պորոս
Թագաւորն կը գտնայ 50,000 հնդկաստանցինե-
րով որ չէր թողուր որ գետը կարէ անցնի: Աղէք-
սանդր յաղթեց և գետն բռնեց Թագաւորը.
բայց ապա վեհանձնութեամբ դարձուց իր տէ-
րութիւնները մեծցուցած, հաւատարիմ բարե-

կամ ըրաւ: Այն տեղերը երկու քաղաք հիմնեց. անոնցմէ մէկուն անունը դրաւ Նիկիա իրեն յաղթութեանց 'ի յիշատակ. և միւսոյն հուկեփաղ դրաւ, 'ի պատիւ իրեն ձիոյն, որ մինչև հոն բերաւ զինքը և հոն մեռաւ:

Հասաւ Ինդիա գետը, ուսկից կ'ուզէր անցնիլ և յառաջել և ևս: Բայց զինուորները չուզեցին եւևէն երթալ, անոր համար թագաւորն թէպէտ բարկացած և վշտացած սակայն սիրտը փոխել և յետ կը դառնալ: Նորէն իստատպ գետը հասնելով, ուր որ 2000 նաւ պատրաստել տուած էր, և նաւերուն մէջ մտնելով բանակին երրորդ մասովը այն գետին և Ակիսեն ու Ինդոս գետոց ընթացքովը գնաց. իսկ մնացածը ցամաքէն գետեզերացը վրայ կը քալէր: Եօթը ամիս գժուար նաւարկութենէն մը վերջը Ինդոս գետոյն բերանը հասաւ: Հոն նաւատորմիղը Նեարքոսին յանձնելով, հրամայեց որ աերութեան հարաւային ափունքը գնէ ինչուան Եփրատ. և ինքն բոլոր բանակովը ցամաքի վրայէն 'ի Շօշաստան հասաւ:

11. Աղէքսանդրի դէպ ոսոբիները, և իր մահը: — Փիչ մը ժամանակ Շօշ կենալէն վերջը, Բաբելոն գարձաւ, զոր իրեն ընդարձակածաւալ թագաւորութեան մայրաքաղաք սահմաներ էր: Մինչ ունէր բոլոր ազգերը միացնել. և այս նպատակին համար կը մտածէր հիմնածնելոյն գուբա՝ ուրիշ շատ քաղաքներ ալ շինել, Ասիա և Եվրոպիա, առքիններուն եւրոպացիներ մէջ բնակեցնել, և երկրորդներուս ասիացիներ մէջ: Մի և նոյն վարձանին համար Յունաց բանակին հետ Պարսիկ ալ կը խառնէր, և կը յորդորէր որ գործաւորները և զինուորները պարսիկ կանանց հետ ամուսնանան: Աչխարհակալութեան խորհրդին էր հրաժարած. միտքը դրաւ Աբա-

բիայէն չորքան մ'ընելով եթովպիոյ չորս կողմը պտըտելու, և Լիբիա, Նումիդիա և Կարքեդոն և բոլոր Աֆրիկէ նուաճել. և ասոր համար ալ 1000 նաւ պատրաստեց: Բաբելոն քաղաքն զարդարելու, և հոն լայն նաւահանգիստ մը պատրաստելու հետ էր, և օգը լաւագոյն ընելու, ջորցնելով չորքակայ ձախճախները, մեծցնելով և մաքրելով ջրանցքները: Բայց իրեն այս գործերը և գիտաւորութիւնները խափանուեցան մահուամբը: Յանչափ տալով ինքզինքը խնջոյից զուարճութեանց և գինի խմելու, չերմէն բռնուեցաւ և տասնըմէկ օրէն գերեզման գնաց, յունիսի մէջ 323ին հազիւ 33 տարին լեցուցած: Յաղթուողները՝ առ որս ընդհանրապէս վեհանձն գտնուեցաւ, զանիկայ ողբացին. Սիսիգամբիս, Դարեհի մայրը չուզեց ալ ապրիլ և անօթութեամբ մեռաւ:

12. Վերջաբան: — Վերջին պատերազմունք և յաւետական աղգին անկանգնելի անկումն Հռովմայ պատմութեան մասն է: Թագաւորն կը մեռնի, զօրավարաց մէջ մեծ և ծանր ընդդիմութիւններ կը ծագին, գժտութեանց գիմացը կ'առնուն հետագայ պայմաններով. արքունականութիւնը Հռոքսանէէն ծնանելի արու մանկան վերապահեցին. անոր հետ մէկ տեղ Փիլիպպոս Արիդեոս՝ Աղէքսանդրի տկարամիտ եղբայրն ալ թագաւորէր. բայց խնամակալութիւնը Պերդիկասի ձեռք. ընդարձակ տերութիւնը 34 գաւառ բաժնուեցաւ, ամէն մէկ գաւառ մէկ զօրավար կոչուակալ պիտի ունենար խնամակալին իշխանութեան տակ՝ և 'ի չահ մնալուկ արքային: Անդիպատրոսի բաժին տուին Մակեդոնիա և Յունաստան: Երկու տարի չէր անցած այս գահակեր զօրավարաց մէջ տէղ, պատերազմ, նենգութեամբ և անհաւատարիմ գաւաճա-

նուիրեամբ լի արիւնահեղ կռիւ մը բացուեցաւ, յորում Ալէքսանդրի ազգականք գրեթէ բոլորն ալ բռնական մահուամբ մեռան: 306ին Անտիգոնոս պատրուակը մէկդի ըրաւ և Թագ կապեց. նոյնը ըրին մնացեալ հակառակորդներն ալ Պաղեստինոս, Լիւսիմաքոս, Սելևկոս և Կասանդր: 301ին Փռիւգիոյ մէջ Իսոսի պատերազմին մէջ Անտիգոնոս յաղթուած մեռաւ: Յաղթականք իր աւարը բաժնեցին և Ալէքսանդրի միահեծան պետութիւն չորս թագաւորութիւն եղաւ. Եգիպտոսի (Պաղեստինոս), Ասորւոց (Սելևկոս), Թրակիոյ (Լիւսիմաքոս), Մակեդոնիոյ (Կասանդր) թագաւորեց. այս թագաւորներն և իրենց յաջորդք անդադար իրարու հետ կռուեցան երկայն ժամանակ:

Յունաստան Ալէքսանդրի մահը լսելուն պէս ոտք եղաւ: Աթէնք մէկն սկսաւ պատրաստուիլ որ մակեդոնական լուծը թօթափէ և ազատի, և զլուխ կեցած՝ յունական դաշնակցութիւնը պատրաստեց, յոր Բէովոտիացին գուբս հիւսիսային և միջին Յունաստանի բոլոր քաղաքներ մտան: Դաշնակցաց բանակին որ 30,000 մարդ ունէր հրամանատար եղաւ Լէոսթենէս աթենացին. կ'անցնի Բէովոտիացին կը զարնէ զանոնք և 'ի Թերմոպիլէ հասնելով՝ Մակեդոնացւոց գալուն կը սպասէր: Անտիպատրոս եղածը լսելով՝ գիմեց 'ի Յունաստան. բայց շատ սակաւաթիւ զօրք ունենալով յաղթուեցաւ և ստիպուեցաւ Լամիա քաղաքն քաշուիլ ամրանալ: Աթենացիք այնպէս ուժով պաշարեցին զԼամիա որ Անտիպատրոս խոնարհեցաւ հաշտութիւն խնդրեց, բայց իրենք գոռոզութեամբ չհանձ չ'առին, ինչուան որ պատերազմին դիրքը բոլորովին կերպարանափոխ եղաւ. որովհետև մէկ կողմանէ պաշարեալքն չարձակմամբ մը

զԼէոսթենէս սպանեցին, միւս կողմանէ օգնութեան զօրք հասնելով 50,000 եղան պատերազմողք: Յոյնք կրանոնի (322) պատերազմին մէջ յաղթուած հաշտութիւն խնդրեցին: Անտիպատրոս խելացի վարպետութեամբ պատասխանեց թէ հաշտութիւն ընելու պատրաստ եմ, բայց իւրաքանչիւր քաղքին հետ զատ առանձին, ասով դաշնակցութիւնը լուծեց:

Աթէնքէն իրր հաշտարար Փոկիոն, Դեմադես և այլք խնդրուեցան: Որոնք դարձան Անտիպատրոսի կողմանէ այս պայմաններն բերելով. Դիմոսթենէս, Իպերիդես և ուրիշ ճարտասանները ձերբը տան. վարչութեան կարգը այնպես փոխեն որ 2000 հարուր դահեկան ունեցողներն միայն քաղաքական իրաւունք ունենան. 'ի Մունիքիա մակեդոնացի պահապան զօրք դրուի և պատերազմի ծախքը վճարեն: Պայմանները յանձն առաւ Աթէնք, ինչն անձամբ իր մահուան վճիռը տալով: Իսկ ճարտասաններէն զԱրիստոնիկոս, զԻմերէոս և զԻպերիդես գտաւ Անտիպատրոս և սպաննել տուաւ: Կը պատմեն թէ զԻպերիդես սպաննելէն առաջ լեզուն կտրել տուաւ և դիակն ալ չտնց տուաւ: Այնուհետև գեղարդուհին պիտի հանդիպէր Դիմոսթենէսի, որ 'ի Կալաւրիա Պոսիդոնի տաճարը ապաստնելով՝ ազատեցաւ. բայց որպէս զի հալածչաց ձեռքը չ'ինայ Թոյն առաւ: Փոկիոն գեղ կ'ապրէր, բայց կարծես թէ Սոկրատայ ազետալի կատարածին հատնելու համար. Լիգուրկոս արդէն մեռած էր. Եսքինէս աքսորական և արդէն զառամեալ: Մեռեր կամ կը մեռնէին բոլոր այն դարուն հռչակաւոր ճարտասաններն, որոնք հայրենեաց պատուոյն և անկախութեան հզօր պաշտպաններ էին: Ասոնց հետ մէկ տեղ կորսնցուց Աթէնք իր անկախութիւնն ու իր պատիւն

աչ, և գերի քաղաք մը միայն մնաց, միշտ չընդ-
Թդղ իր տերանց և միայն իր նիւթական բարե-
բութեան ցանկութեամբը լեցուած։

Երկու նոր տերութիւն էլան, Ա.քայիա և Եաողլա, որ ինչուան այն տեն Յունաց խնդրոց մէջ քիչ կամ ամենեւին մասն չէին ունեցած. բայց այդ երկու տերութիւնն ալ ուրիշ բանի համար չէլան բայց եթէ դեռ մահը չտերած դժբաղդ Յունաստանի վրայ՝ անոր վերջնական փայլ մ'ալ տան։ Երկու նշանաւոր դաշնակցութիւններ էին, առաջնոյն շարժիչ հոգին Ա.րատոս եղաւ Սիկիոն քաղքէն որ իր հայրենիքը Նիկոկղէս բռնաւորին ձեռքէն ազատելով այս դաշնակցութեան մէջ մտուց։ Աչխուժութեամբ ամէն հնարք թափեց որ ամէն քաղաքներն ազատ բռնաւորաց ձեռքէն, և կամաց կամաց դրեթէ բովանդակ Պէղոպոնէսոս դաշնակից ըրաւ։ Եաողացիք ալ երկայն տեն ծուռ աչքով նայելով Ա.քայեցւոց դաշնակցութեան վրայ, ապա միացան անոր հետ Մակեդոնիոյ սպառնալիքէն ազատելու համար. և ահա այս է աքայեան դաշնակցութեան ամենափայլուն մի-
ջոցն։

Սպարտա Ագիս Դի. և աւելի Կղէոմենէս Թագաւորին ընդհակ նորէն ուժ առաւ. որով դէմ կեցաւ աքայեան դաշնակցութեան և ջանաց տկարացնել։ Պատերազմ բացուեցաւ և Ա.քայեցիք Մակեդոնիոյ Անտիգոնոս Թագաւորն օգնութեան կանչեցին. որ եկաւ, Սպարտացւոց յաղթեց՝ի Սելեզիա 222ին, յաղթանակաւ յառաջ քալեց դէպ՝ի Սպարտա և անարգել Սպարտա մտաւ, որ գարերով անառիկ մնացած էր։

Եաողացիք նոյն նախանձն և հասկածը ունեցան Ա.քայեցւոց վրայ. երկու դաշնակցութեան մէջ

պատերազմ բացուեցաւ. Ա.քայեցւոց կողմանէ Փիլոպեմեն մեգաղոպոլսեցի երևելի հանդիսացաւ այս պատերազմին մէջ, որ իր հայրենասէր առաքինութեանցը համար վէրէն Յոյն անուանեցաւ։ Այս պատերազմը որուն մէջ Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Աւսրիք մաս ունեցան, տևեց ինչուան 146, յորում Լուկիոս Մումիոս հիւպատոս Կորնթոսի դեռ մահաշունչ աւերակաց վրայն հրատարակեց որ Յունաստան անկից ետքը Ա.քայիա անուամբ Հռովմէական գաւառ մ'է։

ԹԱԳԱՒՈՐՔ ՄԱԿԵԴՈՆԻՈՑ

—

Մակեդոնիոյ Թագաւորութիւն Պելագեանց դաղթականութենէ մը կը սկսի, 1392ին. բայց մինչև Կարանոս եղած Թագաւորաց յաջորդութիւնը անյայտ է: Ասոնցմէ միայնակ երեքը յիշենք: Մակեդոն, Պելագոն և Ասեբապէոս, 1280:

Կարանոս, Հերակլեան	796	766
Կենոս	766	758
Տիւրիմեաս	758	695
Պերդիկկաս Ա.	695	647
Արգեոս Ա.	647	609
Փիլիպպոս Ա.	609	576
Այէրոպաս	576	556
Ալկեդաս	556	558
Ամինդաս Ա.	558	496
Աղեքսանդր Ա.	496	452
Պերդիկկաս Բ.	452	429
Ամբեղայոս Ա.	429	405
Արեաթէս	405	402
Ամբեղայոս Բ.	402	398
Ամինդաս Բ.	398	397
Պաւսանիաս	397	396
Ամինդաս Գ.	396	390
Արգեոս Բ.	390	388
Ամինդաս Դ.	388	370
Աղեքսանդր Բ.	370	369
Պտղոմեոս Ալորիտացոս	369	366
Պերդիկկաս Գ.	366	360

Փիլիպպոս Բ.	360	336
Աղեքսանդր Գ.	336	324
Փիլիպպոս Արիդէոս	324	317

Աղեքսանդր Եգոս, Աղեքսանդրի մահուընէն ամիս մը վերջը ծնած . . . 324 311

Ինամակալք. Պերդիկկաս 324–320, Պիթոն 320:

Անտիպատրոս 320, Պոլիսպերքոն 320-311:

Աղեքսանդրի յաջորդութիւնը բոլորովին կը լծնայ իր հարազատ Հերակլէս որդւոյն մահուամբ 310:

Կասանդր, Պտղոմեոս, Լիւսիմաքոս, Սելևկոս և Անտիգոնոս Թագաւորութեան վրայ կը կռուին և կը բաժնեն: Իփսոսի պատերազմը 301:

ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻՈՑ:

Կասանդր, որ Մակեդոնիոյ	311	298
Փիլիպպոս		
Անտիպատրոս } որդիք Կասանդրի	298	295
Աղեքսանդր	298	295
Դեմետրիոս Ա. որդի Անտիգոնոսի	295	287
Պիւռոս, Եպիրոսի Թագաւոր	287	286
Լիւսիմաքոս Թագաւոր Թրակիոյ	287	282
Սելևկոս Թագաւոր Ասորւոց	282	281
Պտղոմեոս Կերաւնոս, որդի Պտղոմեոսի առաջին Թագաւորին Եգիպտոսի	281	279
Մելեագրոս եղբայր Կերաւնոսի	279	
Անտիպատրոս, որդի Կասանդրի, երկրորդ անգամ	278	
Անտիգոնոս Կոնոս, որդի Դեմետրիոսի Ա.	278	242
Պիւռոս, Թագաւոր Եպիրոսի	279	

Ալէքսանդր արդի Պիւռոսի . .	267	
Դեմեարիոս Բ.	242	232
Անտիգոնոս Թոսոն	232	221
Փիլիպպոս Գ.	221	178
Պերսէոս	178	167
Անդրիսկոս	162	148

ՅԱՆԿ

ԵՐՐՈՅԵՅԻՔ

Ա. – Ի սկիզբանէ մարդոյ մինչև զՄովսէս : – 1. Մարդոյն սկիզբը : – 2. Բազմանալը : – 3. Առաջին մարգկութեան վիճակը : – 4. Ջրհեղեղ : – 5. Նոյեանք և իրենց ցրուիլը : – 6. Աբրահամ, Իսահակ, Յակովբ : – 7. Յովսէփ, Եբրայեցիք Եգիպտոս 1

Բ. – Մովսէսէն Ինքնան Թագաւորութեան հաստատութիւնը : – 1. Մովսէս : – 2. Եբրայեցիք անապատին մէջ : – 3. Պաղեստին : Յեսու : – 4. Առաջին Պաղեստինցիք : – 5. Դատաւորք 6

Գ. – Միապետութիւն : – 1. Սաւուղ : – 2. Դաւիթ : – 3. Սողոմոն : – 4. Բաժանումն Թագաւորութեան : – 5. Թագաւորութիւն Իսրայէլի : – 6. Թագաւորութիւն Յուդայի : – 7. Գերութիւն և դերեզարձ 12

Հրէից Ժամանակագրութիւն 20

ԵԳԻՊՏԱՑԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. – Հին ժամանակները Ինքնան Հիւսոսաց

վերնագիրը : – 1. Աշխարհագրական տեղեկութիւն : – 2. Առջի շրջան հարստութենէն : – 3. Հինգերորդ հարստութենէն ինչուան երկոտասաներորդը : – 4. Երկոտասաներորդը հարստութիւն : – 5. Հիւկոսոսը : – 6. Աղատութիւն 25

Բ. – Հինգոտասը վերնագրէն դէպի պարսկին փերապէ փոխինը : – 1. Ութոտասներորդ հարստութիւն. Ամովսէս : – 2. Ամովսեան յաջորդները : – 3. Իննետասներորդ հարստութիւն : – 4. Ոամեսէս Բ : – 5. Ոամեսեան յաջորդք : – 6. Անկումն : – 7. Օտարաց արշաւանք : – 8. Երկոտասաներկու պետութիւն. Փսամմեաիքոս : – 9. Փսամմեաիքոսի յաջորդք 31

Գ. – Եգիպտոսի բարեյական և քաղաքական վիճակը, – 1. Կրօնք : – 2. Ընկերական և քաղաքական օրէնսգրութիւնք : – 3. Սովորութիւնք : – 4. Ճարտարութիւն, վաճառականութիւն : – 5. Առեւտուր. Յիշատակարանք : – 6. Դիտութիւնք : – 7. Գրականութիւնք : – 8. Գիր :

Եգիպտական ժամանակագրութիւն . . 47

ՓԻՆԻԿԻ : — 1. Աշխարհագրական տեղեկութիւն : – 2. Բնակիչք : – 3. Պատմական տեղեկութիւն : – 4. Գաղթականութիւն և վաճառականութիւն : – 5. Կրօնք 49

Հին Տիւրոսի ժամանակագրութիւն . . 53

ԿԱՐԹԱԳՈՆ : — 1. Աշխարհագրական տե-

ղեկութիւն : – 2. Կարթեգոնի հիմնարկութենէն ինչուան ի Սիկիլիա Յունաց հետ բռած պատերազմները (480 Ն. Ք.) : – 3. Յունաց պատերազմերու սիկիլիէն ինչուան Հռովմայ հետ ունեցած պատերազմները (480-264) : – 4. Հռովմայ պատերազմներէն ինչուան Կարթեգոնի կործանումն : – 5. Կառավարութիւն. Քաղաքական զօրութիւն : – 6. Կրօնք : – 7. Վաճառականութիւն 55

Կարթեգոնի ժամանակագրութիւն . . 62

ԱՍՈՐԵՍՏԱՆ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ

Ա. – Ասորեստանի և Բաբելոնի առջի ինքնակալութիւն : – 1. Աշխարհագրական տեղեկութիւն : – 2. Առաջին քնակիչքն : – 3. Նեբրովթ : – 4. Ասորեստանի առաջին ինքնակալութիւն. Նինոս, Շամիրամ, Նինուաս : – 5. Յաջորդք Նինուասայ : – 6. Սարդանապաղ 64

Բ. – Ասորեստանի և Բաբելոնի երկրորդ ինքնակալութիւն : – 1. Ասորեստանի նոր ինքնակալութիւնը : – 2. Թագլաթփալասար : – 3. Սալմանասար Ե. Սարգոն : – 4. Սենեքերիմ : – 5. Ասորդան : – 6. Սարդանապաղ Բ : – 7. Ասրակոս. Նինուէի կործանումն : – 8. Բաղդեցւոց կամ Բաբելացւոց նոր ինքնակալութիւն : – 9. Նաբապաղասար : – 10. Նաբուգոդոնոսոր : – 11. Իրեն յաջորդներն : – 12. Բաղտա-

սար. Անկումն Բաբելոնի 69

Գ. – Աստղագիտական և Բաբելացոց բարոյական և քաղաքական կեանքը: – 1. Կրօնք: – 2. Քոսմոս: – 3. Գիտութիւնք: – 4. Մատենագրութիւն. Գրութիւն: – 5. Աստուածք: – 6. Վաճառականութիւն. Ճարտարութիւն: – 7. Բարք: – 8. Կառավարութիւն 77

Ժամանակագրութիւն Թագաւորաց Ասորեստանի 82

ՀՆԴԿԱՍՏԱՆ: — 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Հնդկաց պատմութեան երեք շրջանն: – 3. Կառավարութիւն: – 4. Բրահմանաց կրօնական գրութիւնն: – 5. Մատենագրութիւն: – 6. Գեղարուեստք: – 7. Վաճառականութիւն 87

ՄԱՐԱՊԱՐՍԻԿ ԻՆՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա. – Մարապան: – 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Աբիք: – 3. Վարբակէս. Դիովկ: – 4. Փրաւորտ: – 5. Կիաքսար: – 6. Աժդահակ . . . 93

Թագաւորք Մարաց 100

Բ. – Պաբիլոնացիք: – 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Նախնի Պաբելիկք. Ասքիմենեանք: – 3. Մեծն Կիւրոս. Մարաստանի աշխարհակալութիւն: – 4. Լիւդիոյ աշխարհակալութիւն: – 5. Յունական գաղթականներուն գեմ պատերազմ: – 6. Կիւրոսի ուրիշ աշխարհակալութիւնները: –

7. Կիւրոսի կատարածն: – 8. Կամբիւս: – 9. Շէրդ մոգ: – 10. Դարեհ և իր յաջորդները 101

Թագաւորք Պարսից 109

Գ. – Մարապարիի ծագմանէ բարոյական և քաղաքական կեանքը: – 1. Կրօնք. Զրադաշտ: – 2. Աստուածք. Ճարտարութիւնք: 3. Սովորութիւնք: – 4. Կառավարութիւն 110

ՀԱՅԱՍՏԱՆ: — 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Նախնի բնակիչք: – 3. Հայկ: – 4. Հայկազանց պատմութեան կրկին շրջանն: – 5. Եահասեաց գաղթականութիւնք: – 6. Ադամ: – 7. Հայաստան գաւառ. Ասորեստանի: – 8. Հայկազանց թագաւորութիւն կամ Պարոյր: – 9. Մարական գաշնակցութիւն և Տիգրան Ա: 10. Կրօնք: – 11. Կառավարութիւն: – 12. Զինուորութիւն: – 13. Վաճառականութիւն և Արհեստք . . . 114

Ժամանակագրութիւն Հայկազանց . . 124

ՓՈՓՐ ԱՍԻԱ

Ա. – 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Բնակիչք: – 3. Քաղաքական վիճակ: – 4. Տոյսա. Փռիւգիա: – 5. Լիւդիա. Կիւգէս ու իր յաջորդները: 126

Թագաւորք Լիւդացոց 130

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՑ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ : — 1. Յունաստանի սահմանն : — 2. Բաժանումն : — 3. Հիւսիսային Յունաստան : — 4. Միջին Յունաստան : — 5. Հարաւային Յունաստան : — 6. Լերինք և Գետք : — 7. Ծոցք : — 8. Հրուանդանք : — 9. Կղզիք 331

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ.

ԴՈՐԱՑԻՈՑ ԵԱԳՄԱՆԵՆ ԻՆԶՈՒՆԱՆ ԱՆՈՆՑ ԱՐՇԱԻԱՆՔԸ :

Ա. — Յունոպահէ առջի բնակիչները : — 1. Պելազագեանք : — 2. Ինաքոս և Դանաոս : — 3. Կեկրոպս : — 4. Կադմոս : — 5. Պելազոպս : — 6. Հելլէնք. Դորացիք, Եօլացիք, Յոնիացիք, Աքայեցիք . . 141

Ժամանակագրութիւն Յունաց 143

Բ. — Դիւցազնաց ժամանակ : — 1. Դիւցազունք : — 2. Հերակլէս : — 3. Թեսէոս : — 4. Մինովս : — 5. Պատերազմունք ընդդէմ Թեբեի — 6. Արշաւանք Արգոնաւորդաց : — 7. Տրոյեայ պատերազմը 149

Գ. — Յունաստանի նախապատմական վիճակը : — 1. Քաղաքական օրէնսդրութիւնք : — 2. Բարք : — 3. Արուեստք : — 4. Գիտութիւնք : — 5. Կրօնք : — 6. Քօրմք. Պատգամք : — 7. Ամֆիկտիոնեան ատեան : — 8. Պիւթեան, Նեմեան, Իսթմեան և Ողիմպիական խաղերն : — 9. Ողիմպիադք : — 10. Հոմերոս . . 154

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.

ԴՈՐԱՑԻՈՑ ԱՐՇԱԻԱՆՔԵՆ ՄԻՆՉԵՒ ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ :

Ա. — Արքաներէ Դարեհոյ Ի Պելոպոնէս : — 1. Տրոյեայ պատերազմին արդիւնքները Յունաստանի մէջ : — 2. Գաղթակատութիւն Իոնացւոց 161

Բ. — Սպարտա մինչ պարսկական պատերազմաց վէրջը : — 1. Դորացիք Ի Լակոնիա : — 2. Սպարտացիք, Թերիկեանք, Իլոտք : — 3. Լիկուրգոս : — 4. Քաղաքական օրէնք Սպարտայ : — 5. Կալուածոց հաւասարութիւն : — 6. Հասարակաց սեղանները : — 7. Կրթութիւն : — 8. Զինուորական կրթութիւն : — 9. Մեսսենական առաջին պատերազմ. Արիստոմեն : — 10. Մեսսենական երկրորդ պատերազմ. Արիստոմենէս. Տիրտէոս : — 11. Զօրութիւն Սպարտայ 163

Թագաւորք Սպարտայ համալսիրեմնի . 174

Գ. — Ազգէ պարսկայն պատերազմներէն առաջ : — 1. Կոդրոս : — 2. Արիոնք : — 3. Դրա-

կան։ – 4. Կղէոն։ – 5. Սողոն։ – 6. Ժողովգեան չորս դաս բաժնուիլը։ – 7. Քաղաքական սահմանագրութիւն. Արիոնից իշխանութիւնը. Ծերակոյտ. Ժողովրդեան տեսակ. Արիոպագեան տեսակ։ – 8. Զանազան կարգադրութիւնք։ – 9. Սողոնի ձամբուք գործիւնները և մահը։ – 10. Պիսիստրատ։ – 11. Իպպիաս և Իպպարքոս. Արմոդիոս և Արիստոգեւտոն։ – 12. Իպպիասայ մահը։ – 13. Կղիսթենէս. Անոր օրէնսդրական փոփոխութիւնքն. Խեչեկոյտ վէնիւս։ – 14. Աթենքի գէմ եղած պատերազմունք . . . 178

Դ. – Երկրորդական Տէրութիւնք և Քաղքանաութիւնք։ – 1. Երկրորդական տէրութիւնք։ – 2. Քաղքականութիւնք։ – 3. Առաջին քաղքականութիւն։ – 4. Երկրորդ քաղքականութիւն . . 189

Ե. – Քաղաքան դրգռումն։ – 1. Ասիական Յունաստանի քաղաքականութեան կանոնաւ յառաջադիմութիւնը։ – 2. Գէզարուեստաք։ – 3. Բանաստեղծութիւն։ – 4. Առաջին արձակ գրող Մաւենագիրք։ – 5. Եօթն իմաստունք։ – 6. Իմաստասիրութիւն 193

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Ա. – Պարսկան պատերազմն մինչև Պէղոպոնէսեան պատերազմները։ – 1. Յունական քաղաքաց ապստամբութիւնը։ – 2. Պարսից առաջին արշաւանքն ի Յունաստան։ – 3. Դարեհի նոր պատրաստու-

թիւնները։ – 4. Երկրորդ արշաւանք։ – 5. Մարաթոնական ճակատամարտ։ – 6. Միլտիադէս 197

Բ. – Երկրորդ Պարսկան պատերազմը։ – 1. Թեմիստոկլէս և Արիստիդէս։ – 2. Նոր արշաւանքի համար Պարսից նախապատրաստութիւնները։ – 3. Քսերքսեսի արշաւանքը։ – 4. Յունաց պատրաստութիւնքը։ – 5. Արտեմիսիոյ նաւական պատերազմները։ – 6. Թերմոպիլէ. Լէոնիդաս։ – 7. Աթենքի աւերմը։ – 8. Սալամինայի պատերազմը։ – 9. Պլատեայ պատերազմը։ – 10. Միկալէի պատերազմը . . . 202

Գ. – Աթենքի նախագահութիւնը։ – 1. Աթենքի և Պիրէոնի երկրորդ ամրութիւն։ – 2. Պաւսանիաս. Ծովային զօրութեան Սպարտայէն Աթենք անցնիլը։ – 3. Պաւսանիասի մահը։ – 4. Փոխարէն և վերջ Թեմիստոկլէայ։ – 5. Մահ Արիստիդէայ։ – 6. Կիմոն։ – 7. Իր քաջութեան գործերը։ – 8. Մեսաւենական պատերազմ։ – 9. Խեչեկոյտ վէնիւս Կիմոնի։ – 10. Աթենքի զանազան պատերազմները։ – 11. Կիմոնին եւ կանչուիլը և մահը։ – 12. Պարսից թագաւորին հետ հաշտութեան պայմանը 212

Դ. – Աքենի Պերիկլէսի ոճին։ – 1. Պերիկլէս։ – 2. Աթենքի և իր դաշնակցաց վերաբերութեանց նորութիւնները։ – 3. Սամոսի պատերազմն։ – 4. Աթենացւոց գաղթականները։ – 5. Աթենքի բնակիչը։ – 6. Քաղաքական զօրութիւն։ – 7. Իրեն եկամուտը . . 221

Ե. – Պէրիկլէսի ապէն եղած ոսմանց պարգաւոմը: – 1. Աթէնք յունական ուսմանց կեդրոն: – 2. Աթէնքի մէջ չինած մեծագործութիւնները: – 3. Բանաստեղծութիւն: – 4. Ողբերգութիւն. Եսքիղես, Սոփոկղես և Եւրիպիդես: – 5. Կատակերգութիւն: Արիստոփան: – 6. Երգոտ: – 7. Ճարտասանք: – 8. Սոկրատ 227

ԶՈՐՐՈՐԴ ԵՐԶԱՆ.

ՊԵՂՈՊՈՆԵՍԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԻՆԶՈՒԱՆ ՄԱՆՏԻՆԵԱՅԻ ՃԱԿԱՏԱՏԱՐՏՆ:

Ա. – Պելոպոնէսեան պատերազմին իւրաքանչիւր կէսասոյ հաշտութիւն: – 1. Պելոպոնէսեան պատերազմին բուն պատճառը: – 2. Թշնամութեան սկսիլը: – 3. Երկու հակառակորդ կողմանց ուժը: – 4. Ատթիկէի վրայ արշաւիլը: – 5. Աթէնքի ժանտախտը: Պերիկլէսի մահը: – 6. Մեղանիկ քաղաքին տպրատամբութիւնը. Կղէոնի: – 7. Պղատէայի վրայ յարձակումը և անկումին: – 8. Կորկիւրա: – 9. Պիղոս և Սփակտերիա: – 10. Աթենացւոց ձախողիլը: – 11. Նիկէասայ հաշտութիւնը 236

Բ. – Պելոպոնէսեան պատերազմը: Նիկէասայ խաղաղութենէն իւրաքանչիւր առումը: – 1. Անկիւրիագ: – 2. Պատերազմը նորէն կը սկսի: – 3. Սիկիլիոյ արշաւանք: – 4. Աթենացւոց արիական ոգին: – 5. Աթէնքի դէմ ապստամբութիւնը: – 6. Անկիւրիագայ ետ կանչուիլը: – 7. Անկիւրիագայ յաղթանակը: – 8. Անկիւրիագայ պաշտօնէն իյնալը: – 9. Լիւսանդր և Կալլիկրատիդաս. Արքիւնուսայի ճակատամարտ: – 10. Եգոս գետին ճակատամարտը: – 11. Աթէնքի անկումն 247

Գ. – Անբնակ անիւսն դիւլ Անպատկիպոյ դաշնադրութիւն: – 1. Երեսուն բռնաւորք: – 2. Անկիւրիագի և Թերամենէսի մահը: – 3. Աթէնքի ազատութիւն: Թրասիբուղ: – 4. Իմաստակք: – 5. Մահ Սոկրատայ: – 6. Փոքրն Կիւրոսի արշաւանքը: Կունաքսայի ճակատամարտն: – 7. Նահանջն բիւրոսն: – 8. Պատերազմ Պարսկաց և Սպարտիոյ մէջ: – 9. Ագեսիլայոս: – 10. Դաշնակցութիւն Սպարտիոյ դէմ: Մահ Լիւսանդրի: Փորձնէայի ճակատամարտն: – 11. Կոնոն. Կնիւոսի ճակատամարտը: – 12. Դաշինք Անտալկիտայ 259

Թագաւորք Աթէնքի 370

Դ. – Սպարտիոյ և Թէբէի խոհ: – 1. Թեբէն մանուածեամբ կ'առնեն: – 2. Թեբէի ազատութիւն: – 3. Եպամինոնդաս և Պելոպիդաս: – 4. Սպարտացւոց Բէովոտիոյ մէջ ըրած արշաւանքը: – 5. Լեւկտրայի պատերազմը: Մեգալոպոլսոյ հիմնարկութիւնը: – 6. Եպամինոնդի Պելոպոնէսի մէջ ըրած երկու արշաւանքը: Մէսսենեայի հիմնարկութիւնը: – 7. Թեսալիոյ խնդիր

ըը: Յաստն: Աղէքսանդր Փէրէացի: Մահ Պէղոպիդայ: – 8. Երրորդ և չորրորդ արշաւանք Եպամինոնդայ 'ի Պէղոպոնէս: Մանտինէայի ճակատամարտն և Եպամինոնդի մահը . . . 273

Ե. – Մակէդոնացւոց պէտութենէն առաջ եղած դպրութեանց վերադարձ: – 1. Արուեստք: – 2. Պերճախօսութիւն. Իսոկրատ, Լիզուրկոս, Իսէրիտէս, Դեմադէս և Փոկիոն: – 3. Եաբլինէս և Դիմոթեենէս: – 4. Իմաստասիրութիւն. Պղատոն, Արիստոտէլ: – 5. Պատմագիրք. Թուկիդիդէս, Քսենոփոն: – 6. Բանաստեղծութիւն 281

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾՐԱԳԱՆ.

ՄԱՆՏԻՆԷԱՑԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԷՆ ԻՆՁՈՒԱՆ ՄԵԾԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՄԱՀՆ:

Ա. – Մակէդոնիա գիւղացւոյն ձամանակէն ինչուան Փիլիպպոս Բ: – 1. Աշխարհագրական տեղեկութիւն: – 2. Կարանոս. Պերդիկկաս: – 3. Աղէքսանդր հեղինաէս: – 4. Պերդիկկաս Բ: – 5. Արքեղայոս: – 6. Իր յաջորդներն մինչուան Փիլիպպոս Բ. 287

Բ. – Փիլիպպոս Բ: – 1. Փիլիպպոսի բնութիւն և առաջին գործերն: – 2. Փիլիպպոս 'ի Թեսաղիա: – 3. Ողինթոսի առումն: – 4. Նուիրական պատերազմ: – 5. Ճանապարհի յուզմունք: – 6. Փոկիոն ընդդէմ Փիլիպպոսի: – 7. Փիլիպպոս 'ի միջին Յունաստան: –

8. Աթենքի և Թերբէի դաշնակցութիւն: – 9. Փերոնէական Ճակատամարտն: – 10. Կորնթոսի Ժողովն: Փիլիպպոսի մահն 291

Գ. – Մեծն Աղէքսանդր: – 1. Աղէքսանդրի դաստիարակութիւն և բնաւորութիւն: – 2. Աղէքսանդր 'ի Յունաստան: – 3. Պարսկային սերութեան վիճակն: – 4. Աղէքսանդր Ասիա: Գրանիկոնի պատերազմը: – 6. Աղէքսանդր 'ի Փիւնիկէ և Եգիպտոս: – 7. Աղէքսանդր 'ի մայրաքաղաքս Պարսից: – 8. Դարեհի մահը: – 9. Աղէքսանդրի կերպն: – 10. Աղէքսանդր 'ի Հնդիկս: – 11. Աղէքսանդրի դիտաւորութիւնը. Անոր մահը: – 12. Վերջաբան 299

Թագաւորք Մակեդոնիոյ 312

ՀՀ Ազգային գրադարան
NL0330731